

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱԳ

Ադրբեջանի
իրականացրած
ցեղասպանության

անատոմիան



ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

+

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ
ԱԴՐԲԵՉԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆԱՏՈՄԻԱՆ**

1375

ՀՏԴ 325
ԳՄԴ 66 3 (22)
Ս 806

ՄԿՐՏՉՅԱՆ Ը. Ս

Ս 806 Լեոնային Ղարաբաղ. Աղրբեջանի (1920-1988 թթ.) իրականացրած ցեղասպանության անատոմիան (2003, 250 էջ, Ստեփանակերտ):

Սույն ունիկալ աշխատությունում համակողմանի լուսաբանված է Աղրբեջանի վայրենի լծի տակ Լեոնային Ղարաբաղի հայության վերապրած 70-ամյա մղձավանջը: Համառ փաստերով, անձնական ակնատեսի դիտարկումներով և հարյուրավոր դեռ չիրապարակված փաստաթղթերով, որոնց մի զգալի մասը ունի «խիստ զաղտնի» մակագրություն, բացահայտված են Արցախ-Ղարաբաղի քաջարի հայության նկատմամբ իրագործված ազգային խտրական դաժան քաղաքականության զուսմարելիները՝ հանցագործությունները, վայրագությունները, որոնք ունեցել են մի անսքող նպատակ՝ հայաթափել Ղարաբաղը:

Գրքում Ղարաբաղի հայության իրական կյանքը պատկերված է այնպես, ինչպես այն իրականում եղել է: Այս առումով աշխատությունը ձեռք է բերել բոլորովին նոր հնչելություն, մեթոդաբանական նոր մոտեցումներով հրապարակախոսական շիկացած երանգ: Այն էլ՝ գիտագաղափարաբարդաբանական նախադեպը չունեցող ուղղվածություն: Աշխատությունն ունի Արցախի հիմնահարցին նպաստ բերելու, աղրբեջանցիների պատրանքային սուտն ու կեղծիքը հերքելու փաստական ուժ: Իրոք, ահռելի աշխատանք է կատարվել: Այնքան չիրատարակված փաստերի, փաստարկների հեղեղը, այն էլ կրակոտ լեզվով բացառիկ երեւույթ է արցախագիտության մեջ:

Ս 0803010413
804 (01) –2003

ԳՄԴ 66 3 (22)

ISBN 99930-51-37-3

© ԱՄԲԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՏ

Սույն փաստավավերագրական աշխատության նյութերն ընդգրկում են Լեոնային Ղարաբաղի և Ղարաբաղցիների համար տազանայների, հալածանքների և դառնությունների անհանգիստ, երբեմն էլ ճակատագրական ժամանակները՝ Աղրբեջանի լծի տակ եղած (1920-1988 թթ.) դաժան տասնամյակները, երբ տեղ չէին հասնում արցախահայության արդարացի բողոքները, օրինական պահանջները և վիրավոր հոգու ցասկոտ ճիչերը: Դրանք, ինչպես հայտնի է, միշտ բախվել էին խորհրդային վերադասատյանների երկդիմի քաղաքական մզլած պատերին և դաժանորեն խլացվել կես ճանապարհին: Այս պարագայում, Ղարաբաղի քաջարի հայությանը մնում էր տոկալ ու միայն տոկալով համբերել, համախմբվել, որովհետև անզիջում խուլ պայքարը Սովետական իշխանության օրոք, այնուամենայնիվ, շարունակվում էր: Եվ միայն պայքարով էր հնարավոր հաղթանակել, ասել կուզի՝ Լեոնային Ղարաբաղը դուրս բերել Աղրբեջանի հայկուլ երախից:

Այս առումով կարելի է ասել, որ աշխատությունը Արցախյան հզոր շարժման, մանավանդ ազգային ազատագրական պայքարի պատմության հիմնական դրոյապատճառների վերիանումն է: Նոր, չիրապարակված ահռելի փաստերը հավաստում են, որ չի կարելի մի ամբողջ ժողովրդի շահերը զոհաբերել ինչ-ինչ հեռահար քաղաքական վայրիվերումների, սուտ ու փուտ հավաստիացումների: Աշխատությունը, ըստ էության, վկայում է, որ Արցախի ազատագրական դաժան զոյամարտը տեւական, դժվարին գործընթաց էր, որը, բնականաբար, տարբեր փուլերում և որոշակի հանգանակումներում ունեցել է պայքարի տարբեր մեթոդներ ու ձեւեր: Քանզի խորմանքներում ունեցել է պայքարի տարբեր մեթոդներ ու ձեւեր: Քանզի խորհրդային տոտալիտար իրավակարգում բացառված էր բացարձակ առճակատման և ուժային միջոցներով ազգային լարված, պրկված հարցի լուծումը: Անշուշտ, առանց լուրջ նախապատրաստական շրջանի, որը հիմք հանդիսացավ Ղարաբաղյան հզոր շարժմանը, չէր լինի փոթորկալից ազատագրական պայքարի հաղթական ավարտը: Եվ շարժումը, ևս պայքարը սերտորեն կապված են մեկը մյուսի հետ ևս լրացնում, ի մի են բերում մեր անառիկ ժողովրդի ձեռքբերումները:

Հատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ բերված փաստերի, տեղեկությունների ճնշող մասը նոր են շրջանառվում, այլ աղբյուրներում դրանք չկան ևս լինել էլ չեն կարող: Քանզի խորհրդային բռնապետության տարիներին, մանավանդ Աղրբեջանի հայակուլ վայրագությունների պայմաններում լուրջ բացթողումները, ազգային բիրտ հալածանքները, տեռորիստական, ահաբեկչական ասպատակությունները սովորաբար լղողվել, կոծկվել, խմամբով թաքցվել էին: Կամ էլ, խեղաթյուրվելով ու ձեւափոխվել:

ԱՐՑԱԽ-ՂԱՐԱՔԱՂԻ ԳԻՄՆԱԽՆՂԻԻ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Միշտ դժվար է խոսել այն ժամանակ,
երբ լսելն արդեն ամոր է:
ԼԱՌՈՇՅՈՒԿՈ

Կերներ են: Բնավ չի կտրելի դրանք նույնացնել եւ բռնի կերպով, ինչպես դա արել էին բուլշեւիկները, պարտադրել, որ նրանք նորից գոյատևեն մի դժոխք «ընտանիքում»:

Գայերը երբեք հույսեր չեն փայտախել թուրք-ագերիների քաղաքակրթված լինելու սին պատրանքների հետ: Քանզի, կրկնում ենք, հայերը իրենց կաշվի վրա բազմիցս զգացել են, թե ինչ է իրենից ներակայացնում թուրք ագերիների անտանձ տարերջը, եւ դեռ չեն սպիացել աղբորեցանական իշխանությունների կազմակերպած արյունոտ ջարդարարությունները: Գետնապես այդ արյունամուշտ ամբոխի եւ իշխանությունների հետ խաղաղ համակեցության կոչերը հավասարազոր են ԼՂԳ արագ հայաթափմանը, եթե ոչ հայության բնաջնջմանը:

Սա պիտի հասկանան բոլորը, մասնավոր՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը խաղաղ ճանապարհով կարգավորող միջազգային հանձնաժողովներն ու Միմսկի խմբի համանախագահները:

Սա պիտի հասկանա նաեւ հոգեւոր աշխարհը, քանզի ոչ վաղ անցյալում այս երկրամասում մոլեգնող բարբարոսության զոհ էր գնում ոչ միայն հայ բնակչությունը, այլեւ հայկական-քրիստոնեական հազարամյակների ընթացքում ստեղծված մշակույթի ողջ ժառանգությունը:

Լեռնային Ղարաբաղի հայության դեմ թուրք-ագերիների իրագործած քաղաքական ցեղասպանությունը միտված է եղել մի անսթոր նպատակի՝ արգելակել հայկական երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացումը, բնակչության աճը, ոտնահարել հայ բնակչության շահերը, իրավունքները եւ ստեղծել անտանելի այնպիսի իրավիճակ, որը կարագացներ հայրենի երկրամասից բնիկ հայերի դուրսմղումը:

Փաստորեն 20-րդ դարում Արցախ-Ղարաբաղում (եւ ոչ միայն), անարգել իրագործվել է հայերի հետապնդման, տեղահանման ու ոչնչացման մի համալիր ծրագիր: Եվ միայն Արցախյան ազգային ազատագրական հուժկու պայքարը խափանեց հայկական երկրամասը հայաթափելու հրեշավոր ծրագրի վերջնական իրագործումը: Այդ, ինչպես գրել է Արցախի դեմ Աղբորեցանի սանձազերծած տեռորիստական-անհրեշտական պատերազմի մասին Անդրեյ Նուկինը, Ղարաբաղի հայությունը «совещал полбуг, который бюджет восплет историками всего мира, когда они наконец поймут и смогут понять, что именно сделали эти люди для человечества»:

Ահա թե ինչու պետք է աշխատել դառնությանը, արցունքով, արյունով ու հսկայական կորուստներով ձեռք բերած անկախությունը պահպանել՝ եւ համոզված են, որ դեմոկրատական հիմունքներով ստեղծված Լեռնային Ղարաբաղի Գանրապետության միջազգային ճանաչումը սարերի հետեւում չէ:

Չկա ավելի դժվար խնդիր, քան կրկին անդրադառնալ բազմիցս արծարծված, բողոքարկված պատմություններին: Դա նշանակում է, որ բողոքները արդյունք չեն տվել, կամ գործել են ի վնաս բողոքողների: Ավելի վատթարը՝ բարձրացված հարցերը անուշադրության են մատնվել՝ բաց են մնացել: Իսկ նրանք, որոնց հասցեին ուղղված են եղել բողոքները, անհրաժեշտ դասեր չեն քաղել, կամ քաղել են դարձյալ ի վնաս բողոքողների: Մոտավորապես այսպիսի նկարագիր ունի գրեթե ամեն մի կրկնակի, եռակի, քառակի... արդարացի բողոք: Այս տեսակետից խիստ բնորոշ է Ղարաբաղի պրոբլեմը, որի լուծման համար գրված դիմում-խնդրագրերը, բողոք-աղաչանքները, պարզաբանում-ապացույցները արդեն իսկ կազմում են մի քանի տասնյակ հատորներ:

Այնուամենայնիվ, հարկադրված եմ, եւ չեմ կարող չգրել այն ամենի մասին, ինչին եւ ուղղակի մասնակից եմ եղել, ականջալուր, ակամատես: Մասնավոր, որ ես իմ աշխատանքի բերումով առիթ եմ ունեցել պրպտել արխիվներ, կարողալ բազմաթիվ պաշտոնական, գաղտնի փաստաթղթեր, զրուցել, վիճել Լեռնային Ղարաբաղի եւ Աղբորեցանի վատապատանառու ղեկավարների հետ: Եվ, որ ոչ պակաս կարեւոր է, մեկ առ մեկ այցելել եմ հայկական երկրամասի բոլոր բնակավայրերը, պատմական հուշարձանները, այգիները, դաշտերը, ֆերմավայրերը, պատմական հուշարձանները, Անգիր գիտեն արտադրության ցուցանիշները, գործարանները: Անգիր գիտեն արտադրության ցուցանիշները: Մոտիկից եմ ճանաչում երկրամասի բոլոր հին ու նոր ղեկավարներին, արտադրության առաջավորներին՝ իրենց գործին նվիրված, Ղարաբաղի բարգավաճման հույսով ապրող հայրենասերներին: Լավ գիտեմ նաեւ կեղտոտ, ստոր, հայ եւ աղբորեցանական ժողովուրդների հայրենասիրական զգացմունքների լարերի վրա խաղացած բախտախնդիր

սրիկաներին: Գիտեմ Ղարաբաղի հեռավոր ու նաեւ ոչ հեռավոր պատմությունը: Գիտեմ, թե որ հանդամասում ինչ է աճում, ինչ է չորանում: Բռռասուն տարի շարունակ ուշի-ուշով հետեւել եմ իմ հայրենի երկրամասին ցավ, ավերածություն պատճառող իրադարձություններին:

Ամեն անգամ, երբ հիշում եմ այդ իրադարձությունները Ղարաբաղի հայ բնակչությանն ահաբեկելու, ծաղր ու ծանակի ենթարկելու, նրա լավագույն զավակներին հանիրավի հալածելու, տանջելու, երկրամասի սահմաններից նրանց դուրս վճռելու տխուր ու ցավալի դեպքերը, իմ մեջ ցանկություն է առաջանում գրել այդ ամենի մասին: Սակայն, ես դա այն ժամանակ դիտավորյալ չարի, իրերի, դեպքերի անմիջական տպավորության տակ չընկնելու միտումով: Արդեն բավական ժամանակ է անցել, Լեռնային Ղարաբաղի հայությունն իրեն պարտադրված պատերազմում հաղթել, անկախություն է ձեռք բերել, պետություն է ստեղծել, որի շնորհիվ էլ խաղաղվել է մթնոլորտը, բայց ամենեւին էլ դեռ չեն դադարեցվել թուրք-ազերիների կողմից կիրառվող հակադարաբաղյան սադրանքները, շրջափակումը, ինդուստրիալ զարգացմանը խանգարող արհեստական սահմանափակումները, խոչընդոտները: Ուստի, հարկադրված եմ (այս էլ որերորդ անգամ) անդրադառնալ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձություններին: Իրադարձություններ, որոնք, իրար վրա կուտակվելով, վեր էին անցնում ճգնաժամի, ազգային սրված, լարված հիմնախնդրի:

Ուսումնասիրելով Ղարաբաղի հայ բնակչության վերջին Ադրբեջանի լծի տակ գտնված 70 տարվա կյանքը, կյանք, որ նման էր դժոխքի, ես եկա այն համոզման, որ այդ երկրամասում լիովին ոտնահարված են եղել մարդու գրեթե բոլոր հիմնական իրավունքները: Ղարաբաղցին միայն պետք է պլաններ կատարել եւ մեկ էլ տնային իրերը կապել ու հեռանար իր պապենական օջախից: Կրկնում եմ միայն այս հարցերում էին հայերի իրավունքները անսահմանափակ եղել: Դժվար է ասել, թե Ղարաբաղում գոյություն ունեցած տեղական կուսակցական, պետական մարմինները կոչված էին հոգալու մարզի հայ բնակչության կարիքները, ձգտումները: Եվ հատկապես հենց այդ փաստն էր հանգեցրել այն բանին, որ Ղարաբաղի հայ մարդը կորցրել էր ամենակարեւորը՝ մարդկային արժանապատվությունը, հավատը վաղվա օրվա նկատմամբ: Բռնապետության տարիներին Ղարաբաղում կարող էին հայերին անպատիժ կերպով սպանել, գողանալ նրանց ունեցվածքը, աշխատանքից հեռացնել, չարամտորեն զրպարտել, հարս-

տահարել, խավարի մեջ պահել: Բայց հայը չէր կարող արդարություն պահանջել ու գտնել: Դրա հետ միասին տեսնելով ինքնավար մարզի առանց փամփուշտի ավերված, կործանված, հալումաշ եղած հայկական բազմաթիվ բնակավայրերը, հողի երեսից ջնջած հազարավոր հեկտար այգիները, ջուր աղերսող դաշտերը, գյուղերը, շրջկենտրոնները, դատարկ խանութները, փլատակների վերածված երբեմնի արտադրական ձեռնարկությունները եւ իրար հետ համեմատելով երկրամասի ազգաբնակչության վերջին հարյուրամյակի ընթացքում անցկացված մարդահամարների տվյալները խոսելով դարաբաղցիների հետ, լսելով նրանց դառը ողբերգական պատմությունները՝ իրենց տխուր անցյալի, դաժան հալածանքի, անհույս բողոքների մասին, չես կարող թեզ չտալ մի շարք հարցեր:

1. Ինչո՞ւ էր այս երկրամասի բնակչությունը (որը փառավոր, հերոսական անցյալ ունի եւ, որ ոչ պակաս կարեւոր է, անհամեմատ շատ եռանդ, արյուն է թափել սովետական իշխանության եւ նրա նվաճումների պաշտպանության համար) նետվել էր ճակատագրի դաժան կամքին:

2. Ինչո՞ւ էր այս անմեղ, աշխատասեր, օրինապահ բնակչությունը հալածվել, չարչրկվել եւ աստիճանաբար դուրս մղվել իր պապենական, հայրենի բնակավայրերից:

3. Ինչո՞ւ էին այդ ամենի հետեւանքով առաջացած հայերի բողոքները տասնյակ տարիներ ի վեր մնացել անհետեւանք:

4. Այդ ինչո՞ւ էին նրա իսկական որդիներին եւ նրա արմատական բնակչությանը զրկել իրենց սեփական ճակատագիրը մայր ժողովրդի հետ կապելու իրավունքից:

5. Այդ ինչո՞ւ Ղարաբաղի համար կենսական բոլոր հարցերը պետք է քննարկվեին եւ լուծվեին նրա սահմաններից դուրս, այն էլ՝ առանց դարաբաղցիների մասնակցության:

6. Ինչպիսի՞ արդարացուցիչ մոտիվներով էին քողարկվել դարաբաղցիների հանդեպ կատարված հանցագործությունները՝ սոցիալիզմին, լենինիզմին, ՍՄԿԿ ազգային քաղաքականությանը խորթ լկտի արարքները:

7. Եվ վերջապես, ո՞ր ժողովուրդը կհաշտվեր մեկ ուրիշի նվաճողական գործողությունների հետ, որոնք ձեռնարկվել էին նրա մի մեծ հատվածի նկատմամբ:

Անմիջապես ասենք, որ այս հարցերին պատասխանելը սովետա-

կան իշխանության օրոք այնքան էլ դյուրին գործ չէր: Մանավանդ, երբ նկատի ունենանք, որ բուլշևիկյան կարծրացած գաղափարախոսության պայմաններում նման հարցերի մասին խոսելը, անզամ հարցադրումը դիտվել էր որպես հանցանք, որովհետև խորհրդային երկրի քարոզիչները սովորել, անզիր էին արել միայն մեղալի ճակատային մասի հապավումները: Ասում էին, որ «Սոցիալիզմն ամենաարդարացի ձեռով է լուծել ազգային հարցը եւ այլեւս հարկ չկա անդարդառնալ այդ խնդրին»: Ասում էին նաեւ, որ «Մեզ մոտ ազգերը ծաղկել, մարդկային բարեմասնություններ են ստացել, օգտվում են հավասար իրավունքներից»: Դեռ ավելին, պաշտոնական Բաքուն հրապարակայնորեն հայտարարել է, որ Ղարաբաղի հայ բնակչությունը միայն «Ադրբեջանի կազմում է ձեռք բերել ազգային արժանապատվություն եւ նաեւ ինքնավարություն»: Դեռեւապես, ազգային ամեն մի հարցի առաջ քաշումը ինքնըստինքյան որակել էին որպես ոտնձգություն, տեղական նացիոնալիզմ, նույնիսկ բուրժուական գաղափարախոսության ազդեցության արձագանքներ: Միանգամայն անհիմն, բայց լուրջ եւ ծանրակշիռ քաղաքական մեղադրանքներ: Այսքանից հետո «վայր» ուղտի պես եկել եւ չոքել էր բոլոր նրանց դռան մոտ, ովքեր մեղադրվել կամ թեկուզ կասկածվել էին տեղական նացիոնալիզմի մեջ: Կրակ ու բոց էին թափել նրանց գլխին: Ոչ մի բողոք, ոչ մի արդերսանք, ոչ մի պարզաբանում արձագանք չէր գտնում: Տեղական «նացիոնալիզմը», ավելի ճիշտ՝ հայրենասիրությունը, սկզբունքայնությունը ճնշվել, խեղդվել էր մեծապետական շովինիզմի ամենամաղձոտ թույնով, ուզարով, իշխանության չարաշահումով: Որովհետեւ մեզ սովորեցրել, ավելի ճիշտ ստիպել էին միայն «լավից», «սվաճումից», «օգնությունից», «հաջողություններից», «ծաղկումից», «կոմունիզմի շեմին հասնելուց» խոսել, որովհետեւ սովետական ղեկավարներին ուղեկցել էր էպիգոնների անխուսափելի մի պարս, եւ համակարգն իր ապիկարությունը, անկարողությունը քողարկել էր մաշված, ծածմծված ամբոխավարությամբ եւ ճարտասանական աղմուկ-աղաղակով: Եթե ճիշտ է, որ ամեն մի գործողություն ունի իր տրամաբանությունը, եւ երբ մենք չենք կարողանում, կամ վախենում ենք ու չենք ուզում ճիշտ հասկանալ այդ տրամաբանությունը, ապա միշտ խուսափում ենք վերլուծել այն ու ասում էինք. «Մեզ մոտ ազգային հարց չկա, այն լուծվել է 20-ական թթ.»: Իհարկե, աղբբեջանցիները, վրացիները, ռուսները, ուզբեկները, ուկրաինացիները պետք է որ շատ գոհ լինեին ազգային

հարցի լուծման 20-ական թթ. արդյունքներից: Սակայն, հարցրեք տաքիկներին, հայերին, մոլդավացիներին, օսերին, արխագներին՝ գո՞հ են 70 տարի առաջ լուծված ազգային հարցից: Նրանք առանց տատանվելու իրենց ժողովրդի մի մասի՝ հարեւան հանրապետության ենթակայության տակ բռնությամբ գտնված հատվածի օրինակով ցույց էին տալիս, որ սովետական իշխանության օրոք իրենց կյանքի ոչ մի բնագավառում այնքան կամայական մարզանքներ չէին կատարվել, որքան ազգային հարցում: Եվ ինչու չասել՝ Ադր. ԽՍՀ, Վր. ԽՍՀ կազմում գտնված ազգային փոքրամասնություններից շատերը դարերի ընթացքում այնքան հալածանք չեն տեսել, ինչքան վերջին յոթ տասնամյակում: Եվ ինչու չասել՝ ազգային հարցի 20-ական թթ. լուծումը հիմնականում թելադրված էր եղել այն ժամանակվա քաղաքական, տնտեսական հանգամանքներով, իսկ Անդրկովկասում՝ նույնիսկ դրսի միջամտությամբ, դեմագոգիայի եւ շանտաժի հիստերիայով:

Կյանքը փոխվել էր, բոլոր ազգերը ուշքի էին եկել, պահանջում էին իրավահավասարություն, մերժում հալածանքը, կեղեքումը, ազգայինի ժխտումը եւ ազատություն տեսնում: Անգամ դպրոցա-կաններն էին նկատել, թե ինչ կարիք կա իրար կողքի պահել օսեթական ինքնավար եւ հանրապետություն, եւ մարդ՝ մեկը ՌԽՖՍՀ, իսկ մյուսը՝ ՎՍՍՀ կազմում: Անգամ կոշկակարներն էին զարմանում, թե ինչու ազգային հանրապետության մեջ պահվում էր նույն ազգի բնակչության մի հատվածի համար ինքնավար հանրապետություն՝ Նախիջեւանի ԻՍՍՀ՝ Ադր. ԽՍՀ կազմում: Անգամ ԽՍՀՄ Մինիստրների սովետի հանձնաժողովն էր հարկադրված եղել զարմանքով արձանագրել, թե ինչու ԳԽՍՀ հարեւանությամբ հայկական Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը մտել էր Ադր. ԽՍՀ կազմի մեջ: Ինչու փոքրիկ Մոլդավիայի արեւելյան որոշ շրջաններ կտրվել եւ միացվել էին մեծ ու եզր ուկրաինային, թե ինչու Տացիկական ԽՍՀ-ից մի շարք հողաշերտեր մնում էին Ուզբեկական ԽՍՀ ենթակայության տակ, թե ինչու արխագ ժողովրդի 70-ամյա խնդրանքները չեն բավարարվում: Այս եւ այլ «ինչու»-ները վերստին վկայում էին, որ սովետական երկրում լուծված չէին մի շարք ազգությունների արդարացի պահանջները: Դեռեւապես, ազգային հարցի վերանայման կարիքը վաղուց էր զգացվել, մանավանդ, եթե նկատի առնեք, որ 20-ական թթ. վերջերից ի վեր ազգային հարցին չէին անդրադարձել ոչ ԽՄԿԿ-ը, ոչ ԽՍՀՄ Գերագույն սովետը եւ ոչ էլ ԽՍՀՄ կառավարությունը: Իսկ թե ինչ տխուր հետեւանքների էր հասցրել այդ

օրինական հարցի լուծման ձգձգումը, մենք ցույց կտանք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պրոբլեմի անատոմիան բացահայտելով:

Ինձ համար դժվար է առանց հուզմունքի գրել մարդկանց մասին, որոնց հետ եղել եմ մոտ, առավել եւս ճանաչել, դժվար է պատմել ԼՂԻՄ-ին հասցրած վերքերի, նրա ավերված, կործանված (երբեմն շեն) գյուղերի, հողի երեսից ջնջված փարթամ այգիների, ցամաքած աղբյուրների, էրոզիայի ենթարկված արտավայրերի, ծարավից տոչորված բնակավայրերի, դաշտերի, տեղական արմատական բնակչության վիրավորված ազգային զգացմունքների, տառապանքների եւ, ինչու՜ չասել, հարյուրավոր աշխատասեր, հայրենասեր եւ անասիման նվիրված, բայց դաժանորեն հալածված, մեթոդաբար հայրենի եզերքներից դուրս քշված կադրերի մասին: Նաեւ՝ դառնությունների, տառապանքների մասին, որոնք եւ քաշել եմ Լեռնային Ղարաբաղում աշխատած տարիներին (1965-1972 թթ.): Երբ Ադր. ԿԿ Կենտկոմի պարտադրմամբ ՊԱԿ-ը վերցրել էր հսկողության տակ, եւ չէին թողել ո՛չ աշխատել, ո՛չ էլ պատրաստի աշխատություններս տպագրել: Մի խոսքով մենք ապրել ենք հայրենիքի մեջ հայրենիք չունենալու դրամատիզմը:

Ասկայն իմ տառապյալ հայրենի երկրամասին թեկուզ մի մազաչափ օգուտ տալու հույսով պետք է հաղթահարվեն բոլոր դժվարությունները, եւ Ղարաբաղի նկատմամբ կատարված ամեն կարգի կանխամտածված չարաշահումները (որ կատարվում էին հազար ու մեկ հնարքներով, խնամքով քողարկված, երբեմն էլ բացահայտ ձեւով), մաքուր ջրի երես հասնեն, որպեսզի մարդիկ իմանան, թե ինչի են ընդունակ ոռնացող տգիտությունը, անսկզբունքայնությունը, ժողովրդին չունկնդրելու քար անտարբերությունը, եւ աղբրեջանական նացիոնալ շովինիզմը եւ ազգահալած քաղաքականությունը:

Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծման հակառակորդները բոլոր ձեւերով ճշում էին մարքս-լենինյան մեթոդոլոգիային խորթ իզմների մասին: Ինչ կարելի է ասել այս առթիվ: Միայն մի բան, սուտը, երբ նույնիսկ դա բազմապատիկ կրկնվում է, ճշմարտություն չի դառնում (թեեւ սովետական իշխանության օրոք անցնում էր): Ղարաբաղի բնակչության արդարացի պահանջների նկատմամբ ինչպիսի ոռնոց էլ բարձրացվի, ինչպիսի պրովոկացիոն գործողություններ էլ ձեռնարկվեն, չարաշահելով այսպես կոչված «հայկական նացիոնալիզմը», փաստը

մնում է փաստ՝ Ղարաբաղի վերջին 70-ամյա պատմությունը մարդկային բանականության դեմ խոսող պերճախոս փաստարկ է:

Ուստի, վաղուց ժամանակն է մերկացնել աղբրեջանական քարոզարշավի նենգությունները, սուտ ու սխալ փաստարկումները, իբր իրենց հոգացել են Ղարաբաղցիների կարիքները, պաշտպանել ինտերնացիոնալիզմի սկզբունքները, մինչդեռ գործը տարել էին միանգամայն հակառակ ուղղությամբ:

Մենք պետք է մի անգամ եւս հերքենք միտումնավոր եւ ամեն դեպքում սխալ մեկնաբանությունները Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ, եւ այդ սուտ ու սխալ մեկնաբանությունները չեն կարող զարմանք չհարուցել, երբ մենք տեսնում ենք, թե դրանք որտեղից են բխում:

Դեռեւս երբեք հայատյացները այդքան անպատկառ կերպով չէին գործել՝ ոտնահարելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի շահերը, կատարելով Ղարաբաղի հայ բնակչության մասսա-յական մեթոդիկ սպանություններ, ձերբակալություններ, տեղահանություններ, լկտիաբար խախտելով մարդու իրավունքի հանրաճանաչ բոլոր նորմերը:

Ղարաբաղի իրադարձությունների աստիկ լարված, բորբոքված ժամանակներում ամենայն ակնհայտությամբ երեւան եկավ նաեւ պաշտոնական Մոսկվայի ազգային քաղաքականության էությունը: Մոսկվան ոչ միայն չփորձեց զսպել Բաքվի հայատյացների արկածախնդրությունը, այլեւ, փաստորեն 1988 թ. Ղարաբաղը երկրորդ անգամ նետեց Աղբրեջանի ոտքերի տակ: Դրա հետեւանքով Աղբրեջանը ոչնչացրեց տասնյակ հայկական գյուղեր, հալածեց հազարավոր հայ կադրերի՝ անօթեւան, պանդխտության մեջ թողնելով տասնյակ հազարավոր Ղարաբաղցիների, եւ ապա լայնածավալ տեռորիստական պատերազմ սկսեց փոքրիկ Ղարաբաղի դեմ: Ղարաբաղյան իրադարձությունների ամբողջ ընթացքում Մոսկվան, որն այնքան հակված էր ամեն «ընկած», «ազատագրված» ժողովուրդների, խմբերի օգնելու ցանկությամբ, ոչ մի խոսք չգտավ դատապարտելու սեփական հայրենիքի ցեղասպաններին՝ չխոսելով արդեն նրանց հանցավոր գործողությունները խափանելու իրական քայլերի մասին: Դեռ վաղ է Ստեփանակերտում 1967 թ. հուլիսի 3-ին եւ ամբողջ Ղարաբաղում 1988-1993 թթ. տեղի ունեցած ողբերգության տակ գիծ քաշել: Բայց արդեն այսօր կարելի է վստահորեն անել մի հետեւություն՝ Ղարաբաղի հա-

յութան արիւթյունն ու տոկունութիւնը հանգեցրին այն բանին, որ Ստեփանակերտի քաղաքային զբոսայգում Բաքուն եւ նրա հովանավորները քաղաքական եւ բարոյական մեծ պարտութիւն կրեցին: Բարբարոսներին չհաջողվեց ոչ տեռորիստական, ոչ տնտեսական եւ ոչ էլ քաղաքական հետապնդումներով ջնջել Ղարաբաղի հարցը, այն հանել օրակարգից:

Ի վերջո, Ղարաբաղցիների երկարամյա ազգային-ազատագրական պայքարը՝ 1988 թ. փետրվարի 20-ին կայացած ԼՂ մարզային խորհրդի պատմական որոշումով, պսակվեց հաջողությամբ: Դեռ այդ օրվանից էլ Լեռնային Ղարաբաղը դուրս եկավ Ադրբեջանի ԽՍՀ կազմից եւ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց Լեռնային Ղարաբաղի Դանրապետութիւն, որը եւ վավերագրվեց նույն թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեով:

Այսուհանդերձ, ե՞րբ է առաջացել Ղարաբաղի պրոբլեմը կամ ե՞րբ է սկսվել հայ բնակչության ողբերգությունը: Այս հարցին պատասխանելու համար հարկադրված ենք փոքր-ինչ հետ պտտել ժամանակի անիվը՝ բացահայտելու այս պրոբլեմի արմատները, պրոբլեմ, որը գլորվող ձնագնդի նման գնալով մեծացել էր: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգությունները ուղղակիորեն կապված էին 1920-ական թվականների սկզբին Ղարաբաղի հարցով թույլ տրված պատմական ճակատագրական սխալի հետ:

Ռուսաստանում Դեկտեմբերյան հեղաշրջումից հետո 1917 թ. դեկտեմբերի 16-ին Արցախ-Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիում ստեղծվեց Դայոց ազգային խորհուրդ, որը 1918 թվականի հուլիսի 22-ին վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի կառավարություն: Նրա վարած արտաքին եւ ներքին ինքնուրույն քաղաքականությունը արտացոլված եւ վավերացված է Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների այն ինը համագումարների որոշումներում եւ հռչակագրերում, որոնք անցկացվել էին 1918 թ. հուլիսից մինչեւ 1920 թ. փետրվարն ընկած ժամանակաշրջանում:

Այդ տարիներին Ղարաբաղցիների հիմնական պայքարն ուղղված էր 1918 թ. Բաքվում թուրք օկուպանտների կողմից արհեստականորեն ստեղծված մուսավաթական Ադրբեջանի Դանրապետության նվաճողական քաղաքականության դեմ, որն առաջին իսկ օրից, միջոցների

մեջ խտրություն չդնելով, ձգտում էր տեր դառնալ Լեռնային Ղարաբաղին: Սակայն ո՛չ նրա տասնապատիկ գերազանցող ուժերը, ո՛չ թուրքական անմիջական օգնությունը չկարողացան ծնկի բերել Արցախ-Ղարաբաղին: Այնուհանդերձ, մուսավաթականները հրահրեցին ազգամիջյան ընդհարումներ, հիմնահատակ կործանեցին հայկական մի շարք բնակավայրեր, հրդեհի ու կողոպուտի մատնեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերը: Ավելի քան 20 հազար շուշեցի հայեր դարձան կոտորածի զոհեր:

Հայերի ցեղասպանությունը Շուշիում կազմակերպված թուրքական զենքով, գնեռալ Նուրի փաշայի հրամանով եւ մուսավաթական նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովի կողմից, հանդիսանում է հայ ժողովրդի ոչնչացման երիտթուրքական քաղաքականության մի մասը միայն:

Եվ ահա այս պայմաններում 1920 թ. ապրիլին Անդրկովկաս մտած խորհրդային Ռուսաստանի բոլշեւիկյան 11-րդ բանակը ասես եկել էր միայն աջակցելու, օգնելու «սովետների սրտակից բարեկամ», «կարմիր հեղափոխությունից շառագունած» Թուրքիային եւ մի գիշերվա ընթացքում կարմիր կոմունարկաներ հագած եւ «բոլշեւիկացված» մուսավաթներին, որպեսզի հեշտությամբ իրականացվեն նրանց հակահայկական նվաճումները, եւ դրանով իսկ ոտնահարվեն հայ ժողովրդի ազգային-քաղաքական իրավունքները: Այնուհետեւ, 15 օր հետո՝ մայիսին, Ղարաբաղը օկուպացրել էր Սովետական Ռուսաստանի բանակը: Սկզբնական շրջանում սովետական կենտրոնական իշխանությունը գտնում էր, որ հայկական Ղարաբաղը «ոչ մի դեպքում չպետք է միացնել Ադրբեջանին»: Երբ Դայաստանում ստեղծվել էր խորհրդային կարգեր, Բաքվից հեռագրով հայտնվել էր, որ «այսօրվանից Դայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եղած տարածքային վեճերը համարվում են վերացված» եւ «Լեռնային Ղարաբաղը... Նախիջեւանը ճանաչվում են Հայկական Խորհրդային Դանրապետության մասը»: Այդ մասին «Պրավդա» թերթում տպագրվել էր Ստալինի կոչը՝ ուղղված հայ ժողովրդին: Այնուհետեւ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն իր 1921 թվականի հունիսի 3-ի նիստում միաձայն որոշում է. «հաստատել Լեռնային Ղարաբաղի Դայաստանին պատկանելության մասին Դայաստանի կառավարության դեկլարացիան» (ՄԴԱ Փ.64 օր.1, ձ.1, Ն.77): Սույն դեկլարացիան տպագրում է նաեւ «Բակինսկի ռաբոչի» թերթը (22 հունիսի 1921թ.):

Այս ամենը թելադրված էր պատմական այն անհերքելի իրողությանը, որ Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի «խսկուննի» տարածք, չի մտել 1918 թ. Անդրկովկասում առաջին անգամ արհեստականորեն ստեղծված ոչ լեգիտիմ Ադրբեջան պետության կազմի մեջ: Հետեւապես, Ադրբեջանի բոլոր ուսնծությունները Արցախի հանդեպ դատապարտված են ծախողման, ինչպես դա եղել է 1920 եւ 1988-1993 թթ.: Ինչեւիցե:

Թվում էր, թե տարածքային վիճելի հարցերը մեկընդմիջտ կարգավորվեցին: Հուլյսեր էին փայտիայվում, թե դրանով արդեն հնարավոր կլինի քանդել հայ-ադրբեջանական հարաբերությունները խճճող հանգույցը: Բայց, ավաղ, Ադրբեջանի ղեկավարները, ոգեշնչված 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ կնքված տիրահոշակ պայմանագրով (որով Հայաստանի մի մեծ մասը՝ Նախիջեւանի երկրամասն անարդարացիորեն հանձնվեց Ադրբեջանին), կտրուկ շրջադարձ կատարեցին իրենց դիրքորոշման մեջ եւ արգահատելի պատճառաբանություններով հանդես եկան Հայաստանի տարածքների վերածեւման նոր պահանջներով: Եվ ահա, 1921 թվականի հուլիսի 4-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն վերստին անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի վարչատարածքային պատկանելության հարցին: Բյուրոն որոշում է երկրամասը միացնել Խորհրդային Հայաստանին (*«Нагорный Карабах» (историческая справка), Ереван, 1988, с.23-36*): Սակայն մեկ օր հետո բյուրոն, Նալչիկից անսպասելի Թբիլիսի ժամանած Ստալինի մասնակցությամբ, առանց քննության եւ քվեարկության, կամայականորեն հայկական մարզը հանձնեց Խորհրդային Ադրբեջանին՝ խոստանալով մարզային «ինքնավարության լայն իրավունքներ»:

Այնուհետեւ Լեռնային Ղարաբաղի հարցը լսվեց 1921 թվականի հուլիսի 7-ին տեղի ունեցած կուսակցության քաղբյուրոյի նիստում: Լեռնի նախագահությամբ որոշվեց տարածքային վեճերը լուծելիս հիմք ընդունել էքնիկական գործոնը, ազգերի ինքնորոշման իրավունքը: Դարձյալ մեկ օր հետո՝ հուլիսի 8-ին, Ստալինը հեռագրել է Օրջոնիկիժեին եւ պարտադրել նրան «վիճելի հարցերը լուծել հօգուտ Ադրբեջանի եւ Թուրքիայի»: Այս պարագայում էլ Ստալինը ղեկավարվել է իրեն հատուկ կամայականությամբ՝ ուժեղին բավարարելու, թույլին ճնշելու քաղաքականությամբ: Այսպիսով, լիովին անտեսվեցին Լեռնային Ղարաբաղի բնակչության 96,4 տոկոսը կազմող հայերի կամքը,

պատմամշակութային եւ ազգային-տարածքային գործոնները:

Քաղաքական անբարոյականության տիպիկ օրինակ հանդիսացող այս խաղում վճռորոշ դեր են ունեցել, ինչպես իրավացիորեն նկատել էր Նորբեյան մրցանակի դափնեկիր, ռուս մեծ գրող Ա. Սոլժենիցինը, «հաճոյանալը սովետների սրտակից բարեկամին՝ Թուրքիային եւ նրան «համաշխարհային հեղափոխության» մեջ ներքաշելու բուշեփկների պարզունակ հաշվարկները: Գրեթե նույն միտքն էր արտահայտել նաեւ Կենտրոնական Ասիայի գծով ֆրանսիացի մասնագետ Ռիլիմյե Ռոյը: Նա գրել է. «Ադրբեջանի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղը մտցնելու պատճառն այն էր, որ Ստալինը ցանկանում էր լավ հարաբերություններ պահպանել Աթաթուրքի հետ ու խաղի մեջ մտցնել մուսուլմանական խաղաթուղթը: Այսպիսով, նա դրսեւորեց իր հովանավորությունը Ադրբեջանին, ի վնաս Հայաստանի շահերի» (*Судьбы Ичкериян, «Արցախ», Ե., 1991, էջ 62*): Այլ կերպ ասած, ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, իրականում համաշխարհային հեղափոխության շահերի զոհասեղանին էին դրվել Հայաստանը եւ հայ ժողովուրդը:

Դեռեւս մինչեւ ԼԴԻՍ-ի ստեղծումը Ադրբեջանում, ինչպես ՌԿ(Բ)Կ 12-րդ համագումարում խոստովանել էր Ի. Ստալինը, ակնհայտորեն առկա էր շուփնիստական «չափազանց անսքող» միտում, թե «մենք իբր ադրբեջանցիներս, բնիկ ենք, իսկ նրանք՝ հայերը, եկվորներ են»: Եվ այնուհետեւ՝ «Ադրբեջանում ադրբեջանցիները, որպես մեծամասնություն, ճնշում են հայերին եւ կոտորում, ինչպես դա եղել է Նախիջեւանում, որտեղ կոտորել են համարյա բոլոր հայերին» (*Инбу Двенадцатый съезд РКП(б), stenографический отчет, М., 1968, стр. 487, 660*):

Այնուամենայնիվ, երկու տարվա քաջջշուկից հետո, 1923 թվականի հուլիսի 7-ին ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որը սակայն իր մեջ չէր ներառել հայկական բոլոր գավառները, որոնք դարեր շարունակ կազմում էին մի միասնական ազգային-տարածքային միավոր: Արցախահայության հանդեպ խտրականությունն սկսվել էր արդեն իսկ ինքնավարության պաշտոնական վերանվանումից: Երկրի բոլոր հանրապետությունները, ինքնավար մարզերը, բացի Արցախից եւ Նախիջեւանից, կոչվում էին բնիկ ժողովրդի անունով: Եվ պատահական չէր, որ հայերի առաջին պահանջներից մեկը մարզը «Արցախի հայկական ինքնավար մարզ» վերանվանելն էր: Ավելին: Նորաստեղծ ինքնավար մարզի վարչատարածքային վերածեւումներ

կատարելիս նրանից մեխանիկորեն պոկեցին գրեթե կեսը՝ ամբողջ Գյուսիսային Արցախը՝ Շահումյանի, Խանկարի, Դաշքեսանի եւ Շահխորի շրջանները՝ իրենց 107 հայկական գյուղերով հանդերձ: Փաստորեն անտեսվեց հայ բնակչության ինքնորոշման իրավունքն իր իսկ պատմական տարածքի վրա: Մասնատվեց նաեւ մշակույթը, որը փոշոկվեւ էր հայ ժողովրդի մտքի ու բազկի ուժով: Այս անդամահատումը կատարվեց անհավատալի թեթևությամբ, քաղաքական խարդախ խաղով: Ճակատագրի դառն տնօրինությամբ այն, ինչ հնարավոր չէր անցյալում գեների ուժով, իրագործվեց խորհրդային կարգերի հաստատումից հետո: Դեռ ավելին, որպեսզի հայկական մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ սահմանային անմիջական կապ չունենա, հայկական մի շարք բնակավայրեր, որոնք իրենց դիրքով ու նշանակությամբ կարեւոր կապող օղակ էին Սյունիքի եւ Արցախի միջեւ, դարձյալ «նոգական» ուժով պոկեցին ինքնավար մարզից եւ բռնակցեցին ադրբեջանական շրջաններին: Դրանով էլ չբավարարվեցին. ինչպես երեւում էր ԼՂԽՍ-ի կորուսված քարտեզից, մարզի մանավանդ կարեւոր գետահովիտներում, հայկական բնակավայրերի արանքում, արհեստականորեն ստեղծված եւ դեպի մարզի խորքերը երկարածոված լեզվակներից ու խռոչներից, այդ հողակտորները մարզից զավթեցին այն հաշվով, որ Ստեփանակերտը կապ չունենա շրջկենտրոնների հետ (իր տարածքի շրջանակներում) եւ գյուղերից շրջկենտրոն հասնելու համար հարկադրված լինեն շրջանցել մարզի սահմանները: Նպատակը ԼՂԽՍ-ի վրա ճնշում գործադրելն էր, որ իրեն զգացնել տվեց 1988-1993 թվականներին դարաբաղյան հայտնի իրադարձությունների ժամանակ, երբ Ադրբեջանը փակեց այդ լեզվակներով ու խռոչներով անցնող ճանապարհները, մարզը գրկելով ոչ միայն արտաքին, այլև ներքին հաղորդակցության միջոցներից: Սա էլ կարծես քիչ համարվելով, մարզի տարածքից նոր հողակտորներ պոկելու ուրիշ ելք էլ գտնվեց: ԼՂԽՍ-ի տարածքում առանձնացրին (ներճանապարհային հանգույցներում գտնվող) ադրբեջանական չորս (10-30 բնակիչ ունեցող) գյուղակ եւ վարչականորեն ենթարկեցրին հարեւան ադրբեջանական շրջաններին: Իսկ Անդրֆեդերացիայի վերացումից հետո հայկական Հարցուժի շրջանից պոկեցին հայկական Հողեր եւ Հարար գյուղերը եւ կցվեցին ադրբեջանական Ֆիզուլու եւ Լաչինի շրջաններին: Սա էլ համարվեց անբավարար: Եվ ահա, 1950-1970-ական թվականներին տնտեսությունները խոշորացնելու առիթը Ադրբեջանի ճարպիկ դեկա-

վարներն օգտագործեցին իրենց հայատյաց ծրագրերն իրականացնելու համար: Նախ, նրանք անհրաժեշտ գտան Հայաստանամերձ հայկական յոթ գյուղ բռնի դատարկել եւ բնակիչներին ցիրուցան անել: Ասենք, որ այդ գյուղերից յուրաքանչյուրում ապրում էր 500-700 հայ բնակիչ, որոնք միավորված էին առանձին կուլեկտիվ տնտեսություններում: Հետո կատարվեց ավելի վատթարագույնը: Հայկական գյուղերից խվեցին ընդարձակ հողահանդակներ եւ հանձնվեցին մարզում բնակեցված ադրբեջանցիներին: Գյուղերի խոշորացման ժամանակ հաշվի չառնվեցին ո՛չ պատմական եւ ո՛չ էլ ազգային գործոնները, ամեն ինչ իրագործվեց հակահայկական վայրագություններով, որի հետևանքով Արցախի քարտեզից վերացան հարյուրավոր հայկական բնակավայրեր:

Մարզին վերապահված «վեներական տարածքից» մի քանի կտորներ էլ Բաքվի դրածո, ԼՂ կուսմարզկոմի առաջին քարտուղար Բ. Կետրկովն իր բարերարի՝ Գ. Ալիևի «խնդրանքով» 1980-ական թվականներին նվիրաբերեց հարեւան ադրբեջանական շրջաններին: Այսպես ձեւեցին ու կարկատեցին ԼՂԽՍ-ի վարչական քարտեզը, որը գնալով շարժելու կաշվի նման նվազում ու նվազում էր: Ի՞նչ էր սա. տակտիկական քա՞յլ, թե՞ ստրատեգիական նկատառում: Ստացվում է, որ Հայկական ԽՍՀ կողքին կարելի է ստեղծել հայկական ինքնավար մարզ, նրան սահմանակից էլ հայկական առանձին շրջաններ եւ Ադրբեջանի տարբեր մասերում գտնվող հարյուրավոր հայկական այլ գյուղերի հետ միասին հպատակեցնել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Իսկ ադրբեջանական չորս փոքրիկ գյուղեր չէր կարելի թողնել Ադրբեջանին ենթակա հայկական մարզի կազմում: Ահա այսպես էր եղել զորանոցային սոցիալիզմի բուն էությունը, «մահմեդականների ու հայերի միջեւ ազգամիջյան խաղաղություն հաստատելու» բուլչելիկյան գործելակերպը:

ԼՂԽՍ-ի ազգային տարածքը կողոպտվելուց հետո էլ գործնական քայլեր չձեռնարկվեցին ոչ միայն սահմանադրությամբ կամ պետական որեւէ այլ միջոցառումով նախանշելու ինքնավար մարզի կարգավիճակը խոստացված «չայն իրավունքները», այլև նույնիսկ խոսք չեղավ հանրապետության եւ նրա կազմում թողնված ազգային առանձին՝ Ղարաբաղի կազմավորման միջեւ հաստատվելիք փոխգործակցության մասին: Այսպիսի անորոշության, ավելի ճիշտ՝ իրավազրկության պայմաններում, բնականաբար, մարզի ճակատագիրը տնօրինե-

լու գլխավոր մեխանիզմը եղել են եւ մնացին խաղաղականությունը, կամայականությունը, վարչահրամայական գործելակերպը: Նման կարգը Բաքվում ընդունվեց ծափահարություններով, իսկ ԼՂԻՄ-ին քերեց նորանոր ավերածու-թյուններ, ողբերգություններ: Եվ իրավիճակն, ի վերջո, հանգեցրեց Արցախում մարդկային եւ ազգային կյանքի խաթարմանը, հիվանդագին երեւոյթների սկզբնավորմանը:

Հայկական տարածքները յուրացնելու ծրագրի մեջ արցախահայությունն իրավացիորեն տեսնում էր իր ազգային կյանքի, դարավոր մշակույթի վերացման իրական վտանգը: Բացի այդ, արգելվում էր հայկական պատմական տեղանունների օգտագործումը: Հարցը, սակայն, միայն սահմանային «ճշտումներով» չէր ավարտվում: Հետագայում, հատկապես 60-ական թվականներից սկսած, խնդիր դրվեց մարզի խորքերում կենտրոնական հատվածներում վերաքնակեցնել զգալի քանակությամբ աղբրեջանցիների: Այդ նպատակով մարզում հապշտապ ստեղծվեցին 20-ից ավելի նոր բնակավայրեր, որոնցում արտոնյալ պայմաններով բնակություն հաստատեցին դրսից եկած աղբրեջանցիները, որոնք հիմնադրում զբաղվել էին անասնազոռությամբ:

Այս ամենի թափն, անշուշտ, գիտեին ՀԽՍՀ ղեկավարները: Սակայն նրանք գիտակցելով նման հարցի բարձրացման վտանգավորությունը, չէին համարձակվում իրերն իրենց անուճով կոչել եւ թողքի ձայն բարձրացնել: Այսուհանդերձ, Հայաստանի թիվ առաջին ղեկավարը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունովը քաջություն ունեցավ ստորեւ բերվող առաջարկությամբ դիմել Ստալինին:

«ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, ընկեր Ստալինին.

Իոսիֆ Վիսարիոնովիչ,

Հայաստանի տարածքին հարող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1923 թվականից մտնում է Աղբրեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Այդ մարզի բնակչությունը հիմնականում հայկական է: 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը հար ու մման է Հայաստանի լեռնային մասի գյուղատնտեսությանը: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելը մեծապես կնպաստեր նրա զարգացմանը եւ կրթելավեր տնտեսության ղեկավարումը:

Բնակչության մշակութային-գանգվածային եւ քաղաքական սպասարկու-

մը մայրենի լեզվով կուժեղանար Հայաստանի Հանրապետության մարմինների կողմից ղեկավարվելու դեպքում:

Լեռնային Ղարաբաղի մարզի Հայաստանի կազմի մեջ մտնելը տեղական կադրերին հնարավորություն կտար շարունակել մայրենի լեզվով քարձուգույն կրթությունը Հայաստանի բուհերում: Այսու կողմից՝ Հայկական ԽՍՀ-ը կկարողանար Լեռնային Ղարաբաղի մարզից առանալ ազգային կադրեր, որոնք այժի են ընկնում իրենց գործարարությամբ եւ ներկայումս, բնականաբար, չեն կարող լրիվ օգտագործվել Աղբրեջանում:

Ելնելով դրանից եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունից՝ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեն եւ Ժողկոմխորհը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի եւ միութենական կառավարության քննադրմանն են ներկայացնում Աղբրեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ, որպես Ղարաբաղի մարզ, մտցնելու հարցը:

Այդ հարցի դրական լուծման դեպքում Կենտկոմը եւ Հայաստանի Ժողկոմխորհը կառավարությանն առաջարկություն կենրկայացնեն Ղարաբաղի նախկին կենտրոնի՝ Շուշի քաղաքի վերականգնման մասին, որն ավերվել էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունով
1945 թ. Մայիսի 11»:

Նման «կուռ եւ սպառիչ բովանդակությամբ» դիմումը, ըստ էության, չփոխեց Ղարաբաղի հայերի վիճակը: Ավելին, այն ավելի վատթարացավ: Աղբրեջանի իշխանությունները օգտվելով Մոսկվայի իսլամական աշխարհը սիրաշահելու քաղաքականությունից, շտապում էին իրագործել ԼՂԻՄ-ը հայաթափ անելու իրենց ծրագրերը: Եվ դրանով նրանք փորձում էին մեկընդմիջտ վերջ դնել Հայաստանի ու հայ ժողովրդի իրավունքներն Արցախ-Ղարաբաղի նկատմամբ: Աղբրեջանի ղեկավարությունը փորձեց Հայաստանից Աղբրեջան բերված թուրքազերիներին բնակեցնել ԼՂԻՄ-ում: Ուղղակի պարտադրեցին դարաբաղցիներին, որ նրանք իրենց հարկի տակ պահեն մեկ-երկու աղբրեջանցի ընտանիքների: «Ծեծկոտոցն ու մասսայական տուրուղմբոցները սովորական երեւոյթներ էին: Վաչկատունի կենցաղով ապրող վերաբնակները կարճ ժամանակահատվածում հայկական մարզի ծաղկավետ դաշտերը, փարթամ այգիները վերածեցին ամայի տափաստանների» (մանրամասն տես Վ. Բալայան, *Արցախի պատմությունը*, եր., 2002, էջ 350): Այսուհանդերձ եկվոր քոչվորները չհամակերպվեցին

հայկական մարզում ստեղծված տնտեսական սոսկալի ծանր իրավիճակի հետ եւ տեղափոխվեցին Գյումրիի Գյումրիի Արցախի «Նոր պատուհան դառնալով տեղի հայության համար»: Քանզի, ինչպես իրավացիորեն գրել է պատմաբան Բ. Ուլուբաբյանը, Մոսկվան եւ Բաքուն ծրագրել էին 1953 թ. ամռանը կազմակերպել Հայաստանում բնակվող հայության մի նոր վիթխարի բռնագաղթ, որպեսզի Հայաստանի բնակչությունը կրճատվեր, դառնար մեկ միլիոնից էլ պակաս եւ զրկվեր միութենական հանրապետության իրավունքից: Այնուհետեւ ԳԽՍՀ-ն բաժան-բաժան արվելի Կրաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Ծրագրված էր մաւել Ադրբեջանին միացնել Դաղստանի ԻՄՍՀ-ն: (Բ. Ուլուբաբյան, «Արցախյան գոյակայքարը», եր., 1994, էջ.185), Ամենայն հավանականությամբ Ստալինին ձեռնադրու էր Արեւելքում մահմեդական աշխարհի նախադռանը, Պարսկաստանը կլանելու հեռահար նպատակով, ունենալ Ադրբեջանի պես հզոր ու խամաճիկ մի հեռարան-հանրապետություն: Ծավալապաշտական այս ծրագիրը, իհարկե, խոր արմատներ էր գցել ադրբեջանցի մտավորականների շրջանում: Այստեղից էլ՝ Անդրկովկասի պատմության նենգափոխության ադրբեջանցի կեղծարարների արշավանքները, որոնց միայն առանձին դրվագների մասին խոսք կլինի հաջորդ գլխում:

Այնուհետեւ, 1960-ական թթ. կեսերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանի կազմից հանելու եւ ԳԽՍՀ-ին միավորելու հարցով ղարաբաղցիները դարձյալ դիմեցին ԽՍՀՄ կենտրոնական իշխանության ղեկավարներին: Սակայն այս անգամ էլ կենսական հարցը փակուղի մտցվեց եւ դաժան հալածանքի ենթարկեցին ԼՂ-ի աջաբաբաց մտավորականներին: Այսուհանդերձ, Հայաստանի մի շարք էլիտար մտավորականների դիմումի հիման վրա 1966թ. օգոստոսի 8-ին ընդունած որոշմամբ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը Հայաստանի կոմկուսի կենտկոմին և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հանձնարարեց մեկ ամսվա ժամկետում համատեղ կերպով առաջարկություններ նախապատրաստել Լեռնային Ղարաբաղի մասին: Բայց, դժբախտաբար, հարցը Ադրբեջանի ղեկավարների չկամությամբ և ԽՄԿԿ կենտկոմի 2-րդ քարտուղար Մ.Սուլուկի միջամտությունից հետո իր համապատասխան քննարկմանը չարժանացավ:

Սակայն, ղարաբաղցիները շարունակեցին պայքարը: Երբ 1977թ. քննարկման էր դրված ԽՍՀՄ նոր Մահմանադրության նախագիծը, Արցախի հիմնախնդրի լուծման առաջարկություններով տասնյակ հա-

զար մարդիկ դիմեցին Մոսկվա: Մոսկվայի հանձնաժողովն այս անգամ արձանագրեց. «Պատմական մի շարք հանգամանքների հետեւանքով Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միացվել է Ադրբեջանին... Ըստ այդմ հաշվի չի առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը եւ տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ եւ Ղարաբաղի հարցը շարունակում է հողովել, առաջացնել անհանգստության եւ անբարյաքակամության պահեր դարավոր բարեկամությամբ իրար հետ կապված երկու ժողովուրդների միջեւ: Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ հետ: Այն ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրգանական տեղը» (տես ԽՍՀՄ Միմիստրների խորհրդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի N 61 արձանագրություն, 4-4133): Այս պարագայում էլ Ղարաբաղի հայության ճակատագիրը շոշափող հիմնախնդիրը քարին քսվեց եւ ավելի քարոզացվեց Ղարաբաղի հայության վիճակը:

Այսօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այս ամենի դեմ հայերի դժգոհություններն ու բողոքները Մոսկվան անհասկանալի կերպով անտեսում էր եւ դեռ ավելին՝ բողոքները վերադարձվում էին նրանց, ում դեմ ուղղված էին դրանք: Սովորաբար, որպես կանոն, բողոքները դիտվում էին որպես «բուրժուական ազգայնամոլության» դրսեւորում, եւ նրանց հեղինակները ենթարկվում էին դաժան հետապնդումների:

ԼՂԻՄ-ի կյանքի բոլոր բնագավառներում արմատավորված ծայրաստիճան աղետալի վիճակը վկայում էր, որ ռեգիոնում իրականացված ազգային խտրական քաղաքականությունն ունեցել էր մի անսքող նպատակ՝ հնարավորին չափ արգելակել հայկական մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը (*«Социалистическая индустрия»*, 30 #թթ., 1989г.), ոտնահարել հայ բնակչության շահերը, ստեղծել անտանելի վիճակ եւ դրանով իսկ արագացնել մարզից հայերի դուրսնորումը:

Ահա թե որտեղ պետք է փնտրել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի նորագույն շրջանի կամ երրորդ փուլի ակունքները, որ հետագա տասնամյակներում, մասնավոր Անդրֆեդերացիայի վերացումից հետո (1936 թ.), էլ ավելի սրվեց եւ վերածվեց Արցախյան կամ Ղարաբաղյան շարժման:

Ղարաբաղյան շարժումը Խորհրդային Միությունում եղավ դեմոկրատիայի առաջին ծիծեռնակը, նրա միջոցով արթնացան ուրիշ ժողո-

վուրդներ: 1988 թվականի գարնանը Ստեփանակերտում կարելի էր տեսնել Ռուսաստանից, Ուկրաինայից, Բալթիկայից, նույնիսկ Մոսկվայից ու Լենինգրադից ժամանած շիկահեր մարդկանց խմբեր, որոնք եկել էին ուսումնասիրելու, ապա իրենց մոտ տարածելու Ղարաբաղյան շարժման փորձը: Նրանք ապշել էին ցույցերի ելած մարդկանց կարգապահությունից, զսպվածությունից, հարցերի լուծման դեմոկրատական սկզբունքները պահելու կարողությունից:

Մեծ հումանիստ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Անդրեյ Սախարովը նույնպես եղել է Արցախ-Ղարաբաղում, նրա մայրաքաղաք Ստեփանակերտում: Նա տարբերություն չէր դրել 1968-ի Չեխոսլովակիայի եւ 1988-ի Լեոնային Ղարաբաղի միջեւ, Բեռլինի պատի ու Լաչինի ճանապարհի միջեւ, Մերձբալթիկայի ու Արցախի ինքնորոշման իրավունքների միջեւ, քանզի Արցախն իր մայր Հայրենիքից բաժանել էին միայն քարտեզով, կուսակցական որոշումներով: Բայց հոգով, սրտով, երազանքներով, ուրախություններով, կենաց ու մահու պայքարով Հայաստանն ու Արցախը միշտ միասին են եղել, եւ դա հայ ժողովրդի սրբազան իրավունքն է:

Այո, արցախյան ազգային ազատագրական հուժկու շարժումը շատ ազգերի համար ընդօրինակման դաս եղավ, նրանց արթնացրեց լեթարգիական քնից, ափնակոծեց Արեւելյան Եվրոպան, Մերձբալթիկան, եւ նրանք անկախություն ձեռք բերեցին, մինչդեռ արցախցիների ճիչը սովետական իշխանության ժամանակ մնաց «ձայն բարբառոյ հանապատի»:

Արդ, օրինական հարց է ծագում. ինչո՞ւ խորհրդային իշխանության օրոք Ղարաբաղի հիմնախնդիրը չլուծվեց: Չէ՞ որ 1988 թ. փետրվարից մինչեւ 1990 թ. վերջը Արցախի պրոբլեմի կապակցությամբ ընդունվել է 7 միութենական որոշում (չհաշված այն բազմաթիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ եւ ԼՂԻՄ-ի պետական իշխանության ու կառավարման մարմինների կողմից): Ահա թե այդ որոշումներից մեկի՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ին ընդունած որոշման մասին ինչ էլ ասել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը. «Հուլիսի 18-ին, Կրեմլին բնորոշ սցենարով խաղացած էժանագին ֆարսը իր ողջ էութամբ ցուցադրեց, որ ԽՍՀՄ չկա եւ չի կարող լինել ժողովրդական իշխանություն: Այստեղից էլ եզրակացություն. կարելի է՞ խոսել այն մասին, որ սովետները ձգտում են լիակատար խաղաղություն հաստատել աշխարհում, եթե

Կրեմլը, կոմունիզմին հոգեհարազատ ցինիզմով, կոխկրտել է իր ժողովուրդներից մեկի ազգային հպարտությունը եւ իշխանության ամբողջ հեղինակությամբ հարձակվել նրա վրա» (*Մաքեն Միտչան, Արւազ, Եր., 1991, թ. 79-80*): Այնուամենայնիվ, ինչո՞ւ այդ հզոր երկիրը չուզեց, չցանկացավ լուծել փոքրիկ Ղարաբաղի շատ փոքրիկ հարցը:

Պատճառն այն է, որ, ինչպես իրավագիտորեն գրել է գերմանացի գիտնական Թեսա Յոֆմանը, խորհրդային կենտրոնական իշխանությունը հայկական պահանջների ամբողջ համալիրը շարունակաբար զոհաբերել է խորհրդային արտաքին քաղաքականության «բարձրագույն» համադրությամբ եւ ԽՍՀՄ ժողովուրդների «ինտերնացիոնալիզմի եւ եղբայրության» կարգախոսներին (տե՛ս Թեսա Յոֆման, Տանկերը վերակառուցման դեմ: Փաստաթղթեր Արցախում եւ նրա շուրջ լախման մասին, Բերմեն (ԳՖՀ), 1989 (գերմաներեն): Սույն գրքի վերաբերյալ գրախոսական է տպագրվել «Գրական թերթի» 1990-ի մարտի 16-ի համարում):

Բնութագրական է նաեւ ամերիկյան «Թայմ» թերթի 1989 թ. հոկտեմբերի 23-ի հոդվածը: Նշելով, որ Արցախի համար պայքարում են եւ Հայաստանը, եւ, որքան էլ զարմանալի թվա, Ադրբեջանը, թերթը կոլրակացնում է. «Դա, հիրավի, տարօրինակ պայքար է: Մի կողմն իրավագիտորեն պահանջում է վերադարձնել այն, իսկ մյուսը կատաղորեն դիմադրելով, կեղծիքի ամրոցներ է կառուցում ոչնչից չխորշելով, ընդհուպ մինչեւ քաղաքական հանցագործությունը՝ շրջափակումը: Բայց որքան էլ տարօրինակ է, մրցավարը (*Մոսկվան-Շ.Մ.*) մինչեւ հիմա թարեհաճ է կիսալուսնի խորհրդանշանով կանաչ անկյունում նստած բոնցքամարտիկի հանդեպ»: Կարծում են, սպառիչ է ասված:

Դրա հետ մեկտեղ չի կարելի անտեսել մի շատ եական հանգամանք էա: Ուս մարդը ընդհանրապես «կենսատարածության» պրոբլեմ երբեք չի ունեցել: Քանզի ռուս զինվորի ոտքը որտեղ դրվել է (ցարեթից մինչեւ վերջին մուծիկը), այն ընկալվել է որպես սեփական, իսկ այնտեղի բնիկ բնակչությունը՝ հպատակներ: Այստեղից էլ նրա քար անտարբերությունը, արհամարանքը, նույնիսկ զայրույթը փոքր, կործանման, հայրենիքը կորցնելու վտանգի եզրին կանգնած ժողովուրդների կենսական, ճակատագրական հիմնախնդիրների հանդեպ: Այստեղից էլ Ղարաբաղցիներիս արդարացի պահանջները քարին քսելու Մոսկվայի տմարդի քաղաքաշխանությունը: Ահա թե ինչու Ադր.ԿԿ կենտկոմի 2-րդ քարտուղար, ազգությամբ ռուս Պ.Ելիստրատովը Ղարաբաղի հայ բնակչության նվազումը,

արտահոսքը, հայկական տասնյակ գյուղերի հայաթափումը համարել էր «օրինաչափ երևույթ»:

- Ինչ պարտադիր է, որ դարաբաղցիները ապրեն Ղարաբաղում,- ասել էր նա:

Իսկ ԼՂ կուսմարզկոմի 2-րդ քարտուղար, ազգությամբ դարձյալ ռուս Վոլոդիմը ուղղակի լկտիաբար բացեցիբաց հայտարարել էր. «для нас один хрен, кто в Карабахе проживает»:

Դեռ ավելին, 1991 թ. փետրվարին մեկ այլ ռուս պաշտոնյա, ԼՂԻՄ կազմկոմիտեի նախագահ, Ադր. ԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Վ.Պոլյանիչկոն Ադր.ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում ուղղակի հայտարարել է. «Земля карабаха – наша земля, и мы должны занять ее для наших детей»:

Այսպիսով, Ղարաբաղում իրականացված ցեղասպանությունը հովանավորվել, իրականացվել է նաև ազգությամբ ռուս կաշառակեր պաշտոնյաների գործուն մասնակցությամբ: Էլ չեն անդրադառնում գեներալ Սաֆրոնովին և մարդկային ցեղի մյուս տականքներին, որոնք անմեղ դարաբաղցիներին բռնում և վաճառում էին ազերթուրք մարդկերներին:

Որպես արցախագետ, 24 աշխատությունների հեղինակ, չեմ կարող չասել, որ Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը ժամանակագրական առումով վերոշարադրյալով չի սպառվում: Այն ունի շուրջ 300 տարվա պատմություն: Արբյուրագիտական հավաստի տեղեկությունները, պատմական անհերքելի փաստերը միանշանակ վկայում են, որ Արցախը՝ Հայաստանի արևելյան պատվարը դարերի ընթացքում դիմակայել է քոչվոր ցեղերի ասպատակություններին՝ ստեղծելով իր անկրկնելի մշակույթը, պահպանելով ազգային ինքնությունը, հայի ամենացայտուն դիմագիծը (В. Бунак, "Антропологический состав населения Кавказа", Вестник гос. музея Грузии, 1946г., стр. 96.):

Սակայն, Արևելյան Անդրկովկասում, հայկական պատմական տարածքների վրա, 1918 թ. «Ադրբեջան» կեղծամունքով արհեստական խամաճիկ պետություն ստեղծելով, թուրքական փաշաները նաև նպատակ էին հետապնդել բնաջնջել հայությանը և դեպի Սիջին Ասիա՝ իրենց նախնիների հայրենիք, դուրս գալու պատվար ստեղծել: Ահա թե ինչու ավելի խորացավ, ավելի խճճվեց Արցախ-Ղարաբաղի

հիմնախնդրի լուծումը: Այն ունեցել է երեք հիմնական փուլեր: Առաջինը ընդգրկում է XVIII դ. քսանական թվականներից մինչև XIX դ. սկիզբը, երբ հայ ազատագրական ուժերը իրենց մելիքների (իշխանների), զորապետների և հոգևորականների գլխավորությամբ փորձում էին եվրոպական քրիստոնյա պետությունների օգնությամբ ազատագրել Հայաստանը և վերստեղծել հայկական պետականությունը: Սակայն քնած ու թմրած չէին բռնակալները: Ըմրոստացած հայերին պառակտելու, ճնշելու և Ղարաբաղում ժողովրդագրական հաշվեկշիռը մուսուլմանների օգտին փոխելու համար հայկական երկրամասում արհեստականորեն ստեղծեցին Ղարաբաղի մուսուլմանական խանություն: Թեև պարսկական շահերի կողմից մեծամեծ կաշառքներով նշանակված խաները իրենց ուղքի տակ հող չեն ունեցել, երկրամասի օրինական տերեր չեն եղել, այսինքն՝ Ղարաբաղի խանությունը բնավ չի ստեղծվել ո՛չ Ֆիզիկա-աշխարհագրական, ո՛չ տնտեսա-աշխարհագրական, ո՛չ պատմամշակութային և ոչ էլ էթնիկական հիմքերի վրա, այսուհանդերձ նրանք մեծամեծ տառապանքներ, ավերածություններ պատճառեցին իրենց «հպատակ» քրիստոնյա հայերին:

Ինչպես հայտնի է, մահմեդական խաների հետ հայկական տարածքներ թափանցած զգալի քանակությամբ թուրքացեղ, քոչվոր ու ավազակաբարո ցեղախմբերի վայրագությունների հետեանքով մի կողմից հայկական երկրամասի քաղտեզը բզկտվեց, մյուս կողմից՝ ավելի բորբոքվեց հայերի ազատագրական պայքարը:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1800 թ. մինչև 1917 թ. ռուսական հոկտեմբերյան հեղաշրջումը: Այդ ժամանակաշրջանում ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների թատերաբեմում հայտնված Հայաստանը, Արցախը մեծամեծ փորձությունների ենթարկվեցին: Փաստորեն, երեք մեծ տերությունները՝ Պարսկաստանը, Թուրքիան և Ռուսաստանը իրենց նվաճողական նկրտումներից ելնելով, ինչպես իրավացիորեն գրել է արցախագետ Ա. Հակոբջանյանը, ջանացել են երկատել Արցախ-Ղարաբաղ հասկացությունը, այն բաժանելով Լեռնային և Դաշտային մասերի: Դաշտայինը հայաթափված, մարսված համարելով՝ օղակը սեղմեցին Լեռնային Ղարաբաղի պարանոցին, այդ վերջին հայկական հենարանը ևս բռնագրավելու հեռանկարով: Այլ կերպ ասած, այս անգամ էլ հայերի բախտը չբերեց, որովհետև Ղարաբաղի հայ մելիքների գործը աջակցությամբ ռուսները նվաճեցին Արևելյան Անդրկովկասը, այդ թվում նաև Արցախը, բայց, ավաղ, սկսե-

ցին սերտորեն համագործակցել հայերի երդվյալ թշնամի պարսկական խաների հետ: Քանզի խաների օգնությամբ Անդրկովկաս թափանցած մուսուլմանական վայրենի ցեղախմբերին հնազանդեցնելու խնդիր կար, իսլամական ազգերին սիրաշահելու եւ տաք օվկիանոս դուրս գալու քաղաքական հեռահար նպատակ կար: Ահա թե ինչն էր կարելուրվել եւ ինչ սեւեռուն նպատակներ էին հետապնդվել: Սա արդեն ռուսական դիվանագիտություն էր, որին, դժբախտաբար, զոհաբերվեցին հայ ժողովրդի ազգային շահերը, եւ Եկատերինայի խոստացած Հայկական պետությունը՝ Շուշի մայրաքաղաքով, չվերականգնվեց:

Հանրահայտ է, որ Ռուսաստանի հետ Կովկասում, Ղրիմում, Բալկաններում պատերազմող Օսմանյան թուրքիան կրելով պարտություն պարտության հետեւից՝ ստիպված էր փոխել իր ռազմավարությունը. նա նենգաբար մտադրվում էր թուլացնել եւ փլուզել Ռուսաստանը ներսից: Օգտվելով դարասկզբին այնտեղ թագավորող խառնաշփոթությունից եւ երկպառակություններից՝ Կովկասը հեղեղվում էր թուրքական գործակալներով, իսլամի հավատքի քարոզիչներով եւ զինվորական հրահանգիչներով, որոնք սերտ կապեր էին հաստատում տեղական ծախու պաշտոնյաների, մահանգապետերի եւ իրենց բոլշելիկ հորջորջած մի քանի հեղափոխականների հետ (Կովկասում՝ Ի. Ստալին, Լ. Բերիա, Ն. Նարիմանով, Ա. Կարաեւ, Մ. Բաղիրով եւ այլն): Ավելին, թուրքալեզու ցեղերի միասնության նպատակով, ստեղծվում էր Մուսավաթ ազգայնական կուսակցությունը, որը հենց սկզբից բազմիցս հռչակել էր իր հավատարմությունը պանթուրքական ազգայնական գաղափարներին: Նրանք հրահրում էին ազգամիջյան ընդհարումներ, որոնք մի շարք գավառներում վերաճում էին հայերի զանգվածային կոտորածների: Այդ սարսափելի ջարդերից չխուսափեց նաեւ հայկական երկրամասի մայրաքաղաք Շուշին:

Փաստորեն, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Շուշին դարձավ թուրք-ադրբեջանական, պանթուրքական զավթողական քաղաքականության զոհը: Թուրքիայի օգնությամբ Անդրկովկասում, ըստ էության, ուրիշների տարածքում, 1918 թ. ստեղծվեց երկրորդ թուրք-ադրբեջանական պետությունը: Սակայն, նկատի առնվելով այդ պետության զավթողական, նվաճողական քաղաքականությունը, իրավական ճանաչում չգտավ եւ չընդունվեց Ազգերի լիգայում:

Թեւեւ ադրբեջանցի հեղինակները պետպատվերով անթույլստրե-

լի, ավելի ճիշտ դատապարտելի մեթոդներով փորձում են «ապացուցել», որ իբր «ադրբեջանցիները» հանդիսանում են կովկասյան ադվանների հետմորդները, հետեւապես իրենք Անդրկովկասի հնագույն մոդովուրդներից են: Սակայն անժխտելի իրողություն է, որ Արեւելյան Անդրկովկասը մինչեւ 20-րդ դարը չգիտեր ո՛չ «Ադրբեջան» անվամբ պետություն եւ ո՛չ էլ ընդհանրապես «ադրբեջանցի» ժողովուրդ: Նույնիսկ 1918 թ. մայիսին, երբ Բաթումի քաղաքում բանակցություններ կին վարվում (որտեղ, ի դեպ, շոշափվել է նաեւ Ղարաբաղի հարցը) Անդրկովկասում ստեղծվելիք ազգային-վարչական միավորումների մասին, արձանագրվել էր, որ տարածաշրջանում պետք է երեք անվամբ պետություններ ստեղծվեն՝ Վրաստանը, Հայաստանը եւ Արեւելյան Անդրկովկասը: Քանզի վերջինս չուներ որոշակի ազգային տարբերակիչ՝ Ինչու: Որովհետեւ Ադրբեջանի հանրապետության գոյությունը, իլրեւ վարչական տարածք, սկսվել է նույն թվականի հուլիսի 4-ից (տես *В. Сысов, Краткий очерк истории Азербайджана, Баку, 1925, стр. 3*) Արիեստականորեն ստեղծված Ադրբեջանի Հանրապետության մասին գրեթե նույնն են ասել նաեւ Ա. Կրեմսկին, Ե. Պախտոմովը եւ այլ պատմաբաններ:

Հենց առաջին օրերից նպատակ էր դրվել ոչ միայն ընդարձակել նորակազմ պետության տարածքը, այլ նաեւ ուղիղ սահման ստեղծել Խորբիայի հետ եւ, վերջին հաշվով, զավթել ամբողջ Կովկասը: Իզուր չլին թուրք-ադրբեջանական ասկյարները ռազմերթի ժամանակ երկում «Բիր, իբի, Կավկազ բիզիմքի» («Մեկ, երկու, Կովկասը՝ մեզ»): Մեր օրերում էլ այդ աշխույժ քայլերգի բառերը չեն կորցրել իրենց իմաստը:

Բնական է, որ այդ պահանջատիրությունը հայ ժողովրդի համար նոր գոհերի սպառնալիք էր նշանակում, եթե ոչ զլխովին ֆիզիկական ուղեչացում: Ապրելով թուրքական ցեղասպանության արհավիրքները (որի ընթացքում սպանվեց 1,5 միլիոն հայ) եւ ուժերը լարելով դիմագրավելու արեւմուտքում թուրքական զորքերի հարձակումը, Հայաստանը ստիպված էր պաշտպանական կոիվներ մղել նաեւ արեւելքում:

Ղարաբաղցիների խիզախ պաշտպանությունը կանխեց երկրամասի զավթումը, թեւ ուժերը անհավասար էին, իսկ զոհերը՝ հսկայական: Այս պարագայում էլ, նույնիսկ Ադրբեջանի Հանրապետությունը հարկադրված եղավ Ղարաբաղի հայության պահանջների կապակցությամբ համաձայնագիր ստորագրել եւ պայմանավորվել, որ Ղարաբա-

դի կարգավիճակի հարցը պետք է լուծվի փարիզյան խաղաղասիրական համաժողովում, միջազգային իրավունքի հիման վրա: Փաստորեն, մինչև 1923 թ. կեսերը Արցախը մնում էր որպես «անկախ խորհրդային տարածք»:

Երրորդ փուլը, որի մասին արդեն խոսք եղավ, սկսվեց Արեւելյան Անդրկովկասում արհեստական «Ադրբեջանի Զանրապետություն» ստեղծելուց հետո եւ, բարեբախտաբար, ավարտվեց 1988 թ. արցախցիների փայլուն հաղթանակով: Եթե օսմանյան բուրբերին չհաջողվեց զենքի ուժով դարաբաղցիներին հպատակեցնել իրենց ստեղծած «Ադրբեջան»-ին, ապա բոլշեիկները կեղծ լուզումներով, սուտ ու փուտ խոստումներով հայկական երկրամասը ուղղակի բանադրանքով ենթարկեցրին Ադրբեջանի ԽՍՀ-ին: Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի 70 տարվա պատմությունը ոչ միայն քաղաքական ցեղասպանության փաստ է, այլեւ, անկասկած, կազմակերպված հանցագործությունների յուրօրինակ յաթաղան:

ՉՆՕՐՅԱ ԵՎ ՆՈՐՕՐՅԱ ՆԵՆԳԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամ՝ ինչպես են Ադրբեջանում կեղծել եւ շարունակում են կեղծել Արցախ-Ղարաբաղի հիմ ու նոր պատմությունը եւ ոչ միայն պատմությունը

*Պատմությունը ժողովրդի հիշողությունն է:
Եվ որպեսզի փոխեք ժողովրդին, բավական է փոխել նրա հիշողությունը:
ԱՆՂՐԵ ՄԱԼՅՈՆ*

Ինչի՞ էր ձգտում կամ ի՞նչ մտավարժանքներով է զբաղված Ադրբեջանի խորհրդային եւ ժամանակակից պատմագրությունը: Զարկավ, եթե մինչև 1950 թվականը վերելի պատվերով լուրջ փորձեր էին կատարվում ապացուցելու, որ իրենք՝ ադրբեջանցիները, ֆուրքեր չեն, այլ Ուրմիա լճի մերձակայքում մ. թ.ա. IX-VIII դդ. գոյատևած Մանա (Ար-Մանա) պետության իրական ժառանգորդներ: Սակայն շուտով պարզ դարձավ, որ այդպիսի ցնորամիտ ենթադրությունները հիմնազուրկ են եւ քնծիծաղ առաջացրին ոչ միայն Իրանում եւ Թուրքիայում: Սակայն Բաքվում հույսները չկտրեցին եւ շարունակեցին նույն էքսկուրսը կատարել դեպի պատմության խորքերը եւ «հայտնագործեցին» իրենց համար նոր նախահայրեր՝ հանձինս պատմության մեջ երբեւէ գոյություն չունեցած աղվան անունով ժողովրդի՝ իր «դարավոր» պատմությամբ եւ «հարուստ ու զարգացած» մշակույթով: Եվ ապա, ծայրահեղ մացիոնալ շովինիզմի եւ պանթուրքիզմի ուժեղ ազդեցության տակ, մի չտեսնված ու չսված համառությամբ, սրբագրվել, խմբագրվել են պատմական հանրահայտ փաստերը: Ցանկալին իրականության տեղ անցկացնելու համար հորինված նյութերով ստեղծվել է բոլորովին բարեփոխված, մոդեռնացված պատմություն: Փաստորեն, հակազիտական մարզանքներով կարճ ժամանակամիջոցում մոնտաժվել է մի խառնաշփոթ, շինծու պատմագրություն, որը, բնականաբար, ոչ թե արտահայտում է առարկայական իրականությունը, այսինքն՝ այն, ինչ եղել է, այլ այն, ինչ ցանկալի է:

Մի խոսքով, Ադրբեջանի պատմագրությունը, պետական պատվերով, պատմական անհերքելի փաստերը, իրողություններն անդադար,

անպատիժ շրջում է գլխիվայր՝ հույսը դնելով անգիտակ հասարակա-
կան, աշխարհաքաղաքական ամենգիայի վրա եւ համառորեն կեղ-
ծում է Արցախի եւ ոչ միայն Արցախի հազարամյակների պատմությու-
նը: Ադրբեջանի Զանրապետության այժմյան տարածքում ապրած եւ
ապրող հին ժողովուրդների նկատմամբ ադրբեջանցիների գերազան-
ցության կանխակալ դիրքերից գրված «աշխատությունները» ուղղա-
կի տողորված են շովինիզմի, պանթուրքիզմի ոգով: Առանց այք թար-
թելու, մի առանձին էգոիզմով թուրքացվել-յուրացվել են Արեւելյան
Անդրկովկասի արմատական ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թա-
թերի, թալիշների, ուղիների պատմությունը, մշակույթը:

Եվ որ պատմության նման նենգափոխումները ոչ թե առանձին հե-
ղինակների գրչի գործ, սուբյեկտիվ կարծիք կամ վրիպում են, այլեւ
կրում են ընդգծված պաշտոնական քաղաքական բնույթ՝ որոշակի
նպատակով պարտադրված «գիտական ուղղություն»: Ասվածը հիմ-
նավորելու համար այստեղ տեղին է մեջբերել Ադրբեջանի նախագահ
Չեյրար Ալիեւի պատվերը իր «ամենակարող» գրչակներին. «...հետա-
գայում էլ պետք է հորինել այնպիսի աշխատություններ, որոնք մշտա-
պես, հետեւողականորեն ապացուցեն, որ Ադրբեջանին են պատկա-
նում այն հողերը, ուր ներկայումս տեղավորված է Զայաստանը: Մենք
պետք է դա անենք: Մենք պիտի ճանապարհ բացենք մեր հետագա սե-
րունդների համար» (*«Բակինսկի ռաբոչի», 8.02.1999 թ.*): Ահա թե որտե-
ղից է գալիս ստի եւ կեղծիքի պետպատվերը, ասել կուզի՝ սուտն ու
կեղծիքը աշխարհի «խուլ ականջին» հասցնելու ցնորամիտ հրահան-
գը: Այն իրականացնելու դատապարտելի գործին են լծված համարյա
ամբողջ ադրբեջանական պատմաբանասիրական գիտությունը, մաս-
սայական ինֆորմացիայի միջոցները: Ցավոք, այդ մարտնչող պատ-
մության առաջին զոհը այս անգամ էլ դարձավ Արցախի հայ բնակչու-
թյունը, որի հազարամյակների հերոսական անցյալը, հարուստ մշա-
կույթը քմահաճորեն, գրչի մի հարվածով վերագրվեց մերթ աղվաննե-
րին, մերթ ադրբեջանցիներին, մերթ... ում ասես, բայց ոչ իր իսկական
տերերին՝ հայերին: Դեռ ավելին՝ քիչ փորձեր չարվեցին եւ այժմ էլ շա-
րունակում են արվել, որպեսզի «ապացուցեն», որ իբր «Ղարաբաղի
հայերը իսկական հայեր չեն», որ ղարաբաղցիները մի դեպքում «եկ-
վորներ են, մյուսում՝ հայացված աղվաններ, ցեղեր» եւ այլն: Մի խոս-
քով, պրոպագանդիստական դեմարշ է ձեռնարկվել՝ պատմական Զա-
յաստանի սահմաններից «դուրս բերել» հայկական մի շարք մարզեր,

ինչպես, օրինակ, Արցախ-Խաչենը, Սյունիքը, Նախիջեւանը, Գարդ-
նանքը եւ այլն: Միաժամանակ «գիտական հիմնավորված» լկտի կո-
չեր են արվում՝ Արցախ-Ղեռաբաղի հայ բնակչությանը հակադրել հայ
ժողովրդին, անջատել, պոկել նրանից: Պրոպագանդիստական այս
բացահայտ զառանցանքները, որպես կանոն, ուղեկցվում են հայ ժո-
ղովրդին վարկաբեկելու, նրա արժանապատվությունը նսեմացնելու,
հուշարձանները ոչնչացնելու, օրինական պահանջների մասին ճշ-
մարտությունը սքողելու չղադարող պրովոկացիաներով:

Ղարաբաղի հայը բնավ չի ուզում աղավաղված, նորացված տես-
նել նախ առհասարակ, իր հայրենի երկրամասի նախաստեղծ պատ-
մությունն ու մշակույթը եւ ապա, իր հայ մարդու ազգային եւ պատմա-
կանորեն ձեւավորված հոգեբանական կառուցվածքը: Թեեւ այդպիսի
արդյունքի հասնելու համար մեր կյանքին ու ճակատագրին անընդ-
հատ միջամտել եւ միջամտում են մեզ բարեկամ ձեւացող Ադրբեջանի
ղեկավարներն ու մտավորականության որոշակի խավերը: Այո, այս
հանրապետությունում տարիներ շարունակ ջանք ու եռանդ, ժամա-
նակ ու միջոցներ չեն խնայվել խեղաթյուրելու, խճճելու Արցախի (ին-
չու միայն Արցախի) բազմադարյա պատմության հանրահայտ փաս-
տերը, դեմքերը, մշակույթի իրեղեն նյութերը: Զանում այդ կաղապարի
չարամտորեն նենգափոխվում է հայ ժողովրդի պատմությունը, զանա-
զան արտառոց ու ստահող վերսիաներ են արվում պատմական բախ-
տորոշ իրադարձությունների, անձնավորությունների մասին, ստվեր է
գցվում հայ ազգային-ազատագրական պայքարի վրա, շպարվում է
նվաճողների, ցեղասպանների, խաների, փաշաների, սուլթանների եւ
ավագանների նողկալի կերպարանքը: Գիշենք, թեկուզ, Մաքսիմ Գոր-
կու բնորոշմամբ «մեծ ավագակ Ղաչաղ Նաբուն», որին ադրբեջանցի-
ները ազգային հերոս են դարձրել եւ նրա մասին երգեր են երգում: Ինչ
ասեմ, թուրքի «տրամաբանություն» է:

*ա) Թե ԻՆՉՊԵՍ Է ՎԵՐԱՓՈՒՎԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ
ՍԵՓՎԱՆԱՇՆՈՐԳՎԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՍՐՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Զայոց պատմության սիստեմատիկ խեղաթյուրումը, Ադրբեջանի
սազացրած պատմությունը մի քանի դարերով ետ տանելու փորձերը
կատարվում են հանդիսավոր, թուրքական պատմագիտական «հե-

տագոտությունների» կեցվածքով, եւ կեղծ գիտական արտադրանքը հաճախ քողարկվել էր մարքս-լենինյան ֆրազաբանություններով: Մինչդեռ, իրականում այդ «նոր պատմության» աստառը, հենքը պանթուրքիզմի գաղափարախոսությունից էր հյուսված եւ ուղղակի արծագանքում էր «Պանթուրքիզմը սպասում է», «Մեծ Թուրքիայի քարտեզը» (որն ընդգրկում է ամբողջ Կովկասը, Միջին Ասիան եւ Ռուսաստանի բազմաթիվ մարզեր), «Պանթուրքիզմի հիմունքները», մանավանդ «Թուրքերի հովանու ներքո թուրքերին միավորելու գաղափարը» աշխատությունների հիմնական դրույթներին: Եվ արդյո՞ք այդ չէ պատճառը, որ ադրբեջանցի պատմաբանները ամեն առիթով, թերեւս նաեւ առանց առիթի, հանդես են գալիս «խալամական, մուսուլմանական ժողովուրդների» անունից, չափից ավելի մեծարում, գովերգում եւ իրենցը համարում պարսիկ, քուրդ, արաբ պատմական գործիչներին, հայակեր խաներին, ավազակապետերին եւ ամեն կարգի նազիրվեզիրներին: Ադրբեջանի Դանրապետության տարածքում գտնվող հայկական, ռուսական բնակավայրերի (պատմականորեն ձեւավորված) անունները հաճախակի փոխվել եւ այժմյան Ադրբեջանի տարածքի ու նրանում ապրող հնագույն ժողովուրդների հետ ոչ մի կապ չունեցողների անուններով են կոչվել: Եվ արդյո՞ք այդ չէ պատճառը, որ ադրբեջանցի հեղինակները իրենց են վերագրել «մուսուլմանական աշխարհի սրտում» գտնվող պատմության բեմից վերացված եւ նաեւ չվերացված հին ժողովուրդների պատմությունը, մշակույթը: Եկվորներ համարել, հայացված աղվաններ դարձրել Դայաստանի արեւելյան մարզերի հայ բնակչությանը: Բոլորովին էլ պատահական չէ, որ ադրբեջանցի պատմաբանների այս արշավը ոգեւորությամբ պաշտպանում, խրախուսում են պանթուրքիստական գաղափարախոսության ջատագովները:

Ադրբեջանցի «գիտնական» այրերը փնթի մսավաճառի պես անընդհատ կացնահարում են Անդրկովկասի պատմությունը, բացահայտ քամահրում պատմական փաստերը, առաջ քաշում սուտ ու կեղծ հայեցակարգեր (կոնցեպցիաներ) եւ ապա հորթային հրճվանքով հենվում դրանց վրա ու «ստեղծում» սեփական ժողովրդի հնացրած, գունազարդված պատմությունը:

Չի կարելի չհամաձայնել փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Կապուստինի հետ, որ կեղծ գիտնականները հեշտությամբ խցկվում են ռեգիոնի մշակույթի պատմության մեջ եւ հին կլասիկները

րին քաշքշում ազգային մի «գաղութից» մյուսը ու դրանով նրանց համարում իրենց ազգի «սրբություններ»՝ մոռանալով, որ Նիզամու դաբաշջանում դեռ չկային ադրբեջանցիները՝ որպես առանձին ժողովուրդ:

Դարերի տարեգրություններից ադրբեջանցի կեղծարարները վերցնում են սուկ այն, ինչ կարող է որել կերպ հարմարեցվել իրենց նենգամիտ նկատառումներին: Դրանով նրանք, նախ, խախտել են նույն մեխիս ու նույն նալին, ինչին խփել ու շարունակում են խփել Անկարայի իրենց ուսուցիչ-գործընկերները: Դետո էլ՝ Ադրբեջանի կրոնական մուլեռանդ ամբոխի մեջ կամա թե ակամա բորբոքում պանթուրքիստական շովինիզմ եւ ապա այդ պարզամիտ մասսայի որոշակի խավերին ներքաշում, մասնակից դարձնում հակահայկական, հակառուսական, հակագիտական եւ հակաբանական վայրագություններին: Եվ, բացի այդ, կարծես գոյություն ունի ներքին պայմանավորվածություն մի կողմից թուրք, մյուս կողմից՝ ադրբեջանցի կեղծարարների միջեւ: Դայաստանը իրար մեջ բաժանելու հարցում: Եթե թուրքերը՝ սկսած 1923 թվականից, Անատոլիայի արեւելյան սահմանը բերում հասցնում են Արաքս գետը, ապա ադրբեջանցի հեղինակները (Ճիշտ է՝ 40-50 տարի ուշացումով) Ադրբեջանի արեւմտյան սահմանը նույնպես ձգում են մինչեւ Արաքսը: Ահա թե ինչու 1969 թվականին Բաքվում ծափահարություններով ընդունեցին Սովետական Միություն այցելության եկած Թուրքիայի պրեմիեր-մինիստր Ս. Դեմիրելի ելույթը, որտեղ նա առաջ, որ Թուրքիան եւ Ադրբեջանը իրար ընդարձակ սահմանակից են եւ համարվում են միասնական արյունակից ժողովուրդ: Թեւեւ, ինչպես հայտնի է, Թուրքիան Ադրբեջանի հետ ոչ պատմականորեն եւ ոչ էլ աշխարհագրականորեն գրեթե սահման չունի: Նրանք իրարից անջատված են ԴեսՄԴ-ով: Երբ հարկ է լինում հիշեցնել այդ մասին, ապա թե՛ թուրք, թե՛ ադրբեջանցի պատմաբանները առանց դիմակի միաբերան հայտարարում են, որ Դայաստանը «Դայաստան կոչվելու իրավունք չունի, քանի որ դա եղել է հողեր, որոնք կարող էին նշվել միայն աշխարհագրական տերմիններով»:

Դժբախտաբար շատերը ժամանակին չհասկացան, չկարողացան հենց սկզբից կռահել Դայաստանի եւ նրա պատմության պանթուրքիստական նոր բաժանման իմաստը: Ըստ էության, ինչպես հարկն է, չասվեց, թե ինչ նպատակ է հետապնդում երկուսուկես հազարամյակ հետո աղավաղել մի կողմից «Անատոլիա», մյուս կողմից՝ «Ալբանիա»

տերմինների բովանդակությունը, դրանք իրար սահմանակից դարձնելու հանգամանքի քաղաքական իմաստն ու նպատակը: Այո, ո՛չ ռուս փառամուլ բյուրոկրատը, ո՛չ հայ անօգնական վախկոտ մոզին, ո՛չ էլ վրացի հավակնոտ քաղբենին այդպես էլ ժամանակին չկռահեցին, թե ինչու Ադրբեջանի աշխարհագրության դասագրքերում, քարտեզներում Անդրկովկասի գետերի, լեռների պատմական անուններին կպցրին «չայ», «դաղ» թուրքերեն բառերը: Չայն ու ծպտուն չհանեցին, փաստորեն հանդուրժեցին, որի հետեւանքով մի սերնդի աչքերի առջեւ Նախ. ԻԽՍՅ-ը մաքրվեց հայերից, այնտեղ կատարվեց խաղաղ ցեղասպանություն:

Այժմ էլ վանդալիզմն է ասպարեզում: Ուշադրություն չդարձրին, բաց աչքերով կույր ձեւացան եւ չնկատեցին, թե ինչպես ներկայիս Ադրբեջանի տարածքում գտնվող տասնյակ հայկական, ռուսական բնակավայրերի անունները, օրենքով եւ առանց օրենքի փոխելով, թրջացվեցին: Այսպես, Նուխին Շաքի դարձավ, Կարյազինոն՝ Ֆիզուլի, Մոխրենեսը՝ Սուսալըխ, Դիզակի շրջանը՝ Յադրուֆի շրջան, Ստեփանակերտի շրջանը՝ Ասկերանի շրջան, Պետրովկան՝ Սաբիրաբադ, Աստրախան-բազարը՝ Ջալիլաբադ, Թարթառը՝ Միր Բաշիր, Գյորանը՝ Կասուն-Իսմայլով, Ելենեդորֆը՝ Խանլար, Ջուբովկան՝ Ալի-Բայրամլը եւ այլն: Սա՛ խորհրդային իշխանության օրոք: Այժմ տեսնենք այդ բնագավառում ինչ ավերածություններ, ավելի ճիշտ՝ քաղաքացիություններ են կատարվել հետագայում անկախությունն ձեռք բերած Ադրբեջանի Հանրապետությունում:

1992 թ. Ադրբեջանի Ազգային մեջլիսը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կարգավիճակը վերացնելուց անմիջապես հետո, հապտապ անվանափոխեց, այսինքն՝ թուրքացրեց Արցախի հայկական անուն ունեցող բոլոր բնակավայրերը: Հպանցիկ ծանոթանալով անվանափոխված բնակավայրերի ցուցակին, որը տպագրված է Բաքվում հրատարակվող («Նախկն գազեթի» թերթում (6/1-1993 թ.), էլ ո՞նց չհարցադրեմ ոգած-փչած այդ «փաստաթղթի» հեղինակներին եւ օրենքի ուժ տվողներին՝ մի՞թե հայկական Արցախ-Ղարաբաղի պատմությունը, ճշակույթը խժռելու ցանկությունը չի կրծել ձեր հոգին: Զանգի կատարվածը անպատկառ, լկտի կամայականություն է: Այն էլ թուրքին բնորոշ ձեռագրով արված սադրանք: Սա մեկ անգամ եւս վկայում է, թե Բաքվում ինչպես են մտածում, եւ ինչը ինչպես է հրամցվում: Սա Լեռնային Ղարաբաղի հայկական Հանրապետությունը զավթելու հեր-

թական գառանցանք է, որ հանգիստ չի տալիս բաքվեցի ոչ միայն կեղծ գիտնականներին, այլեւ հիպոկամպուսը կորցրած դեգենորատապաշտոնյաներին: Նստել եւ պետականորեն վերանվանել, ավելի ճիշտ՝ թրջացնել իրենց ոչ ենթակա, հարեւան ազատ, անկախ պետության տեղանունները՝ արսուրդ է, արկածախնդրություն: Սեկը լինե՞ր հարցներ մեջլիսի անաբուռ պատգամավորներին. «Դուք ո՞վ եք եւ ի՞նչ բարոյական իրավունքով եք հայկական հարյուրավոր բնակավայրերի անունները թրջացրել, երբ այդ բնակավայրերում երբեք, գոնե ցուցադրության համար, թեկուզ մեկ թուրք-ազերի չի ապրել, եւ թրջության հետ կապված որեւէ բան չի հիշեցնում» (մանրամասն տես՝ «Ազատ Արցախ», 15.05. 2003թ.):

Նրանք, ովքեր պարտավոր էին հարցնել չհարցրին, չհետաքրքրվեցին, թե ինչու պարսկական սատրապներից ներկայիս Ադրբեջանի տարածքն ազատագրող ռուսական բանակի զորավարներ Ցիցիանովի, Պասկեւիչի, Մադաթովի, Տեր-Ղուկասովի (վերջին երկուսը ծնվել են Լեռնային Ղարաբաղում), Սովետական Միության մարշալ Բադրամյանի, ավիացիայի մարշալ Խուդյակովի (խանփեդյանց), տանկային զորքերի գլխավոր մարշալ Բաբաջանյանի, Սովետական Միության ադմիրալ Իսակովի (որոնք նույնպես ծնվել են Ադրբեջանի ԽՍՀ տարածքում՝ պատմական Արցախում) անուններով շրջաններ չստեղծվեցին, բնակավայրեր չկոչվեցին: Բայց, ահա, VIII դ. պարսիկ (ժամանակագիր պատմիչ Մովսես Կաղանկատվացու վկայությամբ) «մարդախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան» Բաբելի (տես Մ. Կաղանկատվացի, Երեւան, 1969, էջ 255, 256 եւ 259) անունով, Ադր. ԿԿ Կենտկոմի որոշմամբ, Ադր. ԽՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանով, 1978 թվականին Նախ. ԻԽՍՅ նոր շրջան եւ շրջկենտրոն ստեղծվեց: Այն Բաբելի, որը հայոց Գեղարքունի գավառում «մոտ տասնհինգ հազար հոգու սրի քաշեց եւ այրեց մաքենացիների մեծ բաղաքամայրը» եւ ապա՝ «խալածական դարձրեց մոտ հարյուր հազար մարդ»: Դժվար չէ պատկերացնել այդ ավազակապետի հետագա վայրագությունների չափն ու հետեւանքները, եթե նրան չձերբակալեր Արցախի հայ իշխան Սաիլ Սմբատյանը:

Չեք տարակուսի, եթե ասվի, որ այդ դեպքերից ուղիղ 1144 տարի անց, 1982 թ. Բաքվում Բաբելին նվիրված պոեմ կգրվի եւ այն կթարգմանվի ռուսերեն եւ ապա կտպագրվի ԱդրԿԿ Կենտկոմի օրգան «Բալինսկի րաբոչի» թերթում: Պոեմում, ինչպես դա պետք է սպասել,

պատմական փաստերը, դեպքերը շուռ տված են պատկերված, որի հետեւանքով պարսիկ «արյունարբու գազանը» ներկայացվում է անմեղ զոհ, իսկ իր հայրենիքը պաշտպանող Սմբատյանը եւ նրա հայրենակիցները՝ «անարգ թշամիներ, գազաններ...» եւ այլն: Սակայն դրանով էլ չհագեցնալով, հեղինակը՝ Ռասուլ Ռզան, իր պաթոլոգիական ատելությունը հայ ժողովրդի հանդեպ արտահայտում է այսպես. «Будьте прокляты навеку, псы, незваные пришельцы» եւ այնուհետեւ իբրեւ պատգամ կոչ անում իր ցեղակիցներին.

*Մարտի գնացող հայրենիքի զավակներ,
խփեք անխնա անարգ թշամուն:*

*.....
Եվ Սումբատը այդպիսիներից էր,
Իսկ նրանք այսօր էլ կան...*

*Սումբատներ կան հիմա, շատ կան,
Անհծված լինեք դուք դարեդար՝
Անկոչ եկվորներ, շներ:*

Ի՞նչ է այս: Պարզունակ հայրենասիրություն, գռեհիկ ազգայնամոլություն, թե՞ չքողարկված նացիզմ:

Հետաքրքիր է, ի՞նչ ընդհանրություն կա պարսիկ ավզակապետի եւ ադրբեջանցիների միջեւ: Հավանաբար՝ միայն իսլամը, ինչու չէ՞ նաեւ հայերին բնաջնջելու տենչանքը եւ ուրիշ ոչինչ: Բայց չէ՞ որ բոլորին է հայտնի, որ Բաբելի, անգամ Սիզամու, Ֆիզուլու դարաշրջանում ադրբեջանցիները որպես ժողովուրդ չկային: Սակայն դա չի խանգարել, որպեսզի նրանք յուրացնեն Բաբելին եւ նրան համարեն ադրբեջանական գորավար:

Ահա թե ինչու չպետք է զարմանալ այն ադրբեջանցիների բռնարարքների վրա, որոնք Սումգայիթի ու Բաքվի ջարդարարներին անվանում էին ազգային հերոսներ: Ափսոս, որ ռուսալեզու որոշ թերթեր հաճախ եւ թեթեւ ձեռքով իրենց սամձը հանձնում էին լկտի ազգայնամուլներին եւ պանթուրքականներին՝ չգնահատելով նրանց ամբոխավարության եւ խարդախության կործանիչ ուժը, որի հիմքում ընկած են հայության նկատմամբ ատելության բորբոքումը եւ կոտորածի հրահրումը:

Նմանատիպ սադրանքները, ինչպես եւ ամեն տեսակի բախտախ-

նորությունը, անառարկելի վտանգ են ներկայացնում ազգամիջյան հարաբերությունների համար: Դրանից «հայրենիքի որդիները» ամենեւին էլ ոչինչ չշահեցին, այլ ընդհակառակը, ինչպես ցույց են տալիս ադրբեջանադարաբաղյան պատերազմի արդյունքները, նրանք պակաս չտուժեցին, քան Գարաբաղի հայերը:

Սակայն, ավաղ, դրանով բորբոքիչ կոչերը չեն ավարտվում: Ադրբեջանական լեզվով հնչող լրատվությունը ինչպես ցանկանում, այնպես էլ վերածելու է պատմությունը: Եվ ոչ միայն պատմությունը, այլ նաեւ ցանկացած իրադարձություն: Իրենց հաղորդումներում նրանք հայերին կոչում են տարբեր մակդիրներով՝ անվանելով անգամ «չգարգացած ազգ»: Մշտապես կրկնելով այդ «իրողությունները», Բաքվի գաղափարախոսները ադրբեջանական ժողովրդին համարյա թե համոզել են, որ այն հողերը, որոնց վրա հայերը ապրում են 4-5 հազար տարի իրենցից առաջ, երբ Անդրկովկասում հայտնվեցին թուրք-քոչվորները, համարվում են «րուն ադրբեջանական», «խսկոննի» հայրենիք: Թեեւ, ինչպես գրել է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, հայտնի դիվանագետ Վլադիմիր Ստուպիշինը, Ադրբեջանի ամբողջ «խսկոննուտը» հաշվվում է հարյուր տարուց պակաս, ավելի ստույգ՝ սկզբնավորվում է 1918 թվականից: Մինչդեռ Հայաստանի, ներառյալ նաեւ Արցախի պատմության ակունքները գնում հասնում են հազարամյակների խորքերը: Երբ ոչ միայն ազերիները, այլեւ նույնիսկ նրանց թուրք քոչվոր նախնիները ոչ Անդրկովկասում, ոչ էլ Փոքր Ասիայում ոտք չէին դրել: "К сожалению,- пишет В. Ступишин,- к этому чудовищной по своему ненаучности и бездарности брехне прислушиваются не только в Вашингтоне и Страсбурге, но и в Москве. Иначе мы давно бы уже услышали хотя бы об "озабоченности" МИД РФ клеветническими измышлениями Г. Алиева и его штатных пропагандистов о том, будто бы Россия в начале 19-ого века Гюлистанским и Туркменчайским договораму "расчленила Азербайджан на две части". Ведь и тогда, и вплоть до 1918 года никакого Азербайджана в Закавказье не было и расчленивать было нечего, а вот такие географические, исторические, культурные, человеческие понятия, как Армения и Арцах, были очень хорошо известны всему просвещенному миру" (см. газета "Ноев Ковчег", октябрь, 2001, Москва).

Ուզմաշունչ կրքեր են բորբոքում ոչ միայն մտավոր ոլորտի ներկայացուցիչները այլ նաեւ բարձրաստիճան պաշտոնավորները:

Հիշենք ոչ անհայտ Վեզիրովի (Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար) թատերականացված ելույթները, որը հայերի վրա մատ թափ տալով կրկնում էր, թե ինքը յոթ միլիոն մոլեռանդներով կտրորի ոչ միայն Ղարաբաղը: Նրա հաջորդը՝ Ադրբեջանի առաջին նախագահ Մուրախիբովը, սպառնում էր, որ այդ «անծոված Ղարաբաղում» քարը քարի վրա չի թողնի: Իսկ հաջորդ նախագահ, խելացնոր էլ չիբեյը իր հպատակներին հավատացնում էր, թե շուտով լողանալու է Սեւանա լճում ու «ցայ» խմելու Ստեփանակերտում: Եվ, վերջապես, Ադրբեջանի հաջորդ նախագահ, ՊԱԿ-ի նախկին գեներալ եւ ԽՍՀՄ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ Յեյդար Ալիեւը մի քանի անգամ հանձնարարել է իր ենթականերին արցախցիներին ջախջախելու առնչությամբ Ստեփանակերտում զորահանդես կազմակերպել:

Թե ինչով ավարտվեց այս ամենը, բոլորին է հայտնի:

Այստեղ տեղին է մեջբերել Վազիֆի տողերը, որտեղ, ինչպես հայելում, արտացոլված են ժամանակակից հայաստացիների կերպարները.

*Ինչեր էլ որ ասեն նրանք, ինչքան էլ շատ ճառախոսեն,
Ստեղծից ու կեղծիքից զատ նրանք ոչինչ չեն ասելու:
Մուլաներին ու շեյխերին չհավատաք, չվստահեք,
Սրբությանն մի նշույլ անգամ դուք նրանց մեջ չեք գտնելու:*

բ) ԱՍԵՆ ՀԱՅՎԱԿԱՆԸ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՋՆՁԵԼՈՒ ԵՎ ՓՈԽՆԵՐԵՆԸ ՄՈՒՄՈՒՄԱՆԱԿԱՆՈՎ ՍԱԾԻԼԵԼՈՎ ԳՄԻՐԵՐԸ ԴԵՏ ՏԱՆԵԼՈՒ ՓՈՐՉԵՐԸ

1960-ական թվականների կեսերից հետո Ադրբեջանի մասին հրատարակվող գրքերը, ալբոմները, հոդվածները, անգամ դասագրքերը, տուրիստական սխեմաները, ըստ էության, լուծում են եւ ոչինչ չեն հիշատակում ԼՂԻՄ անցյալի, ներկայի պատմության եւ ոչ էլ մշակույթի հարուստ արժեքների վերաբերյալ: Ասես հայկական մարզը գոյություն չուներ: Ասես Ադր. ԽՍՀ-ն կազմված էր միայն ադրբեջանցիներից եւ այդ հանրապետության տարածքում ուրիշ ժողովուրդներ չեն ապրել եւ չեն էլ ապրում: Իսկ այնտեղ, որտեղ հարկադրված որեւէ բան գրվում, հաղորդվում էր, ապա, սովորաբար, որպես կանոն, անտեսվում էին երկրամասի հազարամյա փառավոր պատմությունը, ճարտարապետական հանճարեղ հուշարձանները, դարաբաղցի մշամավոր հայ մարդիկ: Լռում էին, ոչինչ չէին հիշատակում վայրագ խաների, մուսա-

վաթների կատարած ավերածությունների, խարդախությունների մասին: Այդ ամենի փոխարեն ԼՂԻՄ-ին էին վերագրվում նրա հետ առնչություն չունեցող դեպքեր, դեմքեր, գանազան արտառոց, հորինված ու սարքովի պատմություններ եւ դրանք էլ սովորաբար ներկայացվում ծուռ հայելու մեջ: Առհասարակ, զգացվում է, որ ադրբեջանցի հեղինակները տարրական բարեխղճություն չունեն Արցախ-Ղարաբաղի անցյալի ու ներկայի իրական պատմության հանդեպ: Այսպես կանխամտածված անտեսվել էին բազմաթիվ ու բազմազան աղբյուրները, մշակույթի իրեղեն նյութերը, որի հետեւանքով լույս աշխարհ էին գալիս ծիծաղ առաջացնող խեղաթյուրված դատողություններ:

Ինչ կարելի է սպասել այն հեղինակից, որը կրթվել, դաստիարակվել է պանթուրքիստական գաղափարներով, կեղծ, շինծու դասագրքերով, դրկից ժողովրդի հանդեպ ատելության նուպայով: Եվ բացի այդ, դասագրքերը, պատմաբանասիրական գրականությունը տառապում են ոչ միայն հակագիտական, հակահայկական ցնդաբանություններով, այլեւ հակաբանական մեթոդալոգիայով: Մի՞թե կարելի է նվաճողներ համարել նրանց, ովքեր պաշտպանում են իրենց երկիրը, իսկ վայրենի ասպատակիչներին մեծարել, դարձնել հաղթողներ, աստծո գառներ, բնիկ արմատական բնակչությանը՝ եկվորներ, իսկական եկվորներին՝ տեղացիներ եւ այլն, եւ այլն:

Ամեն ազգ իր պատմությունն ունի: Ամեն մի մարդ իր նախնիների մասին խոսելու իրավունք ունի, մարդ սխալվելու իրավունք էլ ունի, բայց հանրագիտարանը, դասագրքերը սխալվելու իրավունք չպետք է ունենան, ինչպես եւ իրավունք չունեն նենգափոխել պատմությունը, խաղալ հարեւան ժողովրդի արժանապատվության հետ: Սակայն, ցավով պիտի ասել, Ադրբեջանի պատմագրությունը իր առաջ այդ խնդիրն է դրել եւ առանց այք թարթելու խեղաթյուրում է փաստերը, ամեն ինչ ադրբեջանական տեսնելու, ադրբեջանական ներկայացնելու մարմաջն է ասպարեզում, տեղնազին ցանկությունը (*մանրամասն տես Михаил Мельтюхов, Алла Тер-Саркисяни, Геннадий Трапезников, Исторические фальсификации с политической подоплекой, в Азербайджанской Республике на государственном уровне фальсифицируется история Закавказья, Москва, 1999, стр. 3-35*).

Ընդհանրապես, Ադրբեջանում կեղծարարների մոտ արմատավորվել է այնպիսի մի դատապարտելի մեթոդ, երբ իրենք են առաջ քաշում իրենց համար ցանկալի փաստեր, դեմքեր, թվեր եւ հետո, որպես հաս-

տատող աղբյուրի՝ հենվում դրանց վրա եւ ապա՝ «հիմնավորում, շարադրում» իրենց տեսակետներն ու եսակետները: Այսպես են «հիմնավորվել» վերջին տարիներին լույս տեսած «գիտական տեսությունները»: Այսպես են գրվել ու գրվում կեղծ պատմություններ, շինծու հոդվածներ, դիսերտացիաներ: Ավելի հիմնավոր լինելու համար բազմաթիվ հրատարակություններից բերեմ ամենահեղինակավորներից մեկը: 1971 թվականին (Մոսկվայում) «Սովետական Միություն» մատենաշարով տպագրվել է «Ադրբեջան» պրակը: Ծավալուն, շքեղազարդ գրքի տիտղոսաթերթի վրա գրված է. «Այս հրատարակությունը առանձնաձևում է գիտական բարձր մակարդակով»: Հավատա՞նք: ճիշտն ասած՝ մեր խնդրից դուրս է գնահատել գրքի հիմնական բաժինների գիտական մակարդակը: Սակայն երբ կարդում ենք «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Սարգ» ենթաբաժնի մի քանի էջերը, ապա անմիջապես զգացվում է, որ բոլոր նախադասությունները կազմված են կեղծ, սուտ, խեղաթյուրված դատողություններից ու թվերից: Նպատակ է դրված ռուս ընթերցողին ապակողմնորոշել՝ նրան հրամցնելով նենգափոխված պատմություններ, որպեսզի օտարը՝ անծանոթը, լրիվ կամ թեկուզ մոտավոր պատկերացում չկազմի ինքնավար մարզի իրական պատմության մասին: Այսպես, գրքի 252-րդ էջում գրված է. «Ղարաբաղը մինչև մ.թ. առաջին դարը Արցախ անունով մտնում էր հնագույն Ալբանիա պետության կազմի մեջ»: Այսպիսի պնդումը զուրկ է գիտական եւ իրական հիմքից: Արցախ-Ղարաբաղը, ինչպես վկայված է հայկական, պարսկական, հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում, նյութական կուլտուրայի հուշարձաններում, դեռեւս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբներից մտնում էր Ուրարտու պետության, ապա նրան հաջորդած Երվանդունիների հայկական թագավորության սահմանների մեջ: Հայկական միասնական պետությունը (մ.թ.ա. 2-րդ դարից) ներառել էր նաեւ Արցախը, որպես բուն հայկական մարզ իր Առանշահիկ հարստությամբ, որը եւ նրա կազմի մեջ մնաց մինչև 5-րդ դարի սկիզբը, այսինքն՝ մինչև Արշակունյաց հայկական թագավորության վերացումը: Այնուհետեւ պարսկահպատակ Արեւելյան Հայաստանի Արցախ, Ուտիք մարզերից եւ անդրկուրյան Աղվանքից կազմվեց մի մարզպանություն: Այդ պատճառով էլ այն կոչվեց նաեւ Աղվանք, Աղվանից երկիր: Սրա վերաբերյալ աղբյուրները, գրականությունն այնքան շատ են ու այլալեզու, որ նրանց թվարկումը մեծ տեղ կզբաղեցնի:

Նույն 252-րդ էջում, մեջբերված նախադասություններին հաջոր-

դում է. «Թաթար-մոնղոլների արշավանքներից հետո, 14-րդ դարում Ղարաբաղը նորից անցնում է Պարսկաստանի իշխանության տակ: Այդ ժամանակ էլ նրա տարածքում կազմակերպվում է Ղարաբաղի խանությունը, որի գլուխ է կանգնում տեղական ֆեոդալ Փանահ Ալի-բեկը: Արտաքին նվաճողների հարձակումներից պաշտպանելու համար նա հիմնադրում է Շուշի բերդը»: Երեք նախադասություն, երեքն էլ՝ խեղաթյուրված: Նախ Արցախ-Ղարաբաղի մեկ ու կես հազար տարվա պատմությունը անտեսվում է, զանցառվում, որպեսզի այն տպավորությունն ստեղծվի, որ Ալբանիան եւ ալբանական պետությունը, որի կազմի մեջ իբր մտել է Արցախը, պահպանվել է մինչև Ղարաբաղի ադրբեջանական խանության ստեղծումը: Այլ խոսքերով՝ ալբանացիները կամավոր դարձել են ադրբեջանացիներ: Թեեւ հայտնի է, որ Ալբանիան գտնվում էր Կովկասյան լեռնաշղթայի անդրկուրյան հատվածում եւ Արցախի հետ ստնչվում էր միայն նրանով, որ նրանք վաղ միջնադարում որոշ ժամանակով գտնվում էին պարսկահպատակ մի մարզպանության ենթակայության տակ: Եվ բացի այդ, Ալբանիան որպես վարչական միավոր, իսկ ալբանացիներն էլ որպես ցեղախմբեր, արդեն պատմության թատերալիմից վերացվել, ասիմիլյացիայի են ենթարկվել տակավին 6-7-րդ դարերում, արաբական առաջին նվաճումների ժամանակ: Սրանք հանրահայտ փաստեր են, պատմական իրողություններ, որոնց մասին լավ գիտեն նաեւ Ադրբեջանի ժամանակակից կեղծարարները: Սակայն նրանց «ալբանասիրությունը» այլ նպատակ է հետապնդում: «Պատմական Թուրքիայի» արեւելյան սահմաններին կպցնելու համար է, որ ժխտվում, զանցառվում են Արցախ-հաչենի միջնադարյան խոշոր իրադարձություններով հարուստ պատմությունը, անտեսվում, ոչնչացվում են երկրամասի հնագույն հուշարձանները, հալածվում, դուրս մղվում նրա արմատական հայ բնակչությունը: Այլ խոսքով՝ Հայաստանի արեւելյան նահանգները պոկելու համար է, որ Ալբանիան բերում հասցվում է 14-րդ դար, Ղարաբաղի խանությունն էլ ետ տարվում ոչ պակաս, ոչ ավել 400 տարով: Իսկ Փանահ Ալի-բեկը՝ խան ու «տեղական ֆեոդալ» կարգվում երեք դար առաջ, նախքան նա 1693 թ. լծնվեր: Ընդ որում՝ բառ անգամ չի ասվում, որ մինչև Ղարաբաղի խանության ստեղծումը, այսինքն՝ 18-րդ դ. կեսերը, այդ երկրամասում հայեր են ապրել, որոնց կերտած մեծարժեք պատմաճարտարապետական հուշարձաններից 20 հազարը պահպանվում են: Լռում են, չեն

գրում, որ այդ հուշարձանների մեծ մասը կառուցվել է վաղ քրիստոնեական, միջին եւ հետագա դարերում: Եվ որ այդ հուշարձանները Արցախ-Ղարաբաղի անցյալի փառքն են խորհրդանշում: Դրանք մեր նախնիների կերտած պատմության քարակերտ տարեգրությունն են, քարե մատյանները, որոնցում արտացոլված են իր ազատությունն ու անկախությունը պաշտպանած ժողովրդի հայրենասիրական ոգին, հարատեւելու անսասան կամքը: Սակայն ցավով պետք է ասել, որ Լեռնային Ղարաբաղի քարակերտ կոթողները Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի կարգադրությամբ պահվում էին փականքի տակ, նրանց մասին ոչինչ չէին գրում եւ նույնիսկ արգելում ու չէին թողնում, որ դարաբաղցիները, իրենք, իրենց հուշարձանները պահպանեն, պրոպագանդեն: Այլապես ինչով բացատրել, որ նշված «Ադրբեջան» գրքում, ԼՂԻՄ-ին հատկացված էջերի արանքում, խցկված է Կիրովաբադի (19-րդ դ. կառուցված) մեջիդի մեծադիր գումավոր նկարը: Հավանաբար, ցանկացել են ընթերցողին հասկացնել, որ տեսք՝ Լեռնային Ղարաբաղի հուշարձանները դարձյալ ադրբեջանական են: Անտեսել, լրդգել երկրամասի մեկուկես հազարից ավելի վանական-եկեղեցական հայկական հուշարձանները եւ դրսից ներմուծել մեջիդի նկարը եւ այն գետեղել ԼՂԻՄ-ին՝ հատկացված ենթաբաժնում: Սա անպատկառ արարք է պարզապես, քայլազյուզություն, պանթուրքիստական շովինիզմի թույլի ազդեցության տակ կատարված մոլագարություն:

Լեռնային Ղարաբաղի հնագույն ու միջնադարյան պատմությունը համարյա թե այս նույն կաղապարով է արտացոլված «Ադրբեջանի սովետական հանրագիտարան»-ում, դասագրքերում, գիտական պիտակով հրատարակված ուսումնասիրություններում, անգամ դիսերտացիաներում: Հարկավ, հայկական մարզի պատմության աղավաղումը, կեղծումը կատարվում է մի ընդհանուր կողով, որոշակի սխեմայով: Այս հարցում բնավ շեղում չկա: Ասես մինչեւ 18-րդ դարի կեսերը, այսինքն՝ Շուշիի խանության հանդես գալը Արցախ-Ղարաբաղը խոպան էր, եւ այդ երկրամասում կարելու իրադարձություններ չեն կատարվել, հիշատակության արժանի գործեր չեն ստեղծվել: Ասես աշխարհի երեսից չքացել, վերացել են Արցախի վերաբերյալ մատենագրությունները, ձեռագիր սկզբնաղբյուրները, տասնյակ հազարավոր վիճագիր արձանագրությունները, խաչքարերը, վանքերը, եկեղեցիները, բերդ-ամրոցները, գերեզմանները, որոնց Ղարաբաղում այժմ էլ կարելի է հանդիպել ամեն քայլափոխի: Բարեբախտաբար, դրանք բոլորը կան, պահպան-

վում են եւ մեզ պատմում են, որ (ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցի») Մեծ Հայքը Արշակունիների ժամանակ բաղկացած էր 15 աշխարհներից, որոնցից էր Կուր եւ Արաքս գետերի միջեւ ընկած Արցախ ընդարձակ հայկական նահանգը: Ասես 4-րդ դարի սկզբին Արցախում քրիստոնեություն չի տարածվել, հայոց առաջին կաթողիկոսը՝ Գրիգոր Լուսավորիչը Ամարաս հնագույն բնակավայրում եկեղեցի չի հիմնադրել, որը կառուցել-ավարտել է նրա թոռ ու Արցախի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը: Ասես Արցախը հայկական մյուս նահանգների հետ միասին (5-րդ դ. սկզբին) չի լծվել այն դարակազմիկ վերելքին, որը կապված էր ազգային գրերի ստեղծման եւ տարածման հետ: Այդ նույն ժամանակաշրջանում էլ Մեսրոպ Մաշտոցը Արցախում բացել է մի շարք հայկական դպրոցներ: Ասես հակապարսկական հուժկու ապստամբությանը (որը հայտնի է Վարդանանց սրբազան պատերազմ անունով) չի մասնակցել Արցախի փառապանծ այրուձին: Այն այրուձին, որի սխրանքները անթառամ մնացին դարեր շարունակ: Հարկադրված եւ գայթակղությունից դրդված բերեմ ռուս ժողովրդին հայ ժողովրդի անսահման նվիրվածության բազմաթիվ դեպքերից մեկը: Պարսկական ավելի քան 40.000 զինվորից բաղկացած բանակը 1805 թ. հունիսին ավարի ու ավերի ենթարկելով հայկական տասնյակ գյուղեր, վանքեր, Ղարաբաղի մահմեդական խաների եւ նրանց վեզիրների առաջնորդությամբ հասնում է Արցախի սիրտը՝ Կարկառի հովիտը եւ լուրջ վտանգ ստեղծում Շուշին գրավելու եւ այնտեղ գտնվող ռուսական զորամասը ոչնչացնելու համար: Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Յիցիանովը կոչով դիմում է Ղարաբաղի հայությանը. «Вспомните свою прежнюю храбрость, будьте готовы к победам и покажите, что вы и теперь те же храбрые карабахские армяне, как были прежде страхом для персидской конницы»*: Հայ կամավորները

* Սույն ցիտատը, ինչպես նաեւ Տիգրան Մեծի պատկերով արձաթ դրանը, 10-րդ դարի իրողություններ վկայող Դիզակի Գագիկ թագավորի աղջկա՝ Սուլիի արձանագրությունը, Մեսրոպ Մաշտոցի նկարը (եւ մի շարք եկեղեցիներ, վանքեր հիշատակելու) ցուցադրելու համար Արդ. ԿԿ Կենտկոմի հանձնաժողովը 1967 թ. վերջերին արձանագրեց, որ իբր «ԼՂԻՄ պատմա-երկրագիտական թանգարանի էքսպոզիցիան չի համապատասխանում մարքս-լենինյան մեթոդոլոգիային»: Դրա համար պետք է, որ դիրեկտորը՝ տողերիս հեղինակը ազատվեր աշխատանքից: Բայց կուսմարզկոմի բյուրոն բավարարվեց խիստ նկատողություն անելով: Սիւս թե ինչպես է այն ձեռակերպված. «за... безпринципность и безответственность, показ на экспозициях музея идейно невыдержанных материалов директору музея тов. Мкртчяну Ш. М. обь явить строгий выговор с занесением в учетную карточку». (Выписка из протокола № 6 / 8 заседания бюро от 14.05.68г. Нагорно-Карабахского обкома КП Азербайджана).

քաջությանը ռուս զինվորներին դուրս են բերում շրջափակումից, իսկ հայկական Կուսապատ եւ Մոխրաթաղ գյուղերի բնակիչները իրենց սննդամթերքներից բաժին են հանում զինվորներին:

Այս մասին էլ չեն խոսում, չեն գրում իրենց ինտերնացիոնալիզմի պաշտպաններ համարող Ադրբեջանի գաղափարախոսները: Լռության են մատնել, դաժանորեն հալածել բոլոր նրանց, ովքեր համարձակվել եւ փաստերով ապացուցել են, որ «5-րդ դարի վերջում Արցախը պարսկահայատակ մարզպանության ներսում ձեռք էր բերել որոշակի ինքնուրույնություն եւ իրեն հայտարարել թագավորություն: Վաչագան Բարեպաշտի հիմնած պետական կազմավորումն ուներ իր ներքին կարգուկանոնը՝ «Սահմանադրութիւն կանոնական»-ը: Կատաղել, ավելի են ուժեղացրել հալածանքը Ղարաբաղի հայ բնակչության հանդեպ, երբ մատնացույց են արվել այն բազմաթիվ աղբյուրները, որտեղ նշված է, որ Վաչագան թագավորի օրոք Արցախում կառուցվել են տարվա օրերի թվով վանքեր ու եկեղեցիներ»:

Շնարարո վարքագիծ են դրսևորում, երբ նրանց ասվում է, որ «արաբական տիրապետության շրջանում եւս հայ Առանշահիկները եռանդուն կերպով գլխավորում էին Արցախի քաղաքական ու հոգևոր կյանքի առաջընթացը: Նրանց հովանավորությամբ բարգավաճում են մշակութային այնպիսի կենտրոններ, ինչպես Ամարասը՝ Մյուս Չաբանդ գավառում, Կատարովանքը, Գոչավանքը, Օխտի դռնի վանքը՝ Դիզակում, Գոռեկա կամ Գլխո վանքը, Ջրվշտիկը կամ Սրբ. Եղիշե առաքյալի վանքը՝ Մեծկողմանց գավառում, Դաղի կամ Խութավանքը եւ Խդրավանքը՝ Վայկունիքում, Սրբ. Դակորավանքը եւ Գանձասարը՝ Մեծառանից գավառում եւ այլն: 9-րդ դարի սկզբին Առանշահիկների երկու մարտունակ ճյուղերը (մեկը խաչենում խաչենագետի եւ Թարթառի հովտում, մյուսը Դիզակում Իշխանագետի եւ Վարանդայի ճկահարթում) իրենց պսակեցին հակաարաբական հաղթական ճակատամարտերով: Ազատագրության գործիչներ Սահլ Սմբատյանը, Եսայի Ապու Մուսեն եւ նրանց հայրենակիցները, որոնք «Բակինսկի ռաբոչի» թերթում տպագրված պոեմում պիտակավորված են "лютымъ врагомъ", խիզախորեն պաշտպանել են իրենց հայրենի երկրամասը: Եվ այդ ժամանակ էլ Գյուևիսային Պարսկաստանից Արցախը նվաճելու, նրա բնակիչներին բնաջնջելու եկած Բաբեկը արժանի պատիժ է ստանում:

Պատմական Արցախը (9-13-րդ դարերում հայտնի էր նաեւ խաչեն անունով) 11-12-րդ դդ. ենթարկվում է սելջուկ-թուրքերի հարձակում-

ների: Այս մտնում էր Ջաքարյանների գլխավորությամբ ազատագրված Գյուևիս-արեւելյան Դայաստանի կազմի մեջ: 13-րդ դ. խաղաղ կյանքի կարճատեւ ժամանակաշրջանում երկրամասում կառուցվեցին ճարտարապետական փառահեղ կոթողներ: Դրանցից Սրբ. Գովհաննես Մկրտիչ եկեղեցին (1216-1238 թթ.), Դաղի վանքի կաթողիկեն (1214 թ.), Գոչավանքի գլխավոր եկեղեցին (1241-1248 թթ.), Բոի եղցի համալիրի որմնափակ խաչքարերը (1230-1270 թթ.), Խաթրավանքի կաթողիկեն (1204 թ.), Գանձասար վանքի գավիթը (1261-1266 թթ.) եւ այլն, համարվում են հայ ճարտարապետության փայլուն ստեղծագործություններ: Սրանք նույնպես անտեսվում են կամ լավագույն դեպքում աղվանական համարվում: Լռության են մատնում, ձայն ու ծպուտ չեն հանում խաչենի մեծ իշխան Դասան Ջալալյանի եւ նրա ջանքերով ստեղծված հայ-մոնղոլական դաշինքի մասին: Դաշինք, որի շնորհիվ հայկական իշխանությունները, ընդհուպ Կիլիկյան հայկական թագավորությունը, մասամբ փրկվեցին օտար բռնագրավիչների վայրագություններից:

Ադրբեջանի պատմաբանները, լեզուները կապանքների տակ առած, չեն գրում, որ մոնղոլ-թաթարների հետքերով եկած Կարա-կոյունլու եւ Ակ-կոյունլու թուրքերի դժնդակ տիրապետության ժամանակները (15-16-րդ դդ.) կասեցրել էին հայկական մարզերի մշակույթի զարգացումը: Պարբերաբար ապստամբություններից, կողոպուտից ու ավերածություններից աչք չէր բացում հայ ժողովուրդը, որպեսզի շենացնի իր մշակութային օջախները, կառուցի նոր շենքեր, ճարտարապետական կոթողներ: Ընդհակառակը, մի առանձին հպարտությանը են այս հանրապետությունում գրում վայրագ թուրքերի մասին, սիրով վերաբերվում նրանցից մնացած խոյի՝ կարա-կոյունլու թուրքերի դրոշակի խորհրդանշական պատկերով պահպանված հատուկ նշան գերեզմանաքարերին: Նույնիսկ խոյի պատկերով Բաքվում (1970 թ.) ԼԴԻՄ-ի համար կրծքանշան է դրվագվել: Կարա-կոյունլու թուրքական ցեղերի իշխանության դրոշակի վրա նկարված էր սեւ խոյ կամ ոչխար, դրանից էլ՝ կարա-սեւ, կոյուն-ոչխար:

Իսկ ինչ վերաբերում է Շուշի բերդի կառուցման եւ, մասնավորապես, Ղարաբաղի խանության հետ կապված պատմություններին, ապա այս բնագավառում էլ Ադրբեջանի նորաթուխ հեղինակների մարգանքներին չափ ու սահման չկա: Նրանք բոլորովին հաշվի չեն նստում իրական փաստերի ու փաստաթղթերի, անգամ խաների (ադրբե-

ջանքի) գրագիրների, հայտնի պատմաբան (դարձյալ աղբբեջանցի) Աբաս-Կուլի-Աղա Բաքիխանովի եւ 18-19-րդ դարերի ռուս պատմաբանների ու զորավարների՝ Ղարաբաղի մասին հայտնած տեղեկությունների հետ: Անտեսում են անգամ պատմագրության մեջ արդեն հայտնի այն կարծիքը, որ Շուշին բերդ-սղնախ է եղել Փանահ խանի՝ Ղարաբաղում հայտնվելուց շատ առաջ: Ղարաբաղի պատմության քաջածանոթ հետազոտող Բագրատ Ուլուբաբյանը «Ոսկե շրթա» ուսումնասիրության մեջ (*Երևան, 1969 թ., էջ 357-365*), Շահեն Սկրտչյանն իր «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գրքում (*Երևան, 1980 թ., էջ 146-164*), աղբյուրագիտական բազմաթիվ տվյալներով, Շուշիում գտնված հնագույն խաչքարերի եւ վիճակագիր արձանագրությունների հիման վրա ապացուցել են, որ Շուշին, որպես հայկական բնակավայր, ամրոց, սղնախ գոյություն է ունեցել տակավին 9-րդ, 13-րդ, 15-րդ դդ.: Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի պատմական արխիվներում պահպանվում են 1720-ական թթ. Շուշի սղնախից Ավան հարյուրապետի եւ իր զինակիցների գրած նամակները, զեկուցագրերը:

Աղբբեջանի հեղինակները համառ ջանքերով անտեսում, խեղաթյուրում են նաեւ այդ փաստերը: Նրանք բառ անգամ չեն հիշում, որ մինչեւ խանության ստեղծումը՝ 16-րդ դարից մինչեւ 19-րդ դարի սկզբները, Ղարաբաղը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը, բաժանված էր իրնզ հայկական մելիքությունների, որոնք ունեին իրենց առանձին մելիքանիստները՝ վարչական կենտրոնները՝ տեղական սահմանափակ ինքնավարություններով հանդերձ: Շուշին պատկանում էր Վարանդայի մելիքությանը: Մելիք Շահնագար Երկրորդը հարեան մելիքների վրա իր ազդեցությունը տարածելու համար դաշնակցում է Փանահի հետ, որը պարսկական Զաքիրլի գավառամասի Բայաթ բերդից իր քոչվոր ցեղակիցների հետ տեղափոխվել էր Դաշտային Ղարաբաղի Տիգրան Մեծի ժամանակ կառուցված Տիգրանակերտ քաղաք-հնավայրը եւ մտադրություն ուներ ամրանալ Շուշի անմատչելի բերդում: 1752 թ. Փանահ խանը, մելիք Շահնագարի ուղեկցությամբ, տեղափոխվում է Շուշվա բերդը եւ վերակառուցում է նախկին պարսպապատերի խոցելի մասերը: Այս իրողությունները հաստատող շատ տեղեկություններ են պահպանվել աղբբեջանցի մատենագիրների պատմագրական երկերում: Փանահ խանի գրագիր Սիրգա Ջամալը վկայում է, որ խանը «Հին ժամանակներում Թուրքեստանից

եկած Բահմանլի ցեղի Սարըջանլու ճյուղից է»: Ըստ պատմիչի՝ Փանահը «քոչվոր ցեղերից է սերվել»: Բայց, ահա, այս իրողություններից ավելի քան երկու դար հետո հանդես են գալիս հեղինակներ, որոնք ժխտում, ուրանում եւ ի չիք են դարձնում անցյալի պատմությունը, իրենց նախորդներից ժառանգած մատենագրությունը ու առանց ամօթի Ղարաբաղի խանության լեռը 4 դար էտ քաշելով, հասցնում են 14-րդ դար, իսկ «քոչվոր ցեղերից սերված», եկվոր Փանահին ներկայացնում «որպես «տեղական ֆեոդալ»: Ինչպես միաձայն հաստատում են գրավոր եւ արխիվային աղբյուրները, Փանահ-Ալի-խանը առաջին տարաշխարհիկ օտարականն էր, որը 18-րդ դարի կեսերին, համարյա պատահականորեն, քաղաքական հանգամանքների զուգահիստության հետեւանքով, հայտնվեց այդ կողմերում: Նա փրկություն էր որոնում, հետապնդվելով Իրանից, որտեղ, ի վերջո, մահվան է դատապարտվում: Եվ հայ իշխանները, մարդկային կարեկցանքից դրդված, նրան ապաստան տվեցին կենտրոնական Խաչեն գավառում: Սակայն այդ կարեկցանքը դարձավ դժբախտությունների աղբյուր, բերեց անհամար տանջանքներ, բնիկ բնակիչներին՝ հայերին հասցնելով հարստահարման եւ նրանց դնելով քոչվոր ցեղերի լծի տակ: Վերջիններս չունեին անգամ ազգային ինքնանվանում եւ գրականության մեջ կոչվում են մուսուլմաններ (մահմեդականներ), իսկ ավելի ուշ մեկ՝ «կովկասյան թաթարներ», մեկ «կովկասյան թուրքեր»:

Ահա թե ինչու, նույնիսկ իրենք՝ Շուշիի խաները (Փանահ-Ալին եւ իր որդի Իբրահիմը), որոնց աղբբեջանական գիտնականները համառորեն աղբբեջանցիներ են անվանում, գաղափար անգամ չունեին այդպիսի էթնիկական միավորի մասին: Այդ են ապացուցում Բաքվում հրապարակված բոլոր փաստագրությունները՝ նվիրված խաների արարքներին:

Առհասարակ, Ղարաբաղի, ավելի ճիշտ՝ Շուշիի խաների (1752-1822թթ.) եւ նրանցից հետո (մինչեւ մեր օրերը) ընկած ժամանակաշրջանի մասին գրելիս աղբբեջանցի հեղինակներն առաջնորդվում են միայն զգացմունքներով, ամեն ինչ եւ ամեն ինչում աղբբեջանականը տեսնելու ցնորքներով, ցանկալին իրականության տեղ ընդունելու դայթակողությամբ: Նրանց թվում է, թե դրանով մեծ ծառայություն են մատուցում սեփական ժողովրդին: Մինչդեռ կեղծ պատմություններով, սարքովի մտքերով հեռու չես գնա: Սարդիկ ապուշ չեն եւ ոչ էլ քնած: Այդ են վկայում վերջին տասնամյակներում տպագրված եւ նաեւ չտ-

պագրված բազմաթիվ գրախոսականները, հորվածները, գրքերը, գեկուցումները, բողոք-նամակաները, որոնցում մերկացվում են աղբյուրների կեղծարարները, որոնք լենինգրադցի գիտնական Անատոլի Յակոբսոնի դիպուկ արտահայտությամբ «Только засоряют ... историческую науку». (տես «Լրաբեր», 1977, N 12, էջ 76):

գ) ՀԱՅԵՐԻՆ ԼՂՈՋԵԼՈՒ, ԱՂԻՐԵՑԱՆՑԻՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆ ՄՂԵԼՈՒ ՓՈՐՉԵՐԸ

Երբ խոսք է գնում մեր երկրամասի ազգային-ազատագրական եւ հեղափոխական շարժումների մասին, ապա, որպես կանոն, արհեստականորեն անտեսվում, մոռացության են տալիս ազգությամբ հայ, ռուս գործիչներին, ականավոր մարդկանց մեծ մասին: Բոլորովին չեն հիշում հայ-ռուսական հարաբերությունների ստեղծման բնագավառում դարաբաղցիների մատուցած ծառայությունները, Շուշիի 1826 թ. հերոսական պաշտպանությունը, ռուս-պարսկական պատերազմներում հայերի ցուցաբերած խիզախությունները: Անտեսվում են հայ, ռուս եւ օտար մատենագրությունը, արխիվային հարուստ նյութերը եւ համառորեն խանների ու նրանց նազիր-վեզիրների անվան հետ են կապում Շուշիի հիմնադրումը եւ, որ առավել հակապատմական, կեղծապատիր է, նրանց ներկայացնում որպես Ղարաբաղը միավորող առաջադիմական ուժ, ազատագրական շարժումների կազմակերպիչներ, իսկ Ղարաբաղի մելիքների պայքարը նրանց դեմ՝ «խռովարարների խժոժություն»:

Հանիրավի շրջանցվում, չեն հիշատակվում Լեռնային Ղարաբաղի ազատագրական օջախները՝ կենտրոնները, ընդվզումները, ընդհատակյա կազմակերպությունները եւ նրանց գործունեության հետ առնչվող հանրահայտ կարեւոր դեպքերը: Դեռ ավելին, միջազգային, համառուսական մասշտաբի խոշորագույն հեղափոխական գործիչ, կոմունիստական կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Լենինի գիմակից Բ. Կնունյանցի կողքին, նույն գծի վրա դրվում են դաշտային գոտու մի քանի շարքային (աղբյուրներից) գյուղացիներ, որոնց հեղափոխական լինելը մինչեւ 1970-ական թվականները ոչ ոքի հայտնի չէր: Այստեղ ավելորդ չի լինի մեջբերել «Աղբյուրներ» գրքի 252-րդ էջի հետեւյալ տողերը. «1905 թ. հեղափոխությունից հետո Ղարաբաղում

հանդես են եկել պրոֆեսիոնալ հեղափոխականներ: Նրանց մեջ էին երկրորդ Ալիեւը եւ ՌՄԴ(բ)Կ երկրորդ համագումարի դեղբատ Բոգդան Կնունյանցը»: Այսպես էլ գրված է: Ինչպես կարող էր 1896 թ. ծնված Թ. Ալիեւը, որը կուսակցական չէր, պրոֆեսիոնալ հեղափոխական դառնալ 1905-ից հետո եւ նույնիսկ Բ. Կնունյանցին երկրորդ պլան մղել: Այս մեթոդով են տեղերը բաշխված երկրամասի մշակութային խոշոր գործիչների համար:

ԼՂԻՄ-ը Հայրենական մեծ պատերազմ է ուղարկել իր բնակչության 35 տոկոսին: Ավելի քան 45 հազար դարաբաղցի ռազմիկներից 22 հազարը զոհվել է, 25-ը դարձել են գեներալներ, մարշալներ, ադմիրալներ, իսկ 21-ը՝ Սովետական Միության հերոսներ: Հերոսներից միայն մեկն է աղբյուրներից: Որպեսզի այստեղ էլ պահպանվի համամասնությունը, որպեսզի չերեւա, որ հայ հերոսները շատ են, գրում են աղբյուրներից հերոսի սխրագործությունների մասին եւ ապա ավելացնում մի հայ հերոսի անուն-ազգանուն ու սրանով հարցը համարում սպառված: Քանի որ զորավարների մեջ աղբյուրներից չկար, ապա հայ մարշալների ու գեներալների մասին խոսք լինել չի կարող: Ինտերնացիոնալիզմի այս մոր մեթոդով են տեղադրում գրողներին, արտիստներին, գիտնականներին: Ընդհանրապես Շուշիի մասին խոսելիս հայերին բոլորովին չեն հիշում: Ասես Շուշիի հիմքերը չի դրել Ավան հարյուրապետը եւ այդ քաղաքն էլ չի գտնվում Լեռնային Ղարաբաղում: Ասես Շուշիում 1828-1920 թթ. լույս չեն տեսել 22 անուն թերթեր, որից 20-ը՝ հայերեն, երկուսը՝ ռուսերեն: Բացի դրանից, քաղաքի երեք տպարաններից դուրս է եկել մաեւ 150 անուն հայերեն գիրք եւ բրոշյուր: Առաջին հայերեն գիրքը Շուշիում տպագրվել է 1828 թվականին: Ասես Շուշիի 33.252 բնակչից (1897 թ.) 20.584-ը հայեր չեն եղել եւ ոչ էլ այստեղ գործող 6 դպրոցներից 5-ը հայկական:

Կարծես Շուշիում չի գործել ժամհարյանների հիվանդանոցը, Խանդամիրյանի հայկական թատրոնը, հայկական գրադարան-ընթերցարանը՝ 10 հազար գրքային ֆոնդով հանդերձ: Ասես այդ քաղաքում չեն ծնվել հանրահայտ քաղաքական-պետական գործիչներ Ալ. Բեկզադյանը, Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Բաղդատեւը (Բաղդատյանը), Փ. Կնունյանցը, Ա. Հովհաննիսյանը, Բաքվի 26 կոմիսարներից Բ. Ավագյանը, Ա. Կոստանդյանը, գեներալներ Տեր-Ղուկասովը, Ա. Ղազարյանը, ակադեմիկոսներ Ի. Ձենինը, Ա. Թաղաջյանը, Ի.

Կնունյանցը, հայ կլասիկ Մուրացանը, հայ պատմագրության կարկառուն դեմք Լեոն, խոշորագույն քանդակագործ Զ. Գյուրջյանը, գեղանկարիչ Ս. Աղաջանյանը, ԽՍՀՄ ժողովրդական 5 հայ արտիստներ, պետական խոշորագույն գործիչ Ի. Թելուսյանը, Սովետական Միության 4 հայ հերոսներ, այդ թվում նաեւ՝ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը եւ բազմաթիվ այլ նշանավոր մարդիկ, որոնց ազգանունների թվարկումն անգամ մի քանի էջ կզբաղեցնի:

Ասես Շուշի քաղաքում չեն կառուցվել հինգ հայկական, մեկ հունառուսական փառահեղ եկեղեցիներ, տասնյակ հիշարժան ճարտարապետական այլ կառուցվածքներ, աղբյուր-հուշարձաններ, ջրամբարներ, կուլտուր-կենցաղային բնույթի շինություններ, հազարավոր երկհարկանի բնակելի շենքեր: Ասես Շուշիում 1898 թ. Բ. Կնունյանցը չի կազմակերպել, ստեղծել Լեոնային Ղարաբաղի առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակը, ասես այդ նույն ժամանակաշրջանում Ղարաբաղում չի գործել ընդհատակյա տպարան, աշակերտական ազատագրական խմբակներ: Ասես Շուշիում 1918-1920 թթ. չի գումարվել երկրամասի գյուղացիության 8 համագումար, չի ստեղծվել երկրային բոլշեւիկյան կոմիտե: Ասես 1920 թ. մարտի 23-ի գիշերը, մուսավաթական խուժանի ձեռքով, թուրքական լրտեսների աջակցությամբ չի կործանվել Շուշիի մեծ մասը՝ հայկական հատվածը: Ասես չեն այրվել, մոխրակույտերի վերածվել մոտավորապես 7 հազար բարեկարգ, երկհարկանի տներ, տասնյակ մշակութային վարչական գեղեցիկ շենքեր: Ասես մի գիշերվա ընթացքում քաղաքի ազգաբնակչությունը 65 տոկոսով չի պակասել: Ս. Օրջոնիկիձեն, որն անձամբ 1920 թվականի մայիսին եղել է Ղարաբաղում, տեսել է Շուշիի ավերակները, 1936 թ. Ադր.ԽՍՀ դելեգացիային, Ստալինի կաբինետում, չի ասել. «Այսօր ես ստսկումով եմ հիշում այն պատկերները, որ մենք տեսել ենք 1920 թվականի մայիսին, Շուշիում: Հայկական գեղեցիկ քաղաքը եղել է հիմնահատակ ավերված, կործանված»: Սակայն զարմանալի եւ զայրացուցիչն այն է, որ այս ամենի մասին լուսն են իրենց ինտերնացիոնալիստ համարող պաշտոնական մարդիկ: Եվ, ինչու չասել, միայն թուրքը կարող է այդ փաստերն արհամարհել եւ հաղթական տոնով հայտարարել. «Շուշին շատ աղբրեջանցի բանաստեղծների, գրողների, կոմպոզիտորների, երաժիշտների, երգիչների հայրենիքն է» (տե՛ս «Աղբրեջան» գրքի 258-րդ էջը): Շուշին աղբրեջանցիների հայրենիքն է, եւ

վերջ: Սա է նրանց ասելիքը:

Ձանցառման հիմնական եւ միակ պատճառը սեփական պատմություն չունենալն է, Աղբրեջանի ղեկավարների եւ մտավորականության որոշակի խավերի անբարյացական վերաբերմունքը հայերի, մասնավորապես Ղարաբաղի եւ նրա արմատական բնակչության նկատմամբ: Նրանք տանել չեն կարողանում, որ այդ լեռնոտ երկրամասին անդրադառնալիս հիշատակվում են «հայ», «հայկական» բառերը: Նրանք կատաղում են եւ չեն հանդուրժում, որ դարաբաղցիներն ունեն հին հուշարձաններ, նշանավոր շատ մարդիկ եւ, իհարկե, նաեւ խիզախ ու տոկուն հայրենասերներ: Նրանք ամեն կերպ աշխատում են, որ աղբրեջանցիները, օտարները չիմանան, որ Ղարաբաղը եղել է, կա եւ կլինի հայկական մարզ: Դրա համար էլ արգելում են ու չեն թողնում, որ Ստեփանակերտի թատրոնին, ամսամբլին անվանեն «հայկական թատրոն», «հայկական ամսամբլ»: Նրանք չեն թողել, որ Ստեփանակերտի ֆուտբոլային թիմը կոչեն «Արցախ»: Նրանք արգելել եւ փակել են տվել «Արցախ» անունով սրճարանը, ռեստորանը: Մարզային թանգարանի ցուցադրությունից հանել են տվել Տիգրան Սեօի պատկերով արծաթե դրամը (որը գտնվել է Ղարաբաղի Տիգրանակերտ, այժմ՝ Շահբուլաղ քաղաքատեղիում): Նրանք արգելել ու չեն թողել, որ թանգարանում պահվեն խաչքարեր, վիճագրություններ, Արցախի հնագույն պատմության լուռ եւ միաժամանակ խոսուն վկաները՝ նյութական կուլտուրայի մեծարժեք այլ իրերը: Նրանք մարզի գրադարաններից հանում էին հայ կլասիկների նկարները, ստեղծագործությունները, հետապնդում էին հայկական ժողովրդական, մարտական, աշխատանքային երգեր կատարողներին... Մի խոսքով՝ լուրջ փորձեր էին ձեռնարկում երկրամասի արմատական հայ բնակչությանը զրկելու հիշողությունից: Այդ ամենի փոխարեն հայկական մարզ էին հեղեղում արեւելյան մուղամներ, ավազակապետերի՝ հայակեր վայրենիների մասին գրված երգեր, երաժշտական հաղորդումներ: Հարկադրաբար, ԼՂԻՄ-ի հայ բնակչության համար կազմակերպում էին հանդիպումներ հայատյաց աղբրեջանցի մտավորականների, մարդասպանների, կաշառակերների հետ: Գիշեր-ցերեկ գովաբանում էին դատապարտելին, մեծարում ստորությունը, լույս աշխարհի հանում ոչնչությունը: Հանրապետական հորեյլանական հրատարակություններում, նորագույն ժամանակների ուսումնասիրություններում, ղեկավարների գեկուցագրե-

րում, հողվածներում Ադր. ԽՍՀ-ում ապրող հայերի, ռուսների եւ այլ ազգային փոքրամասնությունների մասին առհասարակ ոչինչ չէին հիշատակում, ասես ինտերնացիոնալիզմը հենց դա էր, որ կար: Այժմ տեսնենք, թե ինչպես էր «պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիանալի ավանդույթները» պաշտպանել ԱդրԿԿ Կենտկոմը: Ադրբեջանի կոմունիստական կուսակցության XXVIII համագումարի պատգամավորներն ընտրվել են յուրաքանչյուր 260 կոմունիստից մեկը: Սակայն, չգիտես ինչու, այդ չափանիշը չի կիրառվել հայ կոմունիստների նկատմամբ: Այսպես, եթե յուրաքանչյուր 235 ադրբեջանցի կոմունիստներից մեկն է ընտրվել համագումարի պատգամավոր, 220 ռուս կոմունիստներից մեկը, ապա հայերը համագումարում ունեցել են 317 կոմունիստից մեկը: Այս թվերն ավելի են խորացել ԽՍՀԿ XXIV համագումարի պատգամավորներ ընտրելու ժամանակ: Այսպես, հայ կոմունիստները, որոնք ԱդրԿԿ-ի շարքերում կազմում էին 13,7 %, բայց ընտրված պատգամավորների մեջ նրանք կազմել են միայն 4,2 %:

Սակայն այս փաստերը չեն խանգարել համագումարի մանդատային հանձնաժողովի նախագահ Ռ. Մամեդզադեին, որպեսզի բուռն ժափահարությունների տակ հայտարարի. «Համագումարի պատգամավորների ազգային կազմը վառ վկայություն է այն բանի, որ Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունը հավատարիմ է հիանալի ինտերնացիոնալ ավանդույթներին»: Այստեղ են ասել «մաշալլա» ինտերնացիոնալիզմը:

Այդ նույն ժամանակաշրջանում հայերը կազմում էին ԱդրԽՍՀ բնակչության 15,7%-ը, բայց հանրապետության ուսանողության մեջ հայ ուսանողները կազմում էին 0,7%, գիտության ասպարեզում 0,1 %, հանրապետական մասշտաբի ղեկավարության 0,02%: Սա էլ կարելի կլինի համարել «աֆֆարիմ ինտերնացիոնալիզմ»:

դ) ՈՎԵՐ, ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՍՏԵՂԾԵՑԻՆ «ԱՂՐԲԵՉԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

Ինչ կարելի է ասել Ապշերոնյան թերակղզում խրամատավորված կեղծարարներին: Անդրկովկասի, ինչու չէ՞ նաեւ մարդկության պատմությունը, այնուամենայնիվ, մինչեւ XX դ. 30-ական թվականները

ադրբեջանական անվանվող ժողովուրդ չի ճանաչել: Անգամ Իրանի մեծ առաջնորդ իմամ Զոնեյնին է բազմիցս կրկնել. «Ես չգիտեմ այնպիսի ժողովուրդ, ինչպիսին ադրբեջանականն է»: Առաջին անգամ «ադրբեջանցիներ» արտահայտությունը գործ էածվել 1936 թ.: ԽՍՀՄ Սահմանադրությամբ եւ Ստալինի թելադրանքով կովկասյան թաթարները կանայականորեն հայտարարվել են ադրբեջանցիներ: Չնայած 1921 թ. Ստալինը պնդել էր, թե Կովկասի թաթարները դեռեւս ցեղ են, չեն ձեւավորվել որպես ազգ, այդ հանգամանքը, սակայն, նրան չխանգարեց, որ 30-ական թվականների վերջերին հանձնարարի այդ ժողովրդի համար պատմություն չինել եւ ինքն էլ տվեց առաջին օրինակը՝ պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամուն հոջակելով ադրբեջանական բանաստեղծ:

Մինչդեռ «Ադրբեջանը» եղել է եւ կա որպես իրանական հնագույն պրովինցիա, որին արաբները կոչում են «Ազարբեյջան», պարսիկները՝ «Ադարբայջան», հայերը՝ «Ատրպատական», «Ադրբեջան» իսկ ուշ միջնադարում այն, ձեւափոխվելով թուրքական արտասանությամբ, հնչում է «Ազարբայջան» ձեւով: Ինչպես հայտնի է, իրանական այդ նահանգը անընդհատ ենթարկվել է թուրքալեզու քոչվոր ցեղերի ասպատակություններին: Ուշ միջնադարում նրանց մի մասն սկսել է նստակյաց կյանք վարել եւ ձուլվել իրանական այլ ժողովուրդների հետ: Թեեւ նրանք ընդունել են իրանական ազգային սովորությունները, այնուհանդերձ թուրքախոս են:

Դարձյալ Ստալինի թելադրանքով, մի խումբ սովետական պատմաբաններ Ի. Դիականովի գլխավորությամբ հապշտապ ձեռնամուխ եղան այդ նոր «ադրբեջանական ազգի» համար հին ու հնագույն պատմության ստեղծմանը: Նույնիսկ փորձեցին «ադրբեջանցիներին» համարել մերթ ազվանական, մերթ հնդեվրոպական ժողովուրդների հետնորդներ, մոռանալով, որ «ադրբեջանցիները» եղել են թուրք-քոչվորներ եւ նրանց հայրենիքը համարվում է Թուրանը: Ի դեպ, սոցիալիստական համակարգի փլուզումից հետո իրենք՝ ադրբեջանցիները, 1991 թ. դեն մետելով իրենց դիմակները, խոստովանեցին, որ իրենք թուրքեր են: Նույնիսկ Ադրբեջանի նախագահի էքս-խորհրդական Վաֆա Գուլուզադեն էլ է ի վերջո հասկացել, որ միայն խորհրդային իշխանության օրոք է «ձեւավորվել ադրբեջանական ժողովուրդը» որպես սոցիալիստական նոր ազգություն (մանրամասն տես «Ձերկալո»,

Ահա թե ինչու, պատմական աղբյուրագիտական ոչ մի սկզբնաղբյուրում եւ ոչ մի լեզվով մինչեւ XX դ. Անդրկովկասի շրջանակներում (այսինքն՝ Արաքսից հյուսիս), կրկնում ենք, չի հիշատակվում Ադրբեջան պետության գոյության մասին: Քանզի չկար, իրականում, «Ադրբեջան պետություն», «ադրբեջանական ժողովուրդ» արտահայտությունը: Նույնիսկ այնպիսի խոշոր, 460-էջանոց փաստաթղթերի ժողովածուում, ինչպիսին ԽՍՀՄ ՊԱ-ի հրատարակած՝ «Ռուսական ցարիզմի գաղութային քաղաքականությունը Ադրբեջանում XIX դ. 20-60-ական թթ.» (Մ.Լ., հ.1, 1936) աշխատությունն է, որտեղ ամփոփված են հարյուրավոր բնագիր փաստաթղթեր, «Ազերբայջան» անունը հիշվում է միայն մեկ անգամ, այն էլ՝ պարսկական նշված նահանգի կապակցությամբ (էջ 300): «Ազերբայջան» բառը, իրրեւ տարածքի, պետության անուն, սկսել է գործածվել միայն XX դ. սկզբներից, ավելի ճիշտ՝ Առաջին համաշխարհային պատերազմի վերջին, նավթարդյունաբերող Ռոստիլիզի փողերով անգլո-թուրքական հետախուզության ջանքերով եւ բուլշեիկների ապշեցուցիչ հավկուրությամբ, 1918 թ., Բաքվի կոմունայի անկումից հետո, թուրքական բռնազավթողական ռեժիմի պայմաններում հռչակված, այսպես կոչված, «Ազերբայջանական դեմոկրատական հանրապետության» կապակցությամբ: Այդ հանրապետությունը ստեղծվել էր արհեստականորեն, «հենց Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մտահղացմամբ՝ բուլշեիկների համագործակցությամբ, որպես Թուրքիան միջինասիական ընդարձակ տարածաշրջանի հետ կապող կամուրջ, որպես իրենց հանդիպման վայր» (տե՛ս «Թուրքիշ քայմս» թերթում տպագրված թուրք դիվանագետ Շյուքրո էլեքադայի հոդվածը: Մեջբերումը կատարվել է «Երկիր» թերթի 10.02.93 համարից): Միսլւ կլիներ կարծել, թե նպատակը միայն դա էր: Նախ՝ փորձ էր արվել բուլշեիկյան Ռուսաստանին գրկել Բաքվի նավթից եւ արգելակել ռուսական կապիտալի ներթափանցումը նավթով հարուստ Իրան, Պարսից ծոց: Երկրորդ՝ քանի որ Օսմանյան Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմում պարտվել էր եւ կորցրել արաբական երկրները, բնականաբար, պետք է օգտվեր Կովկասում ստեղծված խառնակությունից, այսինքն՝ փորձեր ծեռք բերել նոր գաղութներ, այն էլ՝ պանթուրքիզմի անվան տակ տիրել Կովկասի եւ Միջին Ասիայի քաղաքական կյանքին ու բնական հարստություններին: Դրա համար էլ խիստ շա-

հագրագրված էր Անդրկովկասում բուֆերային թուրքական մի նոր կազմավորում ստեղծելու գործում: Առավել եւս, որ Կովկասի մուսավաթական ազգայնամոլական կուսակցությունը հակված էր Թուրքիային եւ ցանկանում էր պանթուրքիզմի տարածումը: Սա հասկանալի է, անհասկանալի, սակայն այն է, որ սովետական բուլշեիկ ղեկավարները չհասկացան այդ ամենի հեռավոր հետեւանքները եւ իրենք իրենց ցնորամիտ՝ հեղափոխությունը Արեւելք արտահանելու քաղաքականությամբ, հենց այնպես, իներցիայով պահեցին Ադրբեջանական հանրապետությունը եւ դրանով ուղղակի նպաստեցին անգլոթուրքական հակառուսական, հակասովետական խարդավանքների: Դրանից էլ շտապեց օգտվել Թուրքիան: Ադրբեջանը այսօր դարձել է թուրքական էքսպանսիայի հանգրվան՝ Կովկասը եւ ոչ միայն Կովկասը զավթելու համար: Դրա պերճամոտ վկայություններից մեկն էլ չեչենական արյունահեղ պատերազմն էր, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Կովկասում ռուս դիվանագիտության խայտառակ պարտության արդյունք:

Ահա թե այդ խամաճիկ պետության մասին ժամանակին ինչ է գրել ռուսական բուլշեիկյան դիկտատուրայի դեմ զինված պայքարի հրամանատար, ռուս զեներալ Անտոն Դեմիկինը. «Ամբողջը Ադրբեջանական հանրապետությունում եղել է արհեստական, ոչ իրական, սկսած նրա անվանումից՝ վերցված իրանական պրովինցիայի անունից:

Արհեստական տարածքը միախառնված է լեզգիների Ձաքաթալան, հայ-թաթարական Բաքվի, Ելիզավետպոլի նահանգները, ռուսական Մուղանը եւ թուրքական քաղաքականությամբ, իրրեւ պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի պատվար Կովկասում: Արհեստական պետությունն ի վերջո պահպանվել է ազերբայջանական կառավարությունը՝ սկզբում Նուրի փաշայի, հետո զեներալ Տոմսոնի, սվիններով, իսկ հետագայում՝ հենց այնպես, իներցիայով» (տե՛ս *Генерал Антон Деникин, "Очерках русской смуты"*):

Չետաքրքիր է իմանալ նաեւ պատմության մասնագետի կարծիքը՝ արհեստականորեն ստեղծված հանրապետության մասին: Ակադեմիկոս Վ. Բարտուլդն արդեն սովետական ժամանակներում գրել է. «Ազերբայջան անունը Ադրբեջանի Չանրապետության համար այն նպատակով ընտրվեց, որ կարծում էր, թե Ազերբայջանի Չանրապետության հաստատումով Իրանի Ազարբայջանն ու Ադրբեջանի Չանրապետությունը կմիաձուլվեն... Ահա այդ նպատակով ընդունվեց Ադրբեջան ա-

նունը: Բայց, իհարկե, երբ այժմ Ադրբեջան անունը օգտագործվում է երկու իմաստով՝ մի դեպքում իբր պարսկական Ազերբայջան, մյուսում՝ հատուկ հանրապետության իմաստով: Հաճախ անհրաժեշտ է լինում չչփոթելու համար հարցնել, որ Ադրբեջանը նկատի ունե՞ք՝ պարսկական, թե այս (սովետական) Ազերբայջանը» (*“Сочинения”, том I, II, стр. 703*): Եվ այդ պատճառով, ինչպես արդեն ասվել է, ոչ մի լեզվում եւ աղբյուրում մինչեւ 20-րդ դարի սկիզբը Անդրկովկասի շրջանակներում Ադրբեջանի գոյության մասին չի հիշատակվում: Եվ պատահական չէ, որ մեր օրերում Բաքվում իրենց ազգի անվանումը որոշելու եւ համապատասխան այբուբեն ընտրելու վրա գլուխ են ջարդում, որովհետեւ սեփական այբուբեն չունենալու պատճառով օգտվել են ուրիշներից եւ 20-րդ դարում մի քանի անգամ փոխել այն: Հետեւաբար չպետք է զարմանալ, եթե աղվանները հանկարծ «թուրքական ցեղեր» դառնան, իսկ նրանց թագավորությունը «Կովկասյան Աղվանքի ադրբեջանական պետություն»: Եվ ոչ միայն աղվանները, այժմ թուրք-ադրբեջանցիներ են հայտարարվել նաեւ շումերներն ու սկյութացիները (*տես «Ադրբեջանի կոմունիստ», 1989 թ., հ. 3, էջ 56-65*):

Վերջապես, Նոյ Նահապետը նույնպես ադրբեջանցի է հայտարարվել: Այլ խոսքով՝ պատմության ու մշակույթի եւ առաջին հերթին ուրիշի պատմության ու մշակույթի համատարած ազգայնացում է կատարվել (*մանրամասն տես Պարոյր Մուրադյան, «Պատմությունը սերունդների հիշողությունն է», եր., 1990 թ., էջ 118*):

Այսպիսով, եթե թուրքերը «Ադրբեջանի Հանրապետություն» ստեղծելով նպատակ են հետապնդել Միջին Ասիայի հետ կապող հենակետ ունենալ Անդրկովկասում, ապա Խորհրդային Ռուսաստանի, այնուհետեւ ԽՍՀՄ-ի ղեկավարության հեռահար ձգտումն էր Ադրբեջանը դարձնել «խլամական Արեւելքում հեղափոխություն արտահանելու մի հզոր փարոս, ինչու չէ՞ նաեւ իրանական խոշոր նահանգ Ատրպատականը զավթել եւ Ադրբեջանին միացնել: Դրա համար էլ Բաքվում ստեղծվել էր այսպես կոչված իրանական վտարանդիների «հինգերորդ շարասյուն», որը հարմար պահին Իրանում պետք է հեղաշրջում կատարեր եւ հաստատեր սովետական կարգեր: Սակայն միշտ էլ Մոսկվայի եւ Բաքվի խարդավանքները անարդյունք են եղել, քանի որ լայն աջակցություն չեն գտել իրանական բնակիչների շրջանում: Այսուհանդերձ, գործակալական ցանցերը այնտեղ պահպանվել է եւ հո-

յուս Ադրբեջանի գործում են նաեւ ներկայումս: Այստեղից էլ թուրք-ադրբեջանցիների ծավալապաշտական նկրտումները՝ Իրանը ներսից պայթեցնելու Մովետներից որդեգրած ավանդույթների կենսունակությունը:

Ահա թե ինչու դեռևս Ադրբեջանի հեղկոմի առաջին նախագահ Նարիման Նարիմանովը Մոսկվայի բուշեհիկյան կենտրոնական իշխող Խորհրդումներին անընդհատ հիշեցրել է «Արեւելքում հեղափոխության սլոգան գործի» մասին եւ այն կապել հայկական տարածքները բուշեհիկների աջակցությամբ նվաճելու հետ: Դրանով իսկ ոտնատակ էր տրվել Արեւելյան Անդրկովկասի հազարամյակներով տեղաբնիկ հինգ կիմնական ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թալիշների, ուղիների ու թաթերի ազգային ու մարդկային իրավունքները՝ շրջանառությունից հանելով նրանց Իրանական հայրենիքների պատմական անվանումները (*Ա. 7.*): Ադրբեջանցի հեղինակները այս ամենի մասին լռում են, լին խոսում, չեն գրում, քանզի ճշմարտությունը, հավանաբար, հակասում է իրենց կողմից աջ ու ձախ տարածվող սուտ ու սխալ գաղափարներին ու հերյուրանքներին: Մանավանդ հակահայկական ոռնավող քարոզչությանը:

ե) ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՀԵՂԻՆԱՎԱՆԵՐԸ
ՍՐԲԱԳՐԵԼ, ԽՍՐԱԳՐԵԼ ՊԱՄՍՍԱՎՆ ՍԿԶՐԱՆԴՐՅՈՒՐՆԵՐԸ

Փիտական ինչ բարեխղճության մասին կարող է խոսք լինել, երբ Ադրբեջանի պատմագիտությունը զբաղված է պատմական, գրական, սոլբյուրագիտական սկզբնաղբյուրները խմբագրելով, սրբագրելով, կրանցում իրենց ցանկությամբ բառեր, բառակապակցություններ օնցնելով կամ ուղղակի աղավաղելով: Բերեն օրինակներ:

Արցախ-Ղարաբաղի մասին բազմաբնույթ տեղեկություններ են պարունակվում Միրզա Ջամալ Ջեւանշիր Կարաբագլու «Ղարաբաղի պատմություն» ձեռագրում: Այն Բաքվում 1955 թ. հրատարակվել է երկու լեզվով՝ պարսկերեն, ռուսերեն եւ ադրբեջաներեն: Աշխատությունը բնագիրը, գրվել է 19-րդ դ. կեսերին՝ պարսկերեն: Ռուսերեն առաջին թարգմանությունը, ինչպես նշված է առաջաբանում, կատարել է Ա. Բերժեն «կրճատումներով եւ կամայական» ու տպագրել 1855 թ. «Կավկազ» թերթում: Նշենք, որ ադրբեջաներեն թարգմանությունը նույնպես կատարվել է կամայականորեն, որի հետեւանքով տեքստում

երևան են եկել ոչ քիչ թվով բառեր եւ «Աղրբեջան» եւ «աղրբեջանական» անվանումներ, որոնք պարսկական բնագրում, բնականաբար, չկան եւ չէին կարող լինել: Մինչդեռ Աղրբեջանի ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից աշխատությունը գնահատվել է որպէս «Աղրբեջանի պատմության XVIII-XIX դդ. լավագույն սկզբնաղբյուրներից մեկը», կամ ուղղակի «Աղրբեջանի պատմության հրաշալի հուշարձաններից մեկը»:

Թեեւ Միրզա Ջամալը իր պատմությունը գրել է Ղարաբաղի խաների ժառանգների պատվերով եւ ամեն գնով, ի վնաս պատմական իրական փաստերի, գովաբանել խանական դասին, այնուամենայնիվ հեղինակը չի խեղաթյուրել պատմական կարեւոր ու հայտնի փաստերը: «Աղրբեջանի պատմության հոյակապ հուշարձանի» հեղինակը կոնկրետ նշել է եթե ոչ իր, ապա իր ծնողների աչքի առաջ կատարված դեպքերը, ուլքեր, երբ եւ որտեղից են եկել Ղարաբաղ եւ ինչով են զբաղվել: «Առաջին քաղաքը, որը հիմնադրվել է Ղարաբաղում, դա եղել է Բարդան, որը գտնվում է Թարթար գետի մոտ, երեք փարս Կուրից հեռու: Այդ քաղաքի հնագույն բնակիչները եղել են ոչ այն է հայեր, ոչ այն է այլ ժողովուրդ»: Ի դեպ, Արցախի վաղ միջնադարի Բարդա քաղաքի մասին ահա թե-ինչ է գրել նաեւ ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը իր «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից ի վեր» դասական հետազոտության մեջ, նկարագրելով ռուսների արշավանքը Անդրկովկաս 943-944 թթ., հայտնել է այն մասին, որ նրանք «բարձրացան Քուռ գետի հոսանքն ի վեր եւ հանկարծ հայտնվեցին Պարտավ-Բարդայի՝ Առանի կամ ներկայիս Ղարաբաղի մայրաքաղաքի դեմ-հանդիման: Բարդան՝ մերձկովկասյան հնագույն քաղաքներից մեկը, հայերին էր պատկանում դեռեւս V դարում» (*տես նշվ. աշխ., Մուկվա, 1959, հ. 1, էջ 151*):

Այժմ տեսնենք, թե Բաքվում ինչպէս են «խմբագրել, սրբագրել» գերմանացի XIVդ. ճանապարհորդ Հանս Շիլտբերգերի աշխատությունը: Գտնվելով Արցախում, գերմանացի ճանապարհորդը վկայում է, որ այն գտնվում է Հայաստանում: Ի դեպ, տեղին է նշել, որ պատմության աղրբեջանցի կեղծարար Ջ. Բունիաթովը նրա աշխատությունը վերաթարգմանելիս միտումնավոր դուրս է նետել Հայաստանին եւ հայերին վերաբերող բոլոր վկայությունները (*տես. "Путешествие Ганса Шильтбергера по Европе, Азии, Африке", Одесса, 1866 стр. 110. եւ*

Բունիաթովի թարգմանությունը):

Էլի բերեմ փաստեր, բերեմ: Աղրբեջանցի մեկ այլ գիտնական՝ Ռ. Պեյուշովը, բյուզանդական սկզբնաղբյուրից դուրս է թողել «X դ. բյուզանդական Կ. Ճիրանածին կայսրի նամակագրական կապը Հայաստանի հաչեն-Արցախ նահանգի իշխանությունների հետ» արտահայտությունը (*տես Կ.Ճիրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք II, գլ. 48*): Ավելին՝ Բաքվում 1946 թ. ռուսերեն թարգմանությամբ տպագրվել է Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը»: Աշխատությունից մախ հանել են «Հայոց» բառը եւ ապա դուրս թողել Արցախի հայ իշխան Հասան Ջալալի մասին ասված «հայ ազգով» (այսինքն «ազգությամբ հայ») արտահայտությունը, որպեսզի 400 տարի հետո էլ նրա ժառանգին՝ Եսայի Ջալալյանցին զրկեն իր ազգի անունը կրելու իրավունքից եւ ուղղակի թուրքացնեն: Այս ամենի անելիս բաքվեցի կեղծարարներին բնավ չէր զսպում այն հանգամանքը, որ նշված գրքի բնագիրը իր նախատեղծ վիճակում 1858 թ. տպագրվել է Մոսկվայում, 1909 թ.՝ Թիֆլիսում, իսկ 1870 թ., ֆրանսերեն թարգմանությամբ՝ Ս. Պետերբուրգում: Գրքի՝ Բաքվի հրատարակության առաջաբանում «հայ իշխան Հասան Ջալալյանցը» ներկայացված է իբրեւ «ալբանական», իմա՝ աղրբեջանական «նշանավոր տոհմի ժառանգ»:

Հակահայկական հաջորդ ձեռնածությունը վերաբերում է Արցախի՝ Լաչենի բնակչության մասին կարեւոր մի վկայության, համաձայն որի XIII դ. պարսիկ անանուն ժամանակագիրը իր ձեռագիր աշխատությունում հայտնել է, որ «խաչենը դժվարամտաչելի մարզ է, լեռների ու անտառների միջեւ... Այստեղ հայեր են ապրում: Արխագի (Վիրքի) մարդիկ նրանց փաղիշախին կոչում են թագավոր» (*տես H.Д. Миклухо-Маклау. "Географическое сочинение XIII века на персидском языке", "Ученые записки ин-та Востоковедения", т. 9, 1911, стр. 204*): Աղրբեջանցի հեղինակները, իրենց սովորության համաձայն, նշված տեղեկությունը «խաղից դուրս վիճակում են թողել»: Բերեմ մեկ փաստ ևս: 1968թ. Բաքվում տպագրվել է «Շուշա գիրքը»: Հեղինակը՝ Ֆ.Շուշինսկին, իր «աշխատությունում» 21 անուն պարբերականների մեջ, որոնք տարբեր տարիներին լույս են տեսել Շուշիում, նշել էր միայն մեկի՝ «Շուշինսկի լիստոկ»-ի անունը՝ լրոգելով, շրջանցելով 20 հայերեն պարբերականների գոյության փաստը:

Աղրբեջանի հեղինակները հեշտությամբ շրջանցել են նաև Ղարաբաղի հայ էթնոսի վերաբերյալ բազմաթիվ արխիվային եւ աղբյուրագիտական տեղեկությունները, կոնկրետ փաստերը, ինչպես օրինակ («Ռուսական կայսրության օրենքների լրիվ ժողովածու», հ. 24, էջ 76) աշխատության մեջ նշված «Ղարաբաղում XVIII դ. վերջերին բացարձակ թվերով եղել է 110 հազար հայ ծուխ», որոնք գերդաստաններ էին, այլ ոչ թե ընտանիքներ: Կամ, համաձայն Կովկասում ռուսական բանակի հրամանատար Ցիցիանովի՝ 1804 թ. դեկտեմբերի 30-ին ցարին գրած զեկուցագրի, «Իբրահիմ խանը Ղարաբաղում իր հպատակության տակ ուներ միայն 60 հազար հայ ընտանիք»: Այստեղ չի նշված խանի հպատակության տակ չգտնվող Ղարաբաղում եղած հայ ծխերի քանակը: Կամ, ինչպես 1823 թ. վկայել են ռուս պետական խորհրդական Մոզիլեւսկին եւ փոխգնդապետ Երմոլովը, հայերը կազմում էին Ղարաբաղի բնակչության 84,6 %-ը, թաթարները, ինձ՝ աղրբեջանցիները, 14,7, իսկ քրդերը՝ 0,7 տոկոս (տես Ղարաբաղի նահանգի նկարագրությունը, Թիֆլիս, 1866, էջ 260):

Այսբանից հետո առնվազն քմծիծաղ է հարուցում Աղրբեջանի նախագահի հարցազրույցը, որտեղ նա վճռական համոզվածությամբ ասում է. «1804-1813 եւ 1826-1828 թթ. ռուս-իրանական պատերազմների ընթացքում սկսվում է հայերի գաղթեցումն Անդրկովկաս, որոնց զգալի մասը տեղափոխվել է Ղարաբաղ եւ դրա հետեւանքով էլ դարակզբին Ղարաբաղի բնակչության մեկ հինգերորդ մասը կազմել են (ավելի ճիշտ դարձել են) հայերը» (տես "Независимая газета", 1996, 28 ноября):

Դե, եթե ստում է երկրի թիվ առաջին ղեկավարը, դա արդեն ողբերգություն է: Դա նշանակում է սուտը, կեղծիքը Աղրբեջանում դարձել է կենցաղ, ապրելու կերպ, պետական քաղաքականության անբաժան մաս: Այս պարագայում, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

զ) ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՉԱՐՇԱԿԻ
ՇՈՇԱՓՈՒԿՆԵՐԸ ԹԱՓԱՆՑԵԼ
ԳԵՐԵՋԱՆՈՅՆԵՐ ՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Սակայն, այսուհանդերձ, հարկադրված են, չեն կարող չհարցադրել ինչո՞ւ են Աղրբեջանում համատարած ոչնչացնում, հողի երեսից ջն-

յում հայկական հազարավոր գերեզմանատները, հուշարձանները, ցարդում, փշրում տապանագրեր պարունակող տապանաքարերը եւ խաչքարերը:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայկական գերեզմանատներում պահպանվում են հարյուր հազարավոր մահարձաններ, որոնց վրա եղած հայերեն արձանագրությունները թվագրվում են 8-18-րդ դարերով, ապա աղրբեջանական քոչվորների դիրքորոշումը բավական պարզ է դառնում: Չէ՞ որ չափից ավելի ուժեղ եւ անվիճելի փաստարկ է հայկական հազարավոր գերեզմանատների գոյությունը՝ աղրբեջանական կեղծարարների պատմական պատվախնդրության համատեքստում: Չէ՞ որ նրանք անընդհատ փողհարում են, թե Ղարաբաղը աղրբեջանական «խկճնի» տարածք է, եւ իբր թե այնտեղ, Աղրբեջանի հյուրընկալ հողում, հայկական առաջին գաղթականները, ինչպես ասված է Գ. Ալիեւի վերոհիշյալ հարցազրույցում, հայտնվել են XIX դ. առաջին քառորդում: Ծիծաղելի է... Միայն ԼԴԳ տարածքում սլահպանվում է մոտ երկու հազար հին գերեզմանատուն՝ հայկական արձանագրություններ կրող հարյուր հազարավոր մահարձաններով ու խաչքարերով, որոնք թվագրվում են 8-18-րդ դարերով: Ամհավատալի է, որ մեր հարեւանները տեղյակ չլինեին այդ ամենին, քանի որ այդ մահարձանների ու արձանագրությունների մասին տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններ կան: Օրինական հարց է ծագում ինչպե՞ս կարող են Ղարաբաղը աղրբեջանական հայտարարել, երբ այնտեղ գտնվող բոլոր գերեզմանատները քրիստոնեական են եւ միայն մեկը՝ աղրբեջանական, որտեղ էլ թաղումները սկսվել են միայն 1920 թ. եղերական մարտից, այսինքն՝ հայերի ցեղասպանությունից հետո: Որպեսզի նման հարց այլեւս չառաջանար, թուրք-ազերիները Շուշիի հայկական մասի ավերակները մաքրելուց հետո սկսեցին ավերել նաեւ գերեզմանատները եւ հրաշքով պահպանված հայկական հուշարձանները:

Կարծում եմ՝ շարունակել նորանոր օրինակներ, փաստեր բերել, անօգուտ ու ավելորդ աշխատանք է, քանզի բաքվեցի կեղծարարները, առավել քան համոզված են, որ իրենց ոչ ոք չի մեղադրելու կեղծարարության մեջ: Եվ նրանք հորթային հրծվանքով, անպատիժ շարունակում են «ախաբեկչություն կատարել» պատմական փաստերի, արխիվային փաստաթղթերի նկատմամբ:

Դերթական առաջադրանք է տրված «ապացուցել», որ Ադրբեջանական Հանրապետության տարածքը հնուց ի վեր պատկանել է ադրբեջանցիներին: Պատվերը կատարվում էր դարձյալ թուրքավարի զարգացնել «թուրքերի» իբր թե հնուց ի վեր նատակյաց ապրելու կերպի մասին հատուկ տեսություն, որ իբր թե Արեւելյան Անդրկովկասի վաղնջական բնակիչներն են: Ըստ որում, բոլոր հնագիտական արժեքները դիտարկվում էին որպես հին թուրքական ազգային մշակույթի մասունքներ: Մինչդեռ Ադրբեջանի քոչվորների մասին գոյություն ունի զգալի գրականություն, այդ թվում՝ տեղացի հեղինակների» (Ю. Бромлей, Октябрь и развитие межнациональных отношений в СССР, М.1987, стр.56): Այդ ամենն իրականության, պատմության հետ կապ չունեցող զառանցանք է, ադրբեջանցի հեղինակների փափագը՝ իրենց ժողովրդի պատմությունը բարեփոխված, հնացած եւ քաղաքակիրթ ներկայացնելու աներեւակայելի ցանկություն: Մինչդեռ, պատմությունը միանշանակ վաղուց ապացուցել է, որ Քուռ-Արաքսյան տափաստաններում վաչկատուն թուրքական ցեղերի հայտնվելուց հետո (XII-XIV դդ.) թուրքալեզու հիմքերի վրա աստիճանաբար տարածվում է քոչվորական կացութաձեւը: Թուրքերի արտադրության հիմնական եղանակը, Կ. Մարքսի բնութագրմամբ, դառնում է թալանը: Ինչ վերաբերում է Արցախի լեռնային եւ նախալեռնային տարածքին, ապա թուրք քոչվորներն այստեղ (ինչպես ցույց կտրվի քիչ հետո) հայտնվեցին 18-րդ դ. երրորդ քառորդում միայն:

Բայց, հիրավի, նրանց հակագիտական մարզանքները դրանով չեն վերջանում: Շատ հաճախ տպագրում են հայկական բազմազան հուշարձանների՝ խաչքարերի, տապանական կոթողների, բարձրաքանդակների, վիմագրերի լուսանկարներ: Եվ, ինչ եք կարծում, ի՞նչ մակագրությամբ. «Քար՝ ալբանական գրությամբ»: Ոչ ավել, ոչ պակաս: Մեկ-մեկ էլ նշվում է, որ այն գտնվել է Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի կամ մեկ այլ շրջանում: Սրանով էլ սպառվում է հուշարձանի մասին հաղորդվող տեղեկությունը: Չեն նշվում հուշարձանի արարման ժամանակը, գտնվելու տեղը եւ, որ ամենից կարեւոր է, վիմագրության բովանդակությունը: Դրա փոխարեն միայն մերկապարանոց հայտարարվում է, որ հուշարձանն աղվանական է: Մինչդեռ լուսանկարների վրա հստակ նշմարվում են հայերեն տառեր, եւ դրանք առանց որեւէ դժվարության կարդացվում են:

Այս բնագավառի նորաթուխ զեղծարարներից մեկի՝ Վ. Ալիևի հերթական «գիտական հայտնագործությունը» մերկացրել է Հ. Սվազյանն իր «Մի «ալբանական» գրության մասին» հոդվածում (*մանրամասն տեսն հերիկ Սվազյան, «Մի «ալբանական» գրության մասին», «Լրաբեր», 1987, թիվ 2, էջ 42-45*): Կեղծիքը, սակայն, սրանով էլ չի ավարտվում: Ադրբեջանի մի շարք թանգարաններում պահվում եւ ցուցադրվում են հայ մշակույթի հազարավոր արժեքներ: Այցելուներին դրանք ներկայացվում են գրեթե նույն կաղապարով: Բացատրագրերում նշվում է. «Քար ադրբեջանական հին գրությամբ»: Ահա քեզ գիտություն, թանգարանային արժեքների ուսումնասիրման ու մասսայականացման ադրբեջանական ձեւ:

Ընդհանրապես, մեր «ամենակարող» հարեւանները դատում են տեղի եւ ժամանակի պարագաներից դուրս: Առատորեն օգտվում են իրենց իսկ առաջ քաշած կեղծ փաստարկներից եւ շարահյուսում սին պատմություններ: Ասենք՝ փաստերը ինչ նշանակություն կարող են ունենալ այս դեպքում, երբ չկա տարրական բարեխղճություն՝ ո՛չ գիտական մոտեցում եւ ո՛չ էլ բարոյականություն: Ամեն ինչ արվում է թուրքավարի՝ նվաճել, կողոպտել, թալանել ուրիշների ոչ միայն տարածքները, այլեւ պատմությունը, մշակույթը: Այսքանից հետո հարկ կա՞ գարձանալու, որ Քելբաջարի թանգարանում Դավիթ Բեկը հորջորջված էր Դավութ բեյ, Մխիթար Սպարապետը՝ Մուխթար փաշա: Դեռ ավելին. պարզվում է, որ ադրբեջանցի այդ գորավարները եղբայրակից թուրքական բանակի կողմից կռվել են գյավուրների՝ հայերի դեմ եւ ցախջախիչ պարտության մատնել նրանց: Թանգարանի ամենաաչքի ընկնող տեղում փակցված էր «Գյոկչա-Չանգեզուրի ադրբեջանական հանրապետության քարտեզը»: Չեն մոռացել նաեւ երեւակայած հանրապետության դրոշակը, զինանշանը, պետական կնիքը: Ահա թե ինչպես էին ադրբեջանական քարոզչության հաղթարշավի շոշափուկները թափանցել թանգարանային ցուցասրահները:

Կեղծիքների շարքը, սակայն, սրանցով չի ավարտվում: Ինչքան էլ ցանացել էին սրբագրել, խմբագրել, քարտեզից ջնջել հայկական հնագույն բնակավայրերի անունները, այնուամենայնիվ, պահպանվել են բազմաթիվ հայեցի նախաստեղծ տեղանուններ: Դրանց մի մասը նույնությամբ, մի քանիսը՝ պոչատված կամ հարմարեցված թուրքական արտասանության կանոններին, իսկ մյուսները՝ հայերենից բառացի

թարգմանված: Այդ են վկայում Քելթաջարի շրջխորհրդի նախագահի գրասեղանից իբրեւ «ռազմավար» հանված շրջանի բնակավայրերի ցուցակը եւ Բաքվում 1979թ. տպագրված «Ադրբեջանական ԽՍՀ վարչատարածքային բաժանումը» գիրքը (53-54 էջեր):

Բերեմ մեկ օրինակ եւս: Արցախցիների կողմից ազատագրված պատմական Ադվերծո գավառում խոջա Մովսեսի դամբարանը (16-րդ դ.) ադրբեջանցիները ենթարկել էին ձեւափոխության: Բավականին լավ պահպանված դամբարանի մուտքի երեսակալի եւ բարավորի փոխարեն տեղադրված նոր բարավորը բուրդովին չի մերվում կոթողի ամբողջական հորինվածքին: Բացի այդ, համաձայն մեր օրերում նրա վրա կատարված փորագրության, հուշարձանի տարիքը արհեստականորեն մեծացել է ոչ ավել, ոչ պակաս չորս դարով, իսկ խոջա Մովսեսը դարձել է «Մուհամեդ ալ խոջայի»: Մեկը լինի ու հարցնի, թե որտեղի՞ց Մուհամեդի «առաքյալի» հայտնվելը այս կողմերում, այն էլ 12-րդ դարում, երբ հայտնի է, որ առաջին օտարականը, իր հոտով հանդերձ, Արաքսից հյուսիս, մանավանդ՝ Հագառուի ձորահովիտ, թափանցել էր միայն 17-րդ դարում: Ահա թե ինչպես են ազերիները «վերականգնել», ավելի ստույգ՝ յուրացրել հայկական հուշարձանը: Եվ ինչ եղանակով են փորձել փոխել նրա ազգային պատկանելությունը: Եվ սա եզակի դեպք է:

Ինչու, ի վերջո, Ադրբեջանը այսքան տենդագին շտապում է հողի երեսից քերել, վերացնել հայկական պատմական եւ մշակութային արժեքները: Կամ՝ ինչու է պատմական հանրահայտ փաստերը, իրողությունները շարունակաբար նենգաբար ժխտվում, վերատեսության ենթարկվում: Նախ, դրանով ի ցույց է դրվում թուրք-ազերիների կարճատես, մեկուսացված մտածողությունը: Հետո էլ, ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի 33-րդ գլխավոր կոնֆերանսում (1/X-2003 թ., Փարիզ) ՀՀ ԱԳ նախարար Վ.Օսկանյանն է ասել. «Ադրբեջանը մի երկիր է, որն ապրում է իր անցյալի հանդեպ վախի գագացումով»: Այսինքն՝ «Գող, սիրտը դող...»: Ուրիշներից գողացած տարածքները, պատմությունը, մշակույթը «խկոննի» ադրբեջանական հայտարարելով հարցը չի փակվում, այլ ընդհակառակը՝ ավելի է բարդանում: Վաղ թե ուշ կատարածի համար պատասխան պիտի տան: Անշուշտ, գողացածը վերադարձնելու խնդիր է առաջանալու:

Վիճակագրական թվերը, պատմական փաստերը կեղծում եւ ստում են ոչ միայն գիտնականները, գրողները, լրագրողները, պետական, կուսակցական գործիչները, այլեւ դիվանագետները: Բերեմ մեկ օրինակ: Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Փաշա Ռուստամզադեն մոսկովյան թերթերում տպագրած իր հարցազրույցներում ճամարտակում է, թե իբր Ստեփանակերտից դուրս են քշել 18 հազար ադրբեջանցիների: Մինչդեռ, համաձայն 1988 թ. հունվարի 1-ի տեղեկությունների, Ստեփանակերտում բնակվում էր 4.5 հազար ադրբեջանցի: Ադրբեջանի սուտասան լիազոր ներկայացուցիչը լռում է, չի խոսում 208 հազար բաքվեցի հայերի ողբերգության մասին: Չի նշում, որ Ադրբեջանից արտագնադրած հայերը 2,8 անգամ ավելի շատ էին, քան Հայաստանից փախած ադրբեջանցիները: Չի նշում, որ 1988-90թթ. Ադրբեջանից հեռացած հայերը թողել են 103,7 հազար բնակարան, 132 հայկական գյուղեր կամ 8 հազար քառ. կմ տարածք, իսկ ադրբեջանցիները Հայաստանում ունեին 27,6 հազար բնակարան (մանրամասն տես Ս. Մկրտչյան, Արսախ, Եր., 1991, ստր. 98-101):

Ինչո՞ւ է Ադրբեջանի պատմագրությունը այսքան հեշտությամբ ընկել հակահայկական տենդով տառապող մարդկանց ձեռքը: Որտեղի՞ց է վերցվել «նոր պատմություն» ստեղծելու, շինելու այդ մոդան: Վերջին հարցի պատասխանը ամենայն որոշակիությամբ կարելի է գտնել ադրբեջանցի պատմաբանների աշխատությունների տողատակերում: Խոսում են Ազդիս-Թաղլար հայկական հուշարձանների՝ անձավների մասին, զուգորդում են իրենց իսկ հորինած տվյալների հետ: Գրում են հայկական խուտափերիմի գույգ կամուրջների մասին՝ դարձյալ իրենց սխալ տեսակետը հիմնավորելով պանթուրքիզմի գաղափարախոսության «սկզբնաղբյուրներով»: Աղավաղում են նաեւ պատմական կարեւոր իրադարձությունները եւ տեղնուտեղը «լցնում» կեղծ, սուտ, աղավաղված տեղեկություններով: Փաստորեն, նրանք իրենց սնամեջ բուրբ դատողություններն ու տեսակետները համեմուն են իրենց կեղծարարների խոհանոցից դուրս եկած չարախոսություններով: Կարելի է բերել նման կարգի ուրիշ-փաստեր, բայց տվյալ դեպքում դրանք չեն վճռականը: Մի կողմից՝ դիմում էին կեղծիքի, նենգափոխության, զանցառության, մյուս կողմից՝ ձեւացնում, որ իբր պահում են «ինտերնացիոնալիզմի սկզբունքները»: Այստեղ ամենագավեշտականն այն է, որ ստիպում, կաշառում են այլազգի գիտնականներին եւ նույնիսկ դա-

րաբաղցիներին, որ նրանք նույնպես մասնակից դառնան այդ անվայել խաղին:

Ընդհանրացնելով վերը նշված եւ նաեւ չնշված փաստերը, որի մեջ կարմիր թելի պես երեւում է Ադրբեջանի որոշակի շրջանների, խավերի ցավազար մտադրությունն ու ցանկությունը՝ իրենց վերագրել հանրապետության այժմյան տարածքում ապրած ու ապրող հնագույն ժողովուրդների պատմությունը, մշակույթը: Եվ որ դա արվում է նենգամիտ քաղաքական, խարդախ նպատակներով: Հանրապետության կազմի մեջ մտնող ազգային փոքրամասնություններին ասիմիլյացիայի ենթարկել, տեղահան անել, դուրս մղել նաեւ պատմությունից, գրավել նրանց տեղը նաեւ պատմության մեջ: Հարկավ, դա արվում է առանց դիմակի, «գիտականորեն փետրազարդված», ակադեմիական եւ պաշտոնական մակարդակով, պանթուրքիզմի գաղափարախոսությանը հոգեհարազատ:

Պետք է ասել՝ Ադրբեջանի անկախությունը, բնավ, չի փոխել այդ հանրապետությունում արմատավորված ո՛չ մարքս-լենինյան (տոտալիտար հասարակությանը բնորոշ) մեթոդոլոգիան, ո՛չ էլ ադրբեջանցիների՝ պատմության նենգափոխությունների որդեգրած չափանիշները: Իսկ ինչ վերաբերում է տրամաբանությանը, ապա, ինչպես իրավացիորեն գրել է Արսեն Մելիք-Շահնազարյանը, գիտական այդ դիսցիպլինի մասին ընդհանրապես Ադրբեջանում գաղափար չունեն (*«Գոյու Արմենիի»*, 03.07.03): Այլապես Բաքվում մեկ նալին, մեկ մեխին խփելով չէին զբաղվի, իրենց ծիերը չափ չէին տա պատմության խորքերը, երեւակայական թեւերով չէին ճախրի դեպի Ղարաբաղի հեռավոր եւ մոտիկ անցյալը, չէին խառնի դարերն ու ժամանակները, պատմական դեմքերն ու դեպքերը, մտացածին արյունակցական կապեր ու հարաբերություններ չէին հաստատի թուրքացեղ ռազմատենչ պետական գործիչների եւ Արցախում 18-րդ դարի երկրորդ կեսում պատահականորեն հայտնված մահմեդական քոչվոր ավազակապետերի միջեւ եւ անհաշիվ անհեթեթություններ ասպարեզ չէին հանի:

Մինչդեռ հայտնի է, որ Միջին Ասիայից, Իրանից Անդրկովկաս թափանցած մուսուլմանական քոչվոր ցեղախմբերը, մինչեւ խորհրդային կարգերի ամրապնդումը, իրար նկատմամբ տրամադրված էին կատաղի թշնամությամբ եւ հաճախակի իրար զգզգել, թալանել, բնաջնջել ու հպատակեցրել էին թույլ, փոքր տոհմերին: Ուստի, նրանք բնականա-

րար, բոլորովին պատկերացում չէին ունեցել ոչ ազգային եւ ոչ էլ կենտոտարածքի պատկանելության վերաբերյալ:

Ինչքան էլ գուլուգադեները Բաքվում փորձեն աղավաղել պատմությունը, Անդրկովկասում Իրանի կողմից հաստատված վարչական բաժանումները, խանությունները վերագրել իրենց, այսուհանդերձ, այս էլ որերորդ անգամ հարկադրված ենք հիշեցնել, որ դրանք ոչ մի առնչություն չեն ունեցել ոչ ադրբեջանցիների եւ ոչ էլ թուրքերի հետ:

ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԴՐԱՅԻՆ ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Լեոնային Ղարաբաղում «...ղեկավար պաշտոնների
են առաջ քաշում սակավ ընդունակ, անհրաժեշտ
գիտելիքներ չունեցող, իսկ երբեմն էլ ուղղակի
պատահական, վստահություն չներշնչող մարդկանց»:*

*(Մարգային կուսակցական 25-րդ
Կոմֆերանսի նյութերից:
«Կոմունիստ» (Բաքու), 25 հունվարի, 1971 թ., N 21)*

Նախքան բուն նյութի քննությանն անցնելը, հարկադրված ենք հենց սկզբից մեջբերել եւս մի շատ հատկանշական փաստաթուղթ, որը ճիշտ է անուղղակի, բայց լրիվ չափով առնչություն ունի խնդրո առարկա պրոբլեմի հետ:

“До сих пор еще не обезоружено 90% зангезурских деревень. Это печально, но более печально то, что до сих пор не обезглавлено (не оставлено без вождей) зангезурское армянство. Его интеллигенция и военные главарь до сих пор остаются в деревнях. Работайте день и ночь, постарайтесь, чтобы все видные армяне были арестованы. Оставьте человеколюбие - этим нельзя создать государство, завоевать страны. Здешние товарищи не очень довольны членами армянского Горисского ревкома, постарайтесь переизбрать Ревком и во время этого выбора выбрать только мусульман и известных там русских. В богатых войскаму местах, сцелью ослабления армян, убедите одного русского и обвините в этом армян, знаете, что делают русские. Не оставляйте в Зангезуре ни одного порядочного человека, ни богатства, чтобы это проклятое племя не могло подняться на ноги. Асад Караев. 21 июля 1920 год”. (ЦПА ИМА при ЦК КПСС ф. 64, оп. 1, д. 10, Л. 3)

Ահավասիկ, այս շրջաբերական փաստաթղթից ավելի պերճախոս ի՞նչը կարող է պատկերացում տալ դեպի հայ ժողովրդի, մասնավորապես նրա առանձին հատվածների նկատմամբ Ադրբեջանի XXդ. 20-

70-ական թվականների ղեկավարների ցուցաբերած, համեմայն դեպս, ոչ բարեկամական վերաբերմունքի մասին: Ամենայն ակնբերելությամբ կարելի է ասել, որ տարածքային հավակնության նկատառումով է որոշվում Ադրբեջանի ղեկավարների հայատյաց քաղաքական գործունեության ընդհանուր գաղափարական ուղղվածությունը, եւ Ղարաբաղի հայ բնակչությանն իր 4-5 հազար տարվա պապենական երկրամասից դուրս քշելու նրանց անսքող ձգտումը:

Չի կարելի ժխտել նաեւ հայ ժողովրդի նկատմամբ անցյալից ժառանգած նրանց ատելությունը, որը մասնավորապես պայմա-նավորված է պատմական, կրոնական, մշակութային, հայերի ընդգծված ռուսական, եվրոպական կողմնորոշման եւ հատկապես Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող 300-ամյա պայքարի հանգամանքներով: Հետեւապես, Ղարաբաղի (ինչու միայն Ղարաբաղի) հայ բնակչության հանդեպ կատարված հալածանքների հիմնական գործոններից մեկն էլ, ամենայն համոզվածությամբ կարելի է համարել ազգային թշնամանքը: Ինչու չասել. միաժամանակ, հայերի եվրոպական բարձր կուլտուրան, կրթվածությունը, կենցաղը, ինքնատիպ ճարտարապետությունը, արհեստների նկատմամբ հակումը, հողից հաց քամելու կարողությունը, հանգամանքներ, որոնք ականա առաջացնում են իրենց հարեւանությամբ ապրող թուրք-ազերիների նախանձը, զայրույթը: Հենց նրանք էլ իրենց հավատակից օսմանյան թուրքերի հետ 1920 թ. մարտի 23-ին իրագործեցին Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիի սպանդը: Եվ ամբողջ ֆարսը այն է, որ թուրք-ազերիները այսօր հայտարարում են, թե Շուշին իրենց քաղաքն է: Եվ եթե դա իրականում այդպես է, ապա ինչո՞ւ նրանք այրեցին, թալանեցին եւ հողի երեսից քերեցին Շուշին:

Շուշիի կործանման ականատեսներից եւ մասնակիցներից մեկը՝ ադրբեջանական բանակի զինվոր Ալիմարդանբեկովը, 1920 թ. ապրիլի 7-ին պարծենկոտ գրում էր եղբորը. «Հայկական Շուշին, որ դու տեսել ես, եւս լրիվ հրդեհված է: Թողել ենք միայն 5-10 տուն: Ավելի քան 1000 հայեր գերի են վերցվել: Բոլոր տղամարդկանց ոչնչացրել ենք, նույնիսկ խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր նշանավոր եւ ունեւոր մարդկանց: Մուսուլմանները կողոպտել են հայերի հսկայական հարստությունը եւ այնքան են ուռճացել, որ լկտիացել են» (ԼԴԴ ՊԵԹ, ֆ. 11, ք. 107): Տարօրինակ է եւ սարսափելի, որ հայերի ցեղասպանությունը Շուշիում եւ առանց ամոթի ու խղճի հիմնավորց հայկական մի ամբողջ

մայրաքաղաքի կործանումը հետին թվով ներկայացվում են որպես «ադրբեջանական ժողովրդի փառապանծ սիրանք» (*տես Шаген Мкртчян, Шорс Давтян, Шушу – город трагедической судьбы, Ер., 1997, стр. 104*):

1. ԲՅՎԼԼԱԳՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Եթե մենք հանձն ենք առել դիտարկել Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ պետականորեն իրականացված հալածանքների եւ բռնությունների մասին, ապա, բնականաբար, պետք է անդրադառնանք նաեւ ոչ վաղ անցյալին: Սա անհրաժեշտ է բացատրելու համար, թե ինչ գլխավոր փուլեր են ունեցել այդ հալածանքները, եւ թե ինչ շարժառիթների պատճառով է հիմնախնդիրը ծավալվել, դուրս եկել երկրամասի սահմաններից ու վերածվել ազգային չլուծվող ճգնաժամի, արժանացել միջազգային հանրության ուշադրությանը:

Եվ այսպես, սկսենք սկզբից՝ 1920 թվականից: Ասադ Կարաեւը անհայտ անուն չէ: Սովետական Ադրբեջանի անցյալ դարի 20-ական թվականների քաղաքական կյանքով հետաքրքրվող ամեն ոք հեշտությամբ նրան կարող է տեսնել տարբեր պատասխանատու դերերի մեջ: Վերը նշված “Таинное письмо предревкома Карабаха Асада Караева своим доверенным людям”. էքսպանսիայի ծրագիրը, որը միաժամանակ մի թալիսման է եւ որով կարելի է քանդել Ղարաբաղի հայ բնակչության ցնցող դրամայի քառասուն հանգույցով կապած կծիկը, անվերապահորեն համարվում է Ադրբեջանի առաջին հեղկոմի՝ մուսավաթներից որդեգրած քաղաքականության անկյունաքարը: Որ դա իրոք այդպես է, որ այն գրվել է Ադրբեջանի հեղկոմի առաջին նախագահ Նարիմանովի թելադրանքով՝ վկայում է վերջինիս քաղաքական այն դեմագոգիան, որ նա բարձրացրել է ՈՍԳ(Բ)Պ-ի Անդերկրկոմի բյուրոյի՝ Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին 1921 թվականի հուլիսի 4-ին ընդունած հայտնի որոշման կապակցությամբ: Եթե Լեոնային Ղարաբաղը չմտնի Ադրբեջանի կազմի մեջ, հայտարարել է Նարիմանովը, ապա “тем самым мы восстанавливаем в Азербайджане антисоветские группы”, որ “это необходимо для укрепления революции ... иначе совнарком слагает с себя ответственность” (*ЦПА ИМА ф.35, оп. 13, ед.хр. 66, л.1*).

Եվ այսպիսով, չանսալով բանականության ծայրին, ասպարեզը տրվեց շանտաժին, որով եւ զգալի հարված հասցվեց նախ եւ առաջ հայ ժողովրդի միասնությանը եւ կանաչ ճանապարհի բացվեց Ղարաբաղի հայության հանդեպ քայլազյոզություններ կատարողների համար: Սա նաեւ ասես հատուկ գրած մի սցենար էր, որով անցյալում հարթ ընթացել եւ հետագայում էլ շարունակվել են Ղարաբաղում կիրառվող հայատյաց քաղաքական կամպանիաները:

Դեռ ավելին, կան տվյալներ, որ Նարիմանովը ոչ միայն չէր ուզում, որ Ղարաբաղը վերամիավորվի իր Մայր Հայրենիքին, այլեւ ծայրայտ կերպով դեմ էր արտահայտվում անգամ ինքնավար մարզ ստեղծելու գաղափարին*։ Այդ իսկ պատճառով ավելի քան երկու տարի ձգվեց Ղարաբաղը հայկական ինքնավար մարզ հռչակելու վերաբերյալ Անդրերկրկոմի բյուրոյի որոշման կատարումը:

Միայն Սուրեն Շադունցի, Սերգեյ Կիրովի եւ Լեւոն Միրզոյանի գործուն միջամտությունից հետո է հաջողվում ստեղծել ինքնավարություն, այն էլ ոչ բոլոր շրջաններում, որոնք նախկինում կազմում էին մեկ միասնական աշխարհագրական, պատմական, ազգագրական հայկական միավոր՝ համասյի մեկիջություններ անվամբ: Ադրբեջանի ղեկավարները, հավանաբար, համոզված լինելով, որ վաղ թե ուշ Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզը վերամիավորվելու է ՀԽՍՀ-ին, Խայկական մարզից մեխանիկորեն անջատում են Գարդմանքը իր 105 հայկական գյուղերով եւ Գյուլիստանի գավառը (այժմյան Շահումյանի շրջանը՝ իր 17 հայկական բնակավայրերով հանդերձ) եւ պահում նեղ օրվա համար: Բացի այդ, մի շարք հայկական գյուղեր, որոնք իրենց դիրքով եւ ստրատեգիական նշանակությամբ կարելուր կապող օղակ էին հանդիսացել Սյունիք-Արցախ մարզերի միջեւ, հետագայում դարձյալ պոկվեցին Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզից: Այսպես, Դիզակի (այժմ՝ Հադրութի) շրջանի Նախալեոնային Էդիլլուի եւ Տողի ենթաշրջանների միջեւ սեպ խրելու համար հայկական Հողեր գյուղը անջատվեց եւ միացվեց Կարյազինոյի (Ֆիզուլիի) շրջանին:

* Երբ 1923 թ. հրապարակվում է Լեոնային Ղարաբաղին ինքնավարություն տալու վերաբերյալ դեկրետը, Ն. Նարիմանովը Մոսկվայից գրում է Բաբու եւ պահանջում հրաժարվել Լեոնային Ղարաբաղին ինքնավարություն տալու գաղափարից, շեշտելով, որ ինքը դրա համար չէ այնքան պայքարել ու Ղարաբաղը թողել Ադրբեջանի կազմում: (Այդ նամակը հրապարակվեց Ադր. ԽՍՀ Պերագույն խորհրդի 1989 թ. հոկտեմբերին տեղի ունեցած նստաշրջանում):

Նույն Դիզակի գավառի հայկական Յարար գյուղը (Յաքյառու գետի ձախ ափում), որ դարեր շարունակ հանդիսացել է Այունիք-Ղարաբաղ մարզերը իրար հետ կապող ամենահարմար եւ ամենակարճ դարպասը, 20-ական թվականների վերջերին կամայականորեն պոկվել է հայկական մարզից եւ միավորվել Լաչինի շրջանին, իսկ անուճն էլ վերանվանվել է Ջաֆարաբաղ (Բազիրովի անունով): Յայ ճարտարապետական գլուխգործոց վանքային համալիրներից մեկը՝ Դադի կամ Խոթա վանքը (XII-XIII դդ.) եւ նրան կից Մեսրոպավան հայկական գյուղը, որը համարվել է Թաթթառի հովիտը՝ պատմական Խաչեն գավառը Սեւանի ավազանի հետ կապող հանգույց, անջատվել է Ջրաբերդի (Մարտակերտի) շրջանից եւ միացվել Քյալբաջարի շրջանին: Այսպիսով, բոլոր այս գյուղերը լրիվ ադրբեջանականացվել էին: Միաժամանակ մարզի տարածքի մեջ ստեղծվում են ադրբեջանական Վերին Վեյսալի (Մարտունու շրջան) եւ Աղդաբան (Մարտակերտի շրջան) գյուղական սովետներ եւ սլաքով միացվում համապատասխանաբար մեկը՝ Ֆիզուլիի, իսկ մյուսը՝ Քյալբաջարի շրջաններին: Հին Շեն (Քյոհնա Շեն) հայկական գյուղը՝ իր շրջակա բնակավայրերով (Չաբուղի մոտ), միացրին Լաչինի շրջանին եւ դրանով իսկ Յադրութի եւ Շուշվա շրջանների արանքում արհեստականորեն ստեղծեցին մի մեծ խոռոչ՝ ճեղքվածք: Ահա այսպես էր ձեւվել եւ կարվել ԼՂԻՄ-ի քարտեզը: Փաստորեն, պատմական Արցախ նահանգի 11,5 հազար քառ. կմ տարածքից եւ 12 գավառներից նորաստեղծ ինքնավար մարզին բաժին էին թողել ընդամենը 4,4 հազ. քառ. կմ եւ հինգ շրջան, որոնք ունեին 248 բնակավայր:

Մինչդեռ Անդրկովկասում, սովետական իշխանության հաստատումից հետո, հայկական Ղարաբաղի բնակչությունը եւ նրա հետ միասին ողջ հայությունը հույսեր էր փայփայում, որ վերջնականապես կլուծվի հայ-ադրբեջանական հարցի «հանգույցը», եւ դրա շնորհիվ կվերանան սահմանային վեճերը, կվերականգնվեն երկու հարեւան ժողովուրդների բարեկամական հարաբերությունները: Եվ, որ ոչ պակաս կարեւոր էր, Ղարաբաղի հայ բնակչությունը ամառգել հնարավորություն ձեռք կբերեր մայր Յայաստանի կազմում բազմակողմանիորեն դրսևորելու իր ստեղծագործական տաղանդը եւ անսպառ եռանդն ու կորովը: Ապարդյուն հույսեր... Սակայն, եթե Ադրբեջանի ղեկավարների էքսպանսիան կանգ առներ միայն այս կետի՝ Ղարաբաղի վրա:

Նրանք նույն համառ ինքնավստահությամբ ուղիներ էին որոնում Ջանգեզուրը, Նախիջեւանը, Գարդմանը՝ Յայաստանի այս կարեւոր մարզերը եւս հափշտակելու համար: Դիվանագիտական մարզանքներով, շանտաժի լեզվով, Թուրքիայի ճնշման տակ նրանք Նախիջեւանին հեշտությամբ տիրացան: Սակայն, ի պատիվ Ջանգեզուրում այն ժամանակ գտնվող հայ զինվորականների, ասենք, որ Ադրբեջանի նվաճողական պլանները այդ երկրամասում ձախողվեցին: Այսուհանդերձ, հետագայում այդ պլանները նույն եւ այլ մեթոդներով սկսեցին հետեւողականորեն գործադրվել Ադր. ՍՍՀ ենթակայության տակ թողնված հայկական շրջաններում: Միայն 1920-1990 թթ. Ադրբեջանից դուրս մղվեց ավելի քան 1700 հազար հայ բնակիչ եւ նրա տեղը բնակեցվեց շուրջ երկու միլիոն ադրբեջանցի: Տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ բռնի կերպով քշվեցին Նախիջեւանից, Գարդման գավառի շրջաններից, Նուխիից: Եվ փորձեր էին արվում այդ ազգահալած, նվաճողական կոնցեպցիան լկտիաբար կենսագործել նաեւ Ղարաբաղում: Մարդու իրավունքների մասսայական, սիստեմատիկ եւ կոալիտ խախտումներ էին կատարվել Ղարաբաղում եւ Ադր. ԽՍՀ հայաշատ մյուս շրջաններում:

Այս ամենի վրա հակազդելու համար, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում 1988 թ. տեղի ունեցող իրադարձությունները մերթ վերագրում էին դաշնակցականներին մերթ հայկական նացիոնալիզմին, մերթ առանձին մարդկանց կողմից ձեռնարկված հրահրումներին, երբեմն էլ ուղղակի վերագրում ՀԽՍՀ-ին: Համառորեն հրաժարվում էին ընդունել, որ այդ իրադարձությունները տարիներ շարունակ չլուծված կամ էլ տեղաբնակ հայության շահերին ի վնաս լուծվող հարցերից առաջացած արդարացի դժգոհությունների արդյունք էին, որ Ադրբեջանի ճարպիկ ղեկավարները հեշտությամբ քողարկում եւ Մոսկվային ի ցույց էին դրել որպես «հայկական նացիոնալիզմ»:

Ինչ քողով ասես չեն ծածկվել Ղարաբաղի հայությանը կուլ տալու Ադրբեջանի ղեկավարների ձգտումները, փորձերը: Բազմաչարչար ու բազմատանջ այդ տոկուն, քաջարի լեռնականներին մեղադրել եւ մեղադրում էին ժամանակի պահանջներին խորթ այնպիսի իզմերով, որոնցից Ղարաբաղցիներն ավելի շատ էին խորշում, եւ որոնց դեմ մղված պայքարում նրանց լավագույն զավակներն իրենց կյանքն էին զոհաբերել: Բայց այդ իզմերը պետք են եղել քողարկել, օրինականաց-

նել հայ բնակչության, մասնավորապես՝ նրա առաջադեմ ինտելիգենցիայի դեմ գործադրվող ամեն կարգի դաժան, անասելի հալածանքները, ապօրինությունները:

1920-ական թվականներին «Մեծ Ադրբեջան» ստեղծելու պատրվակով հալածվել, երկրամասից դուրս է բռնվել դարաբաղցի հայ հեղափոխականների այն սերունդը, ովքեր դժվարին պայմաններում, ինքնաճողաց նվիրումով կազմակերպել էին կուսակցական խմբեր, ստեղծել կազմակերպություններ, բուլշեիկյան կուսակցության խոսքն էին հասցրել ժողովրդին, նրան նախապատրաստել, զինել էին հոկտեմբերի եւ նրա նվաճումները պաշտպանելու համար: Ովքեր պայքարի էին ելել մուսավաթական բանդաների, թուրքական կանոնավոր բանակների դեմ, ովքեր 11-րդ Կարմիր բանակի շարքերում ազատագրել էին Ադրբեջանը, հոկտեմբերի ալ դրոշներն էին պարզել Արցախական աշխարհի ամենաբարձր լեռնագագաթների վրա: Սակայն հենց որ սովետական իշխանությունը հաստատվեց Ղարաբաղում, այդ խիզախ ու անվեհեր մարդիկ մնացին սովերում, երկրամասում խաղաղ ստեղծագործական աշխատանքի կազմակերպման հրամանատարական պոստերը նրանց համար մնացին աննվաճելի բարձունքներ: Ղարաբաղում, որպես ղեկավար աշխատողներ, բերվում էին դրսից, անզամ հեղափոխությունից, կուսակցությունից հեռու կանգնած ամեն կարգի տակաճներ: Երկրամասում հեշտությամբ ղեկավարներ էին դառնում սովետական կարգերի բացահայտ թշնամիները, ամեն երանգի գործակալները, մուսավաթիստները, գողերը, ավազակները, բառացի անգրագետ, նաեւ տգետ մարդիկ, բայց ոչ տեղացի՝ ղարաբաղցիների սիրելի, փորձառու կադրերը՝ Ա.Շահունցը, Թ.Տեր-Միրզաբեկյանը, Ա.Սահակյանը, Ս.Բաղդատեւը, Ս. Համբարձումյանը, Հ. Կամարին, Ա. Բեգզադյանը, Վ.Բաբայանը եւ շատ այլ մարտիկ-հեղափոխականներ, որոնք ունեին 20-25 տարվա կուսակցական ստաժ եւ մասսաներին կազմակերպելու, ղեկավարելու երկար տարիների փորձ: Ինչո՞ւ այս պայծառ մարդկանցից ոչ մեկը իր հայրենի երկրամասում աշխատանքի չնշանակվեց:

«Այդ ինչպե՞ս պատահեց, որ երկրամասում սովետական նորաստեղծ հեղկոմների անդամներ դարձան թուրքական բանակի սպաները, ավանտյուրիստ իս. Սուլթանովը, մուսավաթական լկտի գործիչ Ջենյալովը, ավազակաբարո անցյալ ունեցող Ջիլփուղարը (Ջրաբեր-

դի գավգործկոմի նախագահ. պաշտոնական եւ նաեւ ոչ պաշտոնական փաստաթղթերի տակ ազգամու՛նը չէր նշում, հավանաբար, իր կեղտոտ անցյալը թաքցնելու համար), Աշոտ Երիցյանը, իսկական ոճ-րագործներ Բեհբուդ Խուրշուդովը, Անդրանիկ Մարտիրոսյանը, փառամոլ ու կարիերիստ Կարակոզովը (Ղարաբյուզյանը), Առուշանովը, բառացիորեն անգրագետ Մուկուչ Արզանյանը...»

Ինչու այդպիսիներին էին մարզային եւ գավառային ղեկավարներ դարձրել եւ ոչ գրագետ, բանիմաց մարդկանց: Այսպես ինքս ինձ մտածելով, խոսելով ու պատասխանելով հասա գյուղ (*Մեծ Շեն - Շ. Ս.*) - իր օրագրում 1923 թ. հոկտեմբերի 6-ին այսպես է գրել Ջրաբերդի գավառային գործկոմի քարտուղար Թ. Տեր-Դանիելյանը: (*Տես նրա «Մեծ Շենի հանստոս պատմություն» հուշագրությունը, էջ 182*):

Ահա թե այդ առնչությամբ ինչ է ասել Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ՊԱԿ-ի առաջին արտակարգ լիազոր-ներկայացուցիչ Հայկ Մարգիսովը. «1920թ. մայիսի 22-ին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի հանձնարարությամբ ցուցակագրել էի նավթահանքերում ամենավատ պայմաններում ապրող, բացառապես անգրագետ, ծնունդով ղարաբաղցիներին եւ զանգեզուրցիներին, բոլորին տարել բաղնիք, հագրել Ադրբեջանի հեղկոմի կողմից տրամադրված հագուստներ, հրապարակայնորեն հանձնել կարմիր պարտիզանների գրքույկներ եւ բոլորին տեղափոխել Ղարաբաղ: Նրանք մոտ 500 հոգի էին: Այդ ժամանակ Ղարաբաղի հեղկոմի նախագահ Ասադ Կարաբեի հրամանագրով նրանք նշանակվում են շրջանային կամ գյուղական հեղկոմի նախագահներ, կոմիսարներ, կուսբջիջների քարտուղարներ, Թեւան Ստեփանյանի դեմ պայքարող զինված ջոկատների հրամանատարներ, քաղաշխատողներ, ՊԱԿ-ի լրտեսներ եւ այլ պաշտոններում» (*տես «Արցախյան գրառումներ», եր., 2001թ. էջ 274*): Որ այդ ամենը կատարվել էր հատուկ մշակված ծրագրով, կասկած չի հարուցում:

Ժամանակին այս բոլոր հարցերին շատ որոշակիորեն պատասխանել է ոչ այլ ոք, եթե ոչ ինքը՝ “Прөдрөвкома Карабаха” - Ասադ Կարաբեւը իր վերոհիշյալ մարտակոչում: “Постара́йтесь переубра́ть Ревком и во время этого выбора выбра́ть только мусульман...” “Постара́йтесь, чтобы все видные армяне были арестованы. Оставьте человекалюбие - этим нельзя создать государство, завоевать страну”.

Չեմ կասկածում, որ ինչպես ամեն ինչ գովելու սիրահարները, այնպես էլ աշխարհում ամեն ինչ արդարացնելու պատրաստ «օբյեկտիվիստները», թմրամիտ ու քարացած հայացքների տեր մարդիկ կարող են հակաճառել, որ Ասադ Կարաեւը դա ասել է Ձանգեզուրի համար: Բայց մի մոռացեք, որ Ձանգեզուրը գտնվում է Ղարաբաղից հարավ-արևմուտք եւ այնտեղ գնացող ճանապարհները անցնում են Ղարաբաղով: Եվ բացի այդ, Ղարաբաղ-Ձանգեզուր լեռնաստանը պատմա-աշխարհագրական, ռազմա-ստրատեգիական եւ ազգագրական առումով մի միասնություն է կազմում, որի ջլատման համար ուժ ու եռանդ չեն խնայել ո՛չ պարսիկները, ո՛չ թուրքերը եւ ոչ էլ՝ 1918-1922 թթ.՝ ադրբեջանցիները:

Ի՞նչ իմանար շիտակ ջրաբերոցին, որ այդ ամենը կատարվում էր ուրիշի երկրամասը նվաճելու որոշակի նպատակով, այն էլ նախօրոք մշակված ծրագրի համաձայն: Ղարաբաղը, որտեղ 1920-ական թվականների սկզբներին բնակվում էր ավելի քան 300 հազար հայ բնակչություն, սովետական իշխանության առաջին տարիներին (1920-1923 թթ.), իր բազմադարյա պատմության մեջ առաջին անգամ, գրեթե զրկվեց իր լավագույն զավակներից եւ գլխատված, շվարած, հիասթափված, ուժասպառ վիճակում հանձնվեց «շապիկները փոխած, բայց նախկին հոգիներով ադրբեջանցի հայատյաց ղեկավարների ողորմությանը: Բազմաթիվ անհերքելի փաստաթղթերից երեւում է, որ Լեռնային Ղարաբաղի բովանդակագուրկ ինքնավարության հաստատությունների համար կադրեր ընտրելիս Արմենակ Կարակոզովը (Ղարագյոզյանը), իհարկե ոչ առանց վերադասի՝ Բաքվի ցուցումի, առաջնորդվել է «Рыбак рыбака вудум уздалека» ռուսական ասացվածքի փիլիսոփայությամբ: Այլապես դժվար թե հնարավոր լիներ 1923-25 թթ., երկու տարուց էլ քիչ ժամանակաշրջանում, հինգ անգամ փոխվեին կուսակցության մարզկոմի քարտուղարները: Նկատենք, որ այդ քարտուղարներից 3. Կամարին, Ս. Մանուցյանը, Ա. Քարամյանը եւ Կ. Սարգսյանը փորձված, պատրաստված բուլշեիկներ էին, որոնք զոհ գնացին կամայականության: Իսկ 1930-ական թթ. սկզբին ԼՂԻՄ ղեկավարները մեղադրվեցին նացիոնալիզմի, նացիոնալ-ուկլոնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի եւ Հայ հեղափոխական դաշնակցության գաղափարների դեմ պատշաճ չպայքարելու մեջ (*տես "Заря Востока", 24/IV-1931*): Նրանց բոլորին դա-

տապարտեցին եւ դուրս տարան մարզից: Դեռ ավելին, լուծարեցին շրջանային գրեթե բոլոր կուսկազմակերպությունները: Այնուհետեւ երկարատեւ ժամկետներով Սիբիր աքսորեցին մարզի նոր նշանակված ղեկավարներ Պողոսովին, Բադամյանին, Կարկարյանին, Արզանյանին, իսկ Արմենակ Կարակոզովին ուղղակի գնդակահարեցին Բաքվում:

Անդրֆեդերացիայի (1922-1936թթ.) ստեղծումով արհեստականորեն խլացվել էին այդ վարչական միավորի մեջ մտնող ազգերի իրավունքներն ու դժգոհությունները, ծավալվել էր խորհրդային կենտրոնական իշխանությունների պահանջով վարվող մի քաղաքականություն, որ իրավամբ նշանակում էր ցուցադրական ու կեղծապատիր եղբայրություն: Այդ տարիներին թմբկահարվում էր «ԼՂԻՄ միակ ճիշտ տեղը եղբայրական Ադրբեջանի կազմում մնալն է» կարգախոսը: Սակայն Ղարաբաղի հայությունը երբեք չհաշտվեց իր տխուր վիճակի եւ դառը ճակատագրի հետ:

1930-1940-ական թթ. Ադրբեջանի տիրակալ Բագիրովը հետեւողականորեն շարունակեց հայկական շրջանների նվաճման այն քաղաքականությունը, որը իրականացնում էին նրա նախորդները: Այս բնագավառում նրա լկտիությունը չափ ու սահման չուներ: Հատկապես Անդրֆեդերացիայի վերացումից հետո, մանավանդ անհատի պաշտամունքի ժամանակներում: Այդ բռնակալը, առանց այլեւայլության, Ադրբեջանում աշխատող հայ կադրերին, ինչպես եւ հայ բնակչության մի զգալի մասին հայտարարեց «ժողովրդի թշնամիներ» եւ առավել նշանավոր հայերին՝ Արթուրյանում սոցիալիստական շինարարության կազմակերպիչներին, առանձնապես զնդակահարեց, իսկ տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց զանգվածաբար քշել տվեց աքսոր, ռազմաճակատ: Այստեղ հարկադրված են մեջբերում կատարել 1930-ական թթ. Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախագահ Սուրեն Բադամյանից, որը 1937-1954 թթ. անց էր կացրել բանտերում ու քսորավայրերում: «Ինչ կարելի է ասել Ադրբեջանի իշխանությունների հակահայկական, հակադարաբաղյան չարագործությունների մասին: Այն, որ դարաբաղցիներին վաստակը քամում ու տանում էին, դա դեռ ոչինչ: Բայց որ ԼՂԻՄ շուրջը վիստացող ադրբեջանական ավագալիստների միջոցով հայասպան քաղաքականություն էին իրականացնում, մայր Հայաստանից մեկուսացված հայկական մարզում, դա ար-

դեն անհանդուրժելի էր: Դեռ ավելին, այդ բռնությունների դեմ բարձրացող ամենաանմեղ բողոքը, խուլ տրտուկն անգամ խլացվում էր տեղն ու տեղը, եւ բողոքողը անհետանում էր ուռով-գլխով, հաճախ էլ գերդաստանով հանդերձ»: Ստեփանակերտում, մարզային պատմա-երկրագիտական թանգարանում աշխատած տարիներին (1965-72 թթ.) ինձ հաջողվեց կազմել Բագիրովի անմեղ զոհերի ցուցակը: Ըստ այդ հաշվարկների, Բագիրովի կարքադրանքով գնդակահարված դարաբաղջի հայերի թիվը կազմում է 386 մարդ: Իսկ այս կամ այն պատրվակով մարզից դուրս քշված հայերի քանակը անցնում է 75 հազարից, որը կազմում էր մարզի բնակչության գրեթե կեսից ավելին:

Գնդակահարվածները կուսմարզկոմի, մարզգործկոմի նախկին ղեկավարներ, մարզային ու շրջանային մասշտաբի ղեկավար աշխատողներ էին: Իսկ շարքային, բարեկիրթ, աշխատունակ անմեղ զոհերի քանակն անհամեմատ շատ էր, որոնց «մեղքը մեկն էր եղել, անհանդուրժողականությունն արդրեջանական բռնությունների ու անսամձ կամայականությունների դեմ, արտահայտված կամ թեկուզ ենթադրվող ձգտումը ինքնավար մարզը իր իսկական ու օրինական տիրոջը՝ Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու»: Ըստ որում՝ «բոլոր այդ զոհերի-հայրենի երկրամասի ազատագրության համար պայքարած կամ ազատագրությունը երազած մարդկանց վրա միշտ եւ ամենուր պիտակավորվել էր մի զորավոր մեղք՝ «խորհրդային իշխանության կատաղի թշնամիներ»:

Ահա, այդ տասնյակ հազարավոր դարաբաղջի «թշնամիներից» մեկն էլ եղել է ԼԴԻՍ լուսժողկոմ, Հաղորթի շրջգործկոմի նախագահ Հայկ Բալայանը: Միայն 64 տարի անց, նրա որդու՝ հանրահայտ Ջորի Բալայանի համառ ջանքերով ԳՌԻԼԱԳ-ի հսկայական տարածքում փնտրվել ու՝ Կոմի Հանրապետությունում գտնվել, ապա Ղարաբաղ տեղափոխվել հոր՝ Հայկ Բալայանի աճյունի մասուկքները եւ բազմության ներկայությամբ վերահուղարկավորվել Քյաթուկ գյուղի գերեզմանոցում: Ի դեպ, ինչպես վկայել է Ս. Բադամյանը, «Արդրեջանի ղեկավարների թողտվությամբ գործող ահաբեկչական խմբերը վիստում էին հայկական գյուղերի շուրջը եւ տեղնուտեղը գնդակահարում իրենց քթին դուր չեկած հայ մարդկանց: Եթե ղեկավար որեւէ աշխատողի կանչում էին Բաքու, այլեւս վստահություն չկար, թե նա կվերադառնա տուն: Հանրապետական քանի-քանի ժողովների ենք գնացել պա-

տասխանատու աշխատողների հոծ խմբերով եւ վերադարձել՝ կեսն այնտեղ թողնելով» (մանրամասն տես Բ. Ուլուբարյան, Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ 167-168):

2. ԻՐՈՔ, ԻՆՉ ԿԱՍԵՐ ԱՍՏԻՆԸ

Այս հրեշավոր ցեղասպան քաղաքականությանն ամեն կերպ եւ ամեն զնով դիմադրողներին Բագիրովը մի այնպիսի մասսայական ջարդ տվեց, որ հայկական Ղարաբաղը շուրջ 30 տարի ուշքի չեկավ: Հայրենական պատերազմը նպաստավոր պայմաններ ստեղծեց, որպեսզի հայկական մարզի բնակչության 35 տոկոսը, կամ բացարձակ թվերով՝ 45 հազարը, զորակոչեն բանակ: Որպեսզի պատկերը պարզ լինի, որպեսզի Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ գործած հանցագործության չափը լրիվ ցույց տրվի, այստեղ տեղի է մեջ բերել բանակի գեներալ Ս. Շտեմենկոյի «Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին» երկրորդ գրքից մի հատված.

«...1949 թ. Ստալինը իր ամառանոցում, քաղբյուրոյի անդամների ներկայությամբ, ինձ հարցրեց.

- Պատերազմի ժամանակ որքան է եղել մեր բանակի ամենաբարձր թվաքանակը:

- Տասնմեկ միլիոն մարդուց մի փոքր ավելի:

- Իսկ բնակչության կազմի որ տոկոսն էր կազմում:

- ... մոտ վեց տոկոսը:

- Եիշտ է: Բայց դա դարձյալ բոլորը չէ: Հարկավոր է հաշվի առնել նաեւ մեր կորուստները, որովհետեւ սպանվածները եւ վերքերից զոհվածները նույնպես մտնում են բանակի թվաքանակի մեջ...

Հաշվի առանք այդ եւս:

- Իսկ հիմա, - շարունակեց Ստալինը, - եկեք հաշվենք, ինչպես էին գործերը Հիտլերի մոտ, որը կորուստների հետ միասին ուներ 13 միլիոնանոց բանակ 80 միլիոն բնակչից:

Հաշվեցինք: Դուրս եկավ 16 տոկոսից ավելին:

- Մոբիլիզացիայի նման բարձր տոկոսը կամ պատերազմ վարելու օբյեկտիվ օրինաչափություններ չիմանալ է, կամ ավանտյուրիզմ: Ավելի շուտ՝ վերջինն է, - եզրակացրեց Ստալինը: - Պատմության փորձը, պատերազմը վարելու ընդհանուր օրենքները սովորեցնում են, որ ոչ մի պետություն չի դիմանա այնքան մեծ լարվածության՝ գործարաններում եւ ֆաբ-

րիկաներում աշխատող, հաց աճեցնող, ժողովրդին ապահովող եւ բանակին անհրաժեշտ բաներ մատակարարող չի լինի: Հիտլերյան հրամանատարությունը, դաստիարակված լինելով Կլաուզեմիցի եւ Մոլոտևի գոգմաներով չկարողացավ կամ չուզեց հասկանալ դա: Հետեւանքը եղավ, որ հիտլերականները ջատեցին իրենց երկիրը» (Ս. Շտեմենկո, *Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, Երևան, 1977, էջ 649-651*):

Հարց է ծագում՝ ինչ կասեր Ստալինը, եթե այդ պահին նրան ասեին, որ իր ղեկավարած երկրի մի փոքր հատվածը՝ Լեռնային Ղարաբաղը դատարկվել է, եւ նրա հայ բնակչության 35 տոկոսը, կամ 154 հազար բնակչից 45 հազարը (4-5 անգամ ավելի շատ, քան հարեւան ադրբեջանական շրջաններից) թշվել էր պատերազմ: Կամ թե ասեին, որ այդ նույն Ղարաբաղի մարզային կուսկազմակերպության 5214 անդամից 3431-ը մարտնչել է ռազմաճակատում, կամ՝ այդ նույն մարզում չի մնացել բարձրագույն կրթությամբ ոչ մի տղամարդ մասնագետ, ղեկավար աշխատող, արվեստի եւ կուլտուրայի գործիչ, բոլորը մի մարդու պես մոբիլիզացիայի էին ենթարկվել:

Դժվար է ասել, թե Ստալինը ծխամորձը փստացնելով ինչ կասեր: Բայց նրա գրույցին ունկնդիր քաղբյուրոյի անդամներից գոնե մեկը հավանաբար մտքում կասեր՝ դա ոչ թե ավանտյուրիզմ է, այլ թուրք փաշաների՝ հայերի դեմ վարած ցեղասպան քաղաքականության շարունակությունը, Ադրբեջանի կազմում թողնված հայ բնակչության քրոքի կտրում, հայերի մասսայական մոբիլիզացիայի հաշվին Ադրբեջանում զինակոչի պլանի կատարում: Պատերազմին մասնակցած դարաբաղցիների միայն 1,3%-ն էին ադրբեջանցիները (թեւեւ նրանք կազմում էին մարզի ազգաբնակչության 10%-ը):

Այսօր մենք հայարտությամբ ենք հիշում բոլոր նրանց, ովքեր իրենց անձնական մասնակցությունը բերեցին ֆաշիզմի ջախջախման գործում: Սենք մի առանձին երախտագիտությամբ ենք նշում, որ Հայրենիքի ազատության համար մղված մարտերում 45 հազար դարաբաղցի «հայ նացիոնալիստներից» 28-ը շարքային զինվորից աճել եւ դարձել էր խոշոր գորավար (գեներալ, մարշալ), 21-ը Սովետական Միության հերոս, 6-ը Փառքի երեք աստղի շքանշանակիր, 15 հազարը պարգևատրվել է զանազան շքանշաններով ու մեդալներով, իսկ 22 հազարը իր կյանքն է գոհել Հայրենիքի համար: Ի դեպ, Անդրկովկասի բոլոր մարշալներն ու ադմիրալները (Հ. Բաղրամյան, Ա. Բաբաջանյան, Ա. Խամիբեյան (Ա. Խուդյակով), Հ. Իսակով) Արցախ-Ղարա-

բաղյան ծագում ունեն:

Պատկերը թերի կլիներ, եթե անտեսեինք հայկական Ղարաբաղի կամանց, երեխաների, զառամյալ ծերունիների աշխատանքային սխրանքները, որ նրանք գործել են պատերազմի տարիներին՝ ֆերմաներում, դաշտերում, այգիներում, բանջարանոցներում, ֆաբրիկաներում: Արեւածագից արեւամուտ տեւող համառ աշխատանքով նրանք ոչ միայն կարողացան կատարել եւ գերակատարել պետական ծանր առաջադրանքները, այլեւ «...երկրի պաշտպանության ֆոնդին՝ տանկային շարասյուն եւ կործանիչների էսկադրիլիա ստեղծելու համար մոտեցին 16 միլիոն ռուբլի, 50 կգ ոսկի, ավելի քան 2 միլիոն փուֆ հալսահատիկ, 0,5 միլիոն փուֆ միս, 0,4 միլիոն փուֆ կարտոֆիլ, 20 միլիոն հատ ծու, 0,2 միլիոն փուֆ բուրդ, 0,15 միլիոն փուֆ կենդանական յուղ, 500 հազար վեդոթ թթի օղի եւ այլ գյուղատնտեսական մթերքներ:

Մարզի բնակչությունը երկրի փառապանծ պաշտպաններին, բացի այդ, ուղարկել էր 80 հազար տաք (թրոյա) հագուստեղեն, 48 հազար անհատական եւ կոլեկտիվ ծանրոցներ» (ՈՒՄ ՄԿՔ, փ. 1, ձ. 188, օր. 1, Ն. 24). Դա քիչ անձնագոհություն չէր, մանավանդ մի այնպիսի մարզի համար, որը ուներ ընդամենը 80 հազար հեկտար վարելահող, 28 հազար հեկտար արոտավայրեր եւ ոչ ավելի, քան 154 հազար բնակիչ (որից, ինչպես նշվեց, 45 հազարը գտնվում էր ռազմաճակատում):

Ամբողջ Ղարաբաղը (բացառությամբ Շուշի քաղաքի, որտեղ ապաստան էին գտել ոչ քիչ թվով արտոնյալ ադրբեջանցիներ՝ օճառի եւ ծխախոտի ջրով թոքախտավոր դարձած «հիվանդներ», պատերազմին չմասնակցելու արտոնագրերով ղեկավարներ եւ նաեւ սովետական իշխանության քողարկված թշնամիներ) նման էր մի մեծ մեղվափեթակի: Աշխատում էին բոլորը՝ 6 տարեկանից մինչեւ 100 եւ անց մարդիկ: Արտադրության բոլոր բնագավառներում իշխում էր միայն ու միայն ձեռքի աշխատանքը: Չկար տրանսպորտ, էլեկտրականություն: Գյուղատնտեսական մթերքները մերձակա (ադրբեջանական շրջաններում գտնվող) մթերակետեր էին տեղափոխվում սայլով, էշով, ջորիով եւ երբեմն էլ՝ ուղղակի շալակով:

Անկարելի է չհիշել Շուշի քաղաքի որբանոցների եւ նրանց արտոնյալ դիրեկտորների մասին: Այն ժամանակ եւ գտնվում էի 4-րդ որբանոցում: Այսօրվա պես հիշում եմ Բելոռուսիայից, Ուկրաինայից եւ Ռուսաստանի արեւմտյան մարզերից մեզ մոտ բերվող ծնողազուրկ երեխաների խմբերը: Սեզ՝ որբերիս հասանելիք սննդամթերքները, հա-

գուստեղենը հափշտակում, զողանում էին որբանոցների թուրք ղեկավար աշխատողները եւ նրանց ցեղակից ենթակաները եւ դրանով երեխաներին մատնում սովամահության: Երեխաներից շատերը, իրենց կյանքը վտանգելով, բարձրանում էին որբանոցի պարիսպներով եւ գնում հայկական ավերված քաղաքամասի փլատակներում արածում (այո, անասունի պես արածում) եւ իրենց հետ էլ բերում էին խոտ եւ տալիս տկար ու փոքր ընկերներին: Ամեն օր բազմաթիվ երեխաներ թունավորվում, թաց խոտից ուռչում եւ մահանում էին: Ամենասարսափելին այն էր, որ մահացած երեխաներին իրար վրա թափած վիճակում սայլերով տանում էին Ջղղըր դուռ կոչվող վայրը եւ այնտեղից շարտում Գունոտի կիրճի անդունդը, որտեղ սեւ կաշաղակները կռկռալով կտցահարում էին դիակները: Այս մասին չի գրվել եւ այժմ էլ չի խոսվում:

Գերմանացի մարդասպանները դատվեցին, իրենց պատիժը կրեցին, բայց աղբբեջանցի երեխակերները մնացին անպատիժ, նույնիսկ նրանց մի անմեղ դիտողություն չարվեց: Ավելին, նրանք հետագայում յուրալի պաշտոններ ստացան, ղեկավարներ ընտրվեցին, կառավարական պարգեւների արժանացան եւ դարձան «ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամության ավանդության պաշտպաններ»: Նողկալի է...

Չետագայում, երբ այս ամենի մասին պատմեցի կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Ե. Գրիգորյանին, նա ասաց, որ ինքն այդ մասին գիտեր, բայց անգոր էր որեւէ բան անել, որովհետեւ որբանոցի հղփացած դիրեկտորները նշանակված էին Բաքվի կողմից: Հարկավոր էր խստագույնս վերահսկել, որ այն ամենը, ինչ պետությունը բաց էր թողնում որբերի եւ որբանոցում ապրողների համար, լրիվ հասներ նրանց: Այդ տեսակետից անհոգ եւ անգործունյա մարդկանց պետք էր խստիվ պատասխանատվության ենթարկել: Կրկնում ենք, Շուշիում գտնվող որբերի կերաբաժինը հափշտակողների մեղքով հարյուրավոր ռուս, բելուռուս, ուկրաինացի, հայ, աղբբեջանցի երեխաներ սովամահ եղան, եւ մարդակերներից ոչ մեկը դեռ մինչեւ օրս պատասխանատվության չի ենթարկվել:

Պատերազմը վերջացավ: Լռեցին հրանոթները: Ղարաբաղը տնքում էր իր որդիների կորստյան ցավից... Տունդարձի ճամփա բռնեցին կենդանի մնացած զինվորները: Որոշ չափով մեղմացան քաղաքական

կորբերը: Երկիրը թեւակոխեց նոր՝ թիվ 4-րդ վերակառուցման հնգաօյակը: Ամենուրեք բուժում էին պատերազմի վերքերը:

Ասկայն այս բնագավառում Ղարաբաղի (եւ ինչու միայն Ղարաբաղի) հայությունը դարձյալ մնաց պատմության լուսանցքներում: Վիրավորները դեռ չէին հասցրել դեռ շարտել իրենց վիրակապերը, երբ Ղարաբաղի ջինջ երկնակամարը կարկտաբեր ամպերից նորից մթագնեց: Խոր հրեշավոր ձեռնարկումներ սկսվեցին հայ ժողովրդին հերթական ծանր հարվածը տալու համար:

1949 թվականի հունիսի 14-ի գիշերը ամբողջ Անդրկովկասում իրենց բնակարաններից, կոլտնտեսային ֆերմաներից, անգամ հերթավիտային աշխատատեղերից, իրենց ընտանիքներից դուրս շարտվելին հազարավոր հայկական ընտանիքներ, եւ, ուժեղացված կոնվոյի ուղեկցությամբ, քվեցին ապրանքատար վագոնները: Կազմվեցին էշկուններ եւ ուղարկվեցին Ալթայի երկրամաս: "Их оказалося около пятнадцати тысяч душ... было отправлено 32 эшелона по 1500 душ в среднем" (ИКМ НКАО, "Очередное преступление", тетрадь I, гл. I, стр. 1).

Ղա մի դժոխային, ցնցող աղետ էր, որ Հայաստանը չէր տեսել վարսկական դաժան բռնակալ Շահ-Աբաս Ա-ի կազմակերպած հայկական բռնագաղթեցումներից հետո:

Բազմաթիվ արխիվային նյութեր, արքայականների հուշեր, բողոք-կամակներ վկայում են, որ մինչեւ վերոհիշյալ գիշերը, նախօրոք կազմվել էին արքայական ենթակա հայ ընտանիքների ցուցակները, որոնք մտնում էին, այսպես կոչված, «կասկածելի», «անհուսալի», «նափոհնալիստ», «դաշնակ» եւ անգամ «ուրիշ՝ իմպերիալիստական երկրների լրտեսներ» կատեգորիայի մեջ: Ոչ մի բացառություն չէր արվել ոչ հիվանդներին, ոչ 100-ամյա զառանյալ ծերերին եւ ոչ էլ հղի կանանց նկատմամբ:

Ցեղասպանները քաջ գիտեին, որ հիվանդ ու ծեր արքայալուներից գրեթե ոչ մեկը ի վիճակի չէ տանելու սիրիդյան պայմանները: Ալթայի կրկրամասում այս ամենի հետեւանքով զոհվեցին ավելի քան 13 հազար արցախցի հայեր:

Անհերքելի փաստերը աղաղակով վկայում են, որ քողարկված «խիստ գաղտնի» միջոցառումը կատարվել է մի գիշերվա ընթացքում, նույն ժամին, առանց աղմուկ-աղաղակի եւ, որ ամենագավեշտական

է, բանավոր կարգադրությամբ: Այդ է հաստատում ԽՍՀՄ պետական անվտանգության մինիստրության կոլեգիայի 1949 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունած «Անդրկովկասից Ալթայի երկրամաս ցմահ աքսորել հայ նացիոնալիստներին ու դաշնակներին» որոշումը:

1949 թ. հունիսի 14-ի գիշերը Ստեփանակերտում տեղակայված զորամասի ակումբում կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Սեդրակ Աբրահամովի ստորագրած ծանուցագրի հիման վրա տեղումնեցավ մարզի կուսակցական ակտիվի խիստ գաղտնի ժողով: Այն վարում էր ինքը՝ առաջին քարտուղարը: Նախ խոսքը տրվեց պետական անվտանգության մարզային վարչության պետ, գնդապետ Զախլովին: Վերջինս հայտնեց, որ գիշերը պետք է կարելուր օպերացիա կատարվի՝ պիտի կալանվեն եւ մարզի սահմաններից արտաքսվեն նախկինում դաշնակցական կառավարության մեջ եղած կամ նրան համակրած անձինք, ինչպես նաեւ գերմանական գերության մեջ գտնված քաղաքացիները: Ընդ որում, հայերը պիտի արտաքսվեն իրենց ընտանիքների հետ միասին: 49-ի այդ սեւ օրը ԼՂԻՍ-ից Սիբիր՝ Ալթայի երկրամաս եւն աքսորվել բոլորովին անմեղ հազարավոր հայ ընտանիքներ: Նրանց թվում էին Ստեփանակերտ քաղաքի միակ ռուսական դպրոցի դիրեկտոր Գամազասպ Ղուկասյանը, Ղարմետաքսկոմբինատի պահեստապետ Կարապետ Ասրյանը, երաժիշտ Գերասիմ Խաչատրյանը:

Հատկանշական է, որ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ աքսոր քշվեցին հունիս ամսին, իսկ նրանց աքսորելու վերաբերյալ որոշումը ձեւակերպվեց համարյա թե հինգ ամիս ուշ՝ հոկտեմբերի 26-ին, երբ արդեն հարյուրավոր անմեղ աքսորականներ, չդիմանալով անասելի ծանր ու դժվարին պայմաններին, կնքել էին իրենց մահկանացուն: Բայց դա չխանգարեց, որպեսզի նրանց՝ մեռած հոգիների մասին հայակույլ Բաքվի թելադրանքով որոշում կայացվեր՝ «ցմահ աքսորել» գրիֆով: Ստացվում է, որ առաջ սպանում էին, հետո միայն դատապարտում:

Հաջորդ տարվա վերջին Ղարաբաղի հայության գլխին մոր փորձանք եւս բերեցին, որի հիշատակումն անգամ սարսուռ է պատճառում: Աղբբեջանի իշխանությունների պարտադրմամբ, հարկահանների ջոկատները խուժեցին հայերի բնակարանները, դանակներով պատառոտեցին տեղաշորերը եւ հավաքեցին 200 տոննա բուրդ եւ դրա-

նով կատարեցին Ադր. ԽՍՀ բրդամթերման պլանները: Նման բարբարոսական դեպք աշխարհը, հավանաբար վաղուց չէր տեսել:

Սակայն, այս մասսայական կամպանիայով էլ չբավարարվեցին: Ընդհանրապես փոխարինողներն ավելին էին ուզում: Նրանք տանել չէին կարողանում, որ Ղարաբաղից հայերի դուրսմղումը ձգձգվում էր, խոչընդոտների հանդիպում: Աղբբեջանի ղեկավարները Մինգչաուրին, Սումգայիթին բանվորական էժան ձեռքեր տալու, ինչպես նաեւ «տնտեսական եւ նաեւ քաղաքական նպատակահարմարությունից» ելնելով սկսեցին փակել, ավերել, այլան-թալանի ենթարկել հայկական մարզի ազգային հարստությունը: Փակեցին տեղական արդյունաբերության 18 արտելները (որտեղ աշխատում էին 1054 բանվոր), շինանյութերի 6 կոմբինատները (317 աշխատակից), գյուղերում գործող 5 մետաքսակարժական ֆաբրիկաները (926 բանվոր): Կոլտնտեսությունները խոչորացնելու անվան տակ բռնի կերպով, միլիցիայի եւ րանակի ուժով դատարկեցին ՀԽՍՀ-ին հարող հայկական Թեգիսարաբ, Պետրոսաշեն, Սպիտակշեն, Արվազյադուկ գյուղերը: Փակվեցին պետական եւ կոլտնտեսային 6 էլեկտրակայանները, Ստեփանակերտի հայկական մանկավարժական ինստիտուտը, Հաղբութի հայկական մանկավարժական տեխնիկումը, «Երիտասարդ բոլշևիկ» թերթը: Բանդեցին, ավերեցին այն բոլորը, որ ստեղծվել էր նախապատերազմյան եւ պատերազմյան տարիներին: Ավերեցին Եվլախ-Ստեփանակերտ 116 կմ երկարությամբ երկաթուղին, կտրտեցին շուրջ 1200 հեկտար շահ թթեմու դարավոր այգիներ, լրիվ վերացման եզրին կանգնեցին մարզի տնտեսության առավել եկամտաբեր բնապատմական ճյուղերը՝ մեղվաբուծությունը, այծաբուծությունը, պտղատու այգեգործությունը, արգելեցին եւ չթողեցին, որ Ղարաբաղցիները ոռոգման նպատակով օգտվեն տեղական գետերից, աղբյուրներից: Գրադայաններից հանվեցին եւ ոչնչացվեցին հայ կլասիկների երկերը, ավերեցին 100-ից ավելի հայկական հուշարձաններ, բուլդոզերների թրյուրների տակ փոշիացվեցին Շուշի քաղաքի հայկական մասի շուրջ 7 հազար շինություններ, որոնք ավերվել, թալանի էին ենթարկվել 1920 թվականին աղբբեջանցիների կողմից: Ապա դեմոնտաժվեցին եւ սղբբեջանական շրջաններ ուղարկվեցին Ստեփանակերտի սննդկոմբինատի սարքավորումները, կտրտվեցին հազարավոր հեկտար անտառային հատվածներ, աղքատացվեց երկրամասի կենդանական եւ

բուսական աշխարհը:

Մի խոսքով, փաստորեն բացարձակ կերպով իրականացվում էր հայկական Ղարաբաղի տնտեսության լրիվ քայքայումը: Ընդսմին, այն էլ այն հաշվով, որպեսզի "...эмо проклятое племя, (կարդա՛ հայերը) не могло подняться на ноги" (Աստղ Կարաբեի վերոհիշյալ գաղտնի նա՛մակից): Ղարաբաղի հայության վիճակը ավելի վատացավ: Մարդիկ այնպիսի սոսկալի տնտեսական տեռորի ենթարկվեցին, որ փառք տվին պատերազմական տարիներին, մոռացան անցյալի կորուստները: Տասնյակ հազարավոր հայեր մնացին անգործ ու անօթեան, առանց ապրուստի միջոցների: Կոլտնտեսությունները պայթում-տրաքում էին գերծանր պլանների տակ: Բազմաթիվ տնտեսություններ քայքայվում էին, եւ կոլտնտեսականները իրենց 10-14-ժամյա տեւողությամբ աշխատանքի դիմաց գրեթե ոչինչ չէին ստանում: Մինչդեռ հարկավոր էր կերակրել երեխաներին, ծերերին, փակել հսկայական քանակությամբ փոխառությունների, մսի, ձվի, բրդի, յուղի պետական պարտքերը:

Միաժամանակ Ադրբեջանի հանրապետության դատախազի կարգադրությամբ սկսեցին կտրտել թթի այգիները: Կոլտնտեսությունների այգիները ավերելուց հետո հերթը հասավ գյուղերում մասնավոր, սեփական տնամերձ պտղատու ծառերի կացնահարմանը: Ամենուրեք ծեծում էին դիմադրողներին: Մի սարսափելի տեսարան էր իրենից ներկայացրել պատերազմում զոհվածների կամանց, երեխաների լացը, կոծը: Ինչ էր կատարվում... դժվարանում էմ նկարագրել Տոդում իմ տեսածը:

Այս ամենի հետեւանքով Ղարաբաղի հայ աշխատավորությունը նորից սկսեց տրտնջալ, իր ցավը, տառապանքը, սոսկալի ծանր ապրելակերպը, անդարձ կորուստները արտահայտել բանահյուսական ոճի աշխատանքային երգերի միջոցով:

Այսօր էլ հիշում եմ իմ տխուր մանկության տարիները, որը համընկել էր այդ դառը ժամանակների հետ: Զնայած մեր դաշտերից հավաքվում էր անհամեմատ ավելի շատ հացահատիկ, քան հարեւան ադրբեջանական գյուղերում էին ստանում, բայց, այսուհանդերձ, տարվա մեծ մասը հայ գյուղացիները կիսաքաղցած էին մնում: Եվ էթե չլինե՞ր ադրբեջանցի հասարակ գյուղացիների փոխադարձ, նաեւ անշահախնդիր օգնությունը, սովամահի հայերի կորուստները անհամեմատ

չափ կլինե՞ին: Պատճառը ոչ թե պատերազմն էր եւ նրա հետեւանքներն իր թուժումը, այլ, ինչպես կարիքից, զրկանքից ծնված երգում էր ասված, դարաբաղցու վաստակը եւ կալին եմ տարել, եւ վարին, իսկ մի մասն էլ Բաքվի քմայքներին ենթարկել:

Բացի այն, որ ԼՂԻՄ-ի կոլեկտիվ տնտեսությունների արտադրած հուցահատիկի 80-85, ամասնապահական մթերքների 100 տոկոսը, զանազան մտացածին պլանային առաջադրանքների պարտադիր կատարման եղանակով, դաշտերից, ֆերմաներից հավաքել եւ մարվից դուրս էին տարել, ստիպում էին, որ յուրաքանչյուր հայ ընտանիք անհատույց պետությանը հանձնի 51 կգ միս, 76 ձու, այծի կամ ոչխարի 2 մորթի, յուրաքանչյուր ոչխարից, այծից՝ 2,7 կգ բուրդ, 1,6 կգ մազ, 1,8 կգ կովի յուղ, 49 կգ կարտոֆիլ: Այդ ամենի հետ միասին, դարձյալ ուլարտադրանքով, գյուղացիները մուծում էին նաեւ դրամական հարկեր: Այսպես, եկամտահարկ, անզավակության հարկ, պետապի, սոցալի գծով հարկեր, ինքնահարկադրման գումարներ, բնակտարածքի եւ տնամերձ հողակտորի հարկեր, պատերազմի տարիներին՝ նաեւ ռազմական տուրք, ինչպես նաեւ՝ պետական փոխառության խոշոր գումարներ: Զարկ է նշել, որ հարկերն ու մթերքները ժամանակին չմուծողների նկատմամբ կիրառվում էին վայրագություններ, ընդուպ մինչէն ձեռն ու համապատասխան գումարի չափով ունեցվածքի բռնագրավում եւ աճուրդի ենթարկելու օրենքի խստությունը: Եվ դա անպատվաբեր էր գյուղացիների համար ոչ միայն տնտեսական, այլ նաեւ բարոյահոգեբանական տեսակետից: Ահա թե ինչու, հսկայական քանակությամբ հացահատիկ արտադրող դարաբաղցիները ստիպված իրենց տների ծածկի թիթեղը քանդել, տարել եւ հացահատիկով փոխանակել էին հարեւան ադրբեջանական գյուղերի բնակիչների հետ:

Նման գարշելի պայմաններում ապրող գյուղացիներից շատերի համար այլեւս անհնարին էր դառնում մնալ գյուղերում: Սովը, զրկանքը, մի խոսքով՝ անտանելի կյանքը ստիպում էին հուսալքված մարդկանց, որպեսզի նրանք թողնեն հեռանան հայրենի օջախներից եւ մարզի սահմաններից դուրս փնտրեն ապրուստի միջոցներ:

Ուղղակի արցախահայության դեմ իրականացվել է դաժան հալածանք, տնտեսական տեռոր: Իբրեւ օրինակ բերեմ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի կոլտնտեսությունը, որը 1942 թ. արտադրել էր 1184 տոննա հացահատիկ: Պետական պլանային բոլոր առաջադրանքներ

րը կատարելուց հետո տնտեսությունը յուրաքանչյուր աշխօրի դիմաց բաժանել էր 4.05 կգ հացահատիկ: Իսկ երբ 1948 թվականին այդ նույն տնտեսությունն արտադրել էր 1429 տոննա հացահատիկ, մեկ աշխօրին բաժանել էր 0.7 կգ ցորեն եւ 19 կոպեկ: Այդ նույն տարում ղզղալացիները պետության տվել են նաեւ 0.5 միլիոն ռուբլի փոխառություն: Տնտեսական ծանր վիճակից ելնելով՝ կոլտնտեսականները մասայաբար թողել եւ հեռացել են գյուղից: Այսպես, եթե 1946-1947 թթ. կոլտնտեսությունում աշխատում էր 800 հոգի, ապա 1950 թվականին մնացել էին 548 հոգի:

*Ստալին, Ստալին, բեղերտ դալին,
Մեջքտ տենս տվալ Տզփատա սարին,
Եվ կալին ես օգում, եւ վարին,
Էլ պեն չես թողում խեղանին:*

Այս քառյակը շատ բնութագրական է: Իրոք, ի՞նչն է ստիպել հողի մշակին, գրի, գրականության երես չտեսած ալեգարդ Բաբաջան Օհանջանյանին ինքնաբերաբար երգելու իր ցավի մասին: Իհարկե, կարիքը, սովը, գրկանքը: Այդ ամենը ոչ թե նրա համար, որ Ղարաբաղի հողը ամուլ է, որ ղարաբաղցին ծույլ է, այլ այն պարզ պատճառով, որ ղարաբաղցի հային ստորացրել, անխղճորեն կլպել են, նրա ստեղծած բարիքներից բաժին չեն թողնել: Եվ նրան պահել են իրավագուրկ՝ ստրկական վիճակում:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բողոքը Բաբաջան քեռին* (Հաղորոթի շրջանի Պետրոսաշեն գյուղ) արտահայտել է այն ժամանակ, երբ երկիրը ցնցությամբ տոնում էր Ստալինի ծննդյան 70-ամյակը, երբ մշակույթի խոշոր գործիչները գլուխ էին ջարդում Ստալինին

* Համազյուղացիները պատճում են, որ Բաբաջան Օհանջանյանի՝ վարի ժամանակ, հենց արդի պոչից բռնած, մեծ առաջնորդ Ստալինին նվիրած իր այս հորովելը երգելուց մեկ օր անց, շրջակա տրոհից միլիոնային մի փոքրիկ ջոկատ գալիս է Պետրոսաշեն շրջակա տունում այն հողակտորը, որտեղ արդի ետեվից քարշ գալով, քրտինքի մեջ կորած ցանք էր անում ծերունին: Չորս կողմից իրացանների փողերը դեպի հոգնած, բեզարած մաճկալը ուղղած՝ արագ-արագ նրան են մոտենում «օրենքի մարդիկ»: Հենց այնտեղ՝ կիսատ ձնացած ակոսի մեջ, լծկանների խլշած հայացքների ներքո, ծերունու ձեռքերը ոչորում, կապկպում են եւ այգտեղից էլ տանում: Եւսյնիակ չեն թողնում, որ նա իր հետ վերցնի կողքի ծառից կախված զինվորական մաշված շինելը եւ չափքան, որի մեջ էր գտնվում գարու այուրից թխած մի բլիթ: Այդ տանելն է, որ տարան, կորցրին: Ոչ ոք չիմացավ, թե որտեղ տարան եւ ինչպես վարվեցին նրա հետ:

«արեւի, տիեզերքի» հետ համեմատելու համար: Երբ հարյուր միլիոնավոր մարդիկ Ստալինին քննադատեցին՝ սուրբ էին դարձրել: Հատկանշական է, որ ղարաբաղցի գյուղացին իր դժգոհությունը «ջան Ստալինին» արել է կուսակցության 20-րդ համագումարից 8 տարի անց:

Եվ այսպես, ամենուրեք ծորում էր դարդակալած, լցված մարդու հառաչանքը: Հիշողությանս մեջ տպավորվել են իմ հայրենի երկրամասի հողի մշակի, նախրապանի, արխալուղավոր տատիկների սրանջելի կատարմամբ հայկական ժողովրդական (մեծ մասը նոր հորինած) տխուր երգերի մեղեդիները:

Տարիներ անց այդ մեղեդիները ինքնաբերաբար կրկնում էի հեռավոր Ֆիննական ծոցում՝ Լենինգրադի մատույցները պաշտպանելիս: Եւսյնիակ սառնամանիքին, պահակակետում, երբ հիշում էի Ջառունց Ռաֆիկի (մեր գյուղի մաճկալներից) առնական, հոգեզմայլ ձայնը, մեր արմատների կանչը, ամիջապես զգաստանում էի, ժամապահի դժվարին եւ պատասխանատու ծառայությունը մի տեսակ աննկատ էր անցնում: Կարծես հաճելի էր դառնում, եւ արյան հոլովությւթը անես արագանում էր, զուլավում: Դե, ինչպես չհիշել, չսիրել այն վաճանդությունը, որ դարերի միջով, մեր գլգլան աղբյուրների պես, մաքուր վիճակում հասել են մեզ:

Ղարաբաղում սովորույթ էր դարձել ամեն օր, երեկոյան, աշխատանքից հետո, մարդիկ հավաքվում էին գյուղամեջ, կամ առանձին տներ՝ հիմնականում հիվանդների մոտ եւ գրուցում իրենց հուզող հարցերի, առօրյա հոգսերի, արտի, բոստանի, բերքի ու բարիքի մասին եւ ապա հեքիաթներ, դյուցազնավեպեր էին պատմում ու իրենց պատմածները համեմուն սրամիտ կատակներով, խորհրդավոր պատկերներով, հոգեզմայլ երգերով:

Ամեն անգամ, լսելով Ղարաբաղի անգուզական հորովելի «Հո ըրա, հո՛, հո՛, հո՛, ապին մատաղ, ապու տան մինուճար հոտաղ» բառերը, ինքս ինձ հարց էի տալիս՝ որտեղի՞ց է ակունքը առել այս երգը, որից վիշտ է հորդում, եւ ուր էր գնացել ու ետ չի եկել ապուն բալան, որ նա իր մինուճար թռռան մեծանալով պիտի ուրախանար:

Արդյոք պարսիկները տարան, արաբները, սելջուկները, մոնղոլները, թուրքերը... մուսավաթները: Արդյո՞ք հոկտեմբերի բարիկադների վրա զոհվեց, Մեծ հայրենականի մարտերում ընկավ, թե՞ Ալթայի երկ-

րամաս աքսորվեց: Արդյոք Բագիրովի կաթինետո՞ւմ գնդակահարվեց, պարտքերը փակելու համար սեզո՞ւմ գնաց, թե՞ կամայականորեն զրպարտվեց եւ հայրենի օջախից դուրս քշվեց:

...Հազար տարի առաջ, երեք հարյուր... հիսուն, երեսուն, թե տասը տարի առաջ էր դա եղել, ու մոլորվում ես թվերի ու ժամանակների մեջ: Մնում են, սակայն, ապան եւ թռռը՝ հայր իր հայկական հողի վրա արմատով ու տերեւով, բայց էլի՝ հոյսով ու հավատով:

3. ՈՆՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտապես վատթարացող կենսապայմանները, հայերի դեմ գործադրվող բռնությունները եւ անելանելիության զգացումը տասնյակ հազարավոր դարաբաղցիների հարկադրում էին հեռանալ իրենց ծննդավայրից եւ, ապրուստի միջոց, հոգեկան որոշ հանգստություն ակնկալելու հույսով, ցրվել երկրով մեկ: Ծակատագրի դաժան կամքով, միայն 1949-1956 թթ. Ղարաբաղից շուրջ 30 հազար հայ աշխատավորներ (մարզի բնակչության 27 տոկոսը) ճարահատյալ թողեցին տուն-տեղը եւ մի կտոր հաց վաստակելու ակնկալությամբ ապաստան գտան Բաքվում, Մուսգայիթում, Մինգեչաուրում, Հյուսիսային Կովկասում, ինչպես նաեւ անդրկասպյան հանրապետություններում:

1948 թ. հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը այցելեց Ղարաբաղ, եւ կուսակցության մարզկոմում ու Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտում հայ մարդիկ համարձակվեցին ընդունել իրենց ազգային մեծ բանաստեղծին: Եվ դա բավական էր, որ Ադր. ԽՍՀ տիրակալ Մ. Բագիրովը կուսակցական մարզային արտակարգ կոնֆերանս իրավիճակ տար, մարզկոմը ցրեր, իսկ մարզում էլ կազմակերպեք գաղափարական շանտաժ ու ձերբակալությունների տեսական մի շրջան, բանտ ու աքսոր քշեք Գորդների մարզային բաժանմունքի քարտուղար Բոգդան Ջանյանին, ուսուցիչների ինստիտուտի ռեկտոր Աղասի Սաֆարյանին, դասախոսներ Արտավազ Ավագյանին, Ռուբեն Ալավերդյանին, Խորեն Բալայանին եւ ուրիշ մտավորականների: Այսպես, մայր ազգի եւ նրա նշանավոր զավակների ամենասովորական, ամենամանեղ մի հանդիպումը դատապարտվեց, որպեսզի այնուհետեւ ոչ ոք երազում անգամ չհամարձակվի Երեւանը տեսնել, հանդիպել կամ զրուցել Հայաստանը ներկայացնող որեւէ ան-

վանի մարդու հետ: Եվ սա ոչ միայն բաղիրական բռնապետության տասնամյակներում, այլեւ բոլոր ժամանակներում, Մույնիսկ խրուշչովյան, այսպես կոչված, ձնհալի կարճ շրջանում» (Բ. Ուլուբաբյան, *Նշվ. աշխ., էջ 176-177*):

Ղժվար չէ կռահել, թե այս արդետալի երեւոյթը ինչով կվերջանար, կթե գյոռբագյոռ չդառնար Ստալինը, իր իսկ փորած բյուր փոսերից մեկի մեջ ընկնելով չպատժվեք Բագիրովը, եւ չգումարվեք ՍՍԿԿ 20-րդ համագումարը:

XX համագումարը սովետական երկրի կյանքում մի կարճատեւ ու միջանցիկ տաք քամի էր, որ եկավ թեւ ուշացումով, բայց, ցավոք, արագ էլ անցավ: Ահա այս փոքրիկ ժամանակահատվածում երկրի գաղափարական, քաղաքական կյանքում հսկայական տեղաշարժեր կատարվեցին: Մեզանից յուրաքանչյուր ոք հնարավորություն ուներ հետադարձ հայացք ձգելու, կորցրածն ու ձեռք բերածը հայտարարի բեւելու, ուրիշների, հատկապես հարեւանների հետ համեմատելու, առաջիկա անելիքների մասին խորհելու, քանզի մթնոլորտը տեղ-տեղ պարզված էր, եւ մարդիկ մի տեսակ համակված էին սխրանքներ գործելու անզուսպ ցանկությամբ: Եվ չնայած դրան, կյանքը դեռ գերծ չէր դառնություններից:

Ծանր ու թեթեւ արեցին իրենց անցած (հատկապես Ադրբեջանին բռնակցված) ուղին նաեւ ղարաբաղցիները: Պարզվեց, որ մենք կպարտանալու, տխրելու եւ խորհելու ավելի շատ հիմքեր ունենք: Ուրախացանք, որովհետեւ այս փոքրիկ երկրամասը փառքով էր իր պարտքը կատարել սովետական պետության, կոմունիստական կուսակցության հանդեպ՝ իր անցած ուղու բոլոր էտապներում: Տխրեցինք, որովհետեւ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելուց հետո կորցրել էինք հայկական Շուշին՝ իր 30 հազար հայ բնակչությամբ, ավելի քան 7 հազար հասարակական, վարչական, արտադրական եւ կոմունալ բնույթի շինություններով: Ավերակների էին վերածվել տասնյակ հայկական երբեմնի շեն գյուղեր, արդյունաբերական կարողություններ, կտրտվել էին հազարավոր հեկտար պտղատու այգիներ, անգթորեն հալածվել եւ հայրենի եզերքներից վտարվել էին տասնյակ հազարավոր հայեր, անագորույն պարագաներում զոհվել երեք տասնյակ հազարից ավելի ղարաբաղցիներ, որի հետեւանքով երկրամասի ազգաբնակչությունը պակասել է ավելի քան 35 տոկոսով: Խորհեցինք, որ այլեւս այս ծելով ապրել չի լինի, որ քառասուն

տարվա մեր կյանքը նման էր այն մարդու կյանքին, որ գետի վրա նստած ալյուր է մաղում: Խորհեցինք եւ պինդ որոշեցինք, որ մեր ապագան պետք է մեկընդմիջտ կապված լինի հայ ժողովրդի բախտի հետ, որ կամ ՀԽՍՀ-ի հետ վերամիավորում, կամ մահ:

Երբ Ղարաբաղի հայկական մարզի ինքնավարությունը նոր էր ստեղծվել, երբ ապրում, գործում էր Անդրֆեդերացիան, երբ (Ս. Կիրովի, Լ. Միրզոյանի՝ Ադրբեջանում աշխատած տարիներին) Ադրբեջանում պաշտոններ զբաղեցրած մարդկանց մեջ կային կիսագրագետ, բայց արժանապատիվ ղեկավարներ, երբ Ղարաբաղի միաձայն տերը Արմենակ Կարակոզովն էր, Ղարաբաղը մի կարճ ժամանակաշրջանում երկրի մյուս մարզերի նման համաքայլ զարգացման ուղի էր բռնել: Երբ սովետական առաջին երկու հնգամյակների պլաններ էին մշակվում, Ղարաբաղի ղեկավարներին իրավունք էր վերապահված ինքնուրույն որոշելու երկրամասի զարգացման ուղղությունները: Իսկապես, այդ ինչպես պատահեց, որ 13 տարվա (1923-1936 թթ.) ընթացքում հնարավոր եղավ հայկական Ղարաբաղում վերակառուցել, նաեւ կառուցել ավելի քան 30 ֆաբրիկա, գործարան, արտել, արտադրամաս, ստեղծել «Ղարմետաքս», «Ղարզինտրեստ» արտադրական խոշոր միավորումները, բուլդոզի ամայի տարածության վրա կազմակերպել 4 սովետական նոր տնտեսություն, ձեռնարկել ուսումնասիրելու մարզի հնագույն պատմությունը, բնական պայմանները, հանքային հանածոները, վայրի սննդաբույսերը եւ իրատարակել գիտական, զեղարվեստական գրքեր, մարզի քարտեզը, մարզի գյուղերում (այլ քաղաքներում ապրող ղարաբաղցիների հայրենակցական միությունների օժանդակությամբ) կառուցել 230 աշուկ, գրադարան, դպրոց, հիվանդանոց, լեռներում հարթել 300 կմ երկարությամբ հողածածկ ճանապարհներ, բացել 4 հայկական տեխնիկում, 7 թերթ, մեկ պարբերական, թատրոն, քանդադան, կուսակցական երկամյա դպրոց, մանկավարժական երկամյա ինստիտուտ, շահագործման հանձնել Եվլախ-Ստեփանակերտ երկաթուղին, Ստեփանակերտի, Մաղադիսի հիդրոէլեկտրակայանները... Եվ, վերջապես, Ստեփանակերտ քաղաքը շենացնել... անգրագիտությունը վերացնել, կոլտնտեսություններ կազմակերպել, մորեխի, բանդիտիզմի դեմ պայքարել, պետական բուլդո առաջադրանքները գերակատարումով փակել, հայրենիքի պաշտպանությանը ուղարկել 45 հազար զինվոր: Սակայն, Անդրֆեդերացիայի վերացումից, մանավանդ պատերազմի ավարտից հե-

տո, 20 տարվա ընթացքում մարզում ոչ միայն չկառուցվեց որեւէ մի կոր ֆաբրիկա, գործարան, կուլտուր-կենցաղային բնույթի շինություն, յուրաքանչյուր գոնե մի բրոշյուր, չբացվեց մի նոր ուսումնական հաստատություն, այլեւ քանդվեց, ոչնչացվեց նախորդ տասնամյակներում տեղծված արտադրական կարողությունները, սոցիալ-տնտեսական բնույթի հաստատությունները: Հարկավ, եթե նախապատերազմյան Ղարաբաղի արդյունաբերությունը բաշխված էր 40 բնակավայրերում, ապա 50-ական թթ. վերջերին արդյունաբերական ձեռնարկությունները մնացել էին միայն 2 կետում՝ Ստեփանակերտում եւ Շուշիում:

Պատճառը: Պատճառը մեկն է: Ադրբեջանի ղեկավարները (որոնց ուղղորդությանն էր հանձնվել ԼՂԻՄ-ը), բուլդո անխտիր, ծրագրված կերպով պանթուրիզմի քաղաքականություն էին իրականացնում՝ Ղարաբաղը Նախիջեանի պես մաքրել հայերից: Դա միաժամանակ նշանակում էր, որ նրանք «առաջադիմական» ճղճղան լոզունգներով բողարկված գործում էին մուսավաթներից որդեգրած դոգմաներով: Դոգմաներ, որոնք «ժառանգված» էին Ասադ Կարաեւի վերոհիշյալ մտքտակոչից: Դա արդեն մարքսիստական աշխարհայացքի, կոմունիստների որդեգրած ազգային քաղաքականության քայքայման ազդանշան էր: Դա նաեւ ԽՍՀՄ սահմանադրական մի միավորի՝ ԼՂԻՄ-ի բնիկ ազգաբնակչությանը դժվարին, անտանելի կացության մեջ դնելու անսքող քայլազոյգություն էր՝ բռնի, դատապարտելի գործողություն: Ի դեպ, Ադրբեջանի վերաբերյալ իրապարակումներում «Պրավդան» բազմիցս շեշտել է խոսքի եւ գործի հակասությունը այդ հանրապետության ղեկավարների մոտ (19/VII-79 թ., N 200): Խոսքի եւ գործի միասնության բացակայությունը ոչ մի տեղ, ոչ մի հանրապետությունում այնքան աչք չի ծակել, ինչպես դա նկատվում էր Ադր. ԽՍՀ-ում:

Դրա հետ միասին արժե խորհել նաեւ այն մասին, թե ինչու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Սովետական Միության մեջ միակ կրկրամասն էր, որի հիմնական բնակչությունը Անդրֆեդերացիայի վերացումից ի վեր ոչ միայն չի աճել, այլեւ հետզհետե պակասել է: Այս ւայն ղեպքում, երբ երկրի բնակչությունը այդ նույն ժամանակաշրջանում ավելացել է 9 տոկոսով, Ադր. ԽՍՀ-ինը՝ 23, ՀԽՍՀ-ինը՝ 32%, իսկ Ղարաբաղում վերաբնակեցված արդրբեջանցիները գրեթե քառակի անգամ: Պատճառը միայն հայրենական պատերազմը չէ, նաեւ աքսորը չէ, ինչպես փորձում են ներկայացնել որոշ ճառաբաններ, այլ մարդից հայ բնակչությանը արձատահան անելու կանխամտածված այն

քաղաքականությունը, որը Անդրֆեդերացիայից հետո հետեւողականորեն կիրառվել էր Ղարաբաղի հանդեպ:

Օրինական հարց է ծագում. ի՞նչ է այս ամենը՝ մի համեստ, կարգապահ, աշխատասեր, պատմության դաժան փորձություններով անցած կուլտուրական ժողովրդից (լեւինյան դարում) վրեժ լուծելու քաղաքականություն, թե՞ ցեղակիցների արյունառու «աստղերին» հասնելու փորձ: Թե՛ մեկը, թե՛ մյուսը դատապարտելի են:

Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայի, որի օգտին քվեարկել էր նաեւ ԽՍՀՄ-ը, ցեղասպանությունը ոչ միայն ժողովրդի կամ նրա մի մասի ֆիզիկական բնաջնջումն է, այլեւ այնպիսի անտանելի պայմանների ստեղծումը, որի դեպքում բնակչությունը ստիպված հեռանում էր հայրենի օջախներից: Բայց չէ որ Ղարաբաղում եւ ֆիզիկապես էին ոչնչացնում հայերին, եւ ստեղծում այն անտանելի պայմանները, որոնց հետեւանքով բնակիչները հեռանում էին մարզից: Պետք է մեղադրել խաղաղ ցեղասպանության կազմակերպիչներին, անարգանքի սյունին գամել նրանց, պետք է հակահարված տալ նրանց մեքենայություններին:

Ճշմարտությունը, այնուհանդերձ, պահանջում է խոստովանել, որ անհատի պաշտամունքի, կամայականության եւ բռնության մռայլ մղձավանջից հետո՝ Ղարաբաղի հայությունը որոշ ժամանակ զարթոնք ապրեց: Եվ որ այդ զարթոնքի մեջ Բաքուն Ղարաբաղը կորցնելու վտանգ էր տեսնում: Համոզված էր, որ կգա մի օր՝ ամբողջ մարզը ոտքի կկանգնի եւ կասի՝ մենք այլեւս չենք ուզում տանել Ադրբեջանի ծանր լուծը, մենք ուզում ենք վերամիավորվել մեր Մայր Հայաստանի հետ եւ ապրել ազատ ու անկախ: Այսպես ասելու եւ գործելու հիմքեր շատ ունեին ղարաբաղցիները: Առավել եւս, որ Ն. Խրուշչովի օրոք նման հարցերը լուծվում էին: Հիշենք Ղրիմը Ուկրաինային վերամիավորելը, Ղազախստանի եւ Ուզբեկստանի միջեւ տարածքային փոխզիջումները:

Մինչդեռ Ղարաբաղի աշխատավորությունը ուրախանում էր Ստեփանակերտում կառուցված 48 բնակարանանոց երկու շենքով, ճարտարում բացված, հայ ճարտարապետության դասական ոճով կուլտուրայի հոյակապ պալատով, լեռներից դաշտավայր իջած եւ կանոնավոր շարքերով տարածված Աշանով ու Նորագյուղով, կրկնակի հերոս Ն. Ստեփանյանի կիսանդրիով, բոլշևիկյան կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Բ. Կոուլյանցի նորաստեղծ պուրակով, «Ղարաբա-

ղի նշանավոր մարդիկ» նշանավոր ցուցահանդեսով, հայ բեմի անզուգական վարպետ Վ. Փափազյանի խաղով, Ղարաբաղի հայկական երգի-պարի նորաստեղծ համույթի ելույթներով, մարզի բնակչության աճով (1965 թ.-ին 1959 թվականի համեմատությամբ՝ ավելի քան 13 հազար), մարզկենտրոնում նկատելի չափով երեսացող մտավորականության, այդ թվում նաեւ տեխնիկական մտավորականության ակտիվությանը... Բայց Բաքվում շարունակաբար նոր ժամանակների ոգով դավեր, փորձեր, մեթոդներ էին որոնվում հայությանը Ղարաբաղից, Ադրբեջանից դուրս մղելու՝ տխրահռչակ քաղաքականության հերթական փուլը իրականացնելու համար:

1950-ական թթ. վերջերին Ադրբեջանի նորաթուխ ղեկավարներին հաջողվում է հանրապետության Գերագույն սովետի սեսիայով անցկացնել մի տխրահռչակ որոշում: Ըստ վերոնշյալի՝ Ադրբեջանում ամենուրեք պետական լեզուն համարվում էր ադրբեջաներենը եւ պարտադրվում էր համապատասխան մարմիններին, որ բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում գործավարությունը, պաշտոնական գրագրությունները, ժողովները անցկացվեն միայն ադրբեջանական լեզվով: Այս որոշման հեղինակները (հատկապես Սիրզա Իբրահիմովը՝ Ադր. ԽՍՀ Գերագույն սովետի նախագահը) առաջին հերթին ձգտում էին խանրապետությունից դուրս հանել այլազգի կադրերին, այդ թվում նաեւ հայ տեխնիկական մտավորականությանը, որն այդ ժամանակ Ադրբեջանում քիչ տոկոս չէր կազմում, հետո էլ աստիճանաբար դուրս մղել բանվորներին, վարպետներին:

Մինչեւ Մոսկվան ուշքի կգա, Ադրբեջանից դուրս մղվեցին հազարավոր ռուս, հայ եւ այլազգի մասնագետներ, կադրային բանվորներ: Պրա հետեւանքով առաջին հերթին մեծապես տուժեց հանրապետության ժողովրդական տնտեսությունը, օգտվեց տեղական նացիոնալիզմը, գլուխ բարձրացրեցին հասարակությանը խորթ բարքերը:

Հետո էլ, ինչպես գրել է «Պրավդա» թերթը իր 1979 թ. օգոստոսի 1-ի 213-րդ համարում. «Нужно для кого не секрет, что в деятельности партийной организации Азербайджана, в том числе и в идеино-нравственном воспитании, в 60-х годах имели место серьезные недостатки, ошибки, упущения. А это создавало питательную почву для оживления пережитков прошлого в сознании и поведении людей».

Ղառը ճշմարտություն: Սակայն, ավաղ, Մոսկվան մեծ ուշացումով

հասկացավ: Այնինչ այդ մասին Ղարաբաղի կոմունիստները դեռեւս 1965 թ. նամակ էին գրել ԽՄԿԿ Կենտրոնին՝ բերելով անհերքելի փաստեր, նշելով կոնկրետ մեղավորների անունները: Ադրբեջանում գլուխ բարձրացրած պանթուրքիզմի, շովինիզմի չարիքից փրկվելու օգնություն են հայցել Ղարաբաղցիները, բայց, ցավոք, ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ, նրանց բողոք-նամակները գծում են իրենց կլոր շրջանը եւ հասնում նրանց, որոնց դեմ դրանք գրված են եղել:

Հարկ չկա ապացուցելու, թե Բաքուն ինչպիսի ոգևորությամբ եւ ճարավկությամբ էր այդ բողոքներում կրիմինալ գտնում եւ հետո էլ ամպագոռոգո հայտարարում. «...Աման, հասեք, հայ նացիոնալիստները մեզ հանգիստ չեն տալիս, սպառնալիքի տակ է դրված սովետական իշխանության գոյությունը»: Շուտ արեք, ջարդեք, փշրեք այդ նացիոնալիստներին: Եվ ահա, այսպիսի ծխածածկույթի տակ Ադրբեջանի դեկավարները մի կողմից հայ կադրերին հալածում էին, մյուս կողմից գյուղմթերքների պլանները եռակի-քառակի ավելացնելով, բայց կապիտալ ներդրումներ չհատկացնելով, զբաղված էին կուլտուրական օջախները վերացնելով: Այլ խոսքով՝ փորձում էին հայ բնակչությանը պահել հարստահարված, ճնշված եւ հոգեւոր տեսակետից աղքատացված վիճակում: Նրանք ամեն ինչ անում էին, որ թույլ չտան Ադրբեջանի դիրքերի թուլացում այս երկրամասում եւ Լեռնային Ղարաբաղը մոտ ապագայում առանց հայերի էին պատկերացնում:

Արդեն պարզորոշ երեւում էր այսպիսի դիրքորոշումը, որը արմատապես հակադրվեց մարզի բնակչության ձգտումներին ու շահերին՝ աշխատավորների ընդերքում առաջ բերելով դժգոհություններ եւ բացահայտ բողոքներ՝ ընդդեմ սպանությունների, մարզի բնիկ բնակչության նկատմամբ կիրառվող հալածանքների, երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման սահմանափակումների, ազգային մշակույթի անտեսման ու ոչնչացման:

Արդեն անցյալ դարի 60-ական թվականների սկզբներին Ադրբեջանի կառավարող ընտրանու գործողությունները կրկին վկայեցին, որ նրանք բոլորովին էլ չեն հրաժարվել իրենց նախորդների հայատյաց քաղաքականությունից: Տարբերությունը միայն այն էր, որ նրանք չէին կարող հաշվի չառնել ժամանակը: Պետական իշխանության չարաշահումը, կուսակցական ցենտրալիզմի սկզբունքների ունեւորությունը, սոցիալ-տնտեսական՝ պլանային լծակները, ստի, կեղծիքի, շանտաժի, ստրակի, քաղցրաբլիթի տակտիկան՝ տեռորիստական ակտերը,

ևորից, 8-ամյա դադարից հետո, գործողության մեջ դրվեցին: Սակայն այս ամենը հանդիպում էր լուրջ խոչընդոտների: Այլեւս Բաքուն անկարող էր մարզի ազգաբնակչության հետ վարվել այնպես անարգել ու անպատիժ, ինչպես այդ անուն էր տասնամյակներ շարունակ: Ո՛չ տնտեսական տեռորը, ո՛չ քաղաքական դեմագոգիան եւ ո՛չ էլ հայ կադրերի դաժան հալածանքները ի վիճակի չէին կոտրելու Ղարաբաղցիների համառ կամքը: Անհավասար պայքար էր սկսվել, որը նոր զոհեր տալով, զրկանքներ կրելով պիտի շարունակվեր մինչեւ նվիրական օրը՝ Սովետական Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորումը: Այդ յնքնապաշտպանական պայքարի շնորհիվ հնարավոր եղավ կանխելու հայերի նոր զանգվածային տեղահանությունները, տասնյակ ազնիվ, անկաշառ կոմունիստ կադրերի ջախջախման Բաքվի պլանները:

Ահա այս ժամանակ էր, որ Ղարաբաղի ավելի քան 40 հազար աշխատավորներ, արտահայտելով մարզի ամբողջ հայ բնակչության ձգտումներն ու իղծերը, նորից դիմեցին Մոսկվային՝ իրենց ճակատագրի ծանր թախտը ուղղելու հույսով...

Այստեղ, սակայն, հնարավոր չէ ամբողջությամբ բացահայտել բոլոր այն ոճրագործությունները, որոնք հայկական Ղարաբաղում կատարվել էին 70 տարիների ընթացքում: Մենք չենք կարող մեկ առ մեկ բլվարկել այն բոլոր հանցագործությունները, կեղեքումները, որոնք կանխամտածված, իշխանության չարաշահումով կիրառվել են Ղարաբաղի հայության դեմ: Անհնար է ընթերցողներին նույնությամբ ներկայացնել ամմարդկային բոլոր այն գործողությունները, որոնց հետեւանքով զոհվել են տասնյակ հազարավոր անմեղ, հայրենի Ղարաբաղին անսահմանորեն նվիրված մարդիկ: Անհնար է պատմել բարբարոսական խոշտանգումների մասին, առավել եւս անհնար է կազմել բոլոր նրանց ցուցակները, ովքեր կամայականորեն տանջահար լինելով նահատակվել են, ովքեր մի կտոր հաց գտնելու հույսով պանդխտության ճամփան են բռնել, ովքեր չարամտորեն զրպարտվել եւ հայրենի երկրամասից դուրս են քշվել: Անհնար է մանրամասնորեն շարադրել բոլոր այն ավերածությունները, հոգեկան տագնապները, բարոյական ստորացումները, որոնց պարբերաբար ենթարկվում էր Ղարաբաղը, եւ նրա արմատական բնակչությունը: Միթե հնարավոր է ներկայացնել հազարավոր այրիացած կանանց, որբացած երեխաների, որդեկորույս ծնողների կրած տառապանքները, թափված արյունն ու արցունքները, իրենց չարքաշ ապրուստի աղբյուրները ոչնչացնելու

պատճառով արտահայտած հառաչանքները:

Միթե կարող է մոռացվել, թե քանի գյուղ, արտադրական ձեռնարկություն, պատմական հուշարձան, ծաղկուն այգի, դպրոց, գրադարան է կործանվել, մարդկային քանի-քանի գեղեցիկ կյանք է դաժանաբար ընդհատվել Ղարաբաղյան երկրամասում: Մենք մեծագույն մեղավորներ կլինենք, եթե մոռանանք Տեր-Չորը, Շուշին, Օսվենցիմը եւ Մայրանեկը, Հիրոսիման, Խատինը... մարդկային ամյունամոխի այն տոնաները, որով կլցվեր աշխարհի ամենամեծ թանգարանը: Պատմությունը մեզ չի ների, եթե մենք մոռանանք տոնաները այն վարսերի, որ թուրքական, ադրբեջանական եւ գերմանական ֆաշիստական հրեշները հանել էին սպանված կանանցից, վարսեր, որոնց մի հյուսքն իսկ գեղեցիկ գլխի վրա բավ էր արվեստի հոգեցունց մի ստեղծագործություն հյուսելու համար:

Արդ, անարգանքի սյունին զամող այս նամակ-բողոքում պատմեցինք Ղարաբաղի դաժան իրականության սոսկ աննշան մասը, որովհետեւ ֆաշիստական մեթոդներով գործած հանցագործությունները ապացուցող փաստաթղթերի մեծ մասը ոչնչացվել է: Մենք պահանջում ենք ստեղծել հեղինակավոր, անաչառ հանձնաժողով, որպեսզի հետաքննի Ղարաբաղում կատարված հանցագործությունները: Ղարաբաղի հայ բնակչությունը սպասում է արդարության ու մարդասիրության:

4. «ԲԱՂՅՐԱՒԼԻԹԻ» ԵՎ ՄՏՐԱԿԻ ՏԱԿՏԻԿԱՆ

Շատ շատերին մոլորեցրին պաշտոնները, հավանաբար բարձր աշխատավարձը, «Կոլգա» ավտոմեքենաները, լավ ապրելու տենչը, որոնցով առատորեն խոստումներ էին տալիս Բաքուն, եւ այնտեղից Ղարաբաղ ուղարկված էմիսարները: Սակայն այդ ամենը խիստ ժամանակավոր եւ որոշակի նպատակ հետապնդող վարձատրություն էր, որ Բաքուն պետության, կուսակցության եւ սովետական իշխանության հաշվին տալիս էր ստոր ու անարժան, անդեմ ու անգույն մարդկանց եւ դրանով իսկ իրականացնում իր փափագած երկու կարեւոր խնդիրները: Առաջինը՝ հալածում եւ ասպարեզից հեռացնում էր երկրամասի ազնիվ, համարձակ, գրագետ եւ գործունյա կադրերին: Հետո էլ նրանց փոխարեն կարգում գործին, իրադրությանը բոլորովին անտեղյակ, շատ ժամանակ՝ ապիկար, նույնիսկ ոչ բարձրագույն կրթու-

թյամբ անձանց եւ առանց դիմադրության Ղարաբաղում ծավալում հակահայկական նորանոր դավադրություններ՝ Ղարաբաղը հայ բնակչությունից մաքրելու, Ադրբեջանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունը հետեւողականորեն իրականացնելու համար:

Բայց որոշ ժամանակ անց խաղաղվում էր նախկին անմեղ կադրերի դատապարտման կամպանիան, երբ արդեն հազարավոր հայեր, չարամտորեն զրպարտվելով, հալածվում եւ քշվում էին մարզի սահմաններից դուրս, երբ արդեն հայկական շատ գյուղերում փակվում էին դպրոցները, գրադարանները, դեղատները, բուժկայանները: Երբ արդեն շոշափելի հարվածներ էին հասցվել երկրամասի մշակույթի, ուսումնադաստիարակչական բնագավառի հիմնարկություններին, արդյունաբերական ձեռնարկություններին, շինարարական, առողջապահական կազմակերպություններին, երբ արդեն զգալիորեն բարձրացվում էին գյուղատնտեսական մթերքների մթերումների պլանները, իսկ կրկնակի, եռակի անգամ պակասեցվում մանրածախ ապրանքների (հիմնականում առաջին անհրաժեշտության մթերքների), նյութատեխնիկական միջոցների մատակարարումները: Իսկ արդեն դրսից ուղարկված հարյուրավոր ադրբեջանցիներ պաշտոնավորվում, բնակարաններ էին ստանում հայկական բնակավայրերում, որտեղ 5-6 ադրբեջանցի դպրոցահասակ երեխայի համար հայկական դպրոցներին կից բացվում էին դասարաններ, իսկ այնտեղ, որտեղ 30-40 հայ աշակերտներ կային, դպրոցը փակում էին՝ տնտեսական տեսակետից ոչ նպատակահարմարության պիտակով:

Բաքուն նորից, նույն ձեւով, ինչպես դա կատարվում էր 20-ական թվականներից ի վեր, վերսկսում էր «Ղարաբաղը առանց հայերի» տխրահռչակ քաղաքականության հաջորդ էտապը: Դարձյալ սկսում էին կադրերից, նույնիսկ այն ղեկավարներից, որոնք նշանակվել էին 2-3 տարի առաջ եւ ռոբոտի նման ծառայել իրենց: Հատկապես դաժան էին վարվում նրանց հետ, ովքեր խտրականության եւ ազգահալածման շորշոփների ծանր հարվածների տակ ուշքի էին եկել: Բաքուն դրա մեջ լուրջ վտանգ էր տեսնում եւ ամփոջապես անցնում գործի: Նախ՝ արհամարհելու, չվստահելու եւ բանի տեղ չդնելու լուռ հալածական քաղաքականություն էր վարում, հետո ակտիվացնում, աջակցում ստորադրյալների մեջ գտնվող դժգոհներին, շատ անգամ իրենք գրում էին զրպարտագրեր եւ նրանց ստորագրել տալիս դրանք: Այնուհետեւ ստուգումների անտանելի կարուսել ստեղծում եւ ստան-

դարտ մեղադրանքներով, առանձին դեպքերում էլ առանց մեղադրանքի (հենց այնպես, «Կենտկոմը, մարզկոմը գտնում են, որ դու պիտի ազատվես աշխատանքից»), մարզային եւ շրջանային ղեկավարների զգալի մասը ցուցակներով ազատվում էր աշխատանքից:

Այսպես, կամայականորեն, թուրքավարի, քաղաքական պիտակներ կպցնելով ասպարեզից հեռացնում էին նույնիսկ կուսակցության մարզկոմի քարտուղարներին ու մարզգործկոմի նախագահներին: Բերեն օրինակներ: Երբ նախօրոք համաձայնեցված էր Հրանտ Շահրամանյանին կուսմարզկոմի քարտուղար նշանակել, Աղբբեջանի տիրակալը՝ Մ. Բագիրովը, նրան հեռախոսով զգուշացրել էր. «Ընկեր Շահրամանյան, ես առանձին ասելիք չունեմ, բայց ունեմ մի պահանջ, երեսդ երբեք դեպի Հայաստան չշրջես, թե չէ գլուխդ մարմնիդ վրա չի մնա»: Այսուհանդերձ, Շահրամանյանը մի անգամ սխալվել ու Ղարաբաղից հայացքով ընդգրկել է Հայաստանի լեռները եւ տեղնուտեղը զրկվել մարզկոմի քարտուղարի աթոռից, բայց, բարեբախտաբար, ոչ գլխից:

Ավետիք Իսահակյանին Արցախում ընդունելու առիթով Բագիրովը Բաքվից զանգում է մարզկոմի առաջին քարտուղար Տիգրան Գրիգորյանին եւ... «Ինչո՞ւ ես այդ դաշնակ թափթփուկին թույլ տվել այցելել Ղարաբաղ: Դու կամ հիմար ես, կամ էլ թշնամի... ո՞ր էր քո քաղաքական զգոնությունը»: Մի քանի օրից հետո Տ. Գրիգորյանին, որի քարտուղարության վեց ամիսը դեռ չէր լրացել, խայտառակաբար հեռացրին զբաղեցրած պաշտոնից: Դրանից առաջ էլ կուսմարզկոմի առաջին քարտուղար Միքայել Մանուկյանին են հանկարծակի ազատել աշխատանքից միայն այն բանի համար, որ նա անընդունելի է համարել ՊԱԿ-ի մարզային վարչության պետի՝ «մշակույթի բնագավառը մաքրել կանկաժելի կադրերից» հերթական ցուցակը: Իսկ Սեդրակ Աբրահամովին ազատեցին աշխատանքից այն բանի համար, որ մարզի հայաստանամերձ հայկական բոլոր գյուղերը չի վերաբնակեցրել աղբբեջանցիներով:

Ականատեսները պատմում են, որ կուսմարզկոմի պրոպագանդայի գծով քարտուղար Հայրոկ Սարկիսովը 1955 թ. մարզային կուսակցական կոնֆերանսում առանց երկնչելու փվարկել էր տարիներ շարունակ անլուծելի մնացած հարցերը, փակվող ու ավերվող արտադրական ձեռնարկությունները, որոնց հետեւանքով վիճակը մարզում հասել էր տխուր հետեւանքների: Միայն 1952-1955 թթ., Եղիշե Գրիգորյա-

նի որպես երկրորդ անգամ մարզկոմի առաջին քարտուղարի, պաշտոնավարման տարիներին հայկական մարզը թողել-հեռացել է 30 տարեկան մարդ: Տեղն ու տեղը նրան պիտակավորեցին իբրեւ քաղաքական տհաս, «տեղայնությամբ» տուրք տվող ու հատկապես անվստահելի եւ բնականաբար ազատեցին զբաղեցրած պաշտոնից:

Ի դեպ, Եղիշե Գրիգորյանը մարզկոմի առաջին քարտուղար էր նշանակվել միայն այն պատճառով, որ կինը աղբբեջանուհի էր, եւ ինքն էլ հրաշալի գիտեր աղբբեջաներեն: Ականատեսները վկայում են, որ ԼՂԻՄ-ի թիվ առաջին ղեկավարը «բավարար գրագիտություն չունեի»՝ հայերեն, ոչ էլ ռուսերեն»: Սակայն դա չէր խանգարել, որպեսզի Այր. ԿԿ Կենտկոմի օրգան հայկական «Կոմունիստ» թերթը խմբագրի: Գրովիետեւ Աղբբեջանի ղեկավարներին պետք էր ոչ թե գրագետ, հայերեն թերթ կարգացող խմբագիր կամ մարզկոմի քարտուղար, այլ միայն ու միայն վստահելի՝ իրենց հակահայկական քաղաքականությունը պաշտպանող եւ իրականացնող մարդ: Այսուհանդերձ, Գրիգորյանին ազատեցին աշխատանքից ճիշտ այն ժամանակ, երբ նա արդեն երկու Բաքվում իր համար գծած շրջանակից եւ նոր-նոր հասկացել թե Լեռնային Ղարաբաղում ինչով պիտի զբաղվի մարզկոմի առաջին քարտուղարը (P.Nf.):

Մարզկոմի հաջորդ առաջին քարտուղար Ն. Շահնագարովին աշխատանքից հանեցին այն բանի համար, որ նա հաճախակի պահանջներ էր ներկայացրել ԼՂԻՄ-ի որոշ սոցիալ-տնտեսական անհետաձգելի հարցեր լուծելու համար:

Դեռեւս 1960-ական թթ. երկրորդ կեսին, Մտեփանակետում, 1967 թ. հուլիսի 3-ին տեղի ունեցած ցնցող դեպքերից հետո, Այր. ԿԿ Կենտկոմում ամենայն մանրամասնությամբ նախապատրաստել էին մի ծավալուն զեկուցագիր եւ պարտադրել կուսակցության ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքունյանին, որ նա՝ «Մարզում աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության, այդ աշխատանքներում տեղ գտած թերությունների եւ նրա հետագա բարելավման խնդիրների մասին» հարցը մարզկոմի պլենումի քննարկմանը պիտի: Սակայն Մելքունյանը, կարդալով այդ հակահայկական բնույթի «փաստաթուղթը», օբյեկտիվ պատճառներ բերելով, հրաժարվեց կատարել Կենտկոմի ցուցումը: Հեյդար Ալիևը իր մոտ կանչեց Մելքունյանին եւ ասաց՝ դե, եթե դուք չեք կատարում Կենտկոմի առաջադրանքը, մենք հարկադրված կլինենք Ղարաբաղում կադրափոխություն

կատարել: Մի քանի օրից հետո, ավելի ստույգ՝ 1973 թ. հոկտեմբերի 16-ին Բաքվի ռադիոն ԼՂԻՄ-ի բնակիչներին տեղեկացրեց, որ մարզկոմի քարտուղար Գ. Մելքունյանն ընտրվել է Ադրբեջանի արհմիությունների հանրապետական խորհրդի քարտուղար: Այսպես անադնուկ աշխատանքից ազատեցին Գ. Մելքունյանին: Որոշ ժամանակ անց, աշխատանքից ազատեցին նաև մարզգործկոմի նախագահ Մ. Օհանջանյանին:

Չետո Բաքուն փառք, պատիվ, պաշտոն, սանձարձակ իրավունք շռայլաբար տալիս էր անխտիր ամեն տեսակի ապիկար, բախտախնդիր, խամաճիկ մարդկանց, որոնք իրենց պատրաստակամությունն էին հայտնում, բերանները բաց, ձեռքերը վեր բարձրացրած, հավանություն տալու Ղարաբաղում կատարվող տխուր իրադարձություններին: Այս նորընծա ղեկավարների առաջին գործը լինում էր աղմուկ-աղաղակով իրենց նախորդների արածները ջուրը գցելը, նրանց ավելի վարկաբեկելը, զրպարտելը, Բաքվում եւ մարզում լույս տեսնող թերթերում ծաղր ու ծանակի ենթարկելը, հանրապետական, մարզային, շրջանային եւ գյուղական մասշտաբի բոլոր տեսակի ժողովներում կուլեկտիվ ջանքերով ջախջախելը: Չետո գալիս է ահեղ դատաստանի ժամանակը, ամշտոնազրկված նախկին ղեկավարներից ոմանք մեղադրվում են նացիոնալիզմի մեջ եւ վտարվում կուսակցությունից: Նրանց հարազատներից շատերին նույնպես ենթարկում են հալածանքների, երբեմն էլ՝ ֆիզիկապես ոչնչացնում:

Այսպիսի նենգ ու չարաղավ եղանակով նախկին շատ ազնիվ ղեկավարներ, որոնց մեղքը այն էր միայն, որ նրանք հայ են եւ իրենց սկզբունքներին չեն դավաճանել, մեղադրողներից, փաստորեն, վերածվում էին մեղավորների, խնդրողների, աղաչողների: Բացառիկ հանգամանքներում, Բաքուն, Մոսկվայի միջամտությամբ, «խղճում» էր անմեղ մեղավորներից մի քանիսին եւ վերականգնում կուսակցության մեջ միայն այն պայմանով, որ նրանք իրենց ընտանիքներով հանդերձ թողնեն Ղարաբաղը: Եվ քանի որ նրանք երկար ժամանակով զրկված էին աշխատանքից, ապրուստի միջոցներից եւ նոր աշխատանքում տեղավորվելու հնարավորությունից, հարկադրված գլուխները վերցնում եւ հեռանում էին հարազատ երկրամասից:

Այսպիսով, ինչ որ չհաջողվեց անել դարերի ընթացքում զենքի ու ժով, գլուխ են բերում պաշտոնների, պատիվների խաբուսիկ հրապուրներով, տնտեսական եւ հոգեկան տեռորով, ազգային սուրբ

զգացմունքների ոտնահարումով, դաժան հալածանքներով, կուսակցության եւ պետության անունից սպառնալիքներ տալով: Ադր. ԿԿ Կենտկոմի եւ ԼՂ մարզկոմի հեղինակությունը չարաշահելով, քողարկված ցեղասպանությամբ, ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների լեհինյան բարեկամության սկզբունքները ոտնահարելով: Եվ, ինչու չասել, այս ամենը կատարվում էր Մոսկվայի լռության, թողտվության պայմաններում: Եթե Մոսկվան գոնե մեկ անգամ, ըստ էության, զբաղվեր Ղարաբաղի պրոբլեմով, որն արդեն վաղուց ճգնաժամի էր վերածվել, ապա, հավանաբար, կվերացներ հարյուր հազարավոր հայերիս տառապանքը, հալածանքը եւ զուցե վերջակետ կորվեր երկրամասում կատարվող խարդավանքներին: Եվ, որ ոչ պակաս կարելու էր, կվերականգնվեր հայ եւ ադրբեջանական ժողովուրդների խաթարված բարեկամությունն ու համագործակցությունը: Բայց քանի որ Մոսկվան անտարբեր էր կատարվող հանցագործությունների հանդեպ, չեզոք դիրք էր բռնել: Բաքուն, դրանից ոգեւորված, Ղարաբաղում իր ազգահալած գործողություններն ավելի էր սաստկացնում՝ երկրամասից հայ բնակչությանը դուրս քշելու բացահայտ քաղաքականություն վարելով:

Այսքանից հետո հարկ չկա զարմանալու, որ միայն 1960-1975թթ. ընթացքում փոխվել են կուսակցության մարզկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի 7 վարիչ, կուլտուրայի մարզային վարչության 6 պետ, Ստեփանակերտի քաղսովետի 5 նախագահ, մարզային պետական պատմաերկրագիտական թանգարանի 4 դիրեկտոր, մարզային ռադիոհաղորդումների խմբագրության 5 գլխավոր խմբագիր, մարզային գրադարանի 4 դիրեկտոր, Ստեփանակերտի պետական թատրոնի 5 դիրեկտոր, մարզային ժողտեղծագործության տան 5 դիրեկտոր, կուսակցության մարզկոմի 4 քարտուղար (նրանք զբաղվում էին ագիտացիայով եւ կուլտուրայով), մարզսովետի գործկոմի նախագահի 4 առաջին տեղակալ, Ստեփանակերտի քաղկոմի 4 առաջին քարտուղար, նույն շրջանի շրջսովետի 5 նախագահ, մարզային գրողների բաժանմունքի 3 պատասխանատու քարտուղար, կոմերիտմարզկոմի 4 առաջին քարտուղար եւ այլն: Ել չենք խոսում տասնյակ կոլտնտեսությունների, սովխոզների, հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների մասին, որոնց ղեկավարները, առաջատար մասնագետները ամեն տարի փոխվում էին: Իսկ կուսակցական կազմակերպություններում, առողջապահական հիմնարկներում, առեւտ-

րական օբյեկտներում եւ ադմինիստրատիվ օրգաններում զտումը կատարվում էր այնքան հապճեպ ու անսպասելի, որ պաշտոնագրկված անմեղ կադրերի միայն անունների թվարկումը շատ էջեր կզբաղեցնի:

Սովորաբար կադրերի ընտրության հարցում Բաքուն առաջնությունը տալիս էր Ադրբեջանում դիպլոմ ստացած մարդկանց: Քանի որ, ըստ ադրբեջանցիների, «նրանք կրթվել, դաստիարակվել են ինտերնացիոնալ միջավայրում»: Ասել կուզի՝ հայկական ազգային կյանքից մեկուսացված: Հայկական մշակույթից եւ այլ արժեքներից անտեղյակ մանկավարժական կրթությամբ կադրերը ավելի լավ էին «հասկանում» եւ ստրկամիտ հաճկատարությամբ ծառայում իրենց: Եվ նրանց հիմնականում չէին սխալվում: Ղարաբաղում քիչ չէին մանկավարժական կրթությամբ կոլտնտեսությունների նախագահներ, շրջկոմի քարտուղարներ, դատախազներ, դատավորներ, տնօրեններ եւ այլ երանգի ղեկավարներ: Դրանցից շատերը շատ հաճախ «ունք շինելու» փոխարեն աչք էին հանում եւ զանազան պարսավելի միջոցներով (վատ աշխատելով, ծափահարություններով, քծնելով, դանոսներ գրելով) անկրկնելի ղեկավարի, մտավորականի անուն էին ձեռք բերում:

Իսկ ինչ վերաբերում է Երեւանում դիպլոմներ ստացած հատուկեւսու կադրերին, ապա, որպես կանոն, նրանց նայում էին խորթ աչքով: Ադրբեջանի ղեկավարների եւ նրանց դրածոների վրա Հայաստանում կրթություն ստացածները ազդում էին ինչպես կարմիր լաթը ցուլի վրա: Դրա համար էլ նրանք սովորաբար գտնվում էին խիստ հսկողության տակ, փաստորեն հետապնդվում, հալածվում՝ կամայականորեն պիտակավորվելով, կուսակցական տույժի ենթարկվելով հեռացվում էին զբաղեցրած պաշտոններից եւ հայրենի երկրամասից:

Երկու խոսք դրսից ներմուծվող կադրերի մասին: Նախ, ինչպես միշտ, նրանք պարտադիր Բաքվից եւ Ադրբեջանի այլ բնակավայրերից էին լինում, որոնք մարզում զբաղեցնում էին հիմնականում կարեւոր, առաջատար պաշտոնները: Նրանք բոլորովին գաղափար չպետք է ունենային հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի, Ղարաբաղի հիմնական էթնիկ բնակչության լեզվի, սովորությունների, հոգսերի, պահանջների մասին: Նրանք, որ հանդես էին գալիս այդ բնակչության անունից, հավանություն տալիս հայերի նկատմամբ գործադրվող ամեն կարգի չարաշահումներին եւ մի առանձին ոգեւորությամբ դատապարտում, քախջախում էին տեղական լավագույն կադրերին, տարրական գիտելիքներ անգամ չունեին Ղարաբաղի ոչ պատմության, ոչ

մշակույթի եւ ոչ էլ հեռու անցյալի կամ թեկուզ իրականում կատարվող անցուդարձի մասին: Դեռ ավելին, նրանք թրով-սրով, հրահանգներով ուղարկվում էին Կեմտկոմի կողմից, ինչպես իրենք են հպարտանալով խոստովանում, որպեսզի Ղարաբաղում «հայկական նացիոնալիզմ»-ն արմատահան անեն: Սա չարամիտ զրպարտություն էր հայ ժողովրդի հասցեին, որով Բաքուն փորձում էր այն կեղծ տպավորությունն ստեղծել, թե իբր հայերը, բացի Ղարաբաղը ՀԽՍՀ հետ միավորելու ցանկությունից, հետապնդում են ինչ-որ նպատակ: Դա էժանագին տրյուկ էր, որով փորձ էր արվում մոլորության մեջ գցել անիրազեկ մարդկանց: Այնինչ՝ նպատակը Ղարաբաղը Նախիջեւանի նման հայ բնակչությունից մաքրելն էր, որ Բաքուն, ամեն տեսակ մեթոդներ գործադրելով, իրականացնում էր:

Ահա թե ինչից էին առաջացել Ղարաբաղի հայ բնակչության արդարացի դժգոհությունները, բողոքները, որոնք Ադրբեջանի ղեկավարները ճարակորեն բողոքում էին խորթ իզմերով: Բայց նրանց այդ վահանը ոչ թե ժողովուրդների բարեկամության ազնիվ մետաղից էր, այլ կպչուն եւ բարեբախտաբար թափանցիկ ցելոֆանից, որը չէր սքողում Ղարաբաղի եւ նրա արմատական բնակչության հանդեպ կատարված հանցագործությունները, որոնք ուղղակի հակասում էին ազգերի «հավասար ծաղկման լենինյան» դրույթներին: Այդ վահանի տակ տասնյակ տարիներ կոխկրտվել էին ամեն տեսակ դիմադրություն, եւ շովինիզմի, նացիոնալիզմի տենդով վարակված ղեկավարների համար ճանապարհ է հարթվել չարագործություններ կատարելու՝ երկրամասի ինտելիգենցիայի լավագույն մասը չրթելու, բազմաթիվ շեն գյուղեր ավերելու, մարզի տնտեսությանը, մշակույթին մեծ վնաս հասցնելու, տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց իրենց պապենական բնակավայրերից դուրս քշելու համար:

Սովորաբար դրսից ուղարկած ղեկավարների մեծ մասը, մեկուսացվածության, համապատասխան կրթություն, փորձ, հմտություն չունենալու պատճառով, իր պաշտոնական աշխատանքից գլուխ չէր հանում, արագ կողմնորոշվելու, ճիշտ վճիռներ կայացնելու անկարողություն էր ցուցաբերում: Առանձնապես Բաքվից՝ մայրաքաղաքից եկածները, ինչ-որ արտոնյալ իրավունքներ բանեցնելով, անպատիժ մնալու համոզվածությամբ, ամեն կարգի անօրինությունների չափը անց էին կացնում: Նույնիսկ իրենց կատարած հանցանքները սառնասրտորեն համարում էին «Ղարաբաղում կարգ ու կանոն հաստա-

տելու» անհրաժեշտությունից բխած Ադր. ԿԿ Կենսոկոմի միջոցառումներ:

Ղարաբաղում պաշտոնավարելը նրանցից շատերը օգտագործում էին իրենց ունեցվածքը բազմապատկելու համար: Դա կատարվում էր բնավ ոչ աշխատավարձի հաշվին, թեև այն մարզի աշխատավորների միջին աշխատավարձից անհամեմատ բարձր էր: Նրանց հարստացման հիմնական աղբյուրը այն ամուր կապերն էին, որոնցով Կենսոկոմի նոմենկլատուրիստները կապված էին ամեն տեսակ խարդախ միջոցներով փող շինողների, մանավանդ՝ անասնազոդերի հետ: Այս հարցում նրանք բացառություն չէին: Նման կապերի շնորհիվ էր, որ Ադրբեջանում (ինչու միայն Ադրբեջանում) տարեցտարի ընդլայնվում, խորանում եւ մեծ չափերի էին հասնում գողությունները, հափշտակությունները, կաշառակերությունը եւ պաշտոնական դիրքի չարաշահումները: Ղարաբաղի համար կործանարար այս գործողությունները կյանքի են կոչել մի ամբողջ շարք նողկալի երեւոյթներ: Դրանց թվում էին կուսակցական եւ պետական ապարատի պատասխանատու ղեկավարների չարչիւթյունը, ռուբլու, վերջին շրջանում նաեւ ոսկու պաշտամունքի ընդհանուր մթնոլորտում հարստամալու անհագուրդ կիրքը: Կաշառումը, կաշառակերությունը, անօրինական քաղաքական, ֆինանսական մեքենայությունները աննախադեպ մասշտաբների էին հասել:

Ադրբեջանի կոմկուսի Կենսոկոմի անունից հաճախակի հոխորտացող այդ արկածախնդիր ղեկավարների կարծիքով, ճշմարտությունն ունի միայն մի ուղղություն. այն է՝ վերելից դեպի ներքեւ, հակառակ ուղի այն չունի, այլապես նա իր ազդեցությունը կկորցնի, Բաքվի հեղինակությունը կերեթա, ստորադասն էլ երես կառնի, անկարգության, դավադրության, մացիոնալիզմի մշաններ ցույց կտա, որի համար էլ կմեղադրվի եւ անզօրոքն ոտնատակ կտրվի: Հիմա ստի, կեղծիքի, ջոճանքի, ծափահարությունների դար է: Մեկ էլ՝ «Աղա դեիր, սուր դարյա, սուր» («Տերն ասում է քչիր հովիտ, դու էլ քչիր») բանաձեւն է մոդա:

Դեմոկրատական ցեներալիզմի նորահայտ այս սկզբունքով են Վոլոդինը (կուսմարզկոմի երկրորդ քարտուղար), Բստրովը (Ադր. ԽՍՀ Մինիստրների սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեի ԼԴԻՄ բաժնի պետ), Ասկերխանովը (մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ), Բեգլարովը (մարզգործկոմի նախագահի տեղակալ) եւ ուրիշներ տարիներ շարունակ առանց քաշվելու եւ ամաչելու

մարզի տնտեսությունների, ձեռնարկությունների, առեստրական կազմակերպությունների, դրամաշորթների, անգամ խոհարարների, մատուցողների, պահեստապետների հաշվին հարստություններ դիգել, իրենց հարազատների ծնունդները (խոշոր նվերներ ստանալու ակնկալիքով) շքեղ ձեւով նշել, աջ ու ձախ կերուխումներով զբաղվել: Կոլտնտեսությունների նախագահներին, սովխոզների դիրեկտորներին, Ստեփանակերտի գինու-կոնյակի, յուղի-պանրի գործարանների ղեկավարներին հարկադրել էին, որ իրենց կարիքները ըստ պահանջի ծրի բավարարեն սննդամթերքներով, իսկ արտասահմանից ստացած կահույքի մարզային ֆոնդը, վաճառքի ենթակա ավտոմեքենաները, գորգերը եւ հագուստեղենը միայն իրենց կարգադրությամբ կրկնակի, եռակի գներով վաճառվում էին՝ մի մասը դեռ մարդ չմտած՝ ճանապարհին, իսկ մյուս մասը՝ սպեկուլյանտներին: Էլ չենք խոսում այն մասին, որ իրենք եւ իրենց բարեկամները նշված ապրանքները ձեռք էին բերում էժանացված գներով: Հենց այնպես, ուղղակի ստիպում եւ թելադրում էին առեստրի օբյեկտների ղեկավարներին, որ վերջիններս ակտ կազմեն, որ իբր ստացված ապրանքները ճանապարհին փչացել են, որի համար էժանացվել, հետո միայն վաճառվել:

Նրանք, ովքեր համարձակվում էին հանդես գալ այս ապօրինությունների եւ խարդախությունների դեմ, տեղնուտեղ մեղադրվում էին վերադասի կարգադրությունը չկատարելու, դեմոկրատական ցեներալիզմի սկզբունքները ոտնահարելու մեջ եւ առանց դատ ու դատաստանի ազատվում էին աշխատանքից, իսկ առավել համարձակների բերանները ընդմիշտ փակելու համար վտարում էին կուսակցությունից եւ դատական քաշքշուկ ստեղծում նրանց «գործի» կապակցությամբ: Այսպիսի եղանակով աշխատանքից ազատվեցին Ստեփաղառի դիրեկտոր Գր. Բաղդասարյանը, Հարավի կոլտնտեսության նախագահ Ռ. Թովմասյանը, Բալուջայի սովխոզի գերագնիվ դիրեկտոր Ա. Բաբայանը, Դաշբուլայի կոլտնտեսության նախագահ Դ. Ղահրամանյանը, Ստեփանակերտի գինու-կոնյակի գործարանի դիրեկտոր Յու. Ջահանգիրյանը, Ստեփանակերտի յուղի գործարանի դիրեկտոր, հին կոմունիստ Ա. Պողոսովը: Թվում է, թե բոլորովին հարկ չկա նշել առեստրի, ավտոտրանսպորտի, լուսավորության, մշակույթի բնագավառում աշխատող տասնյակ այն մարդկանց ազգանունները, որոնք հալածվեցին, աշխատանքից հեռացվեցին, անգամ դատվեցին միայն ու միայն այն բանի համար, որ հրաժարվեցին Ադրբեջանում ընդուն-

ված տաքսի-գումարով ամենամայա «նալոգ» վճարել նշված ու նաեւ չնշված ադրբեջանցի ղեկավարներին:

Այնուհանդերձ, գտնվեցին ոչ քիչ թվով ստոր արարածներ, որոնք, մի կողմից վախից հալածանքի չենթարկվելու, մյուս կողմից էլ եկամտաբեր, տաքուկ անկյուններ խցկվելու, տուն-տեղ ստեղծելու եւ, որ ոչ պակաս կարելոր է, բարձրաստիճան ղեկավարի հովանավորության տակ գտնվելու հույսով, համաձայնվում էին կատարել այն, ինչ հրաժարվում էին անել իրենց ազնիվ նախորդները: Այդօրինակ մարդկանց առաջ միշտ բաց էին լինում մարզային կաշառակեր ղեկավարների կաբինետների դռները: Նման փոխալայնամավորվածության պայմաններում օրինաչափ էր, որ կաշառք տվող պահանջներ էր ներկայացնում, իսկ կաշառակերը, շորթած գումարը գրպանը դնելով, նոր արկածախնդրային ջանքեր էր գործադրում դրանք ավելացնելու համար: Եվ այսպես, կաշառք տվողներից մեկը պահանջում էր, որ իրենց հաշվապահին վերացնեն, մյուսը՝ իր պետին էր բամբասում, երրորդը՝ կաշառակերի ախորժակը գրգռելու համար ասում էր, որ ավելին կտա, եթե իր աշխատանքի ընկերը չլինի, չորրորդը թույլտվություն, անուր պաշտպանություն էր խնդրում պետական մեքենայով (գործուղում ձեւակերպելով) Վրաստան, Ռուսաստան, Հայաստան, Ադրբեջանի հեռավոր շրջանները մեկնելու՝ թարմ ձուկ, նարինջ, կիտրոն, ընկույզ, իկրա եւ ուրիշ այնպիսի ապրանքներ բերելու, որոնք մարզում դժվար են հայթայթվում:

Դե արի ու փորձիր Բստրով-Վոլոդին-Ասկերխանով եռյակի հովանավորած մարդկանց քեֆին դիպչել, մի անմեղ նկատողություն կամ դիտողություն արա: Կրակ ու բոց էին տեղում բոլոր նրանց գլխին, ովքեր ի պաշտոնե պարտավոր էին կարգի հրավիրել աշխատանքային կարգապահությունը ոտնահարող, աշխատավորների, հատկապես պետության հաշվին փող շորթող աշխատակիցներին: Մինչեւ նրանք հետաքննում եւ դատական «գործ» էին բացում իսկական հանցագործների նկատմամբ, անմիջապես պաշտոնագրվում եւ փողոց էին մետվում: Վերը նշված ղեկավարների եռանկյունին, չարաշահելով պաշտոնական դիրքը, փրկարարի, պաշտպանողի, կարեկցողի կեցվածք էր ընդունում: Աջ ու ձախ սպառնալիքներ տալով, անգամ մարդասիրություն քարոզելով, ժողովուրդների բարեկամության սկզբունքներին վնաս չպատճառելու (որովհետեւ իրենց նալոգ տվողների մեծ մասը ադրբեջանցիներ էին) համար նրանք ոչ միայն անպատիժ

էին մնում, այլեւ նոր եռանդով շարունակում էին անարգել կատարել յուրացումներ, չարաշահումներ, հանցագործություններ: Իսկ հանցագործներին իրենց հովանու տակ վերցրած բարձրաստիճան ղեկավարները միամիտ անտեղյակներ էին ձեւանում, եւ դարձյալ ոմանց ձեռքը ամուր սեղմում, ոմանց սիրտը տրորում: Նրանք լավ գիտեին իրենց պլուս-մինուսները, նրանց առագաստները միշտ բացված էին հանրաբաց քամու ուղղությամբ:

Երբեմն էլ հեռավոր նպատակները այնքան խորն էին թաքնված լինում, որ փորձված աչքն էլ չէր կարողանում նկատել, իսկ նրանց հյուսած խորամանկության լաբիրինթոսից ամեն մարդ չէ, որ կարող էր դուրս գալ: Խաբելը, թակարդ լարելը, պայծառ մարդկանց սեւացնելը, ժպտալով թույնի բաժակ հրանցնելը, հազար ու մի անագնիվ արարքներ գործելը դրսից բերված կադրերի մեծ մասի գործելակերպի հատկանիշներն էին: Ավելի հիմնավոր լինելու համար բերենք երկու օրինակ: 1968 թ. հուլիսի 20-ին կուսակցության մարզկոմի երկրորդ քարտուղար Կոստրուլինը իր մոտ է կանչում քիչ առաջ մարզկոմի բուֆետում իրարից նոր բաժանված Ստեփանակերտի քաղկոմի երկրորդ քարտուղար Ս. Իսրայելյանին եւ առանց քաշվելու ասում. «Ընկ. Իսրայելյան, դու քեզից ծառայական սանդուղքի բարձր աստիճանի վրա գտնվող քարտուղարին աչքաթող ես արել: Մենք քեզ հետ մեծ հույսեր էինք կապել, իսկ դու միայն քեզ ես տեսնում»: Մինչ Իսրայելյանն ուշքի կգար, Կոստրուլինը սկսում է վերնաշապիկի կոճակները արծակել՝ միաժամանակ պահանջելով, որ Իսրայելյանը հանի իր առաջին անգամ հագած (Լաչինի շրջկոմի քարտուղարի նմիրած) վերնաշապիկը, որը Կոստրուլինի դուրն էր եկել: Շապիկների փոխանակությունից հետո Իսրայելյանը շեֆին ասաց, որ ինքը մինչեւ հիմա հիմար է եղել, եւ չի հասկացել կատարել իր պարտականությունը:

Մշակույթի մարզային վարչության «Վոլգա» մեքենայի վարորդը հաճախակի, մեքենայով հանդերձ, օրերով կորչում էր: Ամեն անգամ, երբ այդ մասին խոսք էր բացվում, 2-րդ դասարանի կրթությամբ վարորդը շատ ինքնավատահ հայտարարում էր, որ ինքն ինչ ուզի՝ այն էլ կանի, եւ ոչ ոք չի կարող իր մազին դիպչել, որովհետեւ, ինչպես նա էր ասում. «Իմ ետեւում Բստրովն է կանգնած: Ես նրա համար ամեն ինչ անում եմ, իսկ նա էլ ինձ պահում է: Դե գնացեք ու պայթեք»: Ցավոք, դա այդպես էր: Ստեփանակերտցիները տեսնում էին հաճախակի բեռնաթափվող մեքենան Բստրովի տան բակում, պետական անվտանգ

գության ԼԴԻՄ-ի բաժնի շենքի առաջ: Տեսնում էին, որ բաժին էր տարվում նաև Վոլոդիմիր: Ստեփանակերտցիները միայն չէին տեսնում, թե մթերքները որտեղից էին բերվում: Հետո էլ կարելու էր դա չէր, այլ՝ որ անհիժայ վարորդը կաշառքի ուժով մեծ փորձանք բերեց կուլտուրայի մարզային վարչության պետի, գլխավոր հաշվապահի եւ նաև բոլոր նրանց գլուխներին, ուլքեր դատապարտում էին նրա ստոր, խարդախ արարքները:

Այսքանով, սակայն չէր հագեցվում անսանձ ղեկավարների ախորժակը: Նրանք ոչ պակաս արատավոր մեթոդներով սկսում էին հափշտակել երկրամասի մշակույթի լավագույն արժեքները:

Թանգարանային արժեքների, մասնավորապես՝ ազգագրական եւ հնագիտական իրերը հափշտակող առաջին բարձրաստիճան ղեկավարը եղել էր Ադր. ԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Ելիստրատովը: Այն Ելիստրատովը, որ Ղարաբաղի հայ բնակչության նվազումը, երկրամասի մի շարք գյուղերի քայքայումը համարել էր «օրինաչափ երեւոյթ»: «Ինչու դարաբաղցիները պետք է ապրեն Ղարաբաղում, ասել է նա, - մեր հայրենիքը Ղարաբաղը չէ, այլ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը»: Այն Ելիստրատովը, որ առանց խորշելու պարտադրել էր իր ղեկավարած հանրապետության շրջանների ղեկավարներին, որ իրեն՝ հավաքածուների սիրահարին, նվիրեն տեղական հնագույն գորգեր, արծաթե զարդեր, գոտիներ, հնագիտական առարկաներ: Եվ նա մի հարվածով, առանց որեւէ դժվարության, դրանց տեր էր դարձել: Ադրբեջանական ժողովրդին պատկանող տասնյակ մեծարժեք գանձերը հեշտությամբ հափշտակելով՝ ձեռք էր մեկնել դեպի հայ մշակույթի նմուշները, որոնցով անչափ հարուստ է Ղարաբաղը: Մարզի ղեկավարներին հրավիրում էր իր մոտ եւ մի տեսակ նեղացածի կեցվածքով ապում. «Իմ տանը Ղարաբաղ հիշեցնող որեւէ բան չկա: Այն ամենը, ինչ ես ունեմ, ադրբեջանցիներն են տվել: Վատ չի լինի, եթե դրանց կողքին ունենայի նաև հայկական գորգեր, ոսկերչական զարդեր: Չէ՞ որ հայ արվեստը աշխարհին շքանշան է: Հետո էլ մենք կոմունիստ ենք, ամեն ինչում պետք է պահպանենք ինտերնացիոնալիզմի սկզբունքը»: Դժբախտաբար, մեր ղեկավարները մյուսներից ետ չմնալու մարտավարությամբ, նաև Կենտկոմի քարտուղարությամբ դուր գալու համար, Ելիստրատովին տեր դարձրին Արցախական աշխարհի արարիչ վարպետների հանճարով ստեղծված բազմաթիվ թանկարժեք իրերի:

Ելիստրատովի օրինակը վարակիչ հիվանդության պես լայն տարածում ստացավ հանրապետությունում: Թանգարանային արժեքները գրգռում էին Բաքվից Ղարաբաղ աշխատանքի ուղարկված որոշ ղեկավարների ախորժակը եւս: Այսպես, Ստեփանակերտի մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանում ցուցադրված արծաթե շքեղ, իրենց տեսակի մեջ եզակի գոտիները շատ էին գայրակղել Վոլոդիմիր, Բստրովին, իսկ դրանցից առաջ էլ Սեյդալիեւի (մարզգործկոմի նախագահի տեղակալ): Եթե վերջինս իր մտադրությունը չէր թաքցնում եւ իր գեղեցիկ կնոջ աչքում «քիչի» տղամարդ երեւալու համար խնդրում էր նշված գոտիներից մեկը, ապա առաջին երկուսը պահանջում, անգամ պարտադրում էին թանգարանի ղեկավարությանը, որ անհապաղ ցուցադրությունից հանեն եւ իրենց նվիրեն մեկական գոտի: Նրանք մույնիսկ զարմանում էին թանգարանի դիրեկտորի համառության վրա եւ առանց այլեւայլության իրենց ձեռքի բանալիներով, լպիրշաբար փորձում էին ջարդել ցուցանուշների փեղկերի ապակիները: Միայն թանգարանի դիրեկտորի վճռական միջամտության շնորհիվ կանխվեց գոտիների հափշտակությունը: «Մի փորձեք ձեռք տալ ժողովրդի սրբություններին, թանգարանը ձեզ համար Ստեփանի պահեստները չեն եւ ոչ էլ հանրային դաշտերի ու ֆերմաների բարիքները, որոնց հետ ինչպես ուզում, այնպես էլ վարվում եք: Այս գոտիները, որ ուզում եք հափշտակել, համարվում են ազգային հարստություն եւ գրանցված են ԽՍՀՄ թանգարանային գանձեր համարվող արժեքների ֆոնդում»: Վոլոդիմը եւ Բստրովը, կատաղած, փրփրած, բանալիները գրպանները խոթելով՝ «Ռե լավ, Շահեն Սկրտչյան, քո ճաշը մենք այնպես կեփենք, որ դու քո ամբողջ կյանքում մեզ չես մոռանա» ասելով, հեռանում էին թանգարանից:

1971 թվականի նոյեմբերի 4-ին տեղի ունեցած այս դեպքից հետո նրանք թանգարանի երիտասարդ դիրեկտորին մերկացնելու, դատապարտելու, ջախջախելու համար ստուգումների մի իսկական կարուսել սարքեցին: Ընդ որում, ոտքի էին կանգնեցրել ամեն երանգի գրպարտիչների, շանտաժիստների եւ նրանց լարում թանգարանի տնօրենի դեմ: Թափփուկների այդ ոհմակը աշխատում էր մեկը մյուսին գերազանցել իր մերկացուցիչ եւ բացասական վերաբերմունքով դեպի թանգարանի դիրեկտորը, կարծես մրցանակ էր սահմանված ամենաստոր մեղադրանք հարուցելու համար, եւ մեղադրողները ձգտում էին մեկը մյուսի ձեռքից խլել այդ մրցանակը: Վեց ամսում թանգարա-

նը աջից, ձախից, վերեւից, ներքեւից տնտղում էին 7 հանձնաժողով-ներ, որոնցից 4-ը Բաքվից էին հատուկ հրավիրել: Սակայն բոլոր հանձնաժողովներն էլ արձանագրել են, որ այն ենթադրյալ մեղադրանքները, որոնք վերագրվում էին թանգարանի դիրեկտորին, չեն ապացուցվում:

Բայց Վոլոդինը, ավելի կատաղած, աչ ու ձախ հայտարարում էր, որ ինքը կապացուցի: Չետո նա զգում էր իր պնդումների անհեթեթու-թյունը եւ ուղղակի ստիպում էր կուլտուրայի մարզային վարչության պետին, որ հրաման տա թանգարանի դիրեկտորին աշխատանքից ազատելու մասին: Այս հարցում Վոլոդինին թեւ եւ թիկունք էր կանգնել Ադր. ԿԿ Կենտկոմի ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժինը: Երբ ժան Անդրյանը հրաժարվեց կատարել Վոլոդինի պատվերը, վերջինս դրանից ավելի զայրացավ եւ իր ամբողջ նողկանքը շուռ տվեց դեպի Անդրյանը: Ոչ պակաս անտանելի պահեր ապրեց ժանը, մարզի մշակույթի պաշտպանության եւ վերելքի համար քիչ ջանքեր չթափած հոյակապ մարդը: Այս միջադեպից հետո ոչ միայն Անդրյանին ազատում են աշխատանքից, հեռացնում կուսակցությունից, այլեւ արգելում եւ չեն թողնում, որ նա աշխատի իր մասնագիտությամբ:

Այս բացահայտ այլանդակություններին անտարբերությամբ նայող մարդիկ, առաջին հերթին կուսմարզկոմի քյուրոյի մյուս անդամները, ժողովրդական դեպուտատները, հազարավոր կոմունիստներ վախե-նում էին եւ ամոթաբար լռում: Կադրերի ընտրության հարցում կամա-յական դրսևորումները հանգեցրել էին այն բանին, որ դրսից ուղարկ-ված ղեկավարները կոպիտ կերպով ոտնահարում էին կուսակցական եւ պետական կարգ ու կանոնը, ստեղծում անսկզբունքայնության, կա-շառակերության, ազգային խտրականության ու լարվածության մթնո-լորտ:

Այս պարագայում այլեւս ի՞նչ նորմալ աշխատանքի, կոմունիստա-կան վերաբերմունքի մասին կարող էր խոսք լինել, եթե ղեկավար պաշտոնում հայտնվել էին, ուղղակի ասենք, պատահական, անար-ժան, ընչաքաղց ու խուլիզան մարդիկ, ինչպիսիք էին Վոլոդինը, Բստ-րովը, Ասկերխանովը, Բեզլարովը, Կենտրկովը եւ շատ ուրիշներ: Այ-լանդակություններին անտարբեր նայելը արդարացում չպետք է ունե-նա: Բայց եւ այնպես հարց է ծագում՝ եթե ազնիվ կոմունիստները, ո-րոնց աչքի առաջ խաբեբաները գործում էին անպատիժ, գերադասում էին չտեսնելու, չլսելու տալ: Արդյոք այն պատճառով չէ՞ր, որ քմնադա-

ուական խոսքը պաշտպանության չէր արժանանում վերելներում: Իսկ էրբ խուլիզանները, կաշառակերները, պատահական, վստահություն չներշնչող մարդիկ, հեշտությամբ կուսակցական-պետական պաշտոն-ներ էին զրավում, կոմունիստների քմնադատական խոսքն էլ ճնշվում էր ամենավարագ ձեռով, ապա դա չի՞ նշանակում, որ կուսակցության մեջ լայնորեն տարածված էին աչքակապությունը, անսկզբունք խու-սավարումն ու քաղաքական շահախաբողխությունը:

Իհարկե, սրանով չեն վերջանում դրսից ավելի ծիշտ Բաքվից, Ղա-յսբաղ եկած ղեկավարների չարագործությունները: Սի կողմից երանք հարստանում էին դարաբաղցիների դժբախտությունների, հա-զարավոր անմեղ մարդկանց արցունքների հաշվին, մյուս կողմից նարքսիզմի կլասիկների անուններով երգվելով, սեւը ներկայացնում էին սպիտակի տեղ, ջանալով սքողել Ղարաբաղում կատարվող հան-դավոր գործողությունները: Ինչքան ավելի դաժան բռնություններ էին ծավալվում Ղարաբաղի հայ հասարակության լայն խավերի նկատ-մամբ, այնքան ավելի հեշտ էր դառնում հարստություններ դիզելը, պաշտոնական Բաքվի սիրույն ու աջակցությանը արժանանալը: Ադր-յեջանի ղեկավարները հրժվում էին, որ իրենց նշանակած «կադրերը» Ղարաբաղում արմատահան էին անում հայկական «նացիոնալիզմը» (կարդալ՝ հայկական ազգային սովորությունները, սրբությունները, հայրենասիրական զգացմունքները, լեզվի օգտագործման շրջանակ-ները, գրադարանների պատերից հանում եւ ոտքերի տակ տրորում էին հայ կլասիկների նկարները, թանգարանի ցուցադրությանից պո-կում են Տիգրան Մեծի պատկերով դրամի դրվագած պատճենը): Բա-բուն հիացած էր Բստրովի, Վոլոդինի, Ասկերխանովի, Կենտրկովի «ե-ռանդուն, սկզբունքային» գործելակերպով:

Սակայն որոշ ժամանակ անց, երբ դարաբաղցիներին հաջողվում է մերկացնել այդ քառյակի գործած մութ մեքենայությունները, կաշա-ռակերության, պաշտոնական դիրքի չարաշահումների, կուսակցա-կան եւ պետական նորմերի կոպիտ խախտումների խայտառակ փաս-տերը, որոնք պղպջակի պես պայթում էին մերթ այս, մերթ այն բնագա-վառում, Բաքուն շտապում է նրանց փոխարինել ուրիշ՝ ավելի վատ դրածոներով: Եվ որպեսզի Ղարաբաղում Ադր. կոմկուսի Կենտկոմի կողմից հետևողականորեն կիրառվող կադրային քաղաքականու-թյան նպատակները լրիվ չմերկացվեն, պաշտոնագրվածներին էին վերագրում իրենց կողմից ձեռնարկված հայատյաց քաղաքականու-

թյան ծանր հետեւանքների պատասխանատվությունը: Այլ խոսքով՝ Բաքուն փոխում էր տակտիկան: Եվ կադրաջարդության մեթոդներով փորձում էր ամրապնդել իր դիրքերը, թուլացնել, ջլատել դարաբաղ-ցիների միասնությունը, կասեցնել նրանց՝ մայր Հայաստանի հետ վե-րամիավորվելու ձգտումը:

Այս փորձված, բայց ստանդարտ մեթոդները, որոնք Ղարաբաղում միշտ ուղեկցվել էին պրոպագանդիստական ուժեղ աղմուկ-աղաղա-կով, այնուհանդերձ չէին փոխում մարզի հայ բնակչության դեմ կի-րառվող քաղաքական, ազգային եւ սոցիալ-տնտեսական հալածան-քների բնույթը: Որպես դրա օրինակ է ծառայում նաեւ այն, որ Ղարա-բաղում իրենց վարկաբեկած նախկին ղեկավարների կամայականու-թյուններին ենթարկված հարյուրավոր անմեղ զոհերից ոչ մեկին դեռ ռեաբիլիտացիայի չեն ենթարկել: Դեռեւս նրանց վրայից չեն հանվել քաղաքական այս կամ այն շինժու պիտակը եւ այն բոլոր կեղծ մեղադ-րանքները, որ նրանց ներկայացվել են 1965-1987 թթ.:

5. ԿԱՂՐԱՅԻՆ ԶԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅԱՅԻ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ

Այսպիսով, Բաքուն միտումնավոր ձգտում էր Ղարաբաղի մաքուր ջրերը պղտորել, լարվածություն ստեղծել: Որովհետեւ լարվածության պայմաններում դժվար չէ արդարացնել եւ ամոթալի քողով ծածկել Ադրբեջանի վայրենի հրոսակախմբերի կողմից բազմաթիվ անմեղ հա-յերի սպանությունների, երկրամասի բնակչության անասունների, բնակարանների համատարած գողությունների դեպքերը: Միաժամա-նակ, Բաքուն միջոցների մեջ խտրականություն չէր դնում՝ հայ բնակ-չությանը միշտ վախի, սարսափի մեջ պահելու համար: Ուրիշ էլ ինչ պայմաններում հնարավոր կլիներ կուսակցության մարզկոմի քար-տուղար Մ. Գասպարյանին կանչել Բաքու եւ ասել. «Քանի որ դու չես պաշտպանում Վոլոդիմիրն՝ մեր աչքին, ձեռքին, ականջին, քեզ ազա-տում ենք գործից, որտեղ ուզում ես, գնա»: Ուրիշ էլ ինչ պայմաննե-րում կարող էին կանչել մարզգործկոմի նախագահի առաջին տեղա-կալ Ե. Բաղդասարյանին եւ ասել՝ «Դու դիսերտացիա ես պաշտպանել երեւանում, որի համար էլ արդեն վստահություն չես ներշնչում»: Ուրիշ էլ ինչ հանգամանքներում կուսակցության մարզկոմի պրոպագանդա-յի եւ ազիտացիայի բաժնի վարիչ Զ. Դավթյանին կասեին. «Քանի որ

դու չես կարողացել կատարել Ադր. ԿԿ Կենտկոմի (Ղարաբաղին կցած) պատասխանատու աշխատակից Գինդիսի անձնական խնդ-րանքը՝ Ա. Դյումայի երկերի բաժանորդագրություն չես կազմակերպել Ստեփանակերտում, գործից ազատվում ես»: Երկարամյա աշխա-տանքային փորձով դատավոր Ե. Մարությանին կուսմարզկոմի անու-նից կասեին. «Դատավարությունը չես վարել այնպես, ինչպես մարզ-կոմի երկրորդ քարտուղարն էր պահանջել եւ չես արդարացրել հան-ցագործին, այսօրվանից հրաժեշտ պետք է տաս արդարադատությա-նը եւ առհասարակ այդ սիստեմում դու անելիք չպետք է ունենաս»: Ե-լի թվարկեմ: Մարզային վիճակագրական վարչության պետ Ա. Զա-խարյանը (Հայրենական պատերազմի հաշմանդամ, հիանալի մաս-նագետ) մեղադրվում եւ փողոց է նետվում միայն ու միայն այն բանի համար, որ նա իր խմբագրած վիճակագրական ժողովածուի մեջ մար-զի տնտեսական որոշ «նվաճումներ» համեմատել էր 1913 թվականի ցուցանիշների հետ: Կուսմարզկոմը խորհրդային երկրում ընդունված աշխատանքի այս սովորական մեթոդը բնորոշել է որպես «...քաղա-քական սխալ դիրքերից արված գործ»: Իսկ ինչո՞ւ չէր կարելի համե-մատել 1913թ. հետ, որովհետեւ երբ համեմատությունը կատարվում է այդ կամ թեկուզ 1895 թ. հետ, իսկույն եւեթ նկատվում է ԼՂԻՄ-ի հե-տամնացությունը, խեղճությունը: Այդ առումով մարզը ԽՍՀՄ տնտե-սական, հատկապես ինդուստրիալ քարտեզի վրա սպիտակ բիծ էր, իսկ կուլտուրական հեղափոխության տեսակետից՝ խավարից էլ խա-վար: Ահա թե որն էր կոմունիստ Զախարյանի «քաղաքական սխալ»-ի իմաստը:

Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի երիտասարդ դիրեկտոր Բ. Դավ-թյանին, որի եւ հայրը, եւ հորեղբայրը իրենց կյանքը զոհել էին Հայրե-նիքի ազատագրման համար, աշխատանքից ազատվել էր հենց այն-պես, առանց որեւէ «մեղադրանք» գրելու աշխատանքային գրքույ-կում: Երբ Դավթյանը փորձել էր իմանալ, թե իրեն ինչու են ազատել գործից, կուսակցության քաղաքային կոմիտեում նրա հարցին հար-ցով էին պատասխանել. «Ինչո՞ւ է վերջին շրջանում դպրոցում հայոց լիզվի, գրականության եւ պատմության առարկաների նկատմամբ ա-շակերտների հետաքրքրությունը բարձրացել, ինչո՞ւ է 4-րդ դասարա-նի աշակերտ Արայիկը իրենց բակում խաղալու ժամանակ արտասա-նել «Դե հասիր, քաջ Անդրանիկ» բառերը: Ազգային հերոս, հայ եւ բուլ-լար ժողովուրդների ազատագրական պայքարին ակտիվորեն մաս-

նակցած գորավար Անդրանիկին նվիրված բազում երգերից 10-ամյա երեխայի արտասանած այս մի հատիկ տողը իր վրա էր բեռեռել մարգային, հանրապետական շատ կազմակերպությունների և հիմնարկությունների, անգամ պետական օրգանների ուշադրությունը: Բազմաթիվ հանձնաժողովներ են գալիս, գնում, հարցաքննություններ են կատարում դպրոցում, քաղաքում: Քիչ միջոցներ չեն ծախսում, քիչ նեղություններ չեն պատճառում դպրոցականներին, ծնողներին, միայն ու միայն նրա համար, թե Արայիկը որտեղից գիտեր, Ս. Շահումյանի բնորոշմամբ, ժողովրդական հերոս Անդրանիկի անունը եւ, որ ամենից վտանգավորն է, ով էր նրան սովորեցրել: Արդյոք դա այսինչ-այսինչյանի (կարդա՛ տեղական ազատման ենթակա կադրերի), կամ Երեւանի միջամտությունը չէ՞: Ինչպիսի՞ տգիտություն եւ թունավոր կասկածամտություն: Բայց մի՞թե միայն տգիտություն: Կ. Մարքսին է պատկանում այն միտքը, թե «տգիտությունը դիվային ուժ է, եւ մենք վախենում ենք, որ այն պատճառ հանդիսանա շատ ողբերգությունների»: Մարգային «Սովետական Ղարաբաղ» թերթի սեփական թղթակցի աշխատանքից ազատման հրամանում գրվում է. «...վնասարար բանաստեղծություն կարդալու համար» կրիմինալը: Այդ ինչ բանաստեղծություն էր, որը կարդալու համար երիտասարդ ժուռնալիստ Յա. Բաբալյանը հրաժեշտ տվեց Ղարաբաղին: Դա Արամայիս Սահակյանի՝ Արարատին նվիրված այն բանաստեղծությունն է, որ ռուսերեն տպագրվել էր Մոսկվայում եւ, մյուս մի շարք լավ գործերի հետ, հեղինակին բերել կոմերիտմիության մրցանակ: Ստեփանակերտի մարգային մանկական հիվանդանոցի գլխավոր բժշկուհի, ԽՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ս. Զարությունյանին իր «դիմումի համաձայն» աշխատանքից ազատում եւ Ղարաբաղից վտարում են այն բանի համար, որ նա մարզում, մասնավորապես Ստեփանակերտում, նորածին երեխաների մահացության անթույլատրելի բարձր տոկոսի առկայությունը բացատրել էր հղի կանանց ծանր վիճակով, թերսնմամբ, խմելու եւ կենցաղային ջրի պակասությամբ, լարված, ներվային վիճակով, աշխատանքի եւ հանգստի վատ կազմակերպումով, տարրական հարմարություններ չունեցող հիվանդանոցներով, ծննդատների խսպառ բացակայությամբ:

Միանգամայն անխղճորեն են վարվել Ադրբեջանում պրոֆտեխնիկական կրթության բնագավառի եռանդուն կազմակերպիչներից մեկի՝ Ստեփանակերտի ուսումնարանի ուսմասվար Եր. Սկրտչյանի հետ:

Անխոհեմ մարդիկ, իրենց քաղաքական «զգոնությունը», ես կասեի՝ քրամտությունը ցուցադրելու համար մի հարվածով ջնջեցին անբավիր աշխատողի, հիանալի մասնագետի 17 տարվա աշխատանքը: Ուժերի ծաղկման շրջանում նա սրտի ցավով հեռացավ իր իսկ ստեղծած, փայլալայած ուսումնարանից: Ինչի՞ համար: Դարձյալ՝ Երեւանի ինտ կապված լինելու մեղադրանքով: Երկար տարիներ, առանց հանգստի եւ արձակուրդի իրավունքից օգտվելու, նա իր կարողությունները սիրով նվիրել է երիտասարդ մասնագետներ պատրաստելու գործին: Այդ է վկայում այն հաստ թղթապանակը, որը ծայրեծայր լիքն էր պատվոգրերով ու փաստաթղթերով, որոնք նա ստացել էր մարգային, հանրապետական, միութենական կազմակերպություններից ու կոմիտեներից: Եվ ընդամենը մեկ անգամ նա ընդառաջել է իր դպրոցական երկու երեխաների ու կնոջ խնդրանքին եւ երեք օրով նրանց (առաջին անգամ) Երեւան տարել: Սա էլ եղել է ճակատագրական գործած «մեղք», «զորավոր» փաստ նրան աշխատանքից ազատելու համար:

Մարդու իրավունքների ոտնահարման մի ցնցող փաստ է գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, մեղվաբույծ Ս. Դովսեփյանի ճակատագիրը: Անվանի մեղվաբույծը տարիներ շարունակ բույրեղ, աղաչել էր վերադաս կազմակերպություններին, որ մեղվաբուծությունը մարզի տնտեսություններից դուրս մղելը, վերացնելը հանցագործություն էր, տնտեսական տեսակետից վնասարարություն: Այդ կապակցությամբ նրա գրած բազմաթիվ դիմումները, բացատրությունները ամենուր «խղճի» ժայռի են հանդիպել: Ոչ մեկին չի հետաքրքրել, որ ծաղկառատ Ղարաբաղի բնակչիմայական լավ պայմանները, աշխարհագրական դիրքը նպաստավոր են մեղվաբուծության զարգացման համար: Որ մեղվաբուծությունը, հին դարերից սկսած, Ղարաբաղում զարգացած, եկամտաբեր, ապրանքային նշանակություն ունեցող ճյուղ էր եղել: Եվ որ Արցախ-Ղարաբաղ աշխարհի անուշահամ մեղրի համբավը Կովկասի սահմաններից հեռու էր տարածված եղել: Իսկ ոչ հեռու անցյալում՝ 1938 թ., Զամանիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում Ղարաբաղի մեղրը՝ իր համով ու հոտով, մեղվափեթակի մեկ միավորի հաշվով, ստացած բերքի քանակով երկրում գրավել էր առաջին տեղը եւ պարգևատրվել առաջին կարգի դիպլոմով:

Բաբվում (գյուղատնտեսության մինիստրությունում եւ պետպլանում) Դովսեփյանի բողոքների մեջ անցյալի «իդեալականացման»,

անգամ «նացիոնալիզմի» երանգներ էին հայտնագործել: Նրան «մեղադրում» էին, թե ինչու է դիմումների մեջ իր տեսակետի պաշտպանության համար, վկայակոչել Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված տեղեկությունները, թե ինչ կարիք կար այդ առնչությամբ հիշել արաբական, պարսկական, ռուսական պատմիչներին: Մի խոսքով՝ գյուղատնտեսության միմիստրության ղեկավարներին ուրիշ բան էր հետաքրքրել, հանրապետությունում գիտական կոչումով միակ մեղվաբույծ մասնագետի՝ «կլավուզնիկ» Յովսեփյանի հետ հաշիվներ մաքրելու հարցը: Սկզբում կրճատեցին մարզի գյուղատնտեսական շրջանային բաժինների մեղվաբույծ-մասնագետների հաստիքները, ապա կազմալուծեցին մեղվաբուծության տոհմային բուծարանը, նոմաթերթերի, մեղվափեթակների արտադրության արհեստանոցը, հետո՝ 1970 թվականին էլ վերացրին գյուղատնտեսության մարզային վարչության մեղվաբույծի միակ հաստիքը, որը զբաղեցնում էր Յովսեփյանը: Փողոց նետված որակյալ մասնագետը երկար ժամանակ մնաց անգործ, ապրուստի միջոցներից զրկված: Սադիստական մեթոդներով անբասիր կոմունիստին, բազմափորձ, խղճի մտոք աշխատողին հարկադրեցին, որպեսզի մեղանչի եւ մարզի մեղվաբուծության մասին այլեւս չխոսի: Դրանից հետո միայն «վերադաստիարակված», Ղարաբաղում Բաքվի վարած տնտեսական քաղաքականության իմաստը «նոր» հասկացած գիտության թեկնածուին տեղավորեցին աշխատանքի՝ Ստեփանակերտի կոմպլեքսային զոնալ փորձակայանում որպես... խոզաբուծության մասնագետ: Եվ դա այն դեպքում, երբ այդ նույն թվականին ԽՄԿԿ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց մեղվաբուծության հետագա զարգացման համար: Սակայն Յովսեփյանն այլեւս անկարող եղավ տանել իրեն ամենուրեք հետապնդող քստմնելի հալածանքը, տնտեսական տեռորը: Անժամանակ, բայց պարտադրված մահը միայն հանգստություն բերեց նրա անհանգիստ հոգուն: Ղարաբաղի քայքայված մեղվաբուծությունն ընդմիշտ կորցրեց իր ջերմ պաշտպաններից ու նվիրյալներից մեկին:

Հաղորդի շրջանային «Կոլտնտեսական» թերթի խմբագիր էմ. Լալայանին, զինկոմ, կապիտան Աթայանին երկար քաջքշեցին, չարչարեցին, գործից, կուսակցությունից, Ղարաբաղից վտարեցին նրա համար, որ վերջիններս իրենց շրջանի ավերածությունների, աշխատողների ծանր պայմանների մասին անստորագիր նամակ էին գրել Մոսկ

էի,- գրել է Եղիշե Սարգսյանը,- մարզխորհրդի գործկոմում՝ նախագահի մի տեղակալ միայն: Կուսմարզկոմի բյուրոյի 13-15 հոգուց բաղկացած կազմից տեղացիները լավագույն դեպքում 3-4 հոգի էին լինում: Մեր ամեն մի տրտունց ու բողոք դաժանորեն կանխվում էին հենց իր՝ Կեւորկովի կողմից, մյուս եկվորներն էլ համերաշխորեն պաշտպանում էին նրան:

Աղբբեջանի ղեկավարները, ընդհանրապես, մեծ անվստահություն էին ցուցաբերում տեղական կադրերի նկատմամբ: Իրավապահ մարմիններում, չնչին բացառությամբ, բոլոր ղեկավար պաշտոնները որսից եկածներն են զբաղեցնում: Հերթը կամաց-կամաց սկսել էր հասնել շրջանային մակարդակի ղեկավարներին:

Կեւորկովն ամեն հնարավորություն օգտագործում էր Ալիեւի վստահությունը չկորցնելու համար, այդպիսով դառնալով Ալիեւի ձեռքի խաղալիք (մանրամասն տես Եղիշե Սարգսյան, Մոտ անցյալի հետքերով, «Նորք», 12, 1989 թ., էջ 80-81):

Եվ ահա, Կեւորկով կոչված կուսմարզկոմի առաջին քարտուղարը հաճույքով հանձն առավ տարիներ առաջ Բաքվում պատրաստված, Ալիեւի կողմից խմբագրված, սրբագրված հակահայկական բնույթի զեկուցագիրը կարդալ կուսմարզկոմի պլենումում: Ի դեպ, երկու անգամ, ինչպես նշվել է վերելում, զեկուցագիրը տվել էին Գ. Մելքունյանին, որ բննարկի մարզկոմի պլենումում, բայց նա հրաժարվել էր, պատճառաբանելով, որ դա պրոպկոնցիոն փաստաթուղթ է, որն անկասկած կդատապարտվի ոչ միայն Ղարաբաղցիների կողմից:

1975 թ. մարտի 23-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումում Կեւորկովը հրապարակեց Ալիեւի կողմից փայտիայված զեկուցագիրը: Դա զեկուցում չէր, այլ դատական վճիռ՝ Լեռնային Ղարաբաղի մտավորականների, ինչու չէ նաեւ հայ ժողովրդի հանդեպ: Ձեկուցման հիմնական դրույթներն են՝ ԼՂ-ն դարձել է հայ ազգայնամուլների երկրամաս, ուր ոտնահարվում է ժողովուրդների լեւնիյան բարեկամությունը: Նացիոնալիստական, անջատողական ոտնձգություններ են թույլ տրվում աղբբեջանական «խաղաղ, ինտերնացիոնալիզմի ոգով տոգորված ժողովրդի նկատմամբ»: Միաժամանակ շեշտվում էր, որ «Ղարաբաղի պատկանելությունը մեկընդմիշտ լուծված է լեւնիյան հանճարեղ ազգային քաղաքականության սկզբունքներով եւ նա հանդիսանում է Աղբբեջանի անքակտելի մասը»:

Մոսկվայում՝ կուսակցության կենտրոնական կոմիտեում, կային

նույնիսկ այնպիսիները, ինչպես հիշում էր կուսմարզկոմի քարտուղար Եղիշե Սարգսյանը, ովքեր վրդովված էին խոսել այդ պլենումի մասին: Պրոպագանդայի բաժնի սեկտորներից մեկի վարիչ Միխայիլ Մորոզովը, որն մասնագիտությամբ արեւելագետ էր ու քաջատեղյակ հայ ժողովրդի, այդ թվում՝ արցախահայության պատմությանը, ուղղակի ասել էր.

- Ես լիովին դեմ եմ այդ պլենումին: Դուք՝ դարաբաղցիներդ, արդար եք: Ձեզ ճնշում, հալածում են, եւ դուք ձեր բողոքի ձայնն եք բարձրացնում (տես՝ Եղիշե Սարգսյանի գրառումները, որոնց մի օրինակը գտնվում է տողերիս հեղինակի անձնական արխիվում): Այսուհանդերձ, Կեւորկովը, այսպիսով, դառնում է Ալիեւի սիրելին եւ անձեռնմխելի «զինակիցը»: Ու նրա սանձարձակությունները չափ ու սահման չունեին: Բերեմ կոնկրետ օրինակներ:

Կուսմարզկոմի բյուրոյում երբ «քննարկվում» էր Զաղրուբի շրջանային դատախազ Ա. Եղիազարյանի հարցը, հրավիրված էր նաեւ գործին առնչվող շարքային բանվոր Վահան Գասպարյանը: Վերջինս իր ելույթում, հակառակ նախօրոք նրան հրահանգված կեղծ ցուցմունքի, փաստորեն պաշտպանեց Եղիազարյանին, ինչը կատաղեցրեց Կեւորկովին: Եվ, որպէսզի ապացուցի բանվորի անագնիվ լինելը, քարտուղարը հանկարծ գոռաց. «Արա, ա հեյվան բանվոր, էդ իրնչա բերանումդ, մի բերանդ լայն բաց արա»: Վահանը թեթեւակի բացեց, իսկ նա, թե՛ էլի: Ապա Կեւորկովը մարզկոմի կուսակցական կազմակերպական աշխատանքի բաժնի վարիչ Գր. Ծատրյանին ստիպեց հաշվել բանվորի «ոսկե ատամները»: Նա հաշվեց եւ զեկուցեց տիրակալին՝ ութ: Եվ գիտեք, թե ինչի համար սարքվեց այդ տեսարանը, որպէսզի «ապացուցվի», որ ազնիվ մարդը չի կարող ունենալ ոսկե ատամներ՝ մի պահ մոռանալով, որ իր եւ մարզկոմի բյուրոյի անդամների մեծ մասի ատամները գրեթե ամբողջովին ոսկի էին:

Օրերից մի օր Կեւորկովը իր մոտ է կանչում Ջամիլու գյուղի անասնապահ Սարգիս քեռուն, որը շրջանային ոստիկանությանը հայտնել էր աղբրեջանցի անասնագողերի գաղտնի ճանապարհի տեղը:

- Սարգիս, այդ մասին էլ ոչ ոքի չասես, թե չէ գլուխդ ուսերիդ վրա չի մնա: Այդ թուրք գողերի հետեւին մեծամեծ մարդիկ են կանգնած: Գողացած ավարի մի մասն էլ գնում-մտնում է նրանց գրպանը:

Ի դեպ, Կեւորկովի օրոք ամեն տարի ԼՂԻՄ-ում գողացվում էր ավելի քան 10 հազար անասուն, կամ մոտ 2 հազար տոննա միս: Դա ար-

դեն Կեւորկովի իրավասությունից դուրս էր եւ այդ մասին ոչ միայն չէր խոսում, այլեւ խնամքով թաքցնում էր:

Սրիկայության կլասիկ դրսեւորում էր գրող Լեոնիդ Զուրունցին տարազնելու Կեւորկովի խուլիգանական արարքը: Արցախում կատարվող ահօրինականությունների մասին անվանի գրողը անձնական կամակ էր գրել Բաքվում գտնվող իր անդամալույծ գրչակից ընկերոջը՝ Սուրեն Գասպարովին: Կեւորկովի ղեկները իմանում են մամակի մասին եւ սայլակում գամված գրողից թոցնում, բերում եւ հանձնում Կեւորկովին: Զուրունցին հրավիրում են մարզկոմ: Միաժամանակ նշված ժամին հրավիրում են նաեւ բյուրոյի անդամներին, մարզկոմի բաժնի վարիչներին եւ այլ պաշտոնյաների: Երբ բոլորը հավաքվում եւ զրաղեցնում էին իրենց մշտական տեղերը, ներս է հրավիրվում նաեւ Լեոնիդ Զուրունցը: «Որպես մեղապարտի Կեւորկովը նրան ցույց տվեց իր դիմացի ազատ աթոռը,- հիշում է ակամատեսներից Լեւոն Սկրտչյանը (կուսմարզկոմի ազիտացիայի եւ պրոպագանդայի այն ժամանակվա բաժնի վարիչը): Ներկայերը տեղյակ չէին հավաքի բուն նպատակի մասին: Կեւորկովը սկսեց կարդալ գրողի նամակը, որտեղ կետ առ կետ մերկացված էին Կեւորկովի հակահայկական արարքները, նրա ազգադավ գործունեությունը, Արցախի աղբրեջանականացման խարդախ քաղաքականությունը: Նշված էր նաեւ այն, որ Կեւորկովը գործիք է Զեյդար Ալիեւի ձեռքին, որի միջոցով փորձում են խեղդել Արցախը, քամել նրա տնտեսական հարստությունը եւ երկրամասից դուրս մղել նրա արմատական հայկական բնակչությանը: Փաստերով նշվում էր, որ քայքայվում են հայկական գյուղերը, փակվում հայկական դպրոցները, իսկ փոխարենը սնկի պես աճում ու շատանում էր աղբրեջանցի բնակչության քանակը: Կեւորկովը առանց բյուրոյականների կարծիքը հարցնելու՝ հարձակվեց Զուրունցի վրա եւ վայրենաբարո արտաբերեց. «Դու խոզ ես, ինչպես խոզն է դուռնը խրում աղբի մեջ, նույնն էլ դու ես անում... Դե վեր կաց ու դուրս կորիր այստեղից: Այլեւս ուտք չդնես Դարաբաղ»:

Աղբրեջանի բռնապետության տարիներին Բաքուն պարտադրում էր ԼՂ-ի իշխանություններին, որ հայկական գյուղական երիտասարդներից աշխատանքի հավաքագրեն եւ ուղարկեն աղբրեջանական քաղաքներ՝ մշտական բնակվելու ու բանվորություն անելու: Դարաբաղի հայաթափման այդ հանցավոր երեւույթի դեմ հանդես գալու, ինչպես նաեւ հայկական Բաղաբա գյուղի մոտերքում, անտառտնտեսության

արդեն լքված արտադրամասում անօրինական կերպով բնակություն հաստատած աղբբեջանցիների (որոնց հիմնական զբաղմունքը անասնազոոությունն ու անտառներն առուծախի վերածելն էր) վերաբնակեցնելու հարցը առաջ քաշելու համար աշխատանքից եւ կուսակցությունից հանեցին շրջգործկոմի նախագահ Սերգեյ Բարսեղյանին:

Երբ այդ մասին կուսըջկոմի առաջին քարտուղար Վ. Գրիգորյանը տեղեկացրել է Ադր. ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Բազիրովին, վերջինս զայրացած ուղղակի ասել է.

- Ձեր ի՞նչ գործն է, թե շրջանում ինչով են զբաղվում աղբբեջանցիները:

- Դե եթե շրջկոմի քարտուղարը չպետք է իմանա, թե շրջանում ինչով են զբաղվում մարդիկ, այս պարագայում ես այլեւս ասելիք չունեմ *(մանր. տես Կոմիտաս Դանիելյան, Արցախը չսանձած նժույգ, եր., 2001թ.)*:

Ավելի դաժան վարվեցին մշակույթի մարզային վարչության պետ Ժան Անդրյանի հետ: Անբասիր աշխատանքի, ԼՂԻՄ-ի մշակույթի վերելքի, Հայաստանի հետ մշակութային կապերի աշխուժացման համար նրան անսպասելի ազատեցին աշխատանքից: Իսկ որոշ ժամանակ անց՝ նաեւ կուսակցությունից եւ հարկադրեցին. որ բարեկիրք մարդը, հայրենասեր մասնագետը թողնի հայրենի Ղարաբաղը եւ տեղափոխվի Երեւան:

Լեւոն Աղամյանն աշխատելով կուսակցության մարզկոմում, իսկ այնուհետեւ մարզսպառմիությունում՝ բազմիցս համարձակվել է արտահայտել իր կարծիքն այս կամ այն հարցի առնչությամբ: Դա, բնականաբար, դուր չէր եկել Բաքվի էմիսարին՝ կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեւորկովին: Մանավանդ, որ վերջինս տարված էր դեֆիցիտ ապրանքները ուղղակի պահեստից բաժանելու մոլուցքով: Կեղծ մեղադրանքներով Լ. Աղամյանին ձերբակալեցին, բնակարանը խուզարկելիս պատահոտեցին անկողինները, ջարդեցին կահույքը: Ի վերջո Կեւորկովի կարգադրությամբ դատական վճիռ կայացրին՝ անմեղ մարդուն 11 տարվա ազատազրկում՝ գույքի բռնագրավումով: Սակայն վերադաս ատյանները միջամտեցին եւ չեղյալ հայտարարեցին այդ սխալ, կամայական, պարտադրված վճիռը: Թեեւ սովետական օրենքներով Աղամյանին վճարեցին հարկադրական գործալիքի՝ 18 ամսվա դիմաց, բայց պետության գրպանից, այլ ոչ թե՛ կոնկրետ մեղավորների:

Սանձարձակության մի տիպիկ օրինակ է կուսակցության Մարտա-

վա ԽՄԿԿ Կենտկոմին: «Անաչառ» ստուգողներին ոչ թե հետաքրքրել էր նամակում արժարժված հարցերի ճշտությունը, այլ թե ովքեր են «գործում Աղբբեջանի կուսկազմակերպության թիկունքում»:

Որ անստորագիր նամակի հեղինակները վախենալու (իրենց անուն-ազգանունը թաքցնելու) համար հիմքեր ունեին վկայում է հետեւյալ հանրահայտ փաստը: 1965 թվականին Լեւոնյան Ղարաբաղի մի խումբ կոմունիստներ ծավալուն նամակ են ուղարկել ԽՄԿԿ Կենտկոմին՝ ինքնավար մարզի վիճակի մասին: Նամակը ինքնըստինքյան վկայում էր ղարաբաղցիների բարոյական բարձր գաղափարայնության, հասարակական ու հայրենասիրական պարտքի ճիշտ ըմբռման, հայրենի երկրամասի նկատմամբ պատասխանատվության վեհ զգացմունքների մասին: Նրանք երկրի տիրոջ իրավունքով պահանջում էին արդարացի լուծել Ղարաբաղի պրոբլեմը, կարգի հրավիրել կապը կտրած ղեկավարներին, անհաշտ պայքար մղել բոլոր այն բացասական երեւույթների, չարամիտ հալածանքի, բռնության եւ սոցիալ-տնտեսական սաբոտաժի դեմ, որոնք խանգարում, արգելակում էին մարզի արտադրողական ուժերի, ազգային հաստատությունների զարգացումը, թունավորում սովետական ազնիվ քաղաքացիների հանգիստ, խաղաղ, ստեղծագործ կյանքը: Նամակը ստորագրողները նշել էին նաեւ իրենց պաշտոնը, կուսակցական ստաժը:

Այս նամակի հեղինակների նկատմամբ դատ ու դատաստանը պակաս դաժան չէր, քան վերը նշվածներինը: «Հանրապետության կուսկազմակերպության թիկունքում գործողների» պիտակով աշխատանքից հեռացվեցին Ստեփանակերտի քաղսովետի եռանդաշատ նախագահ Ս.Շաքարյանը, «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթի ամենահոյակալ խմբագիր Լ. Գասպարյանը, ԼՂ Գրողների մարզային մասնաճյուղի քարտուղար Բ. Ուլուբաբյանը, մարզային ռադիոյի գլխավոր խմբագիր Գ. Ստեփանյանը, իսկ կուսակցության մարզկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչ, տաղանդավոր գիտնական, ջերմ հայրենասեր Ս. Ալլանյանին պատժեցին այն բանի համար, որ նա ակտիվորեն մասնակցել է ստորագրությունների հավաքմանը եւ անվերապահորեն պաշտ-պանել վերոհիշյալ ընկերներին: Նրանք բոլորն էլ Մեծ հայրենականի մասնակիցներ էին: Մեկը ոտքն էր թողել ռուսական տափաստաններում, մյուսը՝ ձեռքի մի մասը, երրորդի արյան կեսն էր թափվել Բեռլինի մատույցներում: Սակայն դա էլ անտեսվեց: Եվ ո՞վ պիտի պատասխան տար, նրանց ճակատագրով զբաղվողները պա-

տերազմին այս կամ այն պատրվակով չմասնակցած «դատավորներ» էին:

Չխնայեցին նաև Հայրենականի երկրորդ կարգի հաշմանդամ Պ. Ադամյանին՝ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի դիրեկտորին, Բուդապեշտի համար մղված մարտերի ժամանակ ստացած կուսակցական տոմսը նրա ձեռքից խլեցին եւ, անվստահության մեջ մեղադրելով, Ղարաբաղից վտարեցին: Չհարգեցին անգամ Սովետական Միության հերոս Ա. Գասպարյանին: Քննադատական մի ելույթի համար նրան մեկուսացրին, ելույթներ ունենալու հնարավորություններից լրիվ զրկեցին: Անմիջապես բանակից զորացրել տվին եւ Ղարաբաղից բռնեցին Ստեփանակերտի զորամասի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, փոխգնդապետ Բ. Տերենտեւին, Հաղբուքի սահմանապահ զորամասի հրամանատար, գնդապետ Ի. Իվանովին, այն բանի համար, որ նրանք մարզային ակտիվում ունեցած իրենց ելույթներում դատապարտել էին Ղարաբաղի նկատմամբ կիրառվող հալածանքը, տնտեսական տեռորը:

Աշխատանքից եւ Ղարաբաղից հեռացրին նաև Արցախական հայաշխարհի տաղանդավոր բանաստեղծ, ջերմ հայրենասեր Բոգդան Ջանյանին: Հաղթական պատերազմից վերադառնալուց հետո նա դեկավրել էր ԼՂԻՄ-ի գրողների բաժանմունքը: Հայրենասիրական բանաստեղծություններ հրապարակելու եւ Ավետիք Իսահակյանին ի պաշտոնե Ղարաբաղում ուղեկցելու համար, Ադր. ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Բագիրովի անմիջական կարգադրությամբ Բ. Ջանյանին բանտարկեցին, եւ միայն ԽՄԿԿ 20-րդ համագումարի նախօրյակին բանտից ազատեցին:

Թեեւ կար Ադր. ԽՍՀ գրողների միության որոշումը՝ նրան վերականգնելու իր նախկին պաշտոնում, սակայն տեղացի երկու պալատական գրողների չարակամության պատճառով նա չվերականգնվեց: Հարկադրված աշխատանքի անցավ «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթում: Այստեղ էլ ազնվագույն բանաստեղծը շարունակեց հավատարիմ մնալ իր կոչմանը հրապարակել հայրենասիրական, շաղաթաթախ բանաստեղծություններ, ակնարկներ եւ անմիջականորեն մասնակցել հայկական երկրամասում հասարակական, ազատագրական նոր մտքի ձեւավորմանը, հանգամանորեն աջակցել երիտասարդ բանաստեղծների կայացման գործընթացին:

Մարզային ակտիվի նիստում Ադր. ԽՍՀ Միմիստրների խորհրդի

նախագահ Ալիխանովի՝ «հայկական նացիոնալիզմի» դեմ արշավ ձեռնարկելու կոչերով ելույթի դեմ հանդես եկած հին կոմունիստ, ժեռունագարդ Ջահանգիրովին անգամ ապրելու իրավունքից զրկեցին: Ալիխանովը չկարողացավ հանգիստ լսել բազմամյա մանկավարժի հետեւյալ խոստովանությունը. «70 տարուց ավել է, ինչ ես ապրում եմ հայերի մեջ: Ես երզվում եմ իմ ճերմակած մորուքով՝ չեմ նկատել, չեմ տեսել հայկական նացիոնալիզմի ոչ մի դրսեւորում: Հայերը խաղաղ, մարդասեր, ինտերնացիոնալ, աշխատասեր ժողովուրդ են: Իզուր եք նրանց սեւացնելու փորձեր անում»: 300 մարդու ներկայությամբ Ալիխանովը գոռալով ընդհատեց ծերունուն. «Սաւըն քյաս, քյավթառ: Դու դաշնակների կողմից կաշառված ես»: Այս վիրավորանքը կուլ տալ չկարողացավ պայծառ ծերունին: Մի քանի օր հետո ստեփանակերտցիները հրաժեշտ տվին Ղարաբաղի եւ աղբբեջանական ժողովրդի ազնիվ զավակին:

Ալիխանովի ճառն, ամբողջությամբ վերցրած, տոգորված էր հայ ժողովրդի, մասնավորապես նրա ղարաբաղյան հատվածի նկատմամբ թշնամական հարծակումներով եւ ահաբեկչությամբ: Եվ դա՛ հատկապես 1967 թ. հուլիսյան արդարացի դատաստանից անմիջապես հետո: Բաքուն շտապում էր մոռացության տալ արյունահեղ ողբերգությունը, ձեւացնելով, թե դա եղել էր առանձին մարդկանց կողմից հրահրված անկարգությունների հետեւանք, թե դրանք չէին լինի, եթե Ղարաբաղից դուրս բռնեին հայրենասեր հայերին: Նրանց այդ մաներները ոչ միայն արատավոր էին եւ իրականության աղճատում, այլեւ խորամանկ ու նենգ էին: Բաքուն դրանով փորձում էր ժխտել Ղարաբաղի հայության արդարացի դժգոհությունները, Մայր Հայաստանին միավորվելու Ղարաբաղի իրավունքը եւ այդ հարցի արմատական լուծումը կապում էր Աղբբեջանի կազմում մարզին օգնելու, կամ, ինչպես իրենք էին ասում, «ծաղկեցնելու» հեղթական սուտ խոստումներին հետ:

6. ՂԱՐԱԲԱՂԻ ՎՐԱ ԲԵՐՎԱԾ ԲԱԲՎԵՑԻ ԹԼ ՊԱՏԱԾ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՈՎ «ՏՂԱՆԵՐԸ»

Այս առումով հատկանշական է 1973 թ. կուսմարզկոմի առաջին քարտուղար Նշանակված Բորիս Կետրկովը: Նա ղարաբաղցիների բոլորովին անհայտ, հայերեն տառերը չիմացող, տեղական առանձ-

նահատկություններին անծանոթ, բայց շատ հավակնոտ ու լկտի անձնավորություն էր: Շուտով պարզվեց, որ նրա համար ամենակարեւորը «գետնապոյական մեթոդներով» վախի սարսափով տպավորություն ստեղծելն էր. կատաղի հայատյացությունը եւ աղբբեջանցիներին քծնելու, հովանավորելու անսքող գործելակերպը: Հենց առաջին օրերին նա հայտարարեց իր բոլոր ենթակայներին, որ աշխատանքային օրն ավարտելուց հետո ոչ ոք իրավունք չունի տուն գնալ, քանի դեռ ինքը աշխատանքային է: Իսկ ինքը ընտանիքը Բաքվից չէր բերել եւ գնալու տեղ չուներ: Շրջաններ մեկնելիս նրան պարտադիր կարգով պետք է ուղեկցեին ներքին գործերի մարզային վարչության պետը, ՊԱԿ-ի նախագահը եւ այդ շքախումբը լրացնող այլ ստորաբաժնի անձինք: Իսկ ճաշկերույթը, իր ճաշակի երաժշտության, խրախճանքի կազմակերպողները Կեւորկովի անձը մեծարող պնակալեզներն էին:

Կուսմարզկոմի այդ բիճ առաջին քարտուղարը դեռ աթոռին չվարժված հասցրել էր երկրամասում լայնամասշտաբ սանձարձակություններ կատարելու համար տիրանալ բոլոր սանձերին եւ, ահաբեկչական մեթոդներով իրեն վերապահված պաշտոնական իրավունքների սահմանները հղմթացս խախտելով ու ապա փքված ու տոգած դեմքով, մատ թափահարել տեղական արմատական բնակչության՝ հայերի վրա:

Բաքվի այդ դրածոն, ուտ ու ձեռ ընկած, ամենուրեք հայտարարում էր, որ ԼՂԻՄ-ը ծայրահեղականներով ու ազգայնամուլներով լցված է, եւ ինքը, Ադր. ԿԿ Կենտկոմի, անծամբ իր հոգեհայր Հ. Ալիեւի «սաղոմազոխիստական» դրույթները անթերի կատարելու համար, պետք է քարը քարի վրա չթողնի «Ղարաբաղը հավերժ Ադրբեջանի կազմում պահելու համար»: Փաստորեն, Կեւորկովի եւ նրա հետ Բաքվից բերված շայկայի գործողությունները ԼՂԻՄ-ում արտահայտվում էին նրանով, որ այդ անօրեն մարդիկ եկել էին ոչ թե ազնիվ ու արդարամիտ աշխատելու, այլ հայատյացների վայրագությունների ծրագրերը իրականացնելու եւ տեղական կադրային ողջ ռեսուրսները ոչնչացնելու: Ուղղակի ասենք՝ նրանք գործում էին «մեզնից հետո ջրիեղել» սկզբունքով: Շատ շուտով պարզվեց, որ Գ. Մելքունյանի փոխարեն Հ. Ալիեւը Ղարաբաղի վրա «տղաներ» էր բերել, որպեսզի երկրամասի ներքաղաքական մթնոլորտը ապակայունացնեն, ասել կուզի՝ ջուրը պղտորեն, որպեսզի հեշտությամբ պղտոր ջրում ձուկ որսան:

- Կուսակցության մարզկոմի քարտուղարներից տեղացի միայն ես

կրտի շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանի նկատմամբ կատարված խեղկատակությունը: Ուժերի ծաղկման շրջանում, պլուրատնտեսական եւ կուսակցական բարձրագույն բուհերը գերազանցիկության դիպլոմներով ավարտած, կազմակերպչական առումով իրեն հոյակապ դրսևորած երիտասարդ հայրենասեր մարդուն ուշխատանքից ազատեցին եւ ապա նրան վերագրեցին հորինված տուտ ու փուտ բազում մեղքեր, միայն ու միայն այն բանի համար, որ Գաբրիելյանը չի կարողացել տալ Կեւորկովի դրածո, ԼՂ-ի մարզգործկոմի նախագահ Ա. Ասլանովի պահանջած «շրջկոմի առաջին քարտուղար վերընտրվելու համար Ադրբեջանում ընդունված» 100 հազար ռուբլի կաշառքը:

Ձարմանալի ազգային խտրական բացահայտ քաղաքականություն էր վարել մեր այս Բորիս Կեւորկովը: Այսպես, ինչպես վկայում է Լ.Մկրտչյանը, իր մոտ ընդունելության եկած 25-30 հայերից ընդունել էր միայն մեկին, լավագույն դեպքում երկուսին, իսկ մնացածին ուղարկել ավելի ցածր կարգավիճակով պաշտոնյաների մոտ: Ադրբեջանցիների նկատմամբ բոլորովին այլ մոտեցում էր ցուցաբերվել: Գործնականորեն մեծ սիրով Կեւորկովը ընդունել էր բոլորին, ուշադիր լսել եւ բավարարել նրանց պահանջները:

Շարունակենք դիտարկել մեկ այլ բնագավառ: Մարզկոմի առաջին քարտուղարի հասցեով հայերի գրած դիմումների վրա նա մակագրել էր այսինչյանին, ստորագրություն եւ անսաթիվ: Այսինքն ինչ ուզում եք, արեք... Իսկ ադրբեջանցիների դիմումների վրա հստակ տառերով մակագրել էր՝ այսինչյանին, «խնդրում եմ բավարարել խնդրանքը եւ լնծ տեղյակ պահել»:

Ըստ Բորիս Կեւորկովի, ինտերնացիոնալիզմ նշանակում էր կատարել ադրբեջանցիների պահանջները, տալ լայն արտոնություններ եւ բոլոր հարցերում զիջել նրանց: Ահա թե ինչու Ստեփանակերտում հայերը բնակարան ստանալու համար հերթերով սպասում էին 20-25, իսկ ադրբեջանցիները՝ 1-2 տարի:

Ահա թե Բաքվում ինտերնացիոնալիզմի մասին ինչպիսի դասեր էր սերտել Բ. Կեւորկովը եւ, սեփական պատկերացումներով, դրանք փորձարկել Լեռնային Ղարաբաղում: Սա չափազանց բնութագրական է: Չէ՞ որ հայկական Ղարաբաղը պետք էր ինչ-որ կերպ վերահսկողության տակ պահել եւ բարոյալքել հենց ներսից, այն էլ՝ հայի միջոցով: Այդ պատճառով էլ Բաքուն եւ նրա տեղական դրածոները առանձնա-

կի հոգատարություն էին դրսևորել ամեն կարգի ստուկաչնների, դանուսչիկների եւ ՊԱԿ-ի գաղտնի գործակալների համոզեալ: Դրա համար էլ ԼՂԻՄ-ի ստուկաչնների քանակը Կեւորկովի օրոք թթխմորի պես աճել եւ բարգաւաճել էր:

Բաքվից Ղարաբաղ ուղարկված մյուս բարձրաստիճան ղեկավարը՝ Կեւորկովի հզոր աջակիցը, մարզգործկոմի նախագահ Ա. Ասլանովն էր, ինչպէս ղարաբաղցին կասեր՝ իսկ եւ իսկ օլոխ: Կովն ու եզը, արտն ու շաղգամն իրարից չտարբերողը իր անբանությամբ ապացուցել էր, որ կառավարական բարձր պարգեւներ ստանալու համար պարտադիր չէ աշխատել եւ ազնիվ լինել, 13 տարվա ընթացքում թեկուզ մեկ անգամ լինել մարզի հինգ շրջաններից մեկում Զաղրուբում: Էլ չենք խոսում գյուղերի մասին: Բաքվի կուսակցական դպրոցի կադրերի վերապատրաստման դասընթացների նախկին վարիչն իր քաղաքական, տեսական «հարուստ» գիտելիքները սկսեց օգտագործել Արցախի գեղատեսիլ վայրերում գտնվող ռեստորաններում, առեստրական կազմակերպությունների պահեստներում՝ արտասահմանյան ղեֆիցիտ ապրանքների (Կեւորկովի հետ միասին) բաշխման ցուցակների կազմման վրա:

Միաժամանակ, նա պարտաճանաչորեն կատարում էր Կեւորկովի առանձնահատուկ հանձնարարությունները, կուսւշրջկոմներից, շրջգործկոմներից, առեստրական օբյեկտներից, խոշոր ձեռնարկությունների եւ տնտեսությունների տնօրեններից, դատաքննչական մարմիններից պաշտոնների համար Աղբբեջանում սահմանված տարիֆով 25-ից մինչեւ 100 հազար ռուբլի հավաքելու հարկահավաքի պարտակաւնությունը:

Ինչ վերաբերում է Աղբ. ԽՍՀ ՊԱԿ-ի մարզային վարչության պետ Ն. Դուբրովին եւ, կուսմարզկոմի երկրորդ քարտուղար Կեւորկովի բառերով, «փոքսանջի» Վ. Բոգոսլավսկուն, ապա նրանց համար փարթամորեն բողբոջող ալիեյան նորագոյացումների պայմաններում ամեն հայկականն ու հայաստանյանը Ղարաբաղում համարվում էր ազգայնամոլություն, իսկ ամեն ղարաբաղյանը՝ ծայրահեղականություն: Դրա համար էլ աղբբեջանցիներին, անձամբ Ալիեւին դուր գալու համար պետք է ամեն կերպ աջակցեին Կեւորկովին, թշնամիներ պիտի կաղապարեին եւ լուրջ կազմակերպական հետեւություններ անեին:

Արդարության առաջ մեղանչած չլինելու համար, չենք կարող չանդրադառնալ մարզի մյուս հինգ շրջաններից մեկի՝ Շուշիի կուսւշրջ-

կոմի առաջին քարտուղար Ասլանովին: Բաքվից հատուկ նպատակով գործուղված այդ «ռոմանտիկ» արձակագիրը, էն գլխից ազատագրված լինելով տնտեսական պլաններ կատարելու հոգսերից, իր եւ Բաքվի ուշադրությունն անմիջապէս ուղղեց Լեռնային Ղարաբաղի մի հատվածում պատմության հետքերը հողի երեսից ջնջելու՝ հայկական հուշարձանները կործանելու, մեռածների ոսկորներին հանգիստ չտալու, Շուշիի ռեակցիոն խաների եւ նրանց գաղափարակիցների հիշատակը հավերժացնելու արկածախնդրությամբ: Ի դեպ, վանդալիստական այդ պլանները նա նախօրոք «տեսականորեն հիմնավորել էր» իր խմբագրած «Ռւլոզ» երիտասարդական ամսագրում տպագրած բազմաթիվ հոդվածներում: Վերադասի ուշադրությանն արժանացած հոդվածագիրը, ամեն տեսակի աջակցություն ստանալով, անձամբ՝ հեղինակային իրավունքով, կուսւշրջկոմի քարտուղարի կերպարանքով հսկում եւ ղեկավարում էր իր իսկ մշակած պլանները կյանքի կոչելու գործը: Եվ ահա 10 տարվա ընդմիջումից հետո Շուշիի սարահարթում նորից երեւացին հզոր բուլդոզերները: Գիշեր-ցերեկ, տասնյակ հազարավոր մարդկանց այքի առաջ, տակն ու վրա արվեցին հայկական հին գերեզմանոցները, կիսավեր շինությունները, եկեղեցիները, վիմագրությունները, բարձրաքանակներ պարունակող մահարձանները: Ջարդ ու փշուր արին եւ բետոնե շաղախի մեջ թաղեցին տասնյակ խաչքարեր, ժողովրդական արվեստի հիանալի արժեքներ:

Դրա հետ մեկտեղ, Շուշիում մի առանձին ջանադրությամբ ձեռնարկեցին մզկիթների վերանորոգման, հին շէնքերի կամարածեւ հարդարանքները սլաքածեւ դարձնելու ձեւափոխությունների, խոշոր չափերի նոր դամբարանի կառուցման, աղբբեջանական կուլտուրայի գործիչների արձաններով զբոսայգու հիմնադրման աշխատանքները:

Ահա թե ինչու Ղարաբաղը հյուժող այդ մշտափուլով պրովոկացիոն արշավանքների զոն դարձան հարյուրավոր ազնիվ, աշխատասեր, հայրենակներ մարդիկ: Դիչենք նրանցից մի քանիսին եւս՝ կուսակցության Ստեփանակերտի քարտուղար Ա. Գասպարյանին, գյուղատնտեսության մարզային վարչության պետ Վ. Լազարյանին, կուլտուրայի մարզային վարչության պետ Շ. Աբրահամյանին, կուսմարզկոմի իրահանգիչներ Ս. Գրիգորյանին, Ա. Առաքելյանին, «խորհրդային Ղարաբաղ» թերթի պատասխանատու քարտուղար Լ. Գասպարյանին, Մարտակերտի կուսւշրջկոմի քարտուղար Ս. Նանանգուլյանին, Զաղրուբի կուսւշրջկոմի առաջին քարտուղար Վ. Գրիգորյանին, Ստեփանակերտի

գինու գործարանի տնօրեն Յու. Զահանգիրյանին, կուսմարզկոմի բաժնի վարիչ Ռ. Բալայանին, մարզային ռադիոկոմիտեի նախագահներ Գր. Սողոմոնյանին, Ա. Դանիելյանին, բժշկական տեխնիկոմի տնօրեն Էդ. Ղարհամանյանին եւ ուրիշ շատ շատերին՝

1988 թ. փետրվարի 27-ին ադրբեջանական Ադդամ շրջկենտրոնի մոտակայքում, թուրք-ազերի ահաբեկիչները հարձակվել են Հադրուքի շրջանի Մեծ Թաղերի պետտնտեսության՝ Ստեփանակերտ խոշոր եղջերավոր անասուններ մսամթերման տանող ավտովարորդ Ռաֆիկ Ալթունյանի «ԳԱԶ-53», 81-06 ԱԳՅԱ համարանիշի ավտոմեքենայի վրա, քարկոծելով ջարդել առաջամասի ապակին, հարկադրել կանգնեցնելու ավտոն, բարձրացել շարժիչի ծածկոցի ու ոտնակի վրա, դանակի ծանր հարված հասցրել վարորդին, ուշագնացության աստիճան ծծել գոտեխնիկ Անդրանիկ Մելքունյանին, քշել-տարել անասունները, ապա շրջել ավտոն ու վառել... Եվ բեռնատարի կմախքը առ այսօր էլ պահվում է որպես Հեյդար Ալիևի «ազգային կտրիճների» բարբարոսության ու անպատվության ցուցանմուշ (տեղեկությունը քաղել ենք *Խ. Բաղդասարյանի հուշագրությունից, Ստեփ., 2003, էջ 30*):

Նման դեպքերն այնքան շատ ու բազմազան են, որ դրանց հիշատակումն ավելորդ ենք համարում: Մի բան սակայն պարզից էլ պարզ է. Ադրբեջանի տիրապետության տակ հայկական երկրամասում տասնյակ տարիներ շարունակ տիրել էր վայրագություն, անմարդկային վերաբերմունք, ահաբեկչություն, քաղաքական ցեղասպանություն: Այս պայմաններում ոչ քիչ թվով մարդիկ, նույնիսկ ազնիվ մարդիկ, գոյատևածն համար հարկադրված երբեմն կատարում էին ստորություններ՝ պաշտպանելով հանցագործներին, տակալներին եւ քաղաքական շառչատաններին: Սա ցավալի փաստ է, որը երբեք չի կարելի մոռանալ եւ, թեկուզ ետին թվով, պետք է անհապաղ դատապարտել:

Այսպես կարող են երկար շարունակել: Ահա մի չնչին մասն այն բուրդի, որ ես հանձնում եմ ընթերցողների դատին: Սրանք կարող են մանրուքներ թվալ: Բայց հենց այդպես՝ կաթիլ առ կաթիլ՝ կուտակվում էր ցեղասպանությունը՝ «Ղարաբաղը առանց հայերի» տխրահռչակ

* Լեռնային Ղարաբաղում Բ.Կետրկովի կատարած վայրագությունների մանրամասնությունները տես Լ.Աղամյանի «Տիրակալի Կարմրագորշ տարիները» ծավալուն հոդվածը, որը տպագրված է «Մոսկովային Ղարաբաղ» թերթի 1990թ. դեկտեմբերի 7, 8, և 9-ի համարներում: Ի դեպ, ցշված հոդվածից եւ ՍՄԿԿ կենտկոմին (21.11.1987 թ.) գրած նրա նամակից օգտվել ենք:

քաղաքականության իրականացումը: Այս երեւոյթը, կրկնում ենք՝ սկսվել է 1920 թվականից եւ, ժամանակ առ ժամանակ մեթոդները փոխելով, շարունակվել մինչեւ Ղարաբաղյան հզոր շարժման հաղթական ավարտը:

Քանզի հայկական մարզում ոչ ոք պաշտպանված չէր, իրավական, քաղաքական եւ բարոյական դաշտում գործելու հնարավորություն ընդհանրապես չկար, դարաբաղցիներն իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելու համար դատաքննչական մարմիններին գրեթե չէին դիմում, որովհետեւ հազար անգամ հանդուժել էին, որ Ադրբեջանում ոչ թե օրենքն էր անցնում, այլ բանավոր խոսքը, վերելից թելադրված բանավոր ցուցմունքները: Տվյալ պարագայում ի՞նչ կապ ուներ, թե սովետական օրենքներում, Սահմանադրությունում ինչ էր գրված: Երբ հարցը, հարցերը լուծվում էին հեռախոսազանգերով, բանավոր կարգադրություններով: Այս դեպքում ինչ իմաստ ուներ հարցադրելու՝ օրենսգիրքը լավ էր, թերի էր, վատ էր: Ո՞ւմ էր պետք դա: Երբ ԼՂԻՄ-ի դատախազը՝ Խ. Սամվելովը մի առանձին հպարտությամբ հայտարարում էր.

- Ես մի կողմից եմ միայն ճանաչում: Իմ կողմից Բ. Կետրկովն է: Նա ասում է «սեւ է», ուրեմն սեւ է, ասում է «սպիտակ է», ուրեմն սպիտակ է: Ում ասում է բանտարկիր, բանտարկում եմ, ում՝ ազատիր, ազատում եմ: Եվ այսպես, բանավոր խոսքով հանցագործներին արդարացնում էին, անմեղ մարդկանց բանտ նստեցնում, շատ դեպքերում էլ հանցագործությունների հետքերը թաքցնելու համար, սպանում:

Ահա թե ինչու, ինչպես գրել է ԽՄԳՄ ներքին գործերի նախարարության օբպրատիվ քննչական խմբի շտաբի պետ, փոխգնդապետ Վիկտոր Կրիվոպուսկովը, «Преступления, совершенные азербайджанцами на территории НКЮ, были как правило, безымянными и никогда не раскрываемыми, а многие даже не регистрировались» (В.Кривоуусков, *Мятежный Карабах...*, Ростов-на -Дону, 2003, стр.17-18): Ադրբեջանը բանավոր խոսքի, ստի եւ կեղծիքի հանրապետություն է, հին խանական ռեժիմներին բնորոշ բարքերով, այլանդակություններով ու կամայականություններով:

Մինչդեռ Ադրբեջանի իշխանությունները եւ նրանց գաղափարախոսները կաշվից դուրս են գալիս, որպեսզի թյուրիմացության մեջ գցեն հանրային կարծիքը եւ փորձում են հայերի նկատմամբ կատար-

ված չարագործությունները ներկայացնել որպես բարեգործություն: Սակայն սուտն ու կեղծիքը, փաստերի նենգափոխումը, պատմական ճշմարտության աղավաղումները միշտ էլ եղել ու մնում են Ադրբեջանի պետական այրերի, դիվանագետների, մտավորականների եւ, մասնավորապես, գիտնականների զբաղմունքը: Ահա թե ինչու «թուրք դառնամ, թե սուտ եմ ասում» շեքսպիրյան դարձվածքը դարձել է արցախահայության հաճախակի կրկնվող ասացվածքներից մեկը: Քանզի սուտը, կեղծիքը եւ խաբեությունը, Հյուզույի բառերով, «չարիքի մարմնացումն է»:

Քանի դեռ Ղարաբաղի հիմնախնդիրը քաղաքական առումով չի լուծվել, հալածանքի, հայ բնակչության բռնի տեղահանման վտանգը չի վերանա:

Երբեք չհավատաք, թե Ադրբեջանում կգտնվի մի ղեկավար, թեկուզ ցուցադրության համար, որ ուզե՞նա փոխել հայերի դրությունը: Տակավին 20-ական թվականներին եւ հետագա ժամանակներում հայ մարքսիստները այս հարցում միամիտ գտնվեցին, որի տխուր հետեւանքը համառոտակի ներկայացված է սույն աշխատությունում:

ԳԼՈՒԽ IV

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՅԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ

Դեռեւս XX դ. 20-30-ական թթ. Ղարաբաղի անտառներում եւ կից ադրբեջանական շրջաններում ազատորեն վխտում էին Ադրբեջանում վարժված ահաբեկչական առաջին ջոկատները, հայտնի ահաբեկիչ Մ. Բագիրովի հրամանատարությամբ, որը երկար տարիներ ղեկավարել է Ադրբեջանի կոմկուսը: Ռուսական-սովետական զինվորների աջակցությամբ տարիներ շարունակ (1920-1938 թթ.) նրանք Արցախում եւ «Կարմիր Քրոստանում» որսում էին հայ եւ քուրդ «թշնամիներին», այսինքն բոլոր նրանց, ովքեր չէին կամենում ապրել Ադրբեջանի լծի տակ եւ ըմբոստանում էին կամայականությունների ու անօրինակա-նությունների դեմ:

Անցյալ դարի 60-ական թթ. սկզբից ԼՂԻՄ-ում եւ հարակից շրջաններում ազատորեն գործում էին հատուկ պատրաստված, այսպես կոչված, ադրբեջանական «գողական» կազմավորումներ: Ի դեպ, դրանց աշխուժացումը կապված էր Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ում Հեյդար Ալիևի առանձնահատուկ ղեռակատարության հետ: Ըստ որում, բանդիտական այդ կազմավորումները գործում էին սկզբում տարանջատ, բայց Ալիևի ՊԱԿ-ի նախագահի տեղակալ, մանավանդ նախագահ աշխատած տարիներին հանդես էին գալիս իբր «օրենքով գողեր» կամ, ինչպես իրենք էին ասում, «օրենքովներ»: Աստիճանաբար գողական կազմակերպված խմբերը անմիջապես տեղերում ղեկավարում էին դպրոցի տնօրեններ, կուսշրջկոմի պատասխանատու աշխատակիցներ, շրջանային միլիտետեր, դատախազներ, իսկ դրանց թիկունքում կանգնած էին հանրապետական մասշտաբի ղեկավար այրեր, մանավանդ ՊԱԿ-ի, ներքին գործերի նախարարության, կառավարության եւ Ադր. ԿԿ Կենտկոմի ղեկավար աշխատողներ:

Ամեն անգամ, երբ ԼՂԻՄ-ի իրավապահ մարմինները ձերբակալում էին «օրենքով գող» ադրբեջանցիներին, տեղն ու տեղը Բաքվից զանգում էին (Կենտկոմից, Ներքին գործերի նախարարությունից, դատախազությունից) եւ պահանջում անմիջապես քաց թողնել գողերին իրենց մարդկանց, այլապես «հայերիդ գլուխները ձեր ուսերի վրա չի մնա»:

Մարտակերտի շրջմիլպետ Ա. Ավագյանին ուղղակի ասել էին. «Ձեր

ի՞նչ գործն է, թե աղբբեջանցիները Ղարաբաղում ինչո՞վ են գբաղված եւ ինչքա՞ն վնաս են պատճառել մարզին», իսկ Հաղորդի դատախազ Այվազյանին «հասկացրել» էին, որ «ի վերջո գողերն էլ պիտի ապրեն, չէ՞»: Ի դեպ, կոնկրետ 1984թ. ԼՂԻՍ-ից գողացվել էր ավելի քան 11 հազար անասուն, կամ, ըստ մասնագետների, ավելի քան 2000 տոննա միս, որը կազմում էր մարզում արտադրվող մսի 21 տոկոսը (*տես՝ կուսմարզկոմի առաջին քարտուղար Բ. Կելրկովի չտպագրված հուշերը*):

Ի դեպ, Շուշիում կառուցված բանաստեղծ Վազիֆի բետոնե դամբարանը պատրվակ դարձնելով, Բաքուն ամեն տարի հրավիրում էր իսլամական երկրներից ծայրահեղականության եւ ահաբեկչության բնագավառում մարզված, փորձված «մասնագետների» եւ կազմակերպում նրանց գաղտնի հանդիպումները հայասպան աղբբեջանական ահաբեկչական խմբերի հրամանատարների հետ: Վերջիններս, անհրաժեշտ հրահանգներ, միջոցներ ստանալով, ավելի էին սաստկացրել ու «հիմնավորել» իրենց վայրագությունները: ԼՂ-ի պետական անվտանգության վարչության աշխատակիցները երբեմն գաղտագողի իրազեկում էին, որ Թուրքիայից եկած «գորշ գայլերի» պատվիրակները սովորաբար չեն մասնակցում «վագիֆյան ընթերցումներ»-ին: Նրանք աղբբեջանցիների ուղեկցությամբ մեկնում էին Կիրովաբադ, Աղդամ հանդիպելու տեղացի աղբբեջանցի ահաբեկիչների եւ գողական խմբավորումների հետ: Ժամանակին այս ամենի մասին Մոսկվա ծավալուն նամակ էր գրել ԼՂ-ի կուսմարզկոմի հատուկ բաժնի վարիչ, ՊԱԿ-ի գնդապետի այրի, լուսահոգի Քնարա Մուսայելյանը (*ծեռագիրը գտնվում է տողերիս հեղինակի անձնական արխիվում*):

Գողական կազմավորումներն ունեին հատուկ մշակված եւ վերելներում հաստատված «խաղի» սեփական կանոնները: Հայկական երկրամասից մեծ քանակությամբ անասունների գողության շրջանակները հստակեցված եւ բաժանված էին գողերի կազմավորումների միջեւ եւ յուրաքանչյուրի թիկունքում կանգնած էր բարձրաստիճան այս կամ այն չինովնիկը: Կային գողական խմբեր, որոնց հանձնարարված էր կատարել նաեւ ահաբեկչություններ, հայերի սպանություններ, հայկական տնտեսություններին պատկանող արտադրական շենքերի ավերումներ, հրկիզումներ, ավտոմթարներ, եւ այլ կարգի հանցագործություններ:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Ղարաբաղյան հզոր շարժումի պոռթկումից, այսինքն 1988 թ. փետրվարի 20-ից հետո: Աղբբեջանի ղեկա-

վարները նորամուծություններ մտցրեցին գողական-ահաբեկչական կազմավորումների ծրագրերում. նրանք ընդգրկվեցին օմնականների զինված խմբավորումների մեջ: Իսկ վայրագ գործողությունները համակարգելու համար Բաքվից Ղարաբաղ էին ուղարկվել ավելի փորձառու, արտասահմանյան ահաբեկչական հանգրվաններում մարզված տասնյակ մասնագետներ, որոնք հասցրել էին սերտ կապեր հաստատել թուրքական «Գորշ գայլեր»-ի, արաբական «Համագ» եւ աֆղանական «Մոջահեդ» կազմավորումների հետ: Ձինված զանազան զենքերի նորագույն տեսակներով եւ պայթուցիկ նյութերով նրանք սկսեցին լայնածավալ հարձակումներ կատարել հայկական գյուղերի, ֆերմաների վրա: Սպանում, պատանդ էին վերցնում հայ անասնապահներին եւ անտեր մնացած հոտը, նախիրը քշում-տանում աղբբեջանական գյուղերը, շրջանները: Ճանապարհներին գրավում էին հայերին պատկանող ավտոմեքենաները, զինված հարձակում գործում ավտոբուսների վրա, գնդակահարում ուղեւորներին: Միաժամանակ կտրտում, հրդեհում էին հայերին պատկանող այգիները, ցորենի արտերը, որպեսզի ղարաբաղցիներին ծնկի բերեն նաեւ սովի ճիւղաններում:

Այնուհետեւ, ավելի կատարելագործված եւ դաժան կերպով կտտանքի էին ենթարկում տեղական աչքի ընկնող հայ ղեկավարներին, մտավորականներին, աներեւակայելի գլխագին պահանջում նրանց հարազատներից: Գումարը չստանալու դեպքում, պատանդ հայերի անործինները ջարդում էին աքցաններով, գլխուղեղում, երիկամներում սոյլարկա սրսկում, ականջներում, աչքերում մեխեր խփում, կանանց կրծքերն էին կտրտում, բանտարկյալ հայերին իրենց արտաթորանքն էին ուտեցնում, այլ զարհուրելի խոշտանգումների ենթարկում եւ բուլդոզերով ամմեղ մարդկանց սպանում: Այդ ամենի մասին ամենայն ճշգրտությամբ գրել է Նվարդ Սողոմոնյանը իր «1991». «Կուլցո» փաստավավերագրական աշխատություններում (*Ստեփանակերտ, 1994, 1996 թթ.*):

Ես դեռ չեմ ներկայացնում ողբերգությունն այն մարդկանց, որոնք վերապրեցին աղբբեջանական բանտերում, համակենտրոնացման ճամբարներում: Դա իմ ուժերից վեր է, քանզի մարդկային բանականության մեջ չտեղավորվող մեթոդներով իրականացված արյունոտ նախճիրը ահավոր է...

Այս ենթագլխում ես չեմ կարող չխոսել Ղարաբաղի հայության դեմ

խաղաղ պայմաններում կազմակերպված չարանենթ սպանությունների մասին: Առավել ես, որ զոհերի մեջ կային ոչ քիչ թվով կադրայի մ աշխատողներ, մտավորականներ, երեխաներ, ժեր մարդիկ: Այս չարանենթ սպանությունները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ ուղղված ահաբեկչական դավադրությունների ծրագրված պատմության շղթայի մի օղակն էին միայն:

Իրոք, մի՞թե պանթուրքիստական շովինիզմի թույնի ազդեցության արդյունք չէր, որ Շուշիում, օրը ցերեկով, երիտասարդ աղբբեջանցի Բեգլյարովը (ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահի տեղակալի եղբայրը) կանգնեցնում է երկու հայ կոլտնտեսականների եւ ասում. «Այսօր ես որոշել եմ մի հայ սպանել, ինքներդ ասե՛ք՝ ձեզնից որ մեկին շանսատակ անեն»: Մինչեւ հայերը (որոնք կուսշրջկոմից նոր էին փոխանցիկ դորոշակ ստացել) ուշքի կգային, աղբբեջանցի Բեգլյարովը դանակը խրում է Կանաչ Թալայի կոլտնտեսության զոտտեխնիկի փորը: Կամ՝ մի՞թե՞ Աղբբեջանի կոմկուսի օրգան թերթերում հաճախակի տպագրվող հակահայկական կոչերի հետեւանք չէր, որ Ադր. ԽՍՀ Իմիշլի շրջկենտրոնում մի խումբ աղբբեջանցիներ երկաթե մահճակալի վրա կապկպում են երեք հայ շինարարների եւ, էլեկտրական հոսանքը միացնելով, սպանում նրանց:

Հայերի սպանությունն այս դեպքում էլ մնաց չբացահայտված հանելուկ: Բայց, վախենալով, որ Ղարաբաղի հայ բնակչությունը ցասունով կդատապարտի տեռորիստներին եւ նրանց հովանավորների սադրած պրովոկացիաներն ու մեքենայությունները, կուսակցության մարզկոմը եւ Ստեփանակերտի քաղկոմը Բաքվի թելադրանքով արգելեցին անմեղ զոհերի թաղումները կատարել սովորական, ընդունված կարգով: Այս աղաղակող ակտը մի անգամ ես ցույց տվեց, որ Աղբբեջանի իշխանությունները չեն ապահովում Ղարաբաղի սահմաններից դուրս գտնվող հայերի, առանձնապես Ֆերմաների եւ նրանց անձնակազմի անհրաժեշտ անվտանգությունը: Դրանով իսկ Աղբբեջանի ղեկավարները ոչ միայն ոտնահարում էին այլազգի քաղաքացիների անվտանգությունը ապահովող օրենքները, այլեւ նորից ու նորից հաստատում էին, որ իշխանությունները, ըստ էության, խրախուսում էին նման կարգի հանցավոր գործողությունների կատարումը:

Մի՞թե Աղբբեջանի ղեկավարների թողտվության պայմաններում չէր, որ գյուղական սովետի դեպուտատը, դպրոցի դիրեկտորը՝ դարձյալ աղբբեջանցի, Արշաղ Մամեդովը (որի հայրը 20-ական թվական-

ներին մասնակցել էր հակահայկական, հակահեղափոխական գործերի, սպանել բազմաթիվ հայերի, ռուսների, այրել այգիներ, ցորենի դաշտեր) կազմակերպել էր տեռորիստական խմբեր եւ անպատիժ պահվել սպանություններով, գողություններով: Արշաղի հրոսակները Լեռնային Ղարաբաղում տարիներ շարունակ հոշոտում էին բուլդոզի մեծ հայերին, չէին խնայում ոչ ժերերին, ոչ երեխաներին: Սպանում էին գիշերային հերթափոխում աշխատող հայ տրակտորիստին, հալածատիկ հնձող հայ կոմբայնավարին, վթարի ենթարկում հայերին պատկանող տասնյակ մեքենաներ, մաս-մաս կտրտում, ծաղրուծանակի ենթարկում հայ կնոջը, մեխ, սեպ խախում կենդանի երեխայի գլխում, ականջներում, եւ ապա՝ առնանդանը կտրում, բերանը խոթում, մուքերը թիակներից անջատում, աղիքները ցրիվ տալիս: Հետո միայն հագնեցվում դիակը բերում-զցում հայկական բնակավայրերի մոտ: Կյոք այս պալաչին, իր իսկ մեթոդով, հայերը շանսատակ արեցին, նրա լաղումը, որոշակի պաշտոնական մարմինների կարգադրությամբ, վերածվեց գրեթե կառավարական մակարդակի: Սեղմ ժամկետում դահճի շիրմի վրա դամբարան կառուցվեց, հուզիչ տապանագիր փորագրվեց, իսկ հարազատներին թոշակավորեցին մի շարք արտոնություններով: Արշաղի կորուստը ջղաձգությամբ ընդունեցին Բաքվում լուրը նրանք, ովքեր «հոգեւոր սնունդ» էին տալիս նրան, եւ որոնց գիտությամբ ու հովանավորությամբ գործում էր այդ արյունարբու, վայրենի գազանը: Եվ բուլդոզի էլ պատահական չէր, որ թուրք մարդասպանի կապակցությամբ, 1968թ. Աղբբեջանի իշխանությունները արհեստականորեն կազմակերպեցին դատական մի կատակերգություն, որտեղ զնդակահարության կամ տարբեր ժամկետներով բանտարկությունների վճիռ կայացրին 20 հայ վրիժառուների նկատմամբ: Իսկ մի քանի հայերի էլ, առանց դատի ու դատաստանի, սպանեցին Բաքվում, այսպես կոչված, նախնական հարցաքննության ժամանակ (см. Приговор судебной коллегии по уголовным делам Верховного суда Азербайджанской ССР от 24-31 июля 1968 г., N 79):

Այդ վայրագություններն ու դատավճիռները ցասումնալի զայրույթ առաջացրին ԼՂԻՄ-ի ամբողջ հասարակության մեջ եւ վճռականորեն դատապարտվեցին կոլեկտիվների, կազմակերպությունների կողմից: Իսկ հարյուրավոր բողոքներ հղվեցին Մոսկվա:

Ի՞նչ մեղք էր գործել 15-ամյա Ավետլանան, որ օրը ցերեկով նրան Ստեփանակերտից առեւանգեցին վեց աղբբեջանցիներ, հերթով բռ-

նաբարեցին, թուրքավարի այլանդակեցին, հետո միայն սպանեցին ու գցեցին Մեծ հայրենականում զոհված 22 հազար ղարաբաղցիների պատվին կառուցված հուշակոթողի հրապարակում: Կամ ո՞ր մեղքերի համար էին բանակից զորացրված երեք հայ զինվորներից (Եվլախ կայարանում, մի խումբ աղբրեջանցիներ) սպանում երկուսին, իսկ մյուսը հրաշքով է փրկվում:

Չխնայեցին անգամ հերոսին: Իր ննջասենյակում սպանեցին սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ եւ Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդների բազմակի պատգամավոր, Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ, կոլտնտեսային շարժման փորձառու կազմակերպիչ, ճարտարի կոլտնտեսության փառապանծ նախագահ Սուրեն Ադամյանին: Աղբրեջանի ղեկավարության եւ ՊԱԿ-ի սցենարով նրան ֆիզիկապես վերացրին միայն այն բանի համար, որ Ս. Ադամյանը մտադրվել էր Լեռնային Ղարաբաղում տիրող, իր բառերով՝ «զետապոյական» այլանդակությունների մասին հանդես գալ մարզային խորհրդակցություններից մեկում եւ նամակով տեղյակ պահել ԽՍՀԿ Կենտկոմին:

Երբ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ մարզխորհուրդը որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադր. ԽՍՀ կազմից եւ միանալ Հայաստանի Հանրապետությանը, «Մուսուլման եղբայրներ» միջազգային ահաբեկչական կազմակերպության թելադրանքով Ուզբեկստանում տեղակայված մուսուլմանական բանդաները զինված ընդհարում հրահրեցին թուրք-մեսխեթների դեմ: Հարկադրեցին նրանց արտագաղթել Աղբրեջան, ասել կուզի՝ Լեռնային Ղարաբաղ, որպեսզի դրանով փոխվի հայկական երկրամասի ժողովրդագրական հաշվեկշիռը՝ հօգուտ աղբրեջանցիների:

1991 թ. մայիսի 15-ին աղբրեջանցի ահաբեկիչները մտել էին Հադրուսի շրջանի Զարինգ (Արփազյադուկ) գյուղը, բնակիչներին ինքնաձիգների փողերով հրմշտելով դուրս հանել: Մի մասին բաց թողել, իսկ հինգին, իրենց բառերով, «շատ հայասեր լինելու համար»՝ գնդակահարել:

- Մահմեդ, չե՞ս ամաչում, դու ո՞նց ես ինձ գնդակահարելու, չե՞ որ ես բազմիցս մեր տանը քո եւ քո ծնողների առաջ հաց եմ դրել,- ասաց դեմքով դեպի մարդասպանը շրջված Հայկանուշը:

- Խալա (մորաքույր), էն ժամանակ հաց ուտելու ժամանակ էր, իսկ

հիմա սպանելու, հայի քյոքը Կարաբախից վերացնելու ժամանակ է,- լկտիաբար արտաբերեց Մամեդովը եւ տեղն ու տեղը տասնյակ գնդակներ արձակեց 50-ն անց հայարտ կնոջ վրա:

Դատապարտելի եւ նողկանք առաջացնող փաստերի թվարկումը կարելի է շարունակել, բայց ընդհանուր պատկերացումը, գաղափարը պարզ է՝ տեռորիստական ակտերը՝ հայերի սպանությունները, ամենուր կազմակերպված բնույթ էին կրում, ունեին քաղաքական, շովինիստական երանգ եւ մտնում էին «Ղարաբաղը Նախիջեւանի նման հայերից մաքրելու» հայատյաց քաղաքականության շղթայի մեջ ու կազմում էին նրա օղակներից մեկը:

ԼՂԻՄ-ի հայ բնակչության հանդեպ իրականացվող այդ արյունալի հանցագործությունների հեղինակներին քամահրանքով «ախաբեկիչներ, տեռորիստներ» էին անվանում: Աղբրեջանում հայասպան տեռորիստներին հորջորջում էին ոչ այլ կերպ, քան հայերի «քյոքը» արմատահան անող ազգային հերոսներ: Ովքե՞ր եւ ի՞նչ միջոցներով էին պահել այդ մարդասպաններին, ո՞ւմ թելադրանքով եւ ի՞նչ նպատակներով էին գործել այդ չարագործները: Այս հարցերի պատասխանը ժամանակին տվել է միլիցիայի պատասխանատու աշխատակից, մայոր Սավադ Աբրահամյանը: Սակայն դրա համար էլ նրան տեղնուտեղը այն աշխարհի ուղարկեցին: Հայասպան ելուզակախմբերի ստեղծման, հովանավորման գործին անձամբ մասնակցել էր Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյա Շեյդար Ալիեւը: Դրա համար էլ Ադր. ԿԿ Կենտկոմը նրա մութ անցյալը լղոզել, քողարկել եւ ներել էր, թեեւ այդ մասին ժամանակին ծավալուն հոդվածներ էին հրատարակել մոսկովյան թերթերը:

Հիշենք մեկ այլ բիրտ ուժի եւ բռնության քաղաքականության ջատագով, Աղբրեջանի ներքին գործերի նախարար Ասադովի անթաքույց սպառնալիքը՝ «հարյուր հազար ֆանատիկոսների» ներխուժումով Ղարաբաղը սպանդանոց դարձնելու հայտարարությունը: Դրա աղաղակող վկայությունն էր Սոււմգայիթում հայերի դեմ կազմակերպված ցեղասպանությունը, ապա Բաքվում հայերի մասսայական ջարդերը, Ղարաբաղի արյունալի դեպքերը:

Լեռնային Ղարաբաղում իրականացված ահաբեկչական զինված հարձակումների հետեւանքով ավերված, սպանոյի վերածված բազմաթիվ հայկական բնակավայրերից, օրինակի համար, նշենք Սարաղան, Զարինգը, Առաքելը, Բանագուրը, Տորը, Բերդածորը, Գետաշենը,

Մարտունաշենը եւ ամբողջ Շահումյանի շրջանը:

Ամմեղ մարդկանց թափված արյունը, թաքուն եւ բացահայտ սպանությունները, մասսայական գողությունները, մեքենաների արհեստական վթարները կատարվում էին նաեւ այն նպատակով, որպեսզի կասեցվի, ճնշվի հայերի ազատագրական պայքարը:

Ամեն անգամ, երբ հիշում են այդ հրեշավոր դեպքերը, բոլորովին ամմեղ մարդկանց գազանաբար հոշոտումները (որոնց մի մասի թաղման արարողություններին ես մասնակից եմ եղել), մարմնովս սարսուռ է անցնում: Եվ Արցախի բազմաթիվ խաղաղ քաղաքացիների ֆաշիստական մեթոդներով ոչնչացնելը Ադրբեջանի ղեկավարների «Ղարաբաղը առանց հայերի» մարտնչող քաղաքականության ամենացնցող դրսեւորումներից մեկն էր: Քաղաքականություն, որի հիմքը, ինչպես նշվեց, դրվել էր տակավին 1920 թվականին:

Այսպիսին են Ադրբեջանում Արցախի հայ բնակչության, մասնավորապես նրա սերուցքի՝ ինտելիգենցիայի, նկատմամբ կիրառվող գազանաբարո քաղաքականության ողբերգական հետեւանքները: Ընդ որում, Ադրբեջանի ղեկավարները ամեն կերպ փորձում էին անտեսել Ղարաբաղի (եւ ինչու միայն Ղարաբաղի) հայերի արդարացի բողոքները, պահանջները եւ, իհարկե, նաեւ վրդովմունքն ու դժգոհությունը դրանով իսկ ոտնահարելով ազգային զգացմունքները: Բաքուն ստի, զրպարտանքի, աղմուկ-աղաղակի միջոցով միշտ էլ կարողանում էր Մոսկվայի առաջ քողարկել իրենց անմիջական պատասխանատվությունը հանրապետությունում ապրող հայ բնակչությանը դաժանորեն ճնշելու, լափված, բորբոքված դրության մեջ պահելու համար:

Այս հարցում Ադրբեջանի ղեկավարների բռնած հայահալած կուրսը, որը պատճենահանված էր Ասադ Կարաեւի վերը նշված հակահայկական ծրագրից, իրականացվում էր մի միասնական կողով, որից շեղում չկար, գոնե չի նկատվել՝ Նարիմանովից սկսած մինչեւ Ալիեւը: Դրա հետ մեկտեղ, Ադրբեջանի ճարպիկ ղեկավարները ջանքեր չէին խնայում նաեւ այն բանի համար, որ իրենց հակահայկական արկածախնդրական կուրսի մեջ ներքաշեն ազգությանը հայ, ռուս, հրեա անազնիվ, սեփական բարեկեցության համար ամեն ինչի պատրաստ ոչ քիչ թվով պաշտոնամոլ անձանց: Եվ այն հանգամանքը, որ ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանելու Բաքվի փորձերը շոշափելի վնասներ էին հասցրել Ղարաբաղի ինքնավարությանը, եւ իրենց բնույթով այդ ոճրագործությունները նման էին ցեղասպանության եք-

նիկ հայ ժողովրդի նկատմամբ ընդհանրապես, ցույց կտանք քիչ հետո:

Այնպես որ, իսլամական ծագմամբ ահաբեկիչներ, տեռորիստներ պատրաստելու եւ նրանց միջոցով քրիստոնյաներին պատանդ վերցնելու, կոտորելու մեծ փորձառություն ունի Ադրբեջանը: Իրոք, այլազգիների հանդեպ քիրտ ուժի եւ բռնության քաղաքականության կլասիկ երկիր է Ադրբեջանը: Բնավ էլ պատահական չէ, որ ինչպես վկայում են հրապարակված փաստերը, Բեն Լադենի աֆղանական մոջահեդների, եւ չեչենական ահաբեկչական խմբավորումներից շատերի, իրենց նախնական «կրթությունը», ասել կուզի՝ մկրտությունը ստացել են Ադրբեջանում եւ առանձին մարտական վարժանքներն էլ փորձարկել Լեռնային Ղարաբաղում: Ի դեպ, հակաահաբեկչական պայքարի հայտնի մասնագետ Ժան Լուի Բրազյենը (Նյու Յորք) Ադրբեջանը համարել է միջազգային ահաբեկչության կենտրոններից մեկը: Դա ապացուցվում է նաեւ նրանով, որ մի շարք ձերբակալված ահաբեկիչներ կապված են եղել Ադրբեջանի հետ եւ որոշակի ժամանակով թաքնվել են այնտեղ: Ահա թե ինչու, բոլորովին էլ պատահական չէ, որ Քենիայում ԱՄՆ-ի դեսպանության պայթեցման գործողությունը կառավարվել է Բաքվից:

Ի վերջո, կուզենայի հավատալ, որ ահաբեկչությունների սարսափներ ապրած ռուսները, ամերիկացիները, հատկապես հրեաները խոր ըմբռնումով կհասկանան Ղարաբաղի հայերին, որոնք 70 տարի շարունակ գոյատևել են տեռորիստական ահաբեկչությունների պայմաններում:

ԼՂԻՄ-ի օրինակով ահա թե ինչ է կատարվել «ժողովուրդների լեռնայան բարեկամության» կարգախոսով Արցախում, ինչ ցավ է դիպել «ինտերնացիոնալիզմին»: Ահա թե ինչպես էին Ղարաբաղում ազգային հարցը լուծել: Ահա թե ինչու Ադրբեջանը, Մոսկվայի թողտվությամբ, անամոթաբար լափում, խժռում էր հայ ժողովրդի մի մասին եւ հպարտությամբ հայտարարում, թե դա անում է «բարեկամաբար, ինտերնացիոնալիզմի սկզբունքները պաշտպանելով»: Յարկավ, ոռնացող հայատյացությունն Ադրբեջանում ոչ միայն գործելակերպ էր, այլեւ պետական քաղաքականություն:

Ինչու չասել, փաստորեն նպատակ էր հետապնդվել ոչնչացնել հայկական փոքրիկ երկրամասի կադրային ողջ ռեսուրսը, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ղեկավարներ նշանակեին ադրբեջանական ծայրահեղ նացիոնալիզմի գաղափարախոսությամբ «դաստիարակված» և կաշառակերության բնագավառում չափ ու սահման չիմացող իրենց դրածոներին:

Այս ամենը տեսնելով, լսելով խեղվել կարելի էր, ջղածգունից մթազնում էր նաև մարդկային բանականությունը: Այս ամենը չտեսնել, լղոզել, կոծկել կամ շրջանցել, նշանակում է գործ ունենալ քաղաքական խեղկատակությունների և անլուրջ կազմակերպությունների հետ: Այն, ինչ կատարվել էր ԼՂԻՄ-ի նկատմամբ, ըստ էության, փորձարկում էր նորագույն պայմաններում իրականացվող ցեղասպանության հնօրյա և նորօրյա մեթոդները:

ԳԼՈՒԽ V

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՈՒՄՆԵՐ

Վերջերս Տաշքենդից իմ վաղեմի ծանոթ Գ. Մ.-ն, որը մասնագիտությամբ տնտեսագետ է և Ուզբեկստանի կառավարությունում զբաղեցնում է բարձր պաշտոն, վստահելի անձնավորության միջոցով ինձ է ուղարկել մի ծրար: Նրանում 50 հազար տպաքանակով, Բաքվում հրատարակված, «Կոնֆլիկտ Լեռնային Ղարաբաղում» ռուսերեն գիրքն էր: Այն, ինչպես գրում է ուզբեկ ծանոթս, հայտնաբերել է իր փոստարկղից: Սակայն հասցեատերը նպատակահարմար է գտել, որ գիրքն ավելի շատ ինձ է պետք, քանզի նա չի հավատում, թե այնպիսի տնտեսական վերելքի և բարձր կենսամակարդակի աճի դեպքում, ինչպիսին ներկայացված է նշված ժողովածուում, հազիվ թե Ղարաբաղի հայ ժողովուրդը կարող էր ուղքի կանգնել և Ադրբեջանի կազմից դուրս գալու վճռական պահանջ առաջադրել: «Ժողովածուի վիճակագրական տեղեկությունները ստուգման կարիք ունեն և այն քեզնից լավ, թերևս, ոչ ոք չկատարի»: Ի դեպ, սույն ժողովածուից մեկ օրինակ էլ ինձ էին նվիրել Ադրանի մատույցները պաշտպանող հայ ազատամարտիկները:

Խնդրո առարկա ժողովածուում զետեղված են 28 մեծ ու փոքր հակահայկական բնույթի հոդվածներ, որոնք նախքան ժողովածուում տեղ գտնելը տպագրվել են Բաքվում՝ հիմնականում «Բակինսկի ռաբոչի», «Վըշկա» և Մոսկվայում՝ «Պրավդա» և այլ կուսակցական թերթերում: Հեղինակները Ադրբեջանի ԳԿ-ի ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, դոկտորներ, պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ, գրողներ, լրագրողներ և վարչակուսակցական պատասխանատու աշխատողներ են: Այնպես որ, մենք գործ ունենք տիտղոսներով, պաշտոններով զարդարված պրոֆեսիոնալ զրպարտիչների հետ:

Եթե ժամանակին հայ պատմաբանները, գրականագետները պատեհ առիթներով մասնակիորեն անդրադարձել են Ադրբեջանում տպագրված պատմաբանասիրական բնույթի մի շարք հոդվածներին,

գրքերի եւ վեր հանել դրանցում տեղ գտած աղավաղումները, կեղծիքները, վայրահաչութիւնները, սակայն նույնը չի կարելի ասել սոցիալ-տնտեսական, առավել եւս ժողովրդագրական քեմաներով գրված հրապարակումների մասին: Դրանք, փաստորեն, մնացել են անհետեւանք, այլ կերպ ասած, գրեթե չեն արժանացել կամ գրավել հայ մասնագետների ուշադրությունը: Այս պարագայում լռությունը բնավ ոսկի չէ:

Հարկավ, երբ ադրբեջանցի պատմաբանները, մորթուց դուրս գալով, այս էլ որերորդ անգամ, փորձում են ապացուցել, որ «Լեռնային Ղարաբաղը ադրբեջանական հիմնվուրց տարածք է», իսկ այնտեղ ապրող «հայերը եկվորներ են», ապա Բաքվի (եւ ոչ միայն Բաքվի) քաղաքագետներն ու փիլիսոփաները իրենց առջեւ խնդիր էին դրել արցախյան հուժկու շարժումը ներկայացնել իբրեւ «մի խումբ ծայրահեղականների ու մաֆիոզ տարրերի հրահրած խառնակություն, Հայ հեղափոխական դաշնակցության հերթական, քաղաքական արկածախնդրություն»: Եվ բացի այդ, եթե ազերի տնտեսագետները եւ սոցիոլոգները մոզոնված եռանիշ, քառանիշ թվերի օգնությամբ ջանացել են Լեռնային Ղարաբաղի ԽՍ-ին հագցնել «ալ կարմիր զգեստ», ապա գրականագետները, գրողներն ու լրագրողները «Գարաբաղը մերն է, մերը» լալահառաչ մուղամներ երգելով, «սրբազան պատերազմի» զանգեր են հնչեցրել «Ադրբեջանի ամենագեղեցիկ անկյունում, սիրելի Գարաբաղում, հայի քյոքը մեկընդմիշտ արմատախիլ անելու եւ այն հավերժ ադրբեջանական պահելու համար»:

Այս է ստահող ժողովածուի նյութերի հիմնական լեյտմոտիվը, բուն նպատակը, կեղծ ասելիքը: Միաժամանակ ճարտասանական կեցվածքով ադրբեջանցի հեղինակները փորձում են մի կողմից պատրանք ստեղծել արդարացի երեւալու, մյուս կողմից՝ արդարացնել Ղարաբաղի հայության ինքնորոշման հետ հաշվեհարդար տեսնելու իրենց մտադրությունները:

Բաքվեցի պաշտոնյա կեղծարարները եւ պետական, քաղաքական դեզեմորատները ընթերցողների վստահությունն ավելի շահելու համար, շուտասելուկի ոճով, ասպարեզ են հանել մոզոնված թվեր, վիճակագրական փուչիկներ ու տոկոսային աճպարարությունների մի աներեւակայելի խառնակույտ: Ընթերցողը, բնականաբար, նման քաղաքական շաղակրատանքից, քաղաքական ձեռնածություններ

րից բառացիորեն շշմած, կարկամած, դժվար թե գլուխ հանի եւ ճիշտ կողմնորոշվի գիտականորեն «ապացուցված», բայց իրականում՝ «դզած-փչած» կեղծ փաստերից, փաստարկներից: Այսինքն՝ համոզվի, որ Ադրբեջանում «լիակատար հաղթանակել էր ինտերնացիոնալիզմը». իսկ Հայկական Ղարաբաղում, մոլեգնում է «Մացիոնալիզմը», ինչու չէ, նաեւ «անհնազանդությունը»:

Փաստորեն, ինչպես պարզորոշ երեւում է, եւ ընդհանրապես, հանրությանը տարիներ շարունակ «պրոպագանդիստական շքերթներ», տնտեսական մանիպուլյացիաներ», «վիճակագրական կագուսներ» են մատուցվել: Հայկական երկրամասի տնտեսական աճի իդեոլոգիան շքերթային տրամադրությունից ռեալ տնտեսագիտական, գործնական, պրոֆեսիոնալ վերլուծության փոխարեն, վերածվել էր ա) ադրբեջանական կողմի համար քաղաքական, պրոպագանդիստական խաղաքարտի, իսկ բ) Ղարաբաղի պարագայում՝ իրավացի դժգոհությունների եւ բողոքների բորբոքման շարժառիթի:

Տեղի սղության պատճառով մենք կանգրադառնանք միայն նշված ժողովածուի մեջ տեղ գտած սոցիալ-տնտեսական հարցեր շոշափող նյութերին: Կփորձենք «մեկընդմիշտ» բացահայտել պաշտոնական Բաքվի կողմից ասպարեզ նետված ռոնացող կեղծիքները, անպատասխանատու եւ միանգամայն կախարդական «կարմիր ցուցանիշները». որոնք 1970-1980-ական թթ. շրջանառության մեջ էին դրել Ադրբեջանի իշխանությունները, եւ նրանց կողմից ԼՂԽՍ-ում պաշտոնավորած մանկավիկները: Կեղծիքները, բնականաբար, հետապնդում էին որոշակի ընդգծված քաղաքական նկրտումներ: Զգացվում է, որ հարեւան հանրապետությունում տարիներ շարունակ բոլորեքյան զբաղվել են ոչ միայն նենգափոխությամբ, այլեւ բացահայտ աչքակապությամբ: Եվ այդ ամենը՝ տարիներ շարունակ եւ այն էլ հանդիսավոր կերպով ներկայացվել է իբրեւ պաշտոնական տեղեկատվություն ու քարոզչական նպատակներով լայնորեն հրատարակվել հանրապետական, միութենական զանգվածային լրատվության օրգաններում, հորեյլանական տարեգրքերում: Անգամ հասել են նրան, որ «ԼՂԽՍ-ի բարձր զարգացման հասած արդյունաբերության մասին» հողված է տպագրել Հայկական սովետական հանրագիտարանը (հատոր 4, էջ 578): Այս մասին մի ուրիշ առիթով: Այսուհանդերձ, մենք մեջբերումներ կկատարենք, վիճակագրական տե-

ղեկություններ կբերենք ոչ թե նշված գրքից, այլ եւ «սկզբնաղբյուրներից», որոնք եւ հիմք են հանդիսացել խնդրո առարկա ժողովածուի հոդվածների համար:

**1. ՍԽԱԼ, ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԵԹՈՂՈՎ ԿԱՂԱՊԱՐՎԱԾ
ՑՈՒՅԱՆԻՇՆԵՐԻ ԳՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ԿՈՒՄԱՆՈՎԸՅ ՆԱՐՅԱՂ
ԿԱՐԱՐԱՆԱՆ»**

ԼԴԻՄ-ի կազմավորման 40, 50 եւ 60-ամյակներին նվիրված հորեւյանական (Բաքվում հրատարակված) գրքույկներում անգամ ցանկացած նյութ մատուցված է այն հաշվով, որ անիրազեկ ընթերցողի մոտ ստեղծվի այնպիսի տպավորություն, այնպիսի պատկերացում, որ «Սովետական Լեռնային Ղարաբաղ»-ի կյանքի բոլոր բնագավառներում եղանակ ստեղծողները, ինչպես անցյալում, այնպես էլ մինչեւ Ղարաբաղյան շարժումը, աղբյուրներն են, որ հայերն այս երկրամասում փոքրամասնություն են կազմել, չնչին դեր էին խաղացել: Որ նրանց՝ հայերի համար (ղարծյալ ցանկալին իրականության տեղ անցկացնելով, պրոպագանդիստական անսքող կեցվածքով) աղբյուրներն ստեղծել են զարգացման, բարգավաճման հրաշալի պայմաններ, որ հայերը միայն «Սովետական Աղբյուրների կազմում են ծաղկել, ազգային արժանապատվություն ձեռք բերել, կենսամակարդակի եւ հոգեւոր կուլտուրայի չտեսնված բարձունքների հասել» (*«Проблемы мира и социализма»* 6, 1977, с. 12): Իրոք, ստացվել է երկու՝ ծայրը ծայրին չբռնող պարադոքս: Մի կողմից՝ ամեն կերպ անտեսվել, կամ չավագույն դեպքում՝ նսեմացվել, նեմացափոխվել, փականքի տակ է պահվել Լեռնային Ղարաբաղի անցյալի իրական պատմությունը, մյուս կողմից՝ ուռճացվել, վառ գույներով է ներկայացվել երկրամասի նորագույն Աղբյուրների ենթակայության տակ գտնվող ժամանակաշրջանի պատմությունը:

Ինքնավար մարզի ողբալի վիճակը, նրա արմատական բնակչության ողբերգությունը այն աստիճանի են կոծկվել՝ գեղեցիկ ճարտասանությամբ, հորինված եռանիշ թվերով, սուտ, կեղծ փաստարկումներով, զանազան արտառոց հնարքներով քողարկվել, թաքցվել, որ նույնիսկ ամենափորձառու, ամենաանաչառ մասնագետները ապշահար են լինում, եւ միշտ չէ, որ նրանց հաջողվում է դրանցից գլուխ հանել: Ավելի համոզիչ լինելու համար, բերեն մի քանի օրինակներ: Ստեփա-

նակերտի մետաքսի կոմբինատի աշխատող 2600 բանվորների մեջ աղբյուրները 37 հոգի էին: Բայց, երբ խոսք էր լինում կոմբինատի եւ նրա առաջավորների մասին, ապա պարտադիր նշվում էին հավասար քանակությամբ հայ եւ աղբյուրների բանվորների ազգանուններ, թեւ, աղբյուրների բանվորները կազմում էին կոմբինատի աշխատողների 1,4 տոկոսը: Կամ՝ այնպիսի մի խոշոր բնագավառ, ինչպիսին գյուղատնտեսությունն էր, որի համախառն արտադրանքի 0,7 տոկոսն էին տալիս մարզում ետպատերազմյան տարիներին ստեղծված աղբյուրներին: Բնակավայրերի տնտեսությունները, դարձյալ հավասար քանակությամբ հայեր եւ աղբյուրներ էին ներկայացվում զեկուցագրերում, գրքերում, թերթերում: Ըստ որում՝ սկզբում թվարկում էին աղբյուրներին, հետո միայն հայերին:

Ամիրաժեշտ է նշել, որ ԼԴԻՄ-ի սոցիալ-տնտեսական իրական պատկերը՝ մտացածին թվերով, պարադային տոնով, ծամծմված լուրերով, Աղբյուրների ղեկավարների «հայրական» հոգատարության շեշտադրումներով, հասցվել էր վերացական մի այնպիսի մակարդակի, ուր կասկած չէր հարուցում բացարձակ աչքակապությունը: Զարմանալի կերպով, 30-100 բանվոր-ծառայող ունեցող, հարյուր, երեք հարյուր հազար ռուբլու արտադրանք թողարկող խղճուկ արտադրամասերը ներկայացվել են որպես ժամանակակից խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, ճանապարհագուրկ, հողագուրկ, քայքայման եզրին հասած գյուղական տասնյակ տնտեսություններ՝ կոլտնտեսային կարգի հաղթանակ: Գյուղական՝ 30-ական թթ. բովանդակությամբ 10-20 քառ. մետր մակերեսով, բոլորսնած պատերով, անձրեւաջրերից փքված առաստաղով ակումբներն ու գրադարանները՝ մշակույթի ժամանակակից օջախներ եւ այլն, եւ այլն: Մի խոսքով, մարզի տնտեսության, սոցիալական եւ կուլտուրական զարգացման մասին խոսելիս, գրելիս ջանացել են ստեղծել այնպիսի պատկերացում, պատրանք, որպեսզի ասեն, որ ԼԴԻՄ-ում չկար ո՛չ պրոբլեմ, ո՛չ սահմանափակում եւ ո՛չ էլ դժվարություններ: Կար միայն «առատություն, հոգեւոր բավականություն, զարգացման մի այնպիսի հնարավորություն», որին միայն արկածային երեւակայության տեր մարդիկ կարող էին հավատալ:

Հանրահայտ է, որ պետք է գուցե, մեծարել կատարած լավ աշխատանքը, քննադատել չարածը, թերությունները: Մինչդեռ, ամբողջ խոր-

հրդային երկրի եւ նրա ցանկացածդ երկրամասի ինդուստրիալ զարգացման ֆոնի վրա, ԼՂԻՄ-ում կառուցված-արվածն այնքան չնչին ու աննշան էր, որ ինքնավար մարզի ղեկավարները եւ նրանց հովանավորողները հարկադրված գոռում-գոչում էին նաեւ պրոպագանդիստական նպատակներով նախատեսված. պլանավորած. բայց իրականում չարված գործերի մասին: Երբեմն էլ ուղղակի դիմում էին աջակցության: Ձեկուցագրերը, ճառերը, հողվածները, գրքերը հեղեղում էին էթնիկ Արցախի անցյալն անհիմն կերպով ժխտող «փաստերով», ցանկալի ցուցանիշներ, ներկայացնում բովանդակազուրկ թվերով: Մարզի տնտեսական հետամնացությունը քողարկելու, մարդկանց ապակողմնորոշելու, վիճակն անհամեմատ բարվոք տեսքով ներկայացնելու համար հաճախակի անտեղի համեմատություններ էին կատարում անցյալի՝ 1923 թվականի, փաստորեն գրո «ցուցանիշի» հետ: Եվ ապա՝ հաղթական «Кырачыбын наряд Карабаха» տոնով հայտարարվում, որ «ԼՂԻՄ-ի արդյունաբերությունն աճել է 912 անգամ»։ (*«Կոմսոմոլսկայա պրավդա»*, 1983, 2 նոյեմբերի, N 252):

Հարց է ծագում. ինչու՞ համեմատությունը պարտադիր կարգով կատարվում էր Լեռնային Ղարաբաղի համար աննպաստ 1923 թվականի, այլ ոչ թե ամենուրեք ընդունված նախահեղափոխական նպաստավոր 1913 թվականի հետ: Չէ՞ որ Անդրկովկասի՝ այդ թվում նաեւ Ադր. ԽՍՀ տնտեսական զարգացման համեմատական չափանիշը 1913 թվականն է: Այս հարցերը պարզաբանելու համար հարկադրված եմ վերհիշել մի դեպք. որն ուղղակի առնչություն ունի խնդրո առարկա հարցի հետ:

1969 թվականի վերջերին, կուսմարզկոմի հանձնարարությամբ, գրել եւ «Աղբբեջան» հրատարակչություն էի հանձնել «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» ուղեցույցի ձեռագիրը: ԼՂԻՄ-ի արդյունաբերության զարգացման համեմատությունը կատարել էի 1913 թվականի հետ: Աճը 1969 թ.-ին եղել է աննշան, ընդամենը՝ 3.8 անգամ: Ստավորապես 15-20 անգամ պակաս, քան ԽՍՀՄ-ինը, Ադր. ԽՍՀ եւ ՀԽՍՀ-ներինը: Հրատարակչությունն իմ ձեռագիրը աղբբեջաններն թարգմանելուց հետո ուղարկել էր Ադր. ԿԿ Կենտկոմ: Խմբագիր-հրատարակիչները, վերելի կարգադրությամբ, հանցեցին, ջնջեցին շատ բան, այդ թվում նաեւ՝ այդ 3.8 անգամ ցուցանիշը: Պահանջեցին, որ ես համեմատություն կատարեմ 1923 թվականի հետ: Ես, հասկանալի

պատճառաբանությամբ, չկատարեցի: Իրենք «պարզեցին», որ «1969 թ. մարզի արդյունաբերության համախառն արտադրանքը 1923 թվականի համեմատությամբ ավելացել է 215 անգամ, իսկ 1940 թ. համեմատությամբ՝ 4,5 անգամ»: Թեեւ մարզի այն ժամանակվա ինդուստրիալ վիճակից կարելի էր եզրակացնել, որ այդ թվերը բնավ կատարյալ չէին եւ լրիվ չափով չէին արտացոլում իրողությունը: Իհարկե, 215-ը արտաքուստ լավ ցուցանիշ է, բայց ներքուստ բովանդակազուրկ է. որովհետեւ այդ եռանիշ թիվը գոյացել, ստացվել է 1923 թ. միանիշ 1.4-ի հետ համեմատելով: Իսկ երբ համեմատությունը կատարվում է 1913 թ. եռանիշ՝ 100-ի հետ, ապա ստացվում է մի խղճուկ թիվ (3.8 անգամ), որի հրապարակումն անհարմար գտնվեց եւ խստիվ արգելվեց հետագայում օգտագործել որեւէ տեղ, քանի որ այն չէր հանապատասխանում պաշտոնական կեղծիքին: Առհասարակ, Բաքվում չէին կատակում եւ չէին էլ հանդուրժում, երբ ղարաբաղցիներն իրենք էին խոսում իրենց անունից, ԼՂԻՄ-ի «նվաճումները» համեմատում նախահեղափոխական որեւէ տարվա հետ: Ղարաբաղում տնտեսական աճը համեմատելու համար թույլատրելի էր համարվել 20-ական թթ. սկիզբը հենց ինքնավար մարզի «ծննդյան» տարեթիվը, երբ երկրամասում չէին գործում արդյունաբերական ձեռնարկություններն ու ավերված տասնյակ հայկական գյուղերի, ֆաբրիկաների, Շուշիի մեծ մասի հայկական հատվածի, ֆլատակներից բարձրացող ծովից դեռ չէր մարել: Երբ թուրքական եւ մուսավաթական հրոսակախմբերի կողմից կտրտած այգիները, թալանված ֆերմաները չէին վերականգնվել, երբ հայկական գավառներին հարող աղբբեջանական շրջաններում վխտում էին տասնյակ ավազակախմբեր, երբ հայկական Ղարաբաղի պատկանելության հարցի շուրջ Բաքվում նորանոր դավեր էին նյութում: Ահա թե ինչու, երբ Լեռնային Ղարաբաղի տնտեսական ցուցանիշները համեմատվում են 1923 թ. 1.4 տոկոսի հետ, ապա անմիջապես երեւում են Սովետական Աղբբեջանի կազմում մարզի ձեռք բերած «ակնառու նվաճումները», որոնց կնախանձեն աշխարհի ամենազարգացած երկրները:

Էլ չենք խոսում ԽՍՀՄ մարզերի, հանրապետությունների մասին: Բայց, երբ համեմատությունը կատարվում է 1913, կամ թեկուզ 1895 թթ. հետ, իսկույն եւեթ նկատվում էր ԼՂԻՄ-ի բացահայտ հետամնացությունը: Այս առումով մարզը, ԽՍՀՄ տնտեսական, մասնավորապես ին-

ղուստրիալ քարտեզի վրա սպիտակ բիծ էր: Իսկ կուլտուրական, սոցիալական տեսակետից՝ խավարից էլ՝ խավար: Ահա թե ինչու արգելում էին, չէին թողնում ԼՂԻՄ-ի զարգացման տվյալները բաղդատել նախահեղափոխական 1913 թվականի հետ: Ահա թե ինչու էին աչքակապությամբ զբաղվել, ոչինչ չասող թվեր, փաստեր մեջ բերել եւ դրանք հաճախակի հոլովել մարզային, հանրապետական, միութենական մամուլում, առանձին գրքերում եւ մոլորության մեջ գցել Ղարաբաղի վիճակով, ԼՂԻՄ-ի արդյունաբերական աճով հետաքրքրվողներին: Հիշենք մոսկվացի հայտնի տնտեսագետների հետ 1988 թ. Բաքվում կազմակերպված հեռուստաշունչ, որը դիտում էր ամբողջ երկիրը:

1970-1980-ական թթ. ԼՂԻՄ-ի արդյունաբերության աճի տեմպերի մասին գրում էին, որ իբր ԼՂԻՄ-ը արդյունաբերական տեսակետից խորհրդային երկրի ամենաբարձր զարգացման հասած մարզն էր: Սակայն, ով գեթ մեկ անգամ եղել է Ղարաբաղում, շրջել է նրա բնակավայրերում, տեսել գործող արդյունաբերական կարողությունները, խոսել տեղացիների հետ, իսկույն զգացել է, որ այդ «բարեհոգությունը» պրոպագանդիստական նպատակ է հետապնդել: Նույնիսկ գրել են, որ «կարելի կլինի ասել, որ ԼՂԻՄ-ում կոմունիզմը վաղուց է կառուցվել»: Դրա համար էլ աներեւակայելի ճռճան թվեր էին հրապարակվել: Այսպես, եթե նշված «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» ուղեցույցում (Բաքու, 1970, էջ 11) աճը 1923 թ. համեմատությամբ ցույց է տրված 215 անգամ, ապա երեք տարի անց այդ ցուցանիշը դառնում է 369 անգամ (տես՝ «Լեռնային Ղարաբաղի նվաճումները 9-րդ հնգամյակում», ռուսերեն, Ստեփանակերտ, 1976, էջ 21): Սակայն, երկու տարի անց, կուսակցության ԼՂ-ի մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կետրկովը նոր ռեկորդ է սահմանում՝ մարզի արդյունաբերության աճը հասցնելով 565 անգամի (տես՝ «Միասնական ընտանիքում», Բաքու, 1978, էջ 73): Բայց դա էլ անբավարար է համարվում: Դարձյալ երկու տարի հետո «Բակինսկի դաբոջի» թերթը (4/5-80 թ.) իր ընթերցողներին տեղեկացնում է, որ ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը աճել է 800 անգամ: Այդ «նոր ռեկորդն» էլ երկար չի պահպանվում: Բաքվում 1983 թ. լույս տեսած «Սովետական Լեռնային Ղարաբաղ» գրքույկը (էջ 83) հայտնում է, որ աճը դարձել է 912 անգամ: Ըստ այդ «հավաստի աղբյուրների», ստացվում է, որ մարզի արդյունաբերությունը տասը տարում աճել է 697 անգամ: Սա-

կայն չորս տարի հետո՝ 1987 թ., Ադր. ԿԿ օրգան «Կոմունիստ» թերթում տպագրվում է ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործկոմի նախագահի տեղակալ, պլանային հանձնաժողովի նախագահ Վ.Տոնյանի «Միասնական ընտանիքում» հոդվածը, որտեղ սեւով սպիտակի վրա գրված է. «Բավական է բերել մի այսպիսի պերճախոս փաստ. իր ստեղծման տարվա համեմատությամբ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը իր արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալով մեծացել է 103,1 անգամ» («Կոմունիստ», 29 սեպտեմբերի 1987, N 226/19260): Դե արի էջը ցեխից հանիր: Նշված 103,1 անգամն էլ հավատ չի ներշնչում, քանզի Գեյդար Ալիևը Ստեփանակերտում մարզային կուսակցական 25-րդ կոնֆերանսում ունեցած ճառում «մեկ առ մեկ թվարկելով ԼՂԻՄ-ի ձեռք բերված վիթխարի հաջողությունները» շեշտել է. «1923 թվականի համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է 215 անգամ» («Սովետական Ղարաբաղ», 27 հունվարի 1971 թ.): Հավատա՞նք, խնդա՞նք, թե՞...: Բայց ինչի՞՞ հաշվին է այն երկրաչափական առաջադիմությամբ հանիրավի ավելացել: Հէ՞ որ այդ ընթացքում մարզում չեն կառուցվել ուշադրության արժանի արդյունաբերական գոնե որեւէ նոր ձեռնարկություն, չեն վերակառուցվել կամ ընդարձակվել հին գործարանները: Գործարանային բանվորների թվաքանակն էլ ավելացել է չնչին տոկոսով, եւ կապիտալ լրացուցիչ ներդրումներ բնավ չեն հատկացվել: Մի խոսքով՝ հրաշք չի կատարվել: Սակայն, բանից պարզվում է, որ այդ մտացածին թվերի ետեւում, աղմկարարության ու պարադայնության սիրահար մարդիկ նպատակ են հետապնդում ԼՂԻՄ-ի իրական փաստերի եւ իրական վիճակի զուտ չինովնիկական մահահափորձ կատարելու: Նրանք այդ եղանակով ճգնել են խույս տալ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի օրակարգային լուծումից, մարզում կատարվող խաղաղ ցեղասպանության համար պատասխանատվություն կրելուց եւ տարվել են մանիլովյան բարեհոգությամբ:

Իրականում, սակայն, ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը 1913 թվականի համեմատությամբ, 1983 թվականին ավելացել է մոտ 11 անգամ: Հայտնի է, որ 1923 թվականին (վերջ թվարկած ավերածությունների հետեւանքով) արտադրվել է 1913 թ-ի համախառն արտադրանքի միայն 1,4 տոկոսը: Հետեւապես, զավեշտական է չեղած բաների հետ համեմատություն կատարել: Այլապես անվայել զբաղմունքի՝ ջուր ծե-

ծելու նման բան կստացվի, միանգամայն սխալ հետեւութիւններ կհանգեցնէ: Եթե այդ 11 անգամից էլ հանենք այն բազմաթիվ կոլտնտեսութիւնների ցուցանիշները, որոնք 1970-ական թթ. հախտուն կերպով սովորականների վերափոխվեցին, նրանց արտադրած գյուղատնտեսական մթերքներն էլ մեխանիկորեն մտցվեցին արդյունաբերության մեջ, ապա պատկերն ավելի պարզ կդառնա, թվերն էլ առավել քան համեստ: Չուտ արդյունաբերության, այսինքն՝ ֆաբրիկա-գործարանային արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ 1983 թվականին աճել է ոչ ավել, ոչ պակաս՝ 8,6 անգամ: Իսկ բանվորների քանակը (չհաշված սովորականների դաշտերում ու ֆերմաներում աշխատող երեկվա կոլտնտեսական-բանվորներին) ավելացել է մոտ երկու անգամ: Սա մենք շեշտում ենք, որովհետեւ ո՛չ 1913 թ. եւ ո՛չ էլ 1923 թ. Լեռնային Ղարաբաղի 220 գյուղերում արտադրված մթերքները չէին մտել արդյունաբերության մեջ:

Լեռնային Ղարաբաղում 1923 թ. աշխատում էր նախահեղափոխական 42 ձեռնարկություններից միայն երկուսը: 1913 թ. արտադրված 9,8 միլիոն ռուբլու արտադրանքի փոխարեն թողարկվել էր 320 հազար ռուբլու մետաքսաթել: Միաժամանակ երկրամասում այդ ժամանակ աշխատում էին նախահեղափոխական 3750 բանվորներից միայն 93 հոգի: Փաստորեն, 1923 թվականին, 1913-ի համեմատությամբ, բանվորների քանակը պակասել էր 40, իսկ արտադրանքը՝ 30 անգամ:

ԼՂԻՍ-ում 1970 թ. եղել են 36 արդյունաբերական ձեռնարկություններ՝ 5431 աշխատողներով: Համախառն արտադրանքը կազմել է 96654 հազ. ռուբլի: Միջին թվով, յուրաքանչյուր ձեռնարկության ընկել է 151 բանվոր, 2675 հազ. ռուբլու արտադրանք: *(Տե՛ս ԼՂ-ի վիճակագրական վարչության կողմից ինձ հանձնված ցուցակը, որտեղ նշված են ձեռնարկությունները, բանվորների քանակը, արտադրանքի եւ աշխատավարձի չափը):*

Քիչ է, թե՞ շատ: Համեմատության համար նշենք, որ միայն Կիրովական քաղաքը (ՀՍԽՂ), որը 1923 թվականին արտադրել է մոտավորապես այնքան արտադրանք, ինչքան ԼՂԻՍ-ը, ուներ 28 արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ աշխատում էր 35 հազար մարդ եւ թողարկվում ավելի քան 1,2 միլիարդ ռուբլու արդյունաբերական արտադրանք: Սակայն Կիրովականի մասին գրված ոչ մի գրքում, հոդվածում չի նշված, թե քաղաքի արդյունաբերությունը 1923 թ. համեմա-

տությամբ 1983 թ. աճել է 4000 անգամ: *(Տե՛ս «Коммунист», 1984, 24 февраль, N 84):*

Այսպիսով, ԼՂԻՍ-ի արդյունաբերությունն անհամեմատ դանդաղ է զարգացել, որի հետեւանքով մարզից դուրս են մղվել մեծ քանակությամբ բանվորներ, երիտասարդներ: Բացի այդ, եղած արդյունաբերական զարգացումն ընթացել է միակողմանի, այսինքն՝ ստեղծվել են այնպիսի կարողություններ, որտեղ հիմնականում օգտագործվել էր կանանց աշխատանքը: Այսպես, մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների 51 տոկոսը կազմել էին կանայք: Այս այն դեպքում, երբ երկրի, այդ թվում նաեւ Ադր. ԽՍՀ-ի եւ ՀԽՍՀ-ի բանվորների մեծամասնությունը կազմել էին տղամարդիկ, իսկ կանայք ոչ ավելի քան 37-40 տոկոս: Որպեսզի պատկերն ավելի ամբողջական լինի, որպեսզի ԼՂԻՍ-ի իրական հետամնացությունը մատնացույց արվի, հարկադրված բերենք հետեւյալ անառարկելի փաստերը: Ամբողջ երկրի, Ադր. ԽՍՀ-ի եւ ՀԽՍՀ-ի արդյունաբերության զարգացման համեմատությամբ ԼՂԻՍ-ի ինդուստրիալ զարգացումը ետ էր մնում համապատասխանաբար՝ 20,7, 18,3 եւ 26,6 անգամ: Այս մասին դարձյալ չեն գրել ու չեն խոսել ոչ Բաքվում եւ ոչ էլ Ստեփանակերտում: Ինչի՞ համար խոսեն, չէ՞ որ ավելի հեշտ էր կոծկել, աչքակապությամբ զբաղվել, քան գործարան, ֆաբրիկա կառուցել, դարաբաղցիներին աշխատանք տալ: Առավել եւս Լ. Բրեժնեւի օրոք, կամաքե ականա, խրախուսվում էին կեղծիքը, բժնանքը, փրուս ճառերը: Իսկ որ այս բնագավառում Ադրբեջանի եւ Ղարաբաղի (70-80-ական թթ.) ղեկավարները իսկ եւ իսկ իզիթներ էին, դա նույնպես անփիճելի իրողություն է:

Արդարեւ, այսպիսին էր շրջանառության մեջ դրված եւ նաեւ փականքի տակ պահվող փաստերը: Ուրեմն 912:11,6՝ հօգուտ աչքակապության: Այդ, 912 եւ 11,6 թվերի տեսում թաքնված էին երկու կյանք. երկու դասակարգ: Դրանք իրարից այնքան էին հեռու, ինչքան թվերը: Մի կողմից՝ 912 վարագույրով պնդագործված, պաշտպանված, նույնքան մեղքեր գործած, բայց անպատիժ մնացած բաքվեցի կեղծարարներն էին, մյուս բեւեռում՝ 11 երկանիշ թվերի պես համեստ, բայց հպարտ եւ ազատաբաղձ դարաբաղցիները, որոնք տենչացել են արգարություն, աշխատանք փնտրել ամեն տեղ, բայց ոչ իրենց հայրենի երկրամասում: Այս թվերը՝ միաժամանակ պերճախոս պատկերացում

են տալիս, թե Ղարաբաղի իրադարձությունները, դեպքերը եւ ընդհանրապես պատմությունն ինչ աստիճանի են աղավաղվել, լլկվել: Այս թվերը, որոնցից առաջինները հաղթական մարշով ճանապարհ էին դուրս եկել, գործում էին, իսկ երկրորդները՝ յոթ փականքի տակ էին, արգելված գոտի եւ վկայում են ԼՂԻՄ-ի արմատական բնակչության տառապանքը, հայրենի երկրամասից նրանց դուրս մղելու քաղաքական արկածախնդրությունները: Այս թվերն իրենց մեջ արտացոլում են հայկական մարզի տնտեսական դժվարությունները, սադիզմը, սոցիալական կեղեքումները, այնտեղ կիրառված դաժան հալածանքը, կամայականությունները, ազգահալած բիրտ քաղաքականությունը եւ նրա ավերիչ հետեւանքները:

Այո, աչքակապությամբ զբաղվելը նույնքան խելացնորություն է, ինչքան իրականություն կեղծելը, անցյալը անտեսելը, իրական փաստերը զանց առնելը: Սրանք դեռ բոլորը չեն:

2. ՍՊՈՐՆՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՎԵՐՄԱՆ ԲԱՐՈՒՄԱՆ ՄԻՋՅԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այժմ տեսնենք՝ ինչպե՞ս է «մանիպուլյացիա» կատարվել նախատեսված, չկառուցված, բայց հանդիսավոր պայմաններում պրոպագանդված գործարանների հետ:

Հայրենական (1941-1945 թթ.) պատերազմից հետո Ադրբեջանում սովորույթ էր դարձել հնգամյա, յոթնամյա եւ ընթացիկ պլաններ կազմելիս ԼՂԻՄ-ի դեպքում «մոռանալ», այսինքն՝ կապիտալ շինարարության համար ներդրումներ չհատկացնել, մյուս դեպքում՝ խեղդամահ անել: Այսինքն՝ տարեցտարի ավելացնել գյուղատնտեսական մթերքների մթերումների պլանները եւ ընդհակառակը՝ քչացնել տեխնիկայի, պահեստամասերի, խտացրած կերերի, շինանյութերի, առաջին անհրաժեշտության մթերքների եւ արդյունաբերական ապրանքների ստացման չափերը (ֆոնդերը): Եվ դա, բնականաբար, դժգոհությունների տեղիք էր տալիս: Հայկական մարզի իրավագուրկ ղեկավարները ներքեւից եկող ճնշման տակ ստիպված գնում, ծունկ էին չոքում Ադրբեջանի ղեկավարների առաջ: Այս պարագայում, հատուկ կազմած սցենարով, նրանք ցուցաբերում էին «մեծահոգություն»: Ինչ-որ եղանակով, ինչ-որ տեղից «գտնում» էին մի «թուլաբաժին» եւ պրոպագանդիստական հրավառությամբ «նվիրաբերում» մարզին: Նման

փոքր, աննշան «օգնությամբ» Բաքուն նախ խեղդում էր հայկական երկրամասի համար սկզբունքային նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծումը, մյուս դեպքում՝ հլու-հնազանդ պահում իրավիճակը եւ, ապա, արժանանում հայերի «բարոյացական վերաբերմունքին»: Ստորեւ բերվում են ԼՂԻՄ-ի նկատմամբ Բաքվի վարած խարդավանքների բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Ավելի հիմնավոր լինելու համար բերենք Ադր. ԿԿ Կենտկոմի օրգան «Վըշկա» թերթից քաղված ներքոհիշյալ արտառոց տեղեկությունները:

Սկսած 1960-ական թթ. կուսակցական ժողովներում, թերթերում, գրքերում ապշեցուցիչ համերաշխությամբ, սկզբում երկչուտ, իսկ Ադրբեջանի քաղաքական երկնակամարում Գեյդար Ալիևի երեւալուց հետո, հանդիսավոր կերպով թմբկահարվում էր Ստեփանակերտում այս կամ այն գործարանի կառուցման մասին: Եվ ապա, միանշանակ արձանագրվում, որ «դա ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի ղեկավարների հայրական հոգատարության մի նոր փայլուն օրինակ է»: Մինչդեռ իրականում պատկերն ուղիղ հակառակն էր: Մի կողմից աճապարանքով դեմոնտաժվում էին Ստեփանակերտում եւ մարզի մյուս հայկական բնակավայրերում կառուցված եւ գործող արդյունաբերական ձեռնարկությունները, մյուս կողմից՝ քարոզչական նպատակներով ինֆորմացիա հեղեղում աներեւակայելի ժամանակակից գործարանների կառուցման մասին: Գյուղերում արագորեն փակեցին, քանդեցին մետաքսի շահութաբեր ֆաբրիկաները՝ փողոց մետելով հազարավոր մետաքսագործների: Պատճառաբանեցին, որ 19-րդ դարից գործող այդ ֆաբրիկաները պատիվ չեն բերում սոցիալիստական հզոր արդյունաբերությանը: Այնուհետեւ ավերեցին, վերացրին կղմինդրի, կահկարասիների, ատաղձագործական եւ օղեթորման մի քանի տասնյակ փոքրիկ ձեռնարկություններ: Քանդեցին Ստեփանակերտում 8 տարվա ընթացքում կառուցված սննդարդյունաբերության կոմբինատը եւ նրա բոլոր սարքավորումները նվիրաբերեցին Նախիջևանի ԻԽՍԳ-ին: Նույն ճակատագրին են արժանացել նաեւ Ստեփանակերտի գորգագործական ֆաբրիկան եւ արդյուսի գործարանը: Առաջինի վերածվեց հարմարեցվեց հանրակացարանի, իսկ երկրորդը տրամադրվեց Լաչինի շրջանից եկած անասնագողերին, որպեսզի այն օգտագործեն որպես անասնագոմ:

Արցախահայության զայրույթը փարատելու համար Ադրբեջանի

դեկավարները առաջ քաշեցին «Քանդում ենք նորը կառուցելու նպատակով» կարգախոսը: Որոշվում է սննդի կոմբինատի ազատված շենքում մոնտաժել միկրոշարժիչների արտադրության համար «ստացված» սարքավորումները: ԶԼՍ-ները ջանադրաբար թմբկահարում էին այդ գործարանի անհրաժեշտությունը, նրանում 1500 բանվորի համար աշխատատեղ տեղծելու պարագան (*տես՝ «ԼՂԻՄ 40-տարին», Քաբու, 1963, էջ 30*): Սակայն երկու տարի հետո հայտնի է դառնում, որ միկրոշարժիչների փոխարեն պետք է արտադրվեն խառատային գործիչներ: 1500 բանվորի փոխարեն այն կունենա 300 բանվոր: Նույնիսկ մատնացույց էր արվել, որ ապագա գործարանի նախագիծը կազմվել է Ռուստովի «Ճանապարհաշին» նախագծային ինստիտուտի կոլեկտիվի կողմից: Անցնում էին տարիներ, բայց նշված գործարանը չէր կառուցվում: Պարզվում է, որ ԼՂԻՄ-ին հատկացված կապիտալ միջոցների հաշվին, հայ շինարարների ջանքերով, այն արդեն կառուցվել է ադրբեջանական Աղղամ շրջկենտրոնում: Այնուհետև «Վըշկան» իր 1973 թ. հունիսի 7-ի համարում, ԼՂԻՄ-ի 50-ամյակին նվիրված հոբեյանական հրապարակման մեջ գրում է. «Մինչև հնգամյակի վերջը մարզկենտրոն Ստեփանակերտում կկառուցվի առետրի սարքավորումների տեխնոլոգիական գործարան»: Սակայն անցնում է երկու հնգամյակ, բայց նշված գործարանը եւս չի կառուցվում:

Դարձյալ «Վըշկան» իր 18/VI-81 թ. համարում գրում է. «Ներկայումս Ստեփանակերտում կառուցվում է խոշոր ավտովերանորոգման գործարան»: Դեռ ավելին՝ «պարզվում» է, որ «1982 թ. հունվարին Զեյդար Ալիևն անձամբ շրջագայել է նրա արտադրամասերում»: Այսուհանդերձ, մեծապատիվ հյուրը՝ Զ. Ալիևը, Ստեփանակերտում, կուսակցական ակտիվում հայտարարել է, որ ինքը եղել է «գյուղմեքենաշինական գործարանի շինհրապարակում»: Ինչպես հեքիաթում, «ավտովերանորոգման գործարանը» դառնում է «խոշոր գյուղմեքենաշինական գործարանի շինհրապարակ»: Նույն տարվա հունիսին «Վըշկան» իր 141-րդ համարում դարձյալ անդրադառնում է «ավտովերանորոգման գործարանի» շինարարությանը:

Անցնում է եւս մեկ տարի: 1983 թ. Բ. Կելերկովը Մոսկվայում, «Ազիտատոր» հանդեսում (N 12) ձայնակցում է իր «շեֆին». «Ստեփանակերտում կառուցվում է խոշոր գյուղմեքենաշինական գործարան»: Եվ այսպես... Ստեփանակերտում... թղթի վրա գործարաններ են կառուց-

վում, բայց իրականում նշված գործարաններից ոչ մեկը չի կառուցվել: Դրանք, ԼՂԻՄ-ի կապիտալ ներդրումների հաշվին, հայ շինարարների մասնակցությամբ, կառուցվել են Քաբվում (ավտովերանորոգման գործարանը), Գանձակում գյուղմեքենաշինականը, Լենքորանում՝ միկրոշարժիչներինը եւ այլն, եւ այլն:

Երբ այս ամենի մասին տեղեկացվել է «Վըշկան»-ի խմբագրությանը, տեղումուտեղը շանտաժի են ենթարկվել բոլոր նրանք, ովքեր հիշեցրել են թերթի ճամարտակումները: Թերթը շտապեց «Արտասահմանի ազդեցությունը չէ՞ արդյոք» հոդվածով պիտակներ կպցնել քաղաքացիական դիրքորոշում ունեցող հայերին: Եվ նրանց քաղաքական լուրջ մեղադրանքներով քշեցին հայրենի Ղարաբաղից:

Ինչ վերաբերում է ոչ արտադրական, մշակութային բնույթի շինություններին, ապա այս բնագավառում գրեթե ոչինչ չէր արվել: Այսպես, ավելի քան 15 տարի շարունակ պլանավորվել էր Ստեփանակերտում կառուցել 800 տեղանոց մշակութային պալատ, բայց շինարարությունը ինգամյակից հնգամյակ հետաձգվել էր: Նույն ճակատագրին էր արժանացել նաև մարզային արխիվի (որը տեղավորված էր վարչական շենքի նկուղում, որտեղ բոլբոսներ էլ ոչնչանում էին փաստաթղթերը) շենքի կառուցումը: Թեև վաղուց պատրաստ էր կառույցի բոլոր նախագծերն ու նախահաշիվները: Էլ չենք խոսում պիոներների պալատի եւ մարզական համալիրի մասին: Բաքվից առատ խոստումներ էին տալիս, բայց հնգամյակներն անցնում էին, գործը տեղից չէր շարժվում:

Մարզում գրեթե մեռելային վիճակում էր սպորտը, Ֆիզկուլտուրան: Դպրոցների մեծ մասը ապահովված չէր մարզական գույքով, շրջաններում չկային մանկական մարզական դպրոցներ, մարզահրապարակներ, լողավազաններ, երեխաների կոփման եւ զարգացման համար տարրական պայմաններ:

Մինչդեռ Շուշում, Զ. Ալիևի անմիջական կարգադրությամբ, կառուցվել էր Սոլլա Վագիֆի մոնումենտալ բետոնե մարմարապատ դամբարանը: ԼՂԻՄ-ի բյուջեի հաշվին կառուցած դամբարանը դարձել էր «գորշ գայլերի» հավաքատեղի: Շուշում բացեցին մի շարք ադրբեջանցիների տուն-թանգարաններ, թեև ոչ Զուլեփր Զաջիրեկովը, ոչ Բյուլբյուլը եւ ոչ էլ Վագիֆը ծնունդով շուշեցի չէին: Սակայն դա չէր խանգարել ամեն գնով Շուշին թուրքացնել եւ դարձնելու ադրբեջան-

ցի հայտնի գործիչների «ծննդավայր»:

Առավել անարդար է, եթե չասենք զայրացնող, այն հանգամանքը, որ ինչքան խեղճ է՝ ապրել արցախահայությունը, այնքան գունազեղ են շեփորել նրա ապրելակերպը: Որքան հետընթաց էր եղել հայկական երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքը, այնքան ավելի շատ էին ճառախոսել նրա բարգավաճման եւ ծաղկման մասին: Ընդ որում՝ ադմոնկ-աղաղակները զարդարում էին ժողովուրդների բարեկամության եւ ինտերնացիոնալիզմի «պերճախոս», իրականում՝ կեղծ լոզունգներով: Պարզապես արցախահայության նկատմամբ գործադրված անմարդկային վերաբերմունքը ներկայացվել էր որպես ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի դեկավարների ցուցաբերած անսահման «հոգատարություն»: Կարելի է հազարավոր օրինակներով ցույց տալ, թե ինչպես Բաքվում կազմած եւ հաստատված պլան-առաջադրանքների պարտադրմամբ արցախահայությունից քամում էին ԼՂԻՄ-ի վերջին հյութերը՝ չհաշված բարոյական ստորացումները, հոգեկան տազնապնդումը:

Եթե ասվածին ավելացվի նաեւ այն, որ ամենուրեք ավերում էին հայերին պատկանող բնակավայրերը, արտադրական ձեռնարկությունները, կտրտում այգիները, նողկալի ձեւով վերացնում երկրամասի տնտեսության բնապատմական նշանակություն ունեցող շահութաբեր ճյուղը, քանդում կամ անասնագոմերի վերածում հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, ապա «ինտերնացիոնալ» Ադրբեջանի հայատյաց խտրական քաղաքականության պատկերը փոքր-ինչ պարզ կդառնա: Այս ամենի մասին բնավ ոչինչ չէին գրում կամ եւ թեկուզ հիշատակում ազերիները, եւ ոչ միայն նրանք: Մինչդեռ, սկսած 1950-ական թթ.-ից, տեղի էր ունենում ԼՂԻՄ-ի արդյունաբերության կազմալուծման պրոցես:

Բնավ պատահական չէր, որ 1955 թ. տեղի ունեցած կուսակցական մարզային կոնֆերանսում ելույթ ունեցած երկու պատգամավորներ տազնապ էին հնչեցրել, որ ԼՂԻՄ-ում քանդվել, ավերվել են արդյունաբերական գրեթե բոլոր ձեռնարկությունները: Սնացել են երկու-երեք արտելներ, չհաշված Ստեփանակերտի եւ մարզի միակ արդյունաբերական ձեռնարկությունը՝ մետաքսագործական ֆաբրիկան: *(Այս տխուր փաստերը քաղել ենք կոնֆերանսի սղագրությունից):*

Ակնհայտորեն երեւում էր, որ ԼՂԻՄ-ի նկատմամբ տարվող հայա-

հալած նենգ քաղաքականության խորքում ընկած էր. ա) մի կողմից քանդել-ավերել ԼՂԻՄ-ում գործող արդյունաբերական ձեռնարկությունները, որի հետեւանքով փողոց նետած հազարավոր գործազուրկ արցախահայ բանվորների դուրս մղել իրենց հայրենի բնակավայրերից. մյուս կողմից՝ բ) խնամքով թաքցնելով արցախահայության դեմ կատարածված հանցագործությունները, բարերարի, հոգատարի, ինտերնացիոնալիստի կեցվածք ընդունելով՝ դարաբաղցիների ինքնասիրությունը շոյող խոստումներ տալ:

Ավերման եւ «կառուցման» տրամաբանության հետեւանքներն առավել քան տխուր էին: Կարճ ժամանակամիջոցում Արցախում փակվեցին, ավերվեցին 44 բնակավայրում գործող 54 արդյունաբերական փոքր ձեռնարկություն, որի հետեւանքով շուրջ 2600 բանվոր հարկադրաբար դուրս մղվեց եւ համալրեց Բաքվի, Մումբայի, Մինգեչաուսուրի շինհրապարակներում ու գործարաններում աշխատող տասնյակ հազար դարաբաղցիների շարքերը: Հայկական Արցախ երկրամասի քարտեզից ջնջվեց 47 հայկական գյուղ: Փոխարենը, ցավոք, ոչինչ չկառուցվեց, թեւ կուսակցական եւ պետական մակարդակով շռայլորեն սին խոստումներ էին տալիս: Իբրեւ «սոցիալիստական հզոր երկրին պատիվ չբերող ձեռնարկություններ», ավերեցին նույնիսկ կրի, կզմինդրի, փայտամշակման, ատաղձագործական, լուցկու արտադրության, օղեթորման, կտավհատի յուղի, պանրի արտադրության տեղամասերը: Մի հրամանով վերացրին, թալանեցին ԼՂԻՄ-ի վեց ՀԵԿ-երը:

Ադրբեջանին բռնակցումից հետո ԼՂԻՄ-ի ճանապարհները ուշադրությունից դուրս մնացին: Իսկ Անդրֆեդերացիայի լուծարումից հետո (1936 թ.) ընդհանրապես դադարեցին գրադվել ճանապարհների շինարարության հարցերով: Այլ խոսքով՝ Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի գտնվելու ամբողջ տարիներին հայկական ինքնավարության տարածքում կոշտ ծածկով ճանապարհներ կառուցվեցին: Նախկին ճանապարհներն էլ տասնամյակների ընթացքում չբարեկարգվեցին եւ չվերականգնվեցին: Պա հատկապես վերաբերում է այն ճանապարհին, որը ԼՂԻՄ-ը կապում է Հայաստանի հետ:

Հանրահայտ է, որ ճանապարհային ցանցի, այսինքն տրանսպորտի զարգացումն ունի բացառիկ նշանակություն ռազմավարական, քաղաքական, տնտեսական եւ հոգեբանական իմաստով: Չէ՞ որ ան-

տեղի չէ ասված, թե ճանապարհները ցանկացած երկրի տնտեսական զարկերակներն են: Իսկ այստեղ, ԼՂԻՄ-ում, ամբողջ մարզը ծրագրված կերպով զրկեցին արյան նորմալ շրջանառությունից: Դրա նպատակը դարձյալ հայկական բնիկ տեղացի բնակչությանը հարազատ վայրերից արտաքսելն էր:

3. ՀԱՅԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՍԱՆ ՊԵՏՊԼՍՆ

Հանրահայտ է. որ մինչև XX դ. 60-ական թթ. թաթար-ադրբեջանցիները սեփական ճարտարապետա-շինարարական փորձ չունեին, անգամ քարը քարի վրա դնել չէին կարողանում, ուստի իրենց համար բնակելի եւ հասարակական շենքերի կառուցումը պատվիրում էին հայ վարպետներին. որոնց ձեռքում էր ամբողջ Ադրբեջանի շինարարության մենաշնորհը: Կոնկրետ փաստեր բերեմ պաշտոնական փաստաթղթերից: Դեռևս XX դ. 30-ական թթ. վերջերին, ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահ Կարկարյանը ափսոսանք էր հայտնել, որ «Ադրբեջանի կառավարությունը տարեցտարի կրճատում է կապիտալ շինարարության ֆինանսավորումը, եւ տեղում աշխատանք չգտնելու պատճառով, հայկական մարզից շինարարները զանգվածաբար հեռանում են: Ժողովնտիաշվառման տվյալներով, Ադրբ. ԽՍՀ-ի քաղաքներում եւ շրջաններում աշխատում էին ավելի քան 52 հազար դարաբաղի հայ շինարարներ (տե՛ս՝ ԼՂԴ-ի արխիվ, ֆ. 2, ց. 15, գ. 101, թ. 75):

Ահա թե ինչու էին ի հայտ եկել մահմեդական հավատքի շենքեր հայկական գլխատների եւ կոթողային հուշարձանների ճարտարապետական բնութագրիչ գծերով: Եվ այսօր դժվար չէ տեսնել նույնանման կառույցներ ոչ միայն Լեռնային Ղարաբաղին հարեւան ադրբեջանական շրջաններում, այլ նաեւ ամբողջ Ադրբեջանում, որտեղ պահպանվել են նստակեցության անցած թաթարների առաջին մզկիթների եւ բնակելի տների բազմաթիվ նմուշներ:

Նույնիսկ նրանց պաշտամունքային շենքերը հիշեցնում են հայկական միանավ եկեղեցիները՝ միայն թե ուրիշ տեսքով եւ առանց արսիդների: Նրանք կառուցվել են նույն հայկական շինարարական տեխնիկայով, նույն ճարտարապետական կոնստրուկցիաներով եւ հորինվածքով: Հայկական ճարտարապետության մանրամասների այսպիսի զանգվածային ընդօրինակումները քուչվոր-անասնապահների կող-

մից նկատելի էին ընդհուպ մինչև խորհրդային ժամանակները եւ նույնիսկ դրանից էլ հետո (տե՛ս Մ. Սարգսյան, «Շուշիի քաղաքաշինության պատմությունից», Ե., 1996, էջ 26-27, Ա. Ս. Վարթանեսով, «Ակնարկ Լեռնային Ղարաբաղի բնակելի տների եւ շինարարական կաղերի», ԽՍՀՄ ԳԱ-ի Ադրբեջանական մասնաճյուղի աշխատություններ, հ. 25, Պատմական մատենաշար, 1936, էջ 117-118):

Ի դեպ, 1920 թ. վերջերից Արցախ-Ղարաբաղից եւ Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերից ամեն տարի հետեւողականորեն եւ պլանաչափորեն հազարավոր երիտասարդ հայերի էին հավաքագրել եւ մշտական աշխատանքի ուղարկել Բաքվի եւ Ադրբեջանի այլ քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններ եւ շինարարական կազմակերպություններ, ինչպես նաեւ արաքսամերձ անմարդաբնակ տոթակեզ խոպան հողերը մշակելու, նոր գյուղեր, ավաններ կառուցելու: Հետագայում, հատկապես 1940-60-ական թթ.-ին, Արցախի գյուղերից ՖԳՌԻ (Ֆաբրիկա-գործարանային ուսուցման) էին քշել ոչ միայն պատանիներին, այլ նաեւ աղջիկներին:

Այդ հրահանգը գալիս էր վերելից: Բաքուն սպառնում էր իր տեղական գործակալներին, որ Լեռնային Ղարաբաղից հայերի հավաքագրումը հույժ կարելուր կառավարական պատվեր է եւ ենթակա է անվերապահ կատարման: Պետք էր կառուցել Բաքուն, Սոււմգայիթը, Մինգչաուրը, Կիրովաբադը: Հարյուր հազարավոր հայեր գոհ դարձան այդ սարսափելի վերաբնակեցմանը, որի հետեւանքով դատարկվեցին Արցախի շատ գյուղեր: Մարդիկ գնում էին կառուցելու, որպեսզի շինարարության ավաղտից հետո հրով ու սրով վնդվեին իրենց իսկ կառուցած քաղաքներից: Մինչդեռ եթե հայերի ձեռքով չկառուցվեին անգամ Բաքվի շենքերը, ապա այդ քաղաքները կունենային միայն ու միայն անգույն միկրոշրջաններ եւ անճաշակ թաղամասեր: Այսպիսով, Արցախ-Ղարաբաղից դուրս էր տարվել կազմակերպված բանվորական ուժը, իսկ դրա հետ կապված նոսրացումը լրացվել էր այստեղ վերաբնակեցվող անասնապահ ադրբեջանցիներով:

Սի խոսքով, Բաքվի դավադրությունը երեք նպատակ էր հետապնդել. հայերին վնդել Արցախից, այն բնակեցնել ադրբեջանցիներով եւ բարեհաջող իրականացնել Ադրբեջանի քաղաքների կառուցապատումը: Եվ այդ նենգ քաղաքականության արդյունքը ավելի քան շոշափելի է: Եթե հետպատերազմյան 40 տարիների ընթացքում ԼՂԻՄ-ում

հայերի թիվը նվազել է 18 տոկոսով, ապա ադրբեջանցիների թիվը ավելացել է 3,5 անգամ: Ցանկալի է բերել եւս մի պերճախոս օրինակ: Եթե 1912 թ. Շուշիի բնակչության ընդհանուր թվից (42.400 մարդ) հայերը կազմում էին 61,5 տոկոս, ապա 1989 թ. մարդահամարի տվյալներով քաղաքում ոչ մի հայ չէր մնացել: Այսպիսին է Ադրբեջանի հակահայկական քաղաքականության արդյունքը, ինտերնացիոնալիստ-ազերիների տրամաբանությունը եւ «մուսուլմանների ու հայերի միջեւ համաձայնություն հաստատելու» նրա ռազմավարությունը: Այսպիսին է «Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին լայն ինքնավարություն տալու» վարդապետությունը:

Միայն արաքսամերձ չոր տափաստանում 1928-1938 թթ. Ղարաբաղի հայերը ստեղծեցին 13 բնակավայր՝ խորհրդային տնտեսություններ (սովխոզներ): Երբ արդեն այդ տնտեսությունները բարգավաճեցին, դրանք դուրս բերվեցին հայկական ինքնավար մարզի ենթակայությունից եւ դարձրին հանրապետական ենթակայության ժղանովի շրջան: Դրանով ԼՂԻՄ-ը գրկեցին Իրանի հետ ընդհանուր սահման ունենալուց, հետո էլ թուրքավարի յուրացրին հայերի քրտինքով ստեղծած տնտեսական եւ մշակութային հսկայական ներուժը: Ապա սկսեցին աստիճանաբար դուրս մղել հայերին. փոխել հայկական էթնիկական կազմով շրջանի ղեկավարներին: Այնուհետեւ դրսից բերեցին քոչվորական կենցաղով մեծ թվով թուրք-ազերիների եւ դարձրին հայերի ձեռքով ստեղծված բերքատու դաշտերի, բարեկարգ բնակարանների տերը: Մի խոսքով, նրանք այդ շրջանի «իսկոննի» բնակիչներ դարձան: Այսպիսով, արդեն 1950-ական թթ. վերջերին շրջանը գրեթե ադրբեջանականացված էր:

Տնտեսություններից մեկը՝ Նորագյուղը, ուներ 700 աշակերտով միջնակարգ դպրոց: Սակայն ծրագրված ահաբեկչական մի շարք «միջոցառումներից» հետո գյուղում 1988 թ. մնացել էր մի 90 տարեկան պառավ իր երեք աղջիկներով, որոնցից երկուսը հաշմանդամ էին եւ ի վիճակի չէին փախչել: Թուրք խուժանը, ծաղրուծանակելով նրանց, «լցրեց» ինքնաթափ մեքենան, բերեց Հայաստանի սահմանազլխին «թափեց»:

«Ժղանովի շրջանի ողբերգությունը ցուցադրում է երեկ թուրքմեն, թուրք, թաթար, նորից թուրք, այսօր յոթ միլիոն ադրբեջանցի կոչվող ժողովրդի սրբազան, «իսկոննի» հայրենիքի ձեւավորման մեխանիզ-

մը» (մանրամասն տես Ա. Հակոբջանյան, «Արցախյան ազտամարտի ակունքների մոտ», էր., 2001, էջ 31-35): Իզուր չէ Հեյդար Ալիևը Ադրբեջանի խորհրդարանում (7 փետրվարի, 1991 թ.) լկտի պարծենկոտությամբ հայտարարել, թե իր կառավարման տարիներին հայկական մարզի ադրբեջանականացումը ավելի հաջող է իրականացվել («Նորհրդային Ղարաբաղ», 13 փետրվարի, 1991 թ.):

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐԸ

Վիճակն աննախադեպ ավելի աղետալի էր ԼՂԻՄ-ի բնակչությանն առաջին անհրաժեշտության ապրանքների, սննդամթերքների ֆոնդերի հատկացման բնագավառում: Տեղի խանութներում դրանց չլինելու պատճառով, հայերս հարկադրված մեկնում էինք Երեւան, Ադրաս կամ արդեն ադրբեջանականացված «Շուշի» այնտեղերից ձեռք բերելու համար: Թեեւ մեզ հավատացնում էին, որ մթերքների մատակարարման ֆոնդային պլանները հայկական բնակավայրերում, «Ադրբեջանի ղեկավարների հայրական հոգատարության շնորհիվ», կատարվում են 120-150 տոկոսով: Այլ խոսքով, ադրբեջանցիներից «կտրում» եւ հայերին էին տալիս իրենց ֆոնդերի մի մասը: Սակայն, երբ բացահայտվեցին այդ տոկոսների կեղծությունը, պարզ դարձավ, որ Ստեփանակերտ քաղաքում, որտեղ կենտրոնացված էր մարզի գրեթե ողջ արդյունաբերությունը, զինական, մշակութային եւ կրթական հաստատությունները, յուրաքանչյուր բնակչին 1971 թ. վաճառվել է 6,5 կգ յուղ, իսկ հարեւան, գրեթե ադրբեջանականացված Շուշիում՝ 13,7 կգ, Ստեփանակերտում՝ 16,1 կգ շաքար, Շուշիում՝ 32, Ստեփանակերտում՝ 20 կգ միս, Շուշիում՝ 28 կգ, Ստեփանակերտում՝ 184 դ/լ օդի, իսկ Շուշիում՝ 382 դ/լ, Ստեփանակերտում՝ 44 կգ կաթնամթերքներ, Շուշիում՝ 151 կգ եւ այլն, եւ այլն:

Դեռ ավելին. ինչպես երեւում է վիճակագրական պաշտոնական տեղեկություններից, ԼՂԻՄ-ի մյուս հայկական շրջաններում պատկերն ավելի ցնցող էր. եթե չասենք՝ խայտառակություն: Երկրի, Ադր. ԽՍՀ-ի եւ ՀիսՄՀ-ի համեմատությամբ ԼՂԻՄ-ում 1971 թ. 7-10 անգամ ավելի քիչ առաջին անհրաժեշտության մթերքներ են վաճառվել: Այդ նույն տարում ԼՂԻՄ-ը արտադրել եւ պետությանն է հանձնել 12 հազար

տոննա միս: Սակայն Բաքուն ԼԴԻՄ-ում վաճառելու համար հատկացրել է ընդամենը 600 տոննա մսի ֆոնդ, փաստորեն արտադրած մսի միայն 5%-ը: Մարտակերտի շրջանում մսի վաճառքի ֆոնդը կազմել է ընդամենը 6 տոննա, ավելի քան 3 հազար տոննա պետությանը հանձնած մսի դիմաց: Դա այն դեպքում, երբ հայկական այդ շրջանում ապրում էր ավելի քան 46 հազար բնակիչ: Եվ այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ում մեկ շնչի հաշվով նույն թվականին վաճառվել է 38 կգ միս, 307 կգ կաթնամթերք, 38.8 կգ շաքար, 35 կգ միրգ (*"Arumator" N 12, 1978, c. 62*): Այս այն դեպքում, երբ երկրում միջին ամսեկան աշխատավարձի՝ 211 ռուբլու դիմաց ԼԴԻՄ-ում այն կազմել է ընդամենը 97 ռուբլի: Այս այն դեպքում, երբ 1966-70 թթ. հայկական մարզում կապիտալ շինարարությունը, ինչպես գրել է ԼԴ-ի մարզգործկոմի նախագահ Ս.Օհանջանյանը, կրճատվել է 57%, իսկ բնակարանային շինարարության պլանները ձախողվել են 65-70%: Այս ամենը, հատկապես «շինարարության հետ մնալը խիստ բացասական է անդրադարձել ինքնավար մարզի ազգաբնակչության աճի, ինչպես նաև տնտեսության զարգացման վրա» (*"Կոմունիստ", 18/VII-71 թ.*):

Ահա քեզ «հոգատարություն», այն էլ՝ «հայրական»:

Աշխատանքի բերումով բազմիցս ես ականատես եմ եղել. թե ինչպես կուսմարզկոմը եւ մարզգործկոմը ի վիճակի չէին լուծելու մի տեխաշխատակցի հաստիքի կամ 5000 ռուբլի նախահաշիվ ունեցող գյուղական գրադարանի կառուցման հարցերը:

«Չնարավոր չէ Մարտակերտ ավանը փրկել ջրի սովից: Մանկապարտեզների, մշակույթի օջախների, դպրոցների, հասարակական սննդի օբյեկտների, պետական հիմնարկությունների եւ բնակելի շենքերի ջրածորակները վաղուց օդ են արտաշնչում» (*"Սովետական Ղարաբաղ", 22/IX-71 թ.*): Այս այն դեպքում, երբ այդ նույն շրջկենտրոն Մարտակերտի խորհրդային տնտեսությունը ամեն տարի պետությանն էր հանձնում 20-25 հազար տոննա խաղող, 1200-1500 տոննա հացահատիկ, 1300 տոննա կաթ, 200-250 տոննա միս, 2000 տոննա բանջարեղեն, 20-25 տոննա բուրդ, 10 տոննա բոժոժ, 1600 հազար ձու: Սակայն տնտեսությունն իրավունք չուներ իր եկամուտներից 200-300 հազար ռուբլի հատկացնել ջրատար անցկացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ Բաքուն չկամություն էր դրսևւորում, բայց միաժամանակ զգուշացնում, որ ջրի վարձը մնում է վարձ: Դա օրենք է, իսկ հայերը օրի-

նապաշտ ժողովուրդ են:

Խմելու ջրի մատակարարման վիճակը սոսկալի վատ էր մարզկենտրոն Ստեփանակերտում: Օրվա ընթացքում մեկ շնչին ընկնում էր ընդամենը 2 լիտր խմելու ջուր: Փաստորեն քաղաքում մի աղբյուր կար «երեք կոան» անունով: «Տարվա բոլոր եղանակներին գիշեր-ցերեկ, ինչքան էլ շուտ գնաս ջրի, որ հերթ չլինի, միեւնույն է, դույլերն արդեն մեկ մեկու կողքին դրված, երեք երկար շարան էին կազմում: Որքան տարածություն են կտրում 50 հազարանոց քաղաքի բնակիչները, ինչքան ժամանակ են կորցնում մարդիկ, մի դույլ ջուր էին հագիվիազ տուն հասցնում» (*"Սովետական Ղարաբաղ", 7/III -1971 թ.*): Երբ մարդիկ իրավացի բողոքում էին, տեղնուտեղը մեղադրվում էին «տեղական մացիոնալիզմի» մեջ եւ... Ջրի պակասից հաճախակի կանգնում էին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, չորանում բույսերը: Զաղաքային կոյուղին ամիսներով ջուր չէր տեսնում, «կտմունալ բոլոր հարմարություններով ապահովված» բնակարաններից գարշահոտություն էր փչում: Եվ այսպես, «912 անգամ» (արդյունաբերական զարգացման) ան ունեցող մարզը ի վիճակի չէր 17 տարվա ընթացքում 8 կմ երկարությամբ ջրատար անցկացնել: Սա ոչ միայն պարադոքս է, այլևս խեղկատակություն:

Մյուս, ոչ պակաս պարադոքսն այն է, որ հայկական մարզը չուներ գիտական հիմնարկություններ, չկային նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ, հրատարակչություն, հեռուստաստուդիա: Չունեի անտառտնտեսության մարզային վարչություն, թեև երկրամասի ամբողջ տարածքի 40% զբաղեցնում են անտառները:

Բնակչության ապահովվածությունը մասսայական գրադարաններով, գրքերով, ակումբներով, երկրի նորմատիվային ցուցանիշների համեմատությամբ, կազմում էին 27-29%: Հիվանդանոցներով, մահճակալներով ու բժիշկներով ապահովվածությունը՝ 22-26%, դեղատներով, դեղերով՝ 16%, իսկ կենցաղային սպասարկման ծառայություններով՝ 13.5%: ԼԴԻՄ-ի նախադպրոցական հասակի երեխաների միայն 3% էր հաճախում մանկապարտեզներ: Ստեփանակերտում բնակարան ստանալու համար առնվազը 20-25 տարի պետք էր հերթագրված սպասել:

Միաժամանակ, ԼԴԻՄ-ի բնակչության մեկ շնչի հաշվով թերթերի, ամսագրերի բաժանորդագրության պլանը 6 անգամ գերազանցում էր

միութենական, 22 անգամ ադրբեջանական միջին ցուցանիշները: Կինոհաճախումների տարեկան պլանը հայկական մարզում նախատեսվում էր 25 մարդ, իսկ Ադրբեջանում՝ 4: Կենցաղային սպասարկումների առաջադրանքների համար ԼՂԻՄ-ի մեկ շնչի հաշվով 17 ռուբլի էր պահանջվում, իսկ ադրբեջանական շրջաններում՝ 3,7: Մարզկենտրոնի, շրջկենտրոնների, մարզի գյուղերի հետ երթուղային ավտոբուսներով կապվածությունը հազիվ կազմում էր 9%:

Սրանք էլ ճիշտ կլինի համարել մայրական, ավելի ճիշտ, կոմունիստական հոգատարության դրսևորումներ:

Այսուհանդերձ, սխալ է պնդել, թե դարաբաղցիների պահանջը հետևանք է սոսկ սոցիալ-տնտեսական բիրտ քաղաքականության: Ճիշտ կլինի ասել, որ սոցիալ-տնտեսական վայրագ քաղաքականությունը, որ ԼՂԻՄ-ը դարձրել էր հորհրդային Միության, Ա. Վոլսկու բառերով՝ «ամենաբարձիթողի անկյունը», եղել է հենց «ազգային խտրական քաղաքականության արտահայտություններից մեկը»: Իսկ խտրականության սկզբնապատճառը ԼՂԻՄ-ի արմատական բնակչության հայերի ինքնորոշման իրավունքի համիրավի ոտնահարումն էր: Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ հայկական մարզում չէին լուծվում հայ բնակչության ազգային շահերը շոշափող գրեթե ոչ մի հատկապես մշակույթի, կրթության ոլորտներում եւ կադրային քաղաքականության մեջ: Ուտնահարվել էին ինքնավար մարզի ազգաբնակչության ամենատարրական իրավունքները: Մի՞թե քաղաքական արկածախնդրություն չէր, որ 1941-1945 թթ. մարզի հայ բնակչության 35 %-ը (4-5 անգամ ավելի շատ, քան հարեւան ադրբեջանական շրջաններից) քշվեց ռազմաճակատ:

Մի՞թե հայ ժողովրդի նկատմամբ ռճրագործություն չէր, որ պատերազմից հետո, 1949 թ. հունիսի 14-ի գիշերը, հազարավոր, բոլորովին անմեղ արցախցի հայեր, արքայություն Ալթայի երկրամաս: Մի՞թե ավանտյուրիզմ չէր, որ 1950 թ. դեկտեմբերին Ադր. ԿԿ Կենտկոմի կարգադրությամբ պատահողական արցախահայերի անկողինները, եւ այնտեղից հանված 200 տոննա բրդով փակեցին Ստալինի ծննդյան պատվին ստանձնած արտապլանային «առաջադրանքները»: Մի՞թե ցեղասպանություն չէր, երբ ստեղծվել էին այնպիսի անտանելի պայմաններ, որոնց դեպքում մարզի բնիկ հայ բնակչության մեծ մասը՝ յուրաքանչյուր 10 հոգուց 9-ը ստիպված հեռանում էր հայրենի օջախ-

ներից (Շահեն Սկրտչյան, *Արցախ, եր., 1991, էջ 71-73*):

Այսբանից հետո առնվազն քմծիծաղ է հարուցում ադրբեջանցի գիտնական Էլիխան Մեհթիեւի հերթական քարոզչական նպատակով արված բարբառանքը, թե իբր «տնտեսական-մշակութային առումով ԼՂԻՄ անհամեմատ բարվոք վիճակում է եղել եւ կյանքի մակարդակը ավելի բարձր էր, քան Ադրբեջանի եւ Հայաստանի մյուս տարածաշրջաններում» (տես՝ *Որա Հայ-ադրբեջանական բախման զարգացման մի քանի հայեցակետերը եւ այն կարգավորելու ջանքերը, «Գիտություն» N 15, 1998*):

Ադրբեջանցի մեկ այլ գիտնական, այժմ արդեն ակադեմիկոս Մահմեդ Իսմայիլովը դարձյալ («Բակինսկի ռաբոչի» թերթում՝ 15 հունվարի 1991 թ.) գրել է, որ «Լեռնային Ղարաբաղը իրենից ներկայացնում է զարգացած ինդուստրիալ-ագրարային մարզ եւ զարգացման մակարդակով գերազանցում է Ադրբեջանի մյուս շրջաններին»: Եթե Իսմայիլովն իրեն լուրջ գիտնական է համարում, ապա պետք է որ կարդացած լիներ ԽՍՀՄ-ի թիվ առաջին «Պրավդա» թերթի 1989 թ. հունվարի 15-ի համարում ԼՂԻՄ-ի հատուկ կառավարական կոմիտեի նախագահ, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Վոլսկու հոդվածը, որտեղ սետով սպիտակի վրա գրված է. «Երկրում շրջագայելիս, ես երբեք չեմ հանդիպել մարդկանց ճակատագրերի նկատմամբ նման անուշադրության ու արհամարանքի, ինչպիսինը Լեռնային Ղարաբաղում»: Իսկ Մոսկովյան «Պոլիտիչեսկոյե օբրազովանիե» հանդեսի 1989 թ. 3-րդ համարում հրապարակախոս-քաղաքագետ Վ. Ղորոֆեեւը գրել է. «Լեռնային Ղարաբաղի պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունները միայն 1981-1985 թթ. ստացել են 69 անգամ քիչ կապիտալ ներդրումներ, քան Ադրբեջանում՝ միջին հաշվով»: Եվ ընդհանրապես, եթե Ադր. ԽՍՀ-ի պետական բյուջեն 6 տարում ավելացել էր 106,5 անգամ, ապա ԼՂԻՄ-ինը՝ ընդամենը 3,6 անգամ:

Կարելի է էլի շարունակել նմանատիպ տասնյակ փաստերի թվարկումը, ապացույցներ բերել, սակայն դրա կարիքը, կարծում եմ, չկա, քանզի պատկերը առավել քան հասկանալի է:

Չեմ կարծում, թե Բաքվում չգիտեն, որ ստի ոտքերը կարճ են լինում: Այլապես Հեյդար Ալիև բաբան, Ադրբեջանի նախագահը, իր մոտ հրավիրած վարձու փուչիկ փչողներին խորհուրդ չէր տա՝ «Աշխատեք ձեր հորինած ստերը, կեղծիքները, ճշմարտանման դարձնել, որպեսզի

դժվարանան դրանց բացահայտումը եւ ունենան որոշակի դիմացկունություն»։ Մինչդեռ հարկ չկա զբաղվել նենգափոխությամբ, սուտ ու սխալ տեղեկություններ, փաստարկներ տիրաժավորելով։

Ինչեւիցե։ Բերված համառ փաստերից կարելի է ընդհանրացնել, որ Արցախ-Ղարաբաղի հազարամյակների պատմության մեջ դեռ չի եղել այնպիսի ժամանակաշրջան, որ երկրամասի հայության բախտով ածպարարություն անեն այսպես անամոթաբար եւ անպատկառորեն, այնպիսի բացահայտ թշնամական կոմբինացիաներով ու խաբեբայությամբ, ինչպես այդ անում էին Ադրբեջանի բռնատիրության տարիներին։

Մի խոսքով՝ Ղարաբաղի հայության նկատմամբ իրականացված սադիստական քաղաքականությունն ունեցել է մի անսքող նպատակ՝ հնարավորին չափ արգելակել հայկական երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացումը, ոտնահարել արժատական հայ բնակչության արժանապատվությունն ու շահերը, ստեղծել անտանելի վիճակ եւ դրանով իսկ արագացնել մարզից հայերի դուրսմղումը։

3.9. Մոսկվայում, հայկական կենտրոնում, այս թեմայով ունեցած իմ ելույթը լսելուց հետո, ԻԿՄՄ ԳԱ-ի ակադեմիկոս Կ. Խաչատուրովը երկու ձեռքով բռնել էր գլուխը եւ խոր ափսոսանք հայտնել, որ ինչո՞ւ ինքը, Բաքվում կազմակերպված հեռուստաշուի ժամանակ, իր ձեռքի տակ չի ունեցել վերոհիշյալ ցնցող փաստերն ու տեղեկությունները։

ԳԼՈՒԽ VI

«ՅՈՏՈՐ ԳԱԼԻՍ Է, ԲՈՂՈՐ՝ ԴԵՏԵՎԻՑ»

Ոչխարաբուծության «զարգացումը» նպատակ էր հետապնդել հայկական երկրամասը վերաբնակեցնել մեծ թվով թուրք-ազերիներով

Տասնամյակների ընթացքում պաշտոնական Բաքվին բոլորովին չի հետաքրքրել հայ բնակչության շահերը, անգամ երկրամասի տնտեսական վիճակը։ Ընդհակառակը՝ Բաքվի նենգադավ միտքը եղել է եւ է այդ շահերին մեծ վնաս հասցնելը։ Խոսքն այն մասին է, որ եթե Բաքուն դրան չձգտեր, ապա դժվար թե մի հարվածով ոչնչացներ Ղարաբաղի՝ Սովետական Միության սահմանադրական միավորի, արտադրական տասնյակ ձեռնարկություններ, լրիվ կործանման եզրին հասցնե՞ր մեղվաբուծությունը, թթագործությունը, այծաբուծությունը, արհեստագործությունը, բան-ջարաբուծությունը՝ երկրամասի համար բնապատմական ապրանքային նշանակություն ունեցող այդ առավել շահութաբեր ճյուղերը։ Միաժամանակ, մարզի տնտեսություններին միտումնա-վոր վնաս հասցնելու համար չէր ստիպի, ուղղակի չէր պարտադրի, որ հայերը զբաղվեն մի այնպիսի ճյուղով, որի զարգացման համար՝ երկրամասի բնատնտեսական պայմանները անհամեմատ անբարենպաստ են։ Սակայն ո՞չ այդ հանգամանքը եւ ոչ էլ արտավայրերի՝ գլխավորապես ոչխարներով գերծանրաբեռնելու հետեւանքով ակտիվացած էրոզիայի պատճառած անդետները բնավ չհետաքրքրեցին սակավահող երկրամասի բնության՝ մեր հավերժական հարստության հիմքերը ավերողներին։

Մարզի տարածքում եղած արոտավայրերը (28.471 հեկտար) եւ տնտեսությունների կուտակած կերային պաշարները հազիվհազ հնարավորություն էին տալիս պահելու շուրջ 100.000 գլուխ անասուն։ Նույնիսկ 30-ական թթ., երբ մարզում կար ընդամենը 104.666 գլուխ անասուն (այդ թվում 50.716 խոշոր, 39.433 մանր եղջերավոր), տնտեսությունների ղեկավարները, գյուղատնտեսական մասնագետները, անասնապահները, անգամ կուտակցական եւ պետական իշխանության պատասխանատու աշխատակիցները մարզային, շրջանային եւ

գյուղական մասշտաբի բոլոր կարգի ժողովներում, թերթերում բողոքում էին մարզի արոտավայրերի կերապաշարների խիստ անբավարարության մասին: Բայց ահա Անդրֆեդերացիայի վերացումից հետո Ադրբեջանի ղեկավարները, արհամարհելով դարաբաղցիների արդարացի բողոքները, մի հարվածով մարզի ամասնագլխաքանակի պլանները ավելացրին գրեթե 4,5 անգամ, այդ թվում՝ ոչխարներինը ավելի քան 8 անգամ: Մինչդեռ կերային բազան մնացել էր այնքան, ինչքան եղել էր 30-ական թվականների սկզբին:

Այդ ամենի հետ մեկտեղ, կրճատվել էր ադրբեջանական որոշ շրջաններում ոչխարների գլխաքանակը, իսկ մի շարք շրջաններում այն լրիվ վերացվել էր, չնայած այդ շրջանների տնտեսության մեջ ոչխարաբուծությունը կարելուր տեղ էր զբաղեցնում եւ այն համարվում էր բնապատմական, եկամտաբեր ճյուղ: Ասածս հիմնավորելու համար բերեմ հետեւյալ անառարկելի փաստերը. 1934 թվականի համեմատությամբ 1975 թվականին Ադրբեջանում մանր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացել էր երկու անգամ, եւ դա այն դեպքում, երբ հանրապետությունն ունի 2.056.233 հեկտար արոտավայր: Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում 102.971 հեկտար արոտավայրի առկայության պայմաններում, ոչխարների գլխաքանակը (158.556) ոչ միայն չի պահպանվել, այլ պակասել է 20,2 հազարով, իսկ Լեռնային Ղարաբաղին 28471 հեկտար արոտավայրի (որից միայն 1300 հեկտար ձմեռային) դիմաց պլանավորված էր 8 անգամ ավելի շատ՝ 270000 ոչխար: Բերված փաստերը ավելի կոնկրետացնենք: Ադրբեջանում յուրաքանչյուր հեկտար արոտավայրի դիմաց պահվում էր երկու ոչխար, Նախիջեւանում՝ մեկ, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ ավելի քան տասը ոչխար: Խտրականությունը նկատվում էր նաեւ յուրաքանչյուր անասունի համար մթերատվության եւ պետական լրացուցիչ առաջադրանքի պլանավորման մեջ:

Այսպես, Ադր. ԿԿ Կենտկոմի եւ Ադր ԽՍՀ կառավարության 17 ապրիլի 1969 թ. N 170 որոշմամբ, պլանավորվել էր ԼՂԻՄ-ի յուրաքանչյուր ոչխարից խուզել 2,2 կգ բուրդ, իսկ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում՝ 1,5 կգ: Պետությանը լրացուցիչ բուրդ հանձնել համապատասխանաբար՝ 116,6 եւ 38 տոննա (*փաստաթղթի պատճենը գտնվում է հեղինակի անձնական արխիվում*):

Այդ նույն ժամանակաշրջանում Ադրբեջանում ոռոգելի հողատա-

րածությունների քանակն ավելացել էր 2,5 անգամ, Նախիջեւանում՝ 1,8, իսկ Լեռնային Ղարաբաղում այն պակասել էր 21 տոկոսով: Մարզում կերակուլտուրաների տակ գտնվող ցանքատարածությունների միայն 0,7 տոկոսն էր ոռոգվել, կան բացարձակ թվերով՝ 221 հեկտար: Եթե ասվածին էլ ավելացվի այն, որ ԼՂԻՄ-ը չուներ համակցված կերելի գործարան, հացամթերքների ոչ մի ձեռնարկություն, որտեղ հնարավոր կլիներ պահեստավորել եւ վերամշակել ամեն տարի հայկական մարզում արտադրվող ավելի քան 100 հազար տոննա հացահատիկի բերքը, ապա դրությունն առավել բարդ էր, քան կարելի է ենթադրել:

Դեռ ավելին, հետագա տարիներին Բաքում, Ղարաբաղին տնտեսապես խեղդելու նպատակով, (հենց այնպես՝ օդից բռնած) պլան էր իջեցրել, որի համաձայն անասունների գլխաքանակը տասնապատիկ ավելի մեծ էր, քան թույլ էին տալիս երկրամասի բնական ռեսուրսների շահավետ եւ խնամքով օգտագործման հնարավորությունները: Այլ կերպ՝ Բաքում փորձում էր 2 տոննանոց մեքենայի թափքի մեջ 10 տոննա բեռ տեղավորել: Ի պատիվ Ադրբեջանի ղեկավարների ասեմք, որ նրանք, պետական իշխանությունը չարաշահելով, քաղաքական մեղադրանքներ հարուցելով, բեռը մի կերպ «տեղավորել են տալիս»: Բայց այդ ծանրության տակ մեքենան անկարող էր լինում առաջ շարժվել: Պայթում էին դողերը, շարքից դուրս գալիս շարժիչները, կողափայտանասերը, ծռվում էր հեծանը եւ, այսպիսով, մեքենայի հերմանիծվում էր: Ավելի հիմնավոր լինելու համար հարկադրված եմ մեքերերում կատարել 23.02.80 թ.-ին, Ղարաբաղցիների՝ Մոսկվա՝ ԽՍՀԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնեւի. տողերիս հեղինակի գրած նամակից մի հատված.

«Մենք՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հաղորդի շրջանի Արփազյադուկ (Քարինգ), Պետրոսաշեն, Խծաբերդ, Հին Թաղլար, Դուլանլար, Աղաջաբենդ (Խանձածոր), Ծամձոր, Բանազուր, Մուլբուդարա (Հայրենատեր), Ցոր եւ մյուս գյուղերի անասնապահներս, մեխանիզատորներս, այգեգործներս մեր ծռված ճակատագիրը ուղղելու հարցով դիմում ենք Ձեզ:

Ադր. ԽՍՀ ղեկավար մարմինների կողմից ցուցաբերվող անտարբերության, անհոգության եւ ազգային խտրական քաղաքականության հետեւանքով մեր, երբեմնի շեն գյուղերը վերածվել են ավերակների,

պետական եւ կոլեկտիվ տնտեսությունները ետադիմելով քայքայման եզրին են հասցվել:

Թեեւ բնակչության մեկ շնչի հաշվով մեր հայկական շրջանում 10-20 անգամ ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ են արտադրվում, քան հարեւան ադրբեջանական շրջաններում, բայց մենք 100-1000 անգամ քիչ նյութեր, հատկացումներ, ֆոնդեր, կապիտալ ներդրումներ ենք ստանում, քան ադրբեջանցիները:

Ետպատերազմյան 41 տարվա ընթացքում հայկական բնակավայրերում չի ստեղծվել ոչ մի սոցիալական ինֆրաստրուկտուրա, չի ավելացվել ոչ մի հեկտար ջրովի հող, կառուցվել ժամանակակից պահանջով անասնազոմ, բացվել արդյունաբերական ձեռնարկություն կամ մասնաճյուղ: Ավելի ծանր դրության մեջ են գտնվում լեռնային տնտեսությունները, գյուղերը: Ճանապարհագուրկ, տեխնիկան օգտագործելու հնարավորությունից զրկված, անհամեմատ պակաս աշխատուժ ունեցող տնտեսություններում աշխատանքները կատարվում են բացառապես նահապետական ձեռով, որի պատճառով արտադրվող մթերքները թանկ են եւ մթերումներից ստացած եկամուտները չեն փակում արտադրական ծախսերը: Այդ ամենի պատճառով գյուղացիները իրենց լարված, ծանր աշխատանքի դիմաց ստանում են չնչին վարձատրություն՝ 10-15 անգամ քիչ, քան երկրի, հանրապետության գյուղացիների միջին աշխատավարձն է: Մարդիկ հարկադրված թողնում են հայրենի գյուղերը, փակվում են դպրոցները, վերանում են բնակավայրերը: Դա էլ իր հերթին հանգեցնում է այն բանին, որ արոտավայրերը վատ են օգտագործվում, հազարավոր հեկտար բերրի հողեր, մնալով անմշակ, խոպանի են վերածվում, այգիները վայրենանում են:

Շրջանի, մարզի բնակավայրերի մեծ մասը տրանսպորտի ավտոբուսային միջոցներով կապված չեն ոչ շրջկենտրոնի եւ ոչ էլ մարզկենտրոնի հետ: Վերջին 30 տարում մեր բնակավայրերում չի կառուցվել կուլտուր-կենցաղային բնույթի ոչ մի շենք, չի բարեկարգվել ոչ մի կիլոմետր ճանապարհ, չի ստեղծվել կապի ոչ մի նոր միջոց, արոտավայրերը, անասնապահական ֆերմաները էլեկտրաֆիկացված չեն: Վատ, շատ վատ է բնակչության բժշկական, կուլտուրական սպասարկումը: Սպորտի մասին խոսք լինել չի կարող, որովհետեւ շրջանի ոչ մի բնակավայրում չի ստեղծված տարրական պայմաններով մարզա-

դահլիճ կամ խաղահրապարակ: Մանրածախ ապրանքների վաճառքը կատարվում էր ընդհատումներով: Խանութներում չես գտնի առաջին անհրաժեշտության ապրանքներ, մթերքներ: Հասարակական սննդի մասին նույնպես խոսք լինել չի կարող, որովհետեւ պատերազմից հետո այդ ուղղությամբ ոչինչ չի արվել: Տնտեսություններին չի հատկացվում անհրաժեշտ շինանյութերի ֆոնդ: Հարկադրված, անթույլատրելի միջոցներով ու ճանապարհներով դրանք տասնապատիկ բարձր գներով ձեռք ենք բերում հարեւան ադրբեջանական շրջաններից:

Մեծ չափերի են հասել անասնազոդության դեպքերը, ավտոմթարները, մթերքները հանձնելու հետ կապված տհաճ դեպքերը: Ամեն տարի տասնյակ ավտոմթարների հետեւանքով զոհվում են տնտեսությունների հայ ղեկավարներ, մասնագետներ, շարքային աշխատողներ: Շարքից դուրս են գալիս ավտոմեքենաները, տրակտորները, լիջանում հազարավոր տոննա գյուղատնտեսական մթերքներ:

Մենք զրկված էինք մայրենի լեզվով հաղորդումներ լսելու, ներկայացումներ դիտելու հնարավորությունից: Մեզ չեն թողնում, որպեսզի շփման մեջ լինենք մեր ժողովրդի նշանավոր արվեստագետների հետ: Դեռ ավելին, հաճախակի մեզ հրամցնում են այնպիսի գրականություն, ռադիոհեռուստահաղորդումներ, որոնցում բացեիքբաց նենգափոխում են մեր պատմությունը, պղծում մշակույթի հուշարձանները, դրանով իսկ կոպիտ, թուրքավարի վիրավորում մեր ազգային արժանապատվությունը: Պարզ ասած, մեր հանդեպ կատարվող ազգահալած բիրտ քաղաքականության հետեւանքով մենք հարկադրված թողնում հեռանում էինք մեր պապենական երկրամասից»: Հենց դա էլ թուրք ազերիների ուզածն էր, ծրագրածը (*մանրամասն տես Շ. Սկրտչյան, Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա, եր., 1996, էջ 123-125*):

Հեռուն գնացող նպատակներ հետապնդող այս քաղաքական վայրկերումները փորձանք եղան մարզի տնտեսությունների համար: «Մարզի շատ տնտեսություններում չէին հերիքում անասնակերը, եւ ելք էին գտել. կացնահարում էին ծառերը, բողբոջներով կերակրում անասուններին» (*«Սովետական Ղարաբաղ», 21.03.72, N 67*): Դե արի բողբոջներով անասնաբուծություն զարգացրու: Անասնաբուծության ուղղակի վնասները տարիների ընթացքում, փաստորեն, քայքայեցին, լրիվ կազմալուծեցին երբեմնի առաջավոր տնտեսությունները, լեռնալանջերի հետ միասին, էրոզիայի ենթարկվեցին շատ հայկական բնա-

կավայրեր, անասունների կծղակների տակ անայացան տասնյակ հազար հեկտար արոտավայրեր, այգիներ, անտառներ:

Ահա թե ինչ նպատակ էր հետապնդում անասունների քանակի (անցյալի, թեկուզ 30-ական թվականների համեմատությամբ) միանգամից 8 անգամ ավելացրած պլանի իմաստը: Սակայն մոլորություն կլինի կարծել, թե Բաքուն միայն դրան էր ձգտում: Այդ ամենի հետ մեկտեղ Ադրբեջանի ղեկավարները հաջողությամբ իրականացնում էին անցյալից ժառանգած իրենց երազանքը՝ արտամղված հայերի փոխարեն Ղարաբաղը բնակեցնել ադրբեջանցիներով: Իմիջիայլոց ասենք, որ Ղարաբաղի ինքնավարության գոյության համար լուրջ եւ վտանգավոր հետեւանքներով հղի այս երեւոյթը կատարվում էր ոչ թե հրամաններով, զենքի ուժով, այլ խորամանկությամբ, տնտեսական, սոցիալական եւ քաղաքական այլեայլ ճնշիչ լծակներ գործադրելով: Ինչի՞ մասին է խոսքը: Այն մասին, որ ինքնավար մարզի ոչխարաբուծությամբ զբաղվող գրեթե բոլոր տնտեսությունները, վերադասի մամլիչի ճնշման տակ, սեփական արոտավայրեր չունենալու պատճառով, հարկադրված էին ոչխարաբուծությամբ զբաղվել անթույլատրելի ճանապարհով՝ «հեռակա» կարգով: Տնտեսություններն իրենց սուղ միջոցներով մարզի սահմաններից դուրս գնում էին արոտավայրեր, ոչխարները պահելու համար վարձում մեծ քանակությամբ անասնապահներ կառուցում փարախներ, 300-400 կիլոմետր հեռավորության վրա տեղափոխում հսկայական քանակությամբ կերեր, սննդա-մթերքներ, վառելիք, կուլտուր-կենցաղային պարագաներ: Այս եղանակով, ինչու չէ, կարելի էր պարտադրել ԼՂԻՄ-ին. որպեսզի տունդրայում նույնպես վարձակալեր տարածքներ եւ զբաղվեր նաեւ եղջերվաբուծությամբ:

Ցավալիորեն, այսքան ջանքեր ու միջոցներ գործադրելուց հետո եւս, մարզի տնտեսությունները ոչխարաբուծությունից միայն ու միայն վնասով էին փակում ինչպես ընթացիկ, այնպես էլ հնգամյա պլանները: Գյուղատնտեսության մարզային վարչությունից վերցրած տվյալներով, 1966 թ.-ին ոչխարաբուծության ուղղակի վնասը կազմել էր 1524 հազար ռուբլի: Այս այն դեպքում, երբ մարզում գյուղատնտեսությունից ստացված օգուտը՝ շահույթը եղել էր ընդամենը 2240 հազար ռուբլի: Նշված տարեթվից տասնամյակներ առաջ եւ նաեւ դրանից հետո զբանցված բոլոր ցուցանիշները միահամուռ կերպով վկայում էին

մարզի համար ոչխարաբուծության վնասարարության մասին: Դարերի փորձը, բնական պայմանները, մասնագետների հաշվարկները ցույց էին տալիս, որ ԼՂԻՄ-ն ի վիճակի էր խնամել 20-30 հազար ոչխար, բայց, կրկնում ենք, Բաքվի պարտադրմամբ այդ թիվը տասնապատիկ գերազանցված էր:

Ի՞նչ վիճակում էր ոչխարաբուծությունը մարզում: Պետք է ասել շատ վատ: Այստեղ ոչխարները պահվում էին պրիմիտիվ ձեւով, ծնռանը՝ փարախներում, ամռանը՝ հեռավոր սարերում: Տակավին անասնապահությունը գտնվում էր քոչվորական մակարդակի վրա, մի հանգամանք, որ այս երկրամասում չորս հազար տարվա ընթացքում գոյություն չէր ունեցել:

Մյուս կարեւոր հանգամանքը, որը չի կարելի անտեսել, այն էր, որ Ղարաբաղում անասնաբուծության «զարգացման» պլանավորումը կատարվել էր առանց հաշվի առնելու մարզի շրջանների բնակչության, այդ թվում եւ աշխատունակ գյուղացիների նվազման տեմպերը: Այս կարեւոր փաստի անտեսումը մարզի, առանձնապես փոքր տնտեսություններում, ստեղծել էր պարզապես անելանելի վիճակ: Եվ տնտեսությունների ղեկավարները ստիպված սկսում էին արտոնյալ պայմաններով հովիվներ, կթվորուհիներ որոնել մարզի սահմաններից դուրս՝ ձմեռային արոտավայրերի մոտ գտնվող ադրբեջանական շրջաններում, առաջարկելով. «Որքան ցանկանում-ես քեզ համար անասուն պահիր, միայն թե հետեւիր նաեւ մեր հոտին»: Ինչ խոսք, եկողը համաձայնվում էր մեծ հաճությամբ: Մոտավոր հաշիվները ցույց էին տալիս, որ հանրային հոտի 500-700 գլուխ ոչխարների պարագայում թուրք հովիվների անձնական 200-300 ոչխարները, որոնք, դարձյալ արտոնյալ իրավունքներով կլանում էին համաժողովրդական սեփականություն հանդիսացող իրենց ցեղակիցների գրեթե ամբողջ կերաբաժինը: Նման արտոնությունները տրվում էին այն պարզ պատճառով, որ տնտեսությունները թեեւ ոչխարաբուծությունից բոլորովին եկամտա չէին ստանում, այսուհանդերձ տեղական ղեկավարների աշխատանքը, նրանց քաղաքական հասունությունը Բաքուն գնահատում էր ոչխարների գլխաքանակի պահպանումով (կրկնում են՝ գլխաքանակի, այլ ոչ թե ստացած մթերքների քանակով), առանց հաշվի առնելու, թե դա ինչ գնով էր ձեռք բերվում:

Այստեղ դարձյալ հարկադրված են փոքր-ինչ մանրամասն անդրա-

դառնալ մի բացառիկ արտառոց, դժոխային ցնցող դեպքի, որի նմանը Արցախ-Ղարաբաղի հայությունը երբեք չի տեսել իր չորս հազար տարվա պատմության ընթացքում: Խոսքը Ադրբեջանի իշխանությունների պարտադրմամբ, դանակներով պատառոտված արցախցիների անկողիներից հանված 200 տոննա բրդի մասին է: Նման բարբարոսություն աշխարհը վաղուց չէր հիշում: Անգամ Խորհրդային մյուս մարզերում, հանրապետություններում, այդ թվում նաև Ադրբեջանում, նման բաներ չէին կատարվել: Ղարաբաղի պարագայում կատարվածը միայն ու միայն քայլազուգություն է հայատոյաց քաղաքականության հետեանք էր:

1949-1950 թթ. տնտեսական տարվա նոյեմբեր-ապրիլ ամիսներին (ԼՂԻՄ-ի համար անսովոր ծյունառատ, բքաբեր ծնունդը) լուրջ դժվարություններ էին ստեղծվել Ադր. ԿԿ Կենտկոմի կողմից սահմանված անասնաբուծական մթերքների պլան-առաջադրանքների անթերի կատարման համար: Չյան հաստ շերտերի տակ էին մնացել ֆերմաներ տանող լեռնային կածանները, լրիվ փակվել էին միջգյուղական ճանապարհները, որի հետեանքով խիստ դժվարացել էր անասնակերի փոխադրումը: Այնքան շատ ծյուն էր տեղացել, որ հարյուրավոր ֆերմաների անասունները օրերով դուրս չէին հանում գոմերից: Մարզը, դրսից օգնություն, օգնություն չստանալով, հարկադրված էր մեծ-մեծակ պայքարել բնության տարերքի դեմ: Չնայած արցախցիների ցուցաբերած անձնագրի ճիգերին, մեծ քանակությամբ անասուններ կորստի մատնվեցին: Որոշ կոլտնտեսություններ կորցրեցին իրենց նախրի, հոտի 2-3 մասը: Ընդհանուր առմամբ ԼՂԻՄ-ում կորստի մատնվեց հանրային հոտի 58 %-ը: Բնականաբար, մարզը ի վիճակի չէր (կորստից հրաշքով փրկված երկու անգամ ավելի քիչ անասնագլխաքանակով) կատարել գերծանր պլան-առաջադրանքները: Հասարակ տրամաքանությունը, մարդկային բանականությունը հուշում էին, որ վերադասը հաշվի կառնի ստեղծված իրավիճակը եւ կվերանայի նախօրոք կազմված պլան-առաջադրանքները: Մակայն այդ չարվեց: Լեռնային Ղարաբաղի համար ստեղծված տնտեսական դժվարություններն այս անգամ էլ օգտագործվեցին մարզի բնակչությանը հերթական լուրջ հարվածը հասցնելու նպատակներով:

Եվ ահա այդ ծրագիրը իրականացնելու համար, 1950 թ. մայիսին Ստեփանակերտ է գալիս Ադր. ԿԿ Կենտկոմի քարտուղար Կաֆարզա-

դեմ: Առանց պարզելու իրավիճակը, նա պորտֆելից հանում է Ադր. ԿԿ Կենտկոմի որոշումը, ըստ որի՝ «պլանավորված էր ԼՂԻՄ-ում առկա 51 հազար ոչխարից ստանալ 85 հազար գառ»: Երբ տեղական մասնագետները փորձեցին նրան համոզել, որ ԼՂԻՄ-ի պայմաններում (այն էլ ամնպաստ տարում) տեսականորեն անգամ հնարավոր չէ յուրաքանչյուր ոչխարից 1.5 կամ 2 գառ ստանալ, նա կատաղած հարծակվեց կուսմարզկոմի բյուրոյի անդամների վրա եւ, ապա, հրամայական տոնով ասաց. «Չգիտեմ, գնացեք ձեր կանանց գառներ ծնեցրեք»: Արդյոք (արխիվային փաստաթղթերը ոչինչ չեն հայտնում) Ղարաբաղի կանայք Ադրբեջանի ղեկավարների համար գառներ ծնեցի՞ն, բայց հայտնի է, որ Կաֆարզադեմ նույն տարվա դեկտեմբերի 22-ին նորից էր եկել Ղարաբաղ, այս անգամ էլ բրդի պլանի կատարման պահանջով:

- Ինչ ուզում եք արեք, միայն թե բրդի պլանը գերակատարեք: Դա Բազիրովի պահանջն է: Ես այստեղից չեմ գնա, մինչեւ չհավաքեք 200 տոննա բուրդը:

- Այդքան բուրդը որտեղի՞ց հավաքենք,- միջամտեց մարզգործկոմի նախագահ Ավանեսովը,- չէ՞ որ դեկտեմբերի վերջերին ոչխարները չեն խուզում: Տարվա ընթացքում էլ անխտիր հավաքել եմք թե՛ մասնավոր, թե՛ կոլեկտիվ տնտեսություններում խուզված ամբողջ բուրդը, որը հազիվ կազմել է 180 տոննա: Ինչ անենք, ումից վերցնենք 200 տոննա բուրդը: Ուրիշ ելք չունենք, մնում է հարծակվենք բնակիչների անկողիների, աղջիկների օժիտների վրա:

- Ահա, ապրես, բա ասում եք ելք չկա,- հանգիստ տոնով հավանություն տվեց Կենտկոմի քարտուղարը:- Ընկ. Ավանեսովը լավ է հասկացել Ադրբեջանի կոմկուսի քաղաքականությունը եւ պետական առաջադրանքի կատարման «կարելությունը»: Մենք դա նկատի կունենանք:

Ստեղծեցին բուրդ հավաքող հանձնաժողովներ (ընդգրկելով մարզային, շրջանային մասշտաբի ղեկավարներին, մասնագետներին, ակտիվիստներին, դատաքնչական օրգանների աշխատակիցներին) ու գործի անցան: Ըստ արխիվային մի փաստաթղթի՝ կուսմարզկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Աբրամովի գրառումների. «կազմվել է 280 հանձնաժողով՝ 850 հոգու մասնակցությամբ»:

1951 թ. տարեմուտի շեմին մարզում նորից ծայր առան դժգոհու-

թյուններ, դիմադրություններ, աղետալի ծայեր լավեցին, արցունքներ թափվեցին: Այսուհանդերձ 5 օրվա ընթացքում քանդվեցին շուրջ 40 հազար վերմակ, ներքնակ եւ բարձ միջին թվով յուրաքանչյուր ընտանիքից բռնագրավելով 5-7 կիլոգրամ բուրդ: Մարզկոմի առաջին քարտուղարի գրառումներում կարծիր թանաքով գրված է, որ «ընկեր Բագիրովի առաջադրանքը՝ 200 տոննա բրդի պլանը փակված է դեկտեմբերի 27-ին ընկ. Ստալինի ծննդյան նախօրյակին»:

Իհարկե, շատ ընտանիքների համար որոշակի դժվարություն չէր մեկ գույգ տեղաշարժի գրվելը, բայց բնավ էլ ոչ քիչ թվով ընտանիքների համար անկողնուց գրվելը հավասարազոր էր ընտանիքի անդամներին՝ որք երեխաներին, պատերազմում զոհվածների մնացած որդեկորույս ծեր տատիկներին ու պապիկներին քնեցնել կարպետի վրա, մեզարի տակ՝ ծղոտե բարձ գլխատակը դնելով:

Մարդիսում, օրինակ, պատերազմում զոհված երկու որդու մայրը՝ այրիացած Գոհարը՝ 5 անչափահաս թոռնիկների հետ միասին, նստել էր երեք «ձեռք» տեղաշարժերի վրա եւ լացուկոծով դիմադրում էր մարզկոմի հանձնաժողովին: Սակայն մարզկոմի եւ Կենտկոմի հանձնարարությունը «պատշաճ մակարդակով» կատարելու ընդունակ մարդկանց հաջողվում է դանակով պատռել Գոհար տատիկի «պաշտպանած» ներքնակը (դոշակը) եւ նրա միջից դուրս տալ բուրդը: Արփազյարուկում (Հադրութի շրջ.) Մ. Մկրտչյանի տանը կար ընդամենը երկու տեղաշարժ, որի մեջ քնում էին հինգ որք երեխաները՝ մեծը 14, իսկ փոքրը՝ 7 տարեկան: Զխնայեցին, քանդեցին եւ տարան պահանջվող բուրդը: Մեծ Շենում, երբ քանդեցին ծերունի Ս. Հակոբյանի միակ անկողինը, նա վերցրեց իր երկու որք թոռնիկներին եւ ուղեւորվեց դեպի Իրանի սահմանը: Տեղն ու տեղը մեղադրվեց հայրենիքի դավաճանության մեջ եւ ... քշվեց Սիբիր, իսկ երեխաներին ուղարկեցին Շուշիի որբանոցը: Մավասում (Մարտունու շրջան) Մանիշակ մայրիկը չկարողացավ տանել պատերազմում զոհված աղջկանից հիշատակ մնացած օժիտի՝ անկողնու բուրդը հանելու պահը, իրեն նետեց թոռնի մեջ եւ դրանով մասնակից չդառավ Կենտկոմի կողմից սարքված այդ անպատկառ խաղին: Եղծահողցի (Շուշիի շրջան) երիտասարդ մանկավարժը հեկեկոցով գրվվեց երկու ամիս առաջ ամուսնացած կնոջ անկողնուց, որի վրայից դեռ չէին հասցրել մաքրել կուսության արյան կաթիլների հետքերը:

Հավաքված բուրդը ուղարկվեց Ստալինոպոլ: Մեկ տարի հետո, երբ այնտեղ հրավիրվել էր համամիութենական խորհրդակցություն, ներկա էր նաեւ ԼՂԻՄ-ի ներկայացուցիչը՝ մարզային գյուղվարչության գլխավոր գոտեխնիկ Մ. Հայրապետյանը:

- Երբ մեզ տարան բրդի վերամշակման գործարանը, - հետագայում հիշել է նա, - այնտեղ ցույց տվին Ադրբեջանից (ինձա՛ Ղարաբաղից) ուղարկված բուրդը, որը, ինչպես պարզվեց, խտանված ու թափված էր բաց երկնքի տակ: Մի խոսքով, անկողիններից հանված, մարզի 145 հազար բնակիչների արցունքով լվացված 200 տոննա բուրդը իր հնացածությամբ, դեֆորմացվածության եւ անորակության պատճառով չէր հանդնել գործարանային վերամշակող սարքավորումների տեխնոլոգիական կանոններին: Սակայն, բրդի ձեռքբերման եղանակներն ու մեթոդները լիովին բխում էին ԼՂԻՄ-ում կիրառվող հակահայկական քաղաքականության պահանջներից: Մի քաղաքականություն, որի հետեւանքով մարզից 1951 թ. հեռացան ավելի շատ հայեր, քան նախորդ տարիների ընթացքում: Հենց «անկողինների վրա հարձակման առաջադրանքի կատարման» կարգախոսն էլ ուղղված էր մարզի հայ բնակչության արտաքսմանը, որը քաղաքական եւ պետական «մեծ կարեւորության» գործ էր համարվում:

Ինչեւիցե: Նման եղանակով ոչխարաբուծությունը եկամտաբեր դարձնելու եւ, ընդհանրապես, հանրային արտադրության արդյունավետության բարձրացման մասին խոսք լինել չէր կարող: Ուրեմն, եթե ոչխարների եւ խոշոր եղջերավորների գլխաքանակի հետագա պլանավորումը ԼՂԻՄ-ում չդրվեր գիտատնտեսական պատշաճ հիմքերի վրա եւ առկա գլխաքանակը չկրճատվեր գոնե 1/3-ի չափով, ապա դժվար կլինեիր վերացնել մարզի տնտեսությունների վերելքը կաշկանդող սոցիալ-տնտեսական խոչընդոտները: Ի դեպ, գլխաքանակի այս կեսը մարզում պահվում էր ոչ թե հանուն մթերքներ ստանալու, այլ ճիշտ հակառակը՝ հանուն ավելի շատ մթերքներ չստանալու, ստացած մթերքները թանկացնելու, գլխաքանակի սահմանված ցուցանիշները չպակասեցնելու եւ, որ ամենից գլխավորն է, դուրս մղված հայերի փոխարեն Ղարաբաղը ադրբեջանցիներով բնակեցնելու ծավալապաշտական կամպանիան իրականացնելու համար: Այստեղ տեղին է հիշել հայտնի ասացվածքը. «Ոչխարները կերան ծարղկանց»:

Հարց է ծագում՝ եթե Արցախում ազերիների վերաբնակեցումը քա-

ղաքական կոնկրետ նպատակներ չէր հետապնդում, ապա ինչ կարիք կար վերելից՝ Բաքվից իջեցնել պլան հանուն պլանի: Չէ որ դեռ 1965 թ. ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումը փոխել էր գյուղի պլանավորման կարգը՝ նախաձեռնությունը թողնելով տնտեսություններին: Ինչո՞ւ Բաքուն հաշվի չէր առել երկրամասի իրական հնարավորությունները, պահանջները եւ հեզմանքով արհամարհել էր տեղական ղեկավարներին, գյուղատնտեսական մասնագետների կարծիքները:

Ասել, թե այս մասին չէին մտածել, հիմնավորված առաջարկություններ չէին արել մարզի ողջախոհ ղեկավարները, համապատասխան մասնագետները, սխալ կլինի: Դեռեւս 60-ական թվականներին, կուսակցության մարզկոմը, նշված պլենումի որոշումների լույսի տակ, Ղարաբաղի հարյուրավոր մանր-մունր, ոչ շահութաբեր ֆերմաները խոշորացնելու, անասնաբուծությունը մտա-կաթնատու թեթևումով զարգացնելու, ոչխարաբուծական մասնագիտացված խոշոր տնտեսություններ ստեղծելու, անհրաժեշտ կերային բազայի եւ ոռոգման գործը կարգավորելու հարցերով դիմել էր Ադրբեջանի համապատասխան մարմիններին: Սակայն, ինչպես միշտ, այս հրատապ հարցերը եւս քարին քավեցին: Գյուղատնտեսության արտադրության վերելքի համար, կուսակցության պահանջների ոգով արված այս առաջարկություններում Բաքուն «հակա-հակա» քաղաքական նպատակներ, նացիոնալիզմի դրսևորման երանգներ, «ադրբեջանցիների բերանի հացը կտրելու» վտանգ «փնտրեց» եւ այդ հողի վրա ոչ քիչ կուսակցական, տնտեսական ղեկավարներ, մասնագետներ հալածվեցին, աշխատանքից հեռացվեցին եւ հայկական տնտեսությունները խորթ, անվստահելի «օբյեկտներ» դարձան:

Եվ որպեսզի առաջիկայում տեղերից նման քաղաքական տեսակետից «վնասարար» առաջարկություններ, այլեւս չբարձրացվեն, վերադասի երաշխավորությամբ, գյուղական շրջանների առաջին քարտուղարների, կոլեկտիվ տնտեսությունների ղեկավարների բազկաթոռներին սկսեցին նստեցնել մաթեմատիկայի, քիմիայի ուսուցիչներին, գյուղատնտեսությունից, տնտեսագիտությունից հեռու կանգնած անձանց: Բաքվի կարծիքով, «քաղաքական հարցերում ուժեղ» (բայց իրականում կեղտոտ ճանապարհով նվաճած իրենց բազկաթոռներին պինդ ու երկար նստելու տենդով տառապող) նորաթուխ այս ղեկավարիկները սոցիալ-տնտեսական հարցերը «լուծում» էին լոգարիթմա-

կան աղյուսակներով: Վերադասի առաջ հաճոյանալու, իրենց «ինտերնացիոնալիզմը», կազմակերպչական ընդունակությունները ցուցադրելու համար նրանք ջանք ու եռանդ չէին խնայում յուրայինների՝ հայերին հալածելու, ավելի շատ ադրբեջանցիներ ներս հրավիրելու եւ վերջիցս նրանք էլ ավելի արտոնյալ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Խորհրդային վաշխառուները ամենուրեք, ժողովներում, կարգագրերում պահանջում էին, սպառնալիքներով հրամայում իրենց ենթականերին, որ կատարեն, գերակատարեն վերելից իջեցված անասնազվաքանակի պլանները: Ընդ որում, գերակատարեն նաեւ գյուղեր կործանելու, այգիներ ավերելու, մարդկանց հալածելու, դրսից արտոնյալ պայմաններով հրավիրված անասնապահների եւ նրանց անձնական հարստացման պլանները: «Կեցցե իմաստուն վերադասը, կորչի ըմբոստ ստորադասը» կարգախոսով նրանք խլացնում էին ամեն մի դիտողություն, նոր առաջարկություն: Այդ վայ-պաշտոնյաները դժգոհ չէին իրենց բարվոք վիճակից եւ դրա համար էլ պինդ կառչում էին գոյություն ունեցող մտայնությունից: Ուրիշ էլ ինչ պայմաններում նրանք աթոռներ կզբաղեցնեին, այ ու ձախ կարգադրություններ կանեին: Դեռ նրա համար էլ նրանք չափից ավելի շնորհակալ էին Ադրբեջանի ղեկավարներին «Ղարաբաղի (կարդա՛ իրենց) նկատմամբ ցուցաբերած հայրական հոգատարության համար»: Ահա թե ինչու առաջարկությունների համար պաշտոններից աճատված գյուղատնտեսական հիանալի մասնագետներ Գալստյանի, Լալազարյանի փոխարեն կուսաշրջկոմի առաջին քարտուղարներ նշանակվեցին ուսուցիչներ Զ. Օհանջանյանը՝ Ստեփանակերտի շրջանում, Վ. Գրիգորյանը՝ Զադրութում: Ես «ընտրել» բառը դիտավորյալ գործ չածեցի, որովհետեւ ոչ մի կոմունիստ, եթե իրոք նա կոմունիստ է, ձեռք չի բարձրացնի անօգնական Զակոբ Օհանջանյանին 7-ամյա դպրոցում խմբակի ղեկավար նշանակելու համար: Զ. Օհանջանյանը հեղհեղուկ, ցնորված, անդեմ, անսկզբունք անձնավորություն էր, որը Ասկերանի դիսպանսերում բուժվողներից տարբերվում էր միայն նրանով, որ նա այնտեղ զրանցում չուներ: Այս երկու առաջին քարտուղարների գործունեությունը գնահատվել էր ըստ արժանվոյն՝ կառավարական պարզեների արժանացնելով նրանց: Զայկական գյուղեր քանդելու՝ «ընդօրինակման արժանի նրանց փորձի» մասին բազմիցս նշվել է:

Ի վերջո հարկ է նշել, որ քաղաքական իմաստով հեռուն գնացող նպատակներ հետապնդող մարզանքների այս թոհուրոհում արագ աճում էր առետոր (ալ-վեր)ականությունը: Ամենեւին ոչ մատների թվով ղեկավարներ էին հեշտությամբ լեզու գտել արտոնյալ պայմաններով «հրավիրված», մութ անցյալ եւ ներկա ունեցող անասնապահ աղբրեջանցիների հետ: Տարիներ շարունակ, լարված մթնոլորտում, նրանք գործում էին «...անասունների գլխաքանակի պլանը վերադասին, իսկ ստացված մթերքների մի մասն էլ մեզ համար» սկզբունքով: Հավելելով ասեմք, որ այս «աշխատելառճը», ուրիշ այլ չարիքների հետ, Արեւելքից Ղարաբաղ է ներմուծվել «հրավիրվածների» եւ ուղարկվածների միջոցով:

Տեղն է նշել, որ վերելից իջեցված պլանները միշտ ունեցել եւ ունեին երկու ծայրահեղություն: Մի կողմից մարզին լարված, գերծանրաբեռնված՝ նույն պայմաններում գտնվող (աղբրեջանական) շրջանների համեմատությամբ 3-4 անգամ բարձր պլան էր պարտադրվում, մյուս կողմից՝ անարդարացիորեն, անհամեմատ քիչ տեխնիկա, խտացված կերեր տրամադրվում: Տասնամյակներ շարունակ Աղբրեջանի բոլոր ղեկավարները արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկել խոտաբույսերի, արմատապտուղների ցանքերը ընդարձակելու, ոռոգելու, արտավայրերի օգտակար գործակիցը բարձրացնելու, էրոզիան կանխելու, անասնապահական նոր, ժամանակակից պահանջներով գոմեր կառուցելու ուղղությամբ: Այլ խոսքով, պետական կապիտալ միջոցներ հատկացնելու մասին խոսելն ավելորդ էր: Հայկական շրջաններում, ըստ էության, (թեկուզ տեղական մասշտաբով) շոշափելի ոչ մի ներդրում չի կատարվել: Տնտեսություններից շատերը 5-10 տարվա ընթացքում հազիվ ստանում էին մեկ ավտոմեքենա, իսկ տարիներ շարունակ ոչ մի մետր խողովակ, սղոցանյութ, ոչ մի կիլոգրամ ցեմենտ, թիթեղ եւ այլ անհրաժեշտ նյութեր:

Դեռ ավելին, լիովին անուշադրության էին մատնված մարզի գյուղերի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները: Իսկ մեկ այլ բնագավառ փաստերով ցույց տալու համար բերենք երկու թիվ: Գյուղական վայրերում ապրող նախադպրոցական հասակի երեխաների միայն 0,6%-ն էր ընդգրկված մանկապարտեզներում, եւ յուրաքանչյուր 10000 գյուղական բնակչին ընկնում էր հազիվ երկու բժիշկ: Այս այն դեպքում, երբ երկրում, Աղբրեջանում այդ ցուցանիշները համա-

պատասխանաբար կազմել են 33 եւ 27: Մի խոսքով՝ հայկական մարզի նկատմամբ ազգային խտրականությունը, սափառողական հոգեբանությունն ամենուրեք հայատյացությամբ էր արտահայտվում:

Եվ որ այս ամենը կատարվում էր որոշակի նպատակներով, դա փաստ է: Փաստ է նաեւ այն, որ արհեստականորեն ստեղծած այս դժվարությունները պատահական տարասեռ երեւոյթներ չէին, այլ միեւնույն շղթայի օղակներ: Դրանք Ղարաբաղի հայ բնակչության սոցիալ-տնտեսական զարգացումը բոլոր միջոցներով կասեցնելու, նրա դեմ ամեն մի կամայականությամբ հաշվեհարդար տեսնելու Աղբրեջանի ղեկավարների «Ղարաբաղը առանց հայերի» տխրահռչակ քաղաքականության պլանի կատարման արտահայտություններն էին: Սա առավել եւս աղաղակող փաստ է:

Այն, որ Ղարաբաղում անասնազլխաքանակի արհեստական բարձրացումը պայմանավորված չէր տնտեսական գործոնով, հանրապետությունում անասնաբուծության շեշտակի զարգացման անհրաժեշտությամբ եւ ոչ էլ աղբրեջանցիների ոչխարասի-րության ազգային հատկանիշով, ապացուցվում են ստորեւ բերվող երկու իրադեմերժ փաստերով: Անասնապահության զարգացման հարցերը մակերեսայնորեն, առանց գիտական պատշաճ հիմնավորման լուծելու փաստը «...հանգեցրել է այն բանին, որ մեր շրջանում, - Աղբ. ԿԿ XXVI-Ո համազումարում ունեցած իր ելույթում ասաց Գյուլչայի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Սաֆարալիեւը, - օրինակ, ըստ էության, վերացվել է ոչխարաբուծությունը: Դրա հետեւանքով մեր տնտեսությունները կրել են 250-300 հազար ռուբլու վնաս»: Այնուհետեւ, անասնազլխաքանակի անընդհատ ավելացման հետեւանքով, «ամեն տարի լուրջ դժվարությունների ենք հանդիպում հանրային հոտի, հատկապես ոչխարների ձմեռումը կազմակերպելու գործում, - ԼԴ-ի մարզային կուսակցական XX կոնֆերանսում ասաց Հաղրութի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ն. Նիկողոսյանը, - սակայն պարտիայի մարզկոմը եւ ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մինիստրությունը չեն վճռում մեր կոլտնտեսությունները ձմեռային արտավայրերով ապահովելու հարցը»:

Մեկնաբանությունները ավելորդ են: Այնտեղ՝ Քուռ-Արաքսյան անծայրածիր հարթավայրում աղբրեջանական տնտեսությունները ոչխարաբուծության վերացումից դժգոհում, վնասներ են կրում, իսկ

այստեղ՝ Փոքր Կովկասի անտառապատ հայկական Ղարաբաղում ոչ-խարքների շատությունից նեղվել, տրաքվել են, աղետների ենթարկվել եւ մեծամեծ վնասներ կրել: Անգամ ոչխարները պահելու տեղ չէին գտնում: Օրինական հարց է ծագում՝ ինչու՞ մի ոչ մեծ հանրապետության ներսում ոչխարաբուծությունը չգարգացնել այնտեղ, որտեղ դրա համար պայմաններ կային, ավելի քան անհրաժեշտ աշխատուժի աճի բարձր տեմպեր կային եւ, որ ամենից կարելորդ է, այդ ճյուղը շահութաբեր էր եւ մի առանձին հարգանք է վայելում տեղացիների՝ ադրբեջանցիների սննդային ռացիոնի մեջ:

Ահա թե այդ առնչությամբ ինչ էին ասել 1967 թ. սեպտեմբերի 20-ին Ստեփանակերտ ժամանած Ադր. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Ս. Ռուստամովի գլխավորած գիտնականները: Բաքվի գիտնականները մի առանձին հպարտությամբ զարաբաղցիներիս մատնացույց էին անում, որ իրենց կանխատեսումներով ԼՂԻՄ-ի տնտեսության ապագան, հիմնական խնդիրը ոչխարաբուծության զարգացումն է: Եվ, ինչպես չթաքցրեց պրոֆ. Ս. Ռուստամովը, Ղարաբաղի ոչխարի միսը շատ համով է: Եվ որ մենք՝ հայերս, շատ լավ գիտենք, որ ադրբեջանցիների կերաբաժնում առանձնակի տեղ է բռնում ոչխարի միսը:

Սակայն հարգարժան գիտնականները, բերանները ջուր առած, չէին հիշատակում, թե ղարաբաղցիները ինչպե՞ս պետք է զարգացնեն ոչխարաբուծությունը, երբ ինքնավար մարզն ունի, կրկնում են, ընդամենը 28000 հեկտար արոտավայր, որից շուրջ երկու հազարն է միայն ձմեռային: Այս այն դեպքում, երբ ԼՂԻՄ-ի պահվող ոչխարների գլխաքանակը (մեկ հեկտար արոտավայրի առումով) տասը անգամ գերազանցում էր հանրապետական միջին ցուցանիշը: Երբ դահլիճից այդ թվերը հրապարակեց Ղարաբաղի վաստակավոր գյուղատնտես, թոշակառու Ս. Բարսեն՝ ամբիոնից Ռուստամովը կոպիտ ու սպառնալից տոնով լռեցրեց նրան եւ ապա դիրեկտիվ, անպատկառ ծեուվ հայտարարեց. «Ղարաբաղի հայերը պարտավոր են զբաղվել արտագնա ոչխարաբուծությամբ»: Ասել կուզի՝ «Գնացեք Քուռ-Արաքսյան տափաստաններում եւ Փոքր Կովկասի լեռներում արոտավայրեր վարձակալեք, ադրբեջանական շրջաններից հովիվներ հրավիրեք եւ պատվով կատարեք Ադր. ԿԿ Կենտկոմի առաջադրանքը»:

Հարկադրված խոսակցության մեջ մտավ նաեւ տողերիս հեղինակ-

կը՝ այն ժամանակ ԼՂ պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրենը: Ես մինչեւ այդ օրը չգիտեի, թե ինչու մեզ պարտադրում էին զբաղվել ոչխարաբուծությամբ: Մի ճյուղով, որը, ինչպես գիտեք, ԼՂԻՄ-ում վնասաբեր, անպտուղ զբաղմունք է: Հիմա հարկադրված են շնորհակալություն հայտնել հարգարժան պրոֆեսոր Ռուստամովին, որ այսքան պարզ, հասկանալի եւ պատկերավոր բացատրեց, թե ինչու մենք պետք է զբաղվենք ոչխարաբուծությամբ: Մեծարգո պրոֆեսորի ասածից կարելի է եզրահանգել, որ ոչխարաբուծության զարգացումը հետապնդում է ոչ թե տնտեսական, այլ հեռուն գնացող քաղաքական եւ մանավանդ դեմոգրաֆիական երկու նպատակ: Առաջին այգեգործությունից ստացած մեր եկամուտները ոչ թե պետք է ծախսել վերարտադրության, սոցիալական նպատակներով, այլ հարեւան ադրբեջանական շրջաններում արոտավայրեր գնելու եւ դրսից հրավիրված ադրբեջանցի անասնապահներին աշխատավարձ վճարելու համար: Երկրորդ՝ դրսից հրավիրել նորանոր հովիվներ, կթվորներ, որպեսզի մենք ինքներս մեր երկրամասի դեմոգրաֆիական բալանսը փոփոխության ենթարկենք: Այսինքն՝ հայկական փոքրիկ մարզում վերաբնակեցնենք մեծ թվով այլազգիներ: Ահա քեզ ոչխարաբուծության զարգացման քաղաքականության, ինչու չէ՞ նաեւ փիլիսոփայության իմաստը, նպատակը:

Այնուհետեւ ուղղակի խնդիր դրվեց, որ բանիմացորեն պետք է օգտագործել մարզի բնական բարենպաստ ու հրաշալի պայմանները, հանքային հարստությունները, բազմակողմանիորեն զարգացնել կուրորտային տնտեսությունը եւ տուրիզմը այն հաշվով, որ դրանք դառնան լուրջ, եկամտաբեր ճյուղեր: Այս պարագայում, անկասկած, մեծ քանակությամբ մարդիկ կընդգրկվեին սպասարկման ոլորտում: ԼՂԻՄ-ի տնտեսությունը կաշխուժանա, ճանապարհները կբարեկարգվեին, բնակավայրերը ջրով կապահովվեին եւ մենք՝ ղարաբաղցիներս, կապրեինք մարդավայել կյանքով: Մեր մարզի տնտեսության զարգացման ապագան դրանք էին: Եվ այս ամենը մի կողմ թողնել ու պարտադրել, որ մենք զբաղվենք մի բնագավառով, որը բնապատմական, տնտեսական, ինչու չէ, նաեւ քաղաքական առումով սադրիչ, ուղղակի քյալլագյոգություն է, եթե չասենք կործանարարություն:

Արդյո՞ք այդ բոլորի մասին չգիտեին Բաքվում նստած ղեկավար-

ները: Ի հարկե, հիանալի գիտեին, սակայն նրանք ուրիշ ծրագրեր ունեին, որոնց իրականացման համար քիչ դեր չէին վերապահում ոչխարներին: Նրանք լավ գիտեին, թե ոչխարների անվան տակ ինչ հարվածներ կարելի էր հասցնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրներին, գյուղատնտեսությանը, բնակավայրերին: Նրանք քնած, թմրած չէին, անցյալի փորձից գիտեին, որ ոչխարի հոտերը երկրներ են կործանել, ազգեր սպանել: Նրանք փաստերով, կոնկրետ թվերով գիտեին, որ Ղարաբաղում ոչխարների գլխաքանակի ավելացումից, Յայրենական պատերազմից հետո, այսպես կոչված, արտոնյալ պայմաններով «հրավիրված» հովիվները, կթվորուհիները մի պատկառելի թիվ էին կազմում: Եթե ոչխարները չլինեին, ապա էլ ինչ միջոցներով հնարավոր կլիներ մարզի հայկական բուրբ գյուղերում աղբբեջանցիներին բնակեցնելը, երկրամասի ազգաբնակչության կազմում նրանց տոկոսը քառապատկելը (21%):

Այս հարցերը իրենց մեջ բովանդակում են Ղարաբաղից դուրս մղված հայերի փոխարեն յուրայիններով վերաբնակեցնելու կոնկրետ հաշիվներ: Ընդ որում, հաշվարկները կատարված են այնպես, որ քշվող հայերը, նախքան սունդուկները, կապելը իրենք իրենց «կամքով», արտոնյալ պայմաններով, «հրավիրեն» աղբբեջանցիներին և իրենց բնակարանների բանալիները «կամավոր» հանձնեն նրանց:

Տեղի սղության պատճառով, տասնյակ օրինակներից բերեմ միայն մեկը՝ Տոդ գյուղի օրինակը: 1941-45 թթ. հայկական Տոդ գյուղի 16-60 տարեկան բուրբ տղամարդկանց՝ 957 հոգու, զորակոչեցին գործող բանակ: Ի դեպ, նրանց կեսից ավելին զոհվեց պատերազմում: Միաժամանակ, ոչխարների գլխաքանակի պլանը ավելացվեց 5 անգամ: Գյուղի ղեկավարները հարկադրված Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս՝ 200-300 կմ հեռավորության վրա, աղբբեջանական Իմիշլիի շրջանում վարձեցին և ձմեռային արոտավայրեր և մեծ թվով թուրք քոչվոր չոբաններ (քանզի Տոդը չուներ ոչ մի հեկտար արոտավայր, և ընդհանրապես գյուղը դարերի ընթացքում երբեք չէր զբաղվել ոչխարաբուծությամբ) և սկսեցին զբաղվել վնասաբեր ճյուղով՝ ոչխարաբուծությամբ, որը մեծամեծ աղետների պատճառ հանդիսացավ Տոդի համար:

Տոդը ԼՂՀ Հաղորթի շրջանի ամենամեծ և ամենահին գույն բնակավայրերից մեկն է: Այն հիշատակվում է 9-րդ դարից, արաբական

բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ժամանակներից: Ինչպես նյութական մշակույթի հուշարձաններն, այնպես էլ մատենագիտական սկզբնաղբյուրները միանշանակ վկայում են, որ Տոդը 18-րդ դարում բերդաքաղաք է եղել՝ բաղկացած 1500 ծխից, շուրջ 10 հազար հայ բնակչությամբ: Բնակավայրի առավել նշանակալից շրջանում, հատկապես Դիզակի Մելիք Եզանի և նրա քաջ որդի Մելիք Եսայիի օրոք, մելիքամիստ Տոդում միաժամանակ պատարագ է մատուցվել, սաղմոսներ երգվել չորս եկեղեցիներում ու մեկ վանքում, որոնք և ամբողջական տեսքով պահպանվում են:

Հայոց պատմության մեջ Տոդը հիշատակվում է նաև իր ռազմավարական և ազատագրական պայքարի հարուստ տարեգրությամբ: Այստեղ, այս գյուղի Քթիշ բերդում էին 9-րդ դարում ամրացել Եսայի իշխանի հրամանատարության տակ գտնվող Արցախի ինքնապաշտպանական ջոկատները և մեկ տարվա ընթացքում 28 անգամ ետ մղել արաբ զորավար Բուղայի 200-հազարամոց բանակի գրոհները: Եվ ապա, ինը դար հետո, այստեղ, այս գյուղում 33 տարի իշխել է Ղարաբաղի ամենահռչակավոր մելիքներից մեկը՝ մելիք Եսային, և բազում հաղթանակներ տարել թշնամիների նկատմամբ: Այստեղ, այս գյուղի թիկունքից էր 1920-ական թթ. սկզբներին քաջամարտիկ Թեանը, Գարեգին Նժդեհի զինակիցը, համարձակ հարձակումներով պարտության մատնել Դիզակի և Վարանդայի գավառները ներխուժած թուրք-ազերիներին և վերահաս կործանումից փրկել ամբողջ Հարավային Արցախը: Եվ վերջապես, այստեղ, այս գյուղում է մեկ շաբաթ հյուրընկալվել Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին, որը մելիք Եզանի հետ 1736 թ. գարնանամուտին մասնակցել էր Նադիր շահի թագադրության արարողությանը:

Այսպիսով, անչափ մեծ է Տոդի պատմական, ազգագրական և ռազմավարական նշանակությունը: Տիրել Տոդին՝ նշանակում է տիրել ամբողջ Հարավային Արցախին: Ահա թե ինչու այս կարևոր բնակավայրի պաշտպանությունը մշտապես գտնվել է Արցախի տերերի ուշադրության կենտրոնում: Եվ բնավ պատահական չէր, որ օտար հորդանները Արցախի վրա ասպատակելիս, առաջին հերթին գրոհում էին Տոդի ուղղությամբ:

Խորհրդային իրավակարգի տարիներին Տոդը հայաթափելու և այն աղբբեջանցիներով բնակեցնելու խնդիրը մշտապես եղել է Ադր-

բեջանի ղեկավարների հատուկ հոգածության առարկան, սկսած Միրջաֆար Բաղիրովից, վերջացրած էլչիբեյով, նրանք բոլորը իրենց պարտքն են համարել բացահայտ ու ծափոյալ այցելել Տոդ՝ տեղում թուրքական համայնքի հետ մտքեր փոխանակելու, գյուղն արագորեն թուրքացնելու եւ իրենց դիվային ծրագրերը հնարավորին չափ արագացնելու համար:

Արդյունքն իրեն երկար սպասեցնել չտվեց: Այս փառավոր, պատմական բնակավայրը, Ադրբեջանի հայահալած քաղաքականության հետեւանքով խեղճացել, խոնարհվել եւ արագորեն հայաթափվում էր: Ինչպես նշեցինք, Բաքվի թելադրանքով Տոդը բնակեցվում էր քոչվոր թուրքերով: Բնականաբար, կարող է հարց առաջանալ, իսկ ովքե՞ր, ի՞նչ արդարացուցիչ հանգամանքներով եւ որտեղի՞ց էին բերել Տոդի թուրք-ազերիներին: Չէ՞ որ այնտեղ ընդհանրապես Տոդածորում՝ մասնավորապես, թուրքերը երբեք ուղք չէին դրել: Տոդի, այսպես կոչված, թուրքերի մի փոքր մասը՝ 11 ընտանիք, բռնությամբ մահմեդականացված հայեր էին: Մնացած գերակշիռ մասը 1943-1953 թթ., իբրեւ չոբաններ, դարձյալ բռնի կերպով Իմիշլիի շրջանի Թալըբխանլու կոչվող դշլաղից բերել, բնակեցրել էին Տոդում: Բնակեցումը կատարվել էր Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Մ. Բաղիրովի նախաձեռնությամբ եւ ՊԱԿ-ի հատուկ հսկողությամբ:

Հանուն ճշմարտության ասենք, որ թալըբխանլվեցի քոչվորների նկատմամբ կիրառվել է «քաղցրաբլիթի եւ մտրակի» տակտիկան: Սկզբում նրանք բնավ չէին ցանկանում բնակվել Տոդում, քանզի այստեղի քաղաքատիպ, լայն բացվածքով պատշգամբներով երկհարկանի տները եւ ընդհանրապես գյուղի արդյունաբերական ձեռնարկությունները, սալահատակ փողոցները իրենց համար անսովոր էին, եւ նույնիսկ վախենում էին աստիճաններով բարձրանալ եւ աներկյուղ մտնել տախտակապատ առաստաղներով սենյակները: Նրանց թվում էր, թե առաստաղը կթափվի իրենց գլխին: Դրա համար էլ շատերը իրենց նախնիների սովորությամբ վրաններ էին խփում, ինչպես բակերում, այնպես էլ պատշգամբներում եւ երկար ժամանակ բնակվում դրանցում: Եկել էին 43, բայց արագորեն աճելով շատացել եւ դարձել էին 150 ծուխ: Ոչխարից բացի ուրիշ ոչ մի գործի հետ գլուխ չէին դնում: Անգամ զարմանում էին հայերի համառության վրա, որ այնքան մեծ աշխատանք են թափում այգիներ աճեցնելու համար: Քոչվորնե-

րը մի առանձին հաճույքով էին կացնահատում բակերի եւ կոլտնտեսության այգիների պտղատու ծառերը: Հայերին տնտեսական ծանր դրության մեջ դնելու եւ նրանց հայրենի բնակավայրից դուրս մղելու նպատակով, սկսեցին ցամաքեցնել տողեցիների ապրուստի լրացուցիչ աղբյուրները: Փակեցին տեղական հումքով աշխատող շահութաբեր մետաքսավարժական ֆաբրիկան, տեղարդկոճրինատը, կղմինդրի եւ այլ արտադրական մանր ձեռնարկությունները, որոնցում բացառապես աշխատում էին 250 հայ բանվորներ: Եվ ահա, դատաքննչական մարմինների հսկողության տակ, վերացրին հայերի հիմնական զբաղմունքի եւ եկամտի ճյուղերը՝ այգեգործությունը եւ մեղվաբուծությունը: Կտրատեցին եւ արմատախիլ արեցին թփի եւ պտղատու այգիները:

Այսպիսով, դարավոր շահութաբեր այգիները վերածվեցին թուրքերի ոչխարների համար արոտավայրերի: Եթե մինչեւ քոչվորների բնակեցումը Տոդն ուներ շուրջ 200 հեկտար թեմու, 150 հեկտար խաղողի եւ 120 հեկտար այլ պտղատու այգիներ, ապա այդ երբեմնի փարթամ այգիներից մնացել էին հատուկեմտ ծառեր: Նորաբնակները սիրով եւ մեծ բավականությամբ աշխատում էին կոլեկտիվ տնտեսության ոչխարաբուծական ֆերմայում: Վերադասի թույլտվությամբ ու հովանավորությամբ, թուրք չոբաններն իրենց ցանկությամբ, ինչքան կարողանում էին, անձնական ոչխարներ էին պահում հանրային հոտի մեջ (կլանելով վերջինիս կերաբաժնի զգալի մասը) եւ պատկառելի եկամուտներ ստանում: Բաքվից հաճախակի Տոդ էին գալիս տարբեր ռանգի էմիսարներ եւ հավաքում հայկական գյուղում արդեն արմատներ գցած թուրք կաճուներին (երիտասարդ կանանց) ու մարգարեաբար բարբառում. «Օճնե՛ք, ծնե՛ք, ինչքան կարողանում եք, շատ ծնեք: Դրանով մենք կկարողանանք նվաճել ոչ միայն Տոդը, Ղարաբաղը, Հայաստանը, այլեւ ամբողջ Անդրկովկասը»:

Հաշված տարիների ընթացքում գյուղի ազգաբնակչության մեծ մասը՝ 1412 բնակչից 811-ը կազմում էին թուրքերը: «Կեցցես... ասեք, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, որպեսզի թուրք բնակչության աճն ավելի արագացվի Տոդում»: Ասացին, որ գյուղում որոշ թվով ադրբեջանցիներ մշտապես զբաղված են «պարապությամբ»: Նրանց լրացուցիչ ապրուստի միջոցներ են հարկավոր:

Կենսկոմի առաջին քարտուղար Բազիրովը տեղն ու տեղը հանձ-

նարարություններ տվեց իր հետ եկած նախարարներին, եւ շատ շուտով 50-ից ավելի թուրքեր տեղավորվեցին «աշխատանքում» հեռակա կարգով: Այսինքն, օրվա ցանկացած ժամին գյուղամիջին թափառող անբաններն ապահովվեցին ամենամսյա, կայուն աշխատավարձով: Եվ երբ դրանցից յուրաքանչյուրի օձիքից բռնեիր, կհասնեիր ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս՝ Ֆիզուլի, Յորադիզ, Բաքու, պետական հիմնարկներ, ձեռնարկություններ, որոնց պետերը տասնյակ պատճառաբանություններ կբերեին՝ իրենց հաստիքացուցակով աշխատավարձ ստացող անբաններին արդարացնելու համար:

Այս ամենով, սակայն, Բաքվում չէին բավարարվում: Տողի հայաթափման գործընթացն արագացնելու համար դիվային նոր խարդավանքի դիմեցին: Այսպես, Տողի «խաղաղ» գրավման նպատակով, Ադրբեջանի իշխանությունների նախաձեռնությամբ, Տողում ծավալվում էր ինտենսիվ շինարարական աշխատանքներ՝ «արյունակից» մեսխեթցի թուրքերին եւ հանրապետության շրջաններից եկած ադրբեջանցիներին բնակեցնելու համար: Ըստ որում, վերաբնակիչ ադրբեջանցիներին տրվում էին մի շարք արտոնություններ: Այդ թվում՝ 10-ական հազար ռուբլի, անհատույց կահույք, Բաքվի բուհերում առանց ընդունելության քննություններ հանձնելու ընդունում նրանց զավակներին: Շինարարներին մոտիկից անհրաժեշտ կուսակցական, քաղաքական աջակցություն ցույց տալու համար Ադրբեջանի 44 կենտկոմը, Յադրուքում լուծարված կուսշրջկոմի փոխարեն Տողում ստեղծում է նոր շրջկոմ, որի առաջին քարտուղար է հաստատվում միջնակարգ դպրոցի տնօրեն, «Գորշ գայլերի» ոհմակի անդամ Նիյազ Ջահանգիրովը: Ցավոք, Նիյազ մուլալիմի կուսակցական առաջին ձեռնարկումների զոհ դարձան Մելիք Եգանի պալատի որոշ շենքերը, դպրոցի նախկին եռահարկ շենքը եւ մի քանի հայկական տապանական կոթողները, որոնց պատճառով, բնականաբար, ավելի սրվեց հայ-ադրբեջանական համայնքների միջեւ եղած լարվածությունը: Մի խոսքով, թուրքերը հարմար առիթ էին որոնում «Տողից հայերին զենքի ուժով դուրս քշելու եւ նրանց բնակարանները բաժանելու թուրք փախստականներին»: Ընդ որում, տողեցի հայերին իրավունք էր վերապահվել իրենց հետ վերցնելու մինչեւ 16 կգ բեռ: Իսկ մնացածը՝ բնակարանների հետ պետք է մնար ազերի-թուրքերին:

Կարելի է Ադրբեջանում մոլեգնած ազգային բիրտ քաղաքակա-

նության դրսևորումները՝ վայրագ շովինիզմի այդ գունարելիները, շարունակել թվարկել եւ դրանց վերջ չի լինի:

Ահա քեզ Արեւելյան նենգ քաղաքականություն, որին կնախանձեին անգամ հին աշխարհի ամենադաժան նվաճողները, ասիմիլյացիայի քաղաքականության ներկայիս սիրահարները:

ԳԼՈՒԽ VII

ՎԱՆԴԱԼԻԶՄ

Աղբբեջանում հայկական քրիստոնեական մշակութային ժառանգության յուրացման, ոչնչացման եւ հարակից այլ խարդավանքների մասին

Արցախը Հայաստան երկրի հնագույն ու կենսունակ նահանգների թվում այն եզակիներից է, որ կարողացել է պահել-պահպանել ամբողջականությունը, որոշ ընդհատումներով՝ նաեւ անկախությունը: Միաժամանակ այս երկրամասը եղել է ազգային-ազատագրական պայքարի հզոր պատվարը, հույսերի կղզին, վերածննդի խորհրդանիշը: Այստեղ՝ Փոքր Կովկասի դժվարամատչելի, անտառապատ լեռներում, հայ ժողովուրդը դիմակայել է նաեւ արեւելքից խուժած քոչվոր ցեղերի ասպատակություններին՝ պահպանելով տեղական ինքնավարությունը, ազգային կերպը, մշակույթը, սրբավայրերը:

Արցախը հարուստ է պատմական անցյալի տարաբնույթ պատմամշակութային հուշարձաններով: Դրա պերճախոս վկայություններից են նաեւ ոչ մեծ երկրամասում արձանագրված ավելի քան 20 հազար պատմաճարտարապետական, հայկական-քրիստոնեական հուշարձանները, որոնց զգալի մասը կառուցվել է վաղ, միջին եւ ուշ միջնադարում եւ բացառիկ դեր խաղացել հայ ժողովրդի արցախյան հատվածի պատմական ճակատագրում: Սա, հիրավի, ոչ միայն հսկայական հարստություն է, այլեւ՝ հպարտության անսպառ աղբյուր: Այսքան շռայլ ժառանգությունը մեր հին պատմության քարե վկայություններն են, քարակերտ գրքերը, որոնք արտացոլում են սերունդների նյութական ու հոգեւոր կյանքը: Վանքային համալիրներում, նշանավոր եկեղեցիներում, անգամ խավարի ու մղձավանջի պայմաններում, ամնարկրակի պես բոցկլտացել է ազգապահպանության կրակը: Դրանք երկրամասում լուսավորություն, կրթություն տարածող առաջին օջախներն էին՝ հովանի գրչության ծաղկմանը: Այդ կոթողները, միաժամանակ, պատմության, ճարտարապետության այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք թողեցին լեռնուտ երկրամասում, էապես հարստացրին հայոց ազգային մշակույթը եւ խորհրդանշեցին հայ ճարտարապետության առանձին՝ արցախյան

դպրոցը: Իզուր չէ, որ հայ, իտալացի, ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, ռուս, հրեա մասնագետների միահամուռ համոզմամբ, Արցախի հարուստ մշակույթն անհնարին է պատկերացնել համահայկական մշակույթից դուրս: Այն սնվել է բազմադարյան ավանդույթներով եւ ներդրում ունի ոչ միայն համահայկական, այլեւ համամարդկային մշակույթի զանձարանում:

Աղբբեջանի բռնատիրության ներքո գտնվելու տասնամյակներին Լեռնային Ղարաբաղի հայության կյանքի բոլոր բնագավառներում արմատավորված ծայրաստիճան աղետալի վիճակը վկայում էր, որ հայկական երկրամասում թուրք-ազերիների իրագործած քաղաքականությունը, կազմակերպած հանցագործությունների յուրօրինակ շղթան միտված է եղել մի անսքող նպատակի՝ հնարավորինս արգելակել Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումը, ոտնահարել հայ բնակչության շահերը, իրավունքները, աստիճանաբար ստեղծել անտանելի այնպիսի իրավիճակ, որը կարագացնի հայրենի երկրամասից բեփկների դուրս մղվելը:

Հայերը 1923 թվականին Արցախը Ադր. ԽՍՀ-ին բռնակցելու ժամանակ, կազմել են բնակչության 94,4 տոկոսը, 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ նրանց թիվը ոչ միայն չէր ավելացել, այլեւ պակասել էր 18,7 տոկոսով: Հիշատակված ժամանակահատվածում հայկական երկրամասի քարտեզից վերացել են 47 հայկական գյուղեր, փակվել եւ ավերվել են 44 բնակավայրերում գործող 54 արդյունաբերական ձեռնարկություններ, կտրտվել եւ արմատահան են արվել հազարավոր հեկտար շահութաբեր այգիներ, հողատարման-հողաքայքայման է ենթարկվել վարելահողերի, աղոտավայրերի զգալի մասը:

Գրությունն ավելի ողբերգական էր մարզի հայոց ազգային մշակույթի բնագավառում: Գոյություն ունեցող 600 եկեղեցիներից ու վանքերից չէր գործում եւ ոչ մեկը: Համաթուրքականության գաղափարախոսությամբ տառապող թուրք-ազերիներն ակնհայտորեն չէին կարողացել հաշտվել այն մտքի հետ, որ իրենց կողքին գոյություն ունի հայկական հզոր մշակույթ: Դրա համար էլ ամեն կերպ ձգտել են հիմնովին ավերել կամ սեփականել այդ մշակույթի արժեքները: 1930-ական թվականների սկզբին հայ հավատացյալների առջեւ ամուր փակվեցին վանքերի, եկեղեցիների դռները, հոգեւոր հայրերը քշվեցին Սիբիր, եկեղեցական արժեքավոր գրքերը, սրբապատկերներն այրվեցին, իսկ գույքը կողոպտվեց: Այնուհետեւ սկսեցին բուլշեփկների որդեգրած ա-

նաստվածության դիրքերից ոչնչացնել, ձեռափոխել, փարախների-գոմերի վերածել եկեղեցիները, վանքերը, ջարդել-փշրել խաչքարերը, տապանական կոթողները եւ դրանք իբրեւ էժան շինանյութ օգտագործել նորակառույցներում: Փաստորեն, Արցախում մշակութային կատարյալ ջարդի ծրագիր է իրագործվել: Կողոպտվել, ոչնչացվել է մի ողջ պատմություն: Մուլեգնող բարբարոսությանը զոհ էր գնում նաեւ Արցախի հայ բնակչությունը:

Այսպիսով, Հարավային Կովկաս թափանցած եւ հայկական պատմական տարածքներում հիմնավորված ազերի-թուրքերը, համագործակցելով Ռուսաստանի կոմունիստական գործիչների եւ հորհրդային Միության թուրքամետ դեկավարության հետ, անհաշիվ տառապանքներ պատճառեցին Արցախի բնիկ հայությանը: Փաստորեն, 20-րդ դարում Արցախում, եւ ոչ միայն, անարգել իրագործվեց հայերի հետապնդման, տեղահանման ու ոչնչացման մի համալիր ծրագիր: Միայն Արցախում ազատագրական հուժկու պայքարը խափանեց հայկական երկրամասը հայաթափելու հրեշավոր ծրագիրը: Միաժամանակ, այդ հզոր շարժումը վերահաս կործանումից փրկեց նաեւ ԼՂՀ տարածքում հրաշքով պահպանված հուշարձանները: Չմոռանաք, սակայն, որ Գյումրիային Արցախում պատմական Գարդմանքում, տակալին անհայտ է մնում ավելի քան 5000 հայկական հուշարձանների ճակատագիրը:

Բաքվում, 1963 թ. տպագրված «Լեռնային Ղարաբաղ» գրքի 75-76-րդ էջերից ստորեւ բերվող տողերը վկայում են, թե հայկական հուշարձաններն ավերելու, ոչնչացնելու ինչ մտայնություն ու մթնոլորտ գոյություն ունեւ Ադրբեջանում: Փաստորեն, պետականորեն կոչ էր արվում ոչնչացնել քրիստոնեական եկեղեցիները, վանքերը, ճարտարապետական հուշարձանները, որովհետեւ, ինչպես գրված է այդ գրքում, «դրանց բազմազանության ամկայությունը ցույց է տալիս, թե որքան շատ է եղել կաշկանդված Ղարաբաղի բնակչությունը կրոնական կապանքներում», որից նա հազիվհազ «ազատագրվել է շնորհիվ Գոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեւոլյուցիայի»:

Սա դեռ ոչինչ: Գրքում առանց այլեւայլության հուշարձաններ կոչվելու իրավունքից զրկված են ճարտարապետական գլուխգործոց կոթողային կառույցները, վանքային խոշոր համալիրները, ժանյակագարդ խաչքարերը, ազգապահպան, գրչության, դպրության օջախ եկեղեցիները: «Լեռնային Ղարաբաղում, -կարդում ենք նշված գրքում,-

բազմաթիվ վանքերի, եկեղեցիների եւ խաչքարերի թվարկումը պատմական հուշարձանների շարքում, թվում է, որ ոչ մի արժեք չունի ոչ քաղաքական, ոչ մշակութային տեսակետից, որովհետեւ ակներեւ է դրանց բացասական դերն ու իմաստը ժողովուրդների հասարակական կյանքում եւ, մասնավոր, մեր սոցիալիստական իրավակարգում»: Անվիճելի է, որ նպատակ է հետապնդվել ոչնչացնելու հայկական քրիստոնեական մշակույթի հետքերը: Եթե այդպես չէ, ապա ինչո՞ւ վանքերի, եկեղեցիների, սրբերի շարքում չեն թվարկում մզկիթները, այվանները: Բայց չէ՞ որ մզկիթներում մարքսիզմ-լենինիզմի գաղափարներ չէին քարոզվել եւ ոչ էլ կրոնական կապանքներ փշրվել... Եիշտ այդպես Աֆղանստանում թալիբներն էին ոչնչացնում «անհավատների» հուշարձանները: Դա չէ՞ր պատճառը, որ համատարած լռության պայմաններում մեկ ամսվա ընթացքում հողի երեսից սրբեցին Շուշիի հայկական քաղաքամասը, որը գրեթե ամբողջությամբ պահպանվում էր, թեւէ կար որոշում այն հիմնովին վերականգնելու եւ նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մայրաքաղաք դարձնելու վերաբերյալ: Փոխարենը ազերի-թուրքերը հայկական քաղաքի 7 հազար շինությունների հետ ավերեցին նաեւ Ագուլեցոց սբ. Աստվածածին, Մեղրեցոց սբ. Աստվածածին եկեղեցիները, Կուսանաց վանքը, հունա-ռուսական եկեղեցին, բուլղոզերներով հողին հավասարեցրին հայկական գերեզմանոցները...

Այս ամենը տեղի է ունեցել ադրբեջանական իշխանությունների հանձնարարությամբ, բաքվեցի ճարտարապետ-քաղաքաշինարարների բացահայտ կոչերով: Այսպես, Բաքվում ռուսերեն լույս տեսնող «Ստրոիտել» թերթը (2.02.1966 թ.) տպագրել է ոմն ճարտարապետ Կ. Սայիդովի հոդվածը, որտեղ նա կոչ էր անում Շուշիում իրագործել նոր բարբարոսություն. ավերել հայկական գերեզմանոցները, հրաշքով փրկված հուշարձանները: Զանգի, ինչպես նա է գրել, «մեռածները (*հայերը-Շ.Ա.*) կերան ապրողներին (*ադրբեջանցիներին-Շ.Ա.*)»: Իրականում, հայաթափված քաղաքում բնավորված ադրբեջանցիները հեշտությամբ ոչ միայն կերան, այլեւ մարսեցին մեռած հայերի գերեզմանաքարերը:

Իսկ ինչո՞ւ կերան «մեռածներին», քանդեցին եկեղեցիները, ավերեցին գերեզմանոցները: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայկական գերեզմանոցներում պահպանվում էին տասնյակ հազարավոր մահարձաններ, որոնց վրա եղած հայերեն արձանագրություն-

ները ունեին 18-րդ դարի թվագրություններ, ապա աղբբեջանական վայրագների դիրքորոշումը բավական պարզ է դառնում: Չէ՞ որ չափից ավելի ուժեղ եւ անվիճելի փաստարկ է հայկական գերեզմանատների (18-19-րդ դդ.) առկայությունը՝ աղբբեջանական կեղծարարների պատմական պատվախնդրության համատեքստում: Չէ՞ որ նրանք ամբողջատ փողիարում են, թե «Շուշին 18-րդ դարի աղբբեջանական քաղաք է» եւ իբրեւ թե այնտեղ «Աղբբեջանի հյուրընկալ հողում հայկական առաջին գաղթականները հայտնվել են 1828 թ.-ից հետո»: Իբր, ԼՂԻՄ-ում չկա մի գերեզմանաքար, որն այդ տարեթվից առաջ գրություն ունենա: Ձավե՞շտ է: Խելացնողություն, թե... Ոչ միայն...

Միայն ԼՂԳ տարածքում պահպանվում է մոտ 2000 հին գերեզմանատուն՝ հայկական արձանագրություններ կրող 100 հազարավոր մահարձաններով, խաչքարերով, որոնք ունեն 8-18-րդ դդ. թվագրություններով հայերեն տապանագրեր: Անհավատալի է, որ մեր հարեւանները տեղյակ չլինեին այդ անեմին, քանի որ մահարձանների ու արձանագրությունների մասին տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններ կան: Ակամա հարց է ծագում ինչպե՞ս կարող է Շուշին աղբբեջանական քաղաք հայտարարվել, երբ այնտեղ գտնվող 8 գերեզմանոցներից 7-ը հայկական է եւ միայն մեկը աղբբեջանական, որտեղ թաղումները սկսվել են 1920 թ. եղերական մարտի 23-ից, այսինքն՝ հայերի ցեղասպանությունից հետո միայն: Որպեսզի այդ կարգի հարց այլեւս չառաջանար, թուրք-ազերիները, քաղաքի հայկական ավերակները մաքրելուց հետո, սկսեցին ավերել 5 եկեղեցիները, 7 գերեզմանատները եւ հրաշքով պահպանված հայկական այլ հուշարձանները, որոնք ձեւափոխվելով, չէին հարմարեցվել «իրենց» ճարտարապետության ոգուն... Այդ անեմի վառ եւ հրեշավոր պատկերները տրված են «Շուշի՝ ողբերգական ճակատագրի տեր քաղաքը» ռուսերեն, անգլերեն առանձին- առանձին հրատարակություններով (*Երեւան, 1997, 1999 թթ.*) տպագրված պատկերազարդ աշխատություններում:

Խորհրդային իշխանության 70 եւ արցախահայությանը պարտադրված կործանիչ պատերազմի յոթ տարիներին թուրք-ազերիները ոչնչացրել են մշակույթի հազարավոր հուշարձաններ, հայկական քաղաքակրթության գլուխգործոցներ, ավերել ու կողոպտել են Արցախի, Ուտիքի, Նախիջևանի, Գարդմանքի հայկական մշակույթի անգնահատելի գանձերը: Այսօր դժվար է չափել այն կորուստները, որ հայ մշա-

կույթը կրել է Բաքվի ծրագրված քաղաքականության եւ հետապնդումների հետեւանքով: Իսկ որքա՞ն են այն կորուստները, որ հաճախակի հասցվել են հայկական երկրամասին՝ նրա մտավորականության ոչնչացման ու դուրս մղման ճանապարհով: Հայկական մշակութային ողջ ժառանգությունը համարյա թե թաքցված, յոթ փականքի տակ է եղել: Արցախի եւ հարակից հայկական շրջանների պատմության եւ մշակույթի հարցերին առնչվելիս՝ Բաքվում միշտ ելնում էին անցյալ դարի 30-ական թթ. արմատավորված՝ «այն ամենը, ինչ գտնվում է Աղբբեջանական ԽՍՀ տարածքում, պատկանում է աղբբեջանցիներին» սկզբունքից: Փաստորեն, կանխատեսված քողարկմամբ, նենգափոխմամբ պարբերաբար կեղծվում էր Արցախի պատմությունը, կամայականորեն էր որոշվում հուշարձանների ազգային պատկանելությունը: Մի խոսքով, մի սերնդի աչքի առաջ, օրը ցերեկով, կողոպտվել էին արցախահայության պատմությունը, ազգային հարուստ մշակույթը:

Արցախահայությունը զրկված էր իր պատմության, մշակույթի կամ, թեկուզ, առօրյա կյանքի մասին որեւէ ուղեցույց, գրքույկ կամ աշխատություն տպագրելու, թանգարաններ ստեղծելու, պեղելու, հուշարձաններն ուսումնասիրելու, վերականգնելու, ազգային տոներ նշելու հնարավորությունից: Դպրոցներում արգելված էր հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության դասավանդումը: Բարձիթողի էր արված անցյալի մշակութային արժեքների ցուցադրությունը, պահպանությունը: Այլ խոսքով՝ Արցախի հայերը ոչ միայն կողոպտված ու կաշկանդված, այլեւ պետական մակարդակով հալածված էին:

Այդ պայմաններում, Բաքուն հաճախակի լույս աշխարհ է հանել չփաստարկված, գիտական տեսակետից կեղծ, շատ դեպքերում, քնծիծաղ հարուցող, անհեթեթ, սնամեջ դատողություններ, առաջ քաշել բոլորովին անհիմն տեսակետներ եւ այդ ամենը ներկայացրել որպես Արցախի պատմություն: Իսկ երբ հայերից մեկնումեկը, այնուամենայնիվ, համարձակվել է դրանց պատասխանել, անմիջապես պիտակավորվել է ժամանակի մտայնությանը խորթ «իզմերով» եւ հալածվել, դուրս քշվել հայրենի երկրամասից:

Հայկական հուշարձանների ավերմանը մասնակցել են նաեւ աղբբեջանցի հնագետները, երկրաբանները, ամասնապահները, գրողները: Այսպես, պայթուցիկ նյութեր են գործածվել Մեծ Թաղերի Ծծախաչ, Ազդիսի Որվան քարանձավներում, Ամարասի սբ. Գրիգորիսի դամբա-

րանում, Խաթրավանքում, Քաղաքատեղում: Հորաններ են փորվել Ղաղիվանքի հնագույն հուշարձանների հիմքերի տակ, ավտոդողեր են վառել Շուշիի սբ. Ամենափրկիչ եկեղեցու որմնամուկթերին անմիջապես մոտ՝ ստեղծելով հուշարձաններն ավերելու բարենպաստ պայմաններ: Հարյուրավոր եկեղեցիներ, վանքեր ձեւափոխվել եւ շահագործվել են որպես փարախներ, կացարաններ, պահեստներ: Հայկական հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված արժեքները ադրբեջանցի հնագետները տեղափոխել են Բաքու, շատ դեպքերում էլ՝ վերածել առուծախի առարկայի: Մինչդեռ, համաձայն գոյություն ունեցող կարգի, ինքնավար մարզի տարածքում պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութերը պետք է հանձնվեին մարզային պետական պատմաերկրագիտական թանգարանին: Մինչդեռ, Ադրբեջանի լծի տակ եղած տարիներին, Արցախից եւ հարակից հայկական շրջաններից Բաքու են տարվել տասնյակ հազարավոր հայկական՝ արցախատիպ հնաոճ գորգեր, կարպետներ, խուրջիներ, մեծ քանակությամբ ոսկերչական, արծաթագործական եւ ազգագրական բնույթի թանկարժեք զարդեր:

Միաժամանակ, հայկական երկրամասից հաճախակի դուրս են տարվել նաեւ հազարավոր հայկական թանգարանային արժեքավոր նմուշներ: Օրինակ. Ադր. ԽՍՀ մշակույթի նախարարը, Ադր. ԿԿ Կենտկոմի թելադրանքով, ուղղակի հրաման է արձակել (30.12.1969 թ.) եւ կրկնակի գրությամբ (12.01.1970 թ.) պարտադրել ԼՂԻՄ-ի պետական պատմաերկրագիտական թանգարանի ղեկավարությանը, որ շտապ Բաքու ուղարկվեն հայկական թանգարանի Մայր մատյանում գրանցված հնագիտական, ազգագրական թանկարժեք հայեցի ցուցանմուշներ:

Ի դեպ, Ադրբեջանի բոլոր թանգարաններում պահվում եւ ցուցադրվում են հայ մշակույթի հազարավոր արժեքներ: Այցելուներին դրանք ներկայացվում են ուղղակի՝ «գորգ ադրբեջանական հին գրությամբ» կամ «խաչդաշ ալբանական գրությամբ»: Սրանով էլ սպառվում է ցուցանմուշի մասին հաղորդվող տեղեկությունը: Չեն նշվում հուշարձանի արարման ժամանակը, գտնվելու տեղը, եւ որ ամենից կարելո՞րն է, վիժագիր արձանագրության բովանդակությունը: Մինչդեռ ցուցադրված գորգին, բարձրաքանդակին, տապանական կոթողին եւ մետաղե անոթներին հստակ նշմարվում են հայերեն գրությունները, առանց որեւէ դժվարության կարդացվում: Հատկանշական է 12-րդ դարի խաչ-

քարի ճակատագիրը, որը գտնվում էր Վաչագան Բարեպաշտի եկեղեցում. 1980-ական թթ. ադրբեջանցի «վերականգնողները» ճչացող անգրագիտությամբ քերել, ջնջել են հայերեն արձանագրությունն ու խաչը եւ, բերելով Աղղամի երկրագիտական թանգարան, ցուցադրել որպես «ադրբեջանական հնագույն հուշարձան»: Կարելի է այդպիսի փաստերի մասին երկար գրել, բայց, հավանաբար, դրա կարիքը չկա, քանզի ընդհանուր իրավիճակը հասկանալի է:

Ավելին, մի կողմից խրախուսվել է հայկական հուշարձանները պղծելով, ձեւափոխելով ադրբեջանական դարձնելը, իսկ մյուս կողմից, քաղաքական պիտակներ կպցնելով, արգելել են հայկական ինքնավար մարզի պատմաերկրագիտական թանգարանում ցուցադրել հայեցի հնագույն արժեքավոր ցուցանմուշները: Թանգարանի տնօրենի հարցը կուսակցական մակարդակով քննվել է ու խիստ նկատողություն հայտարարվել միայն այն բանի համար, որ նա համարձակվել է ցուցադրել Արցախում հայտնաբերված բազմաթիվ թանգարանային հայեցի արժեքներ:

Ադրբեջանի ղեկավարները վայրենի չարությամբ ընդունեցին այն փաստը, որ Սոսկվայում թանգարանների համաձուլթեմական ստուգատեսում (1967 թ.) ԼՂԻՄ-ի թանգարանը ճանաչվեց երկրի չավագույն թանգարաններից մեկը: Նրանք ուղղակի հայտարարեցին, որ իրենք «ուզում են հայի քյոքը պոկել-հանել Ղարաբաղ կոչված ադրբեջանական հողից, իսկ այստեղ թանգարանում ցուցադրվել են հայոց թագավոր Տիգրան Մեծի պատկերով արծաթե դրամը (մ. թ. ա. 1-ին դ.), հայ գրերի գյուտարար Մեսրոպ Մաշտոցի նկարը (5-րդ դ.), Մելիք Եգանի հրովարտակը (18-րդ դ.), ռուս գեներալների՝ արցախցի հայերի քաջագործությունները փառաբանող կոչերը (19-րդ դ. սկիզբ): Դրանով նախ՝ թանգարանի ցուցադրության հիմքում դրվել է Արցախը որպես Հայաստանի անքակտելի մաս դրույթը, հետո էլ մատնացույց արվել, որ «Արցախը երեք, երկու հազար տարի առաջ հայկական է եղել եւ պետք է պայքարել այսուհետ էլ հայկական պահելու համար»: Դրա համար էլ Բաքվում (1967 թ. Մոյեմբերին) Ադր. ԿԿ Կենտկոմը ԼՂԻՄ-ի թանգարանի ցուցադրանքը պիտակավորեց որպես «մարքսիստական մեթոդաբանությանը չհամապատասխանող», իսկ թանգարանի տնօրենը՝ «գաղափարապես վնասակար նյութեր» ցուցադրող (մանրամասն տես Շ. Սկրտչյան, Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա, եր., 1996, էջ 134-151): Թանգարանը տակնուվրա արեցին, մշտական ցուցադրությունը

քանդեցին, իսկ առավել արժեքավոր ցուցանանուշները թանգարանից հանեցին եւ ուղղակի թափեցին բաց երկնքի տակ:

Հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ հայկական երկրամասի հայկական թանգարանում կարելի է ցուցադրել արաբական, պարսկական, թուրքական բերովի դրամներ, իսկ հենց մարզի տարածքում՝ Տիգրանակերտ քաղաքատեղում, հայտնաբերված Տիգրան Մեծի եզակի դրամը՝ ոչ: Ինչո՞ւ կարելի է 18-րդ դ. 2-րդ կեսին Արցախ թափանցած օտարական խանին վերաբերող նյութեր ցուցադրել, իսկ Արցախում ծնված Արցախի Մեծ իշխան Մելիք Եգանի վերաբերյալ՝ ոչ: Ահա քեզ թանգարանային արժեքների ցուցադրման եւ արգելման աղբյուրական հայեցակարգը: Մեզ մնում է հիշեցնել աղբյուրների հայատյաց կեղծարարներին, որ պատմությունը բնավ չի հանդուրժում ստորադաս եղանակով փաստերը խոնարհելը, ձեւափոխելը եւ իրողությունները գլխիվայր շրջելը, քանզի ճշմարտությունը վաղ թե ուշ դուրս է գալու լույս աշխարհի, իսկ կեղծիքը նետվելու է աղբանոց:

Հայկական հուշարձանների նկատմամբ հանցավոր վերաբերմունքը հրապուրել էր նաեւ հանցավոր տարրերին, որոնք գանձախուզության նպատակով ավերել են բազմաթիվ մեծարժեք կոթողներ, պղծել եւ թալանել գերեզմանատները՝ գործի դնելով զանազան սարքավորումներ: Այդպիսի թալանի են ենթարկվել այնպիսի հանրահայտ ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են Գանձասարը, Խոթավանքը, Խաթրավանքը, Գոչավանքը, Հակոբավանքը, Երիցմանկանց վանքը, Կոշիկ անապատը, Եղիշե առաքյալի վանքը...

Մինչեւ 1970-ական թթ. վերջերը Բաքուն հայկական հուշարձանները խնամքով թաքցրել կամ անտեսել էր դրանց գոյությունը: Բաքվում, Մոսկվայում եւ արտասահմանում տպագրված զբոսաշրջային քարտեզներում, ուղեցույցներում եւ այլ բնույթի աշխատություններում Արցախին հատկացված էջերում տեղադրվել են մահմեդական այնպիսի հուշարձանների լուսանկարներ, որոնք առնչություն չունեն ԼՂԻՄ-ի հետ (տես Մոսկվայում 1971 թ. տպագրված «Աղբյուրներ» պատկերագրի ԼՂԻՄ-ին հատկացված էջերի արանքում խցկված Կիրովաբադի 19-րդ դարի մզկիթի մեծադիր նկարը): Իսկ երբ հարկադրված հիշատակել են որեւէ հայկական հուշարձան, ապա անպայման աղավաղված անուններով, աղվանական-աղբյուրական պատկանելությունն ընդգծելով, թեւ այդպիսիք չկային Ադր. ԽՍՀ տարածքում գտնվող պետական պահպանության ենթակա պատմաճարտարապետական հուշարձանների

ցուցակներում:

Իսկ ինչո՞ւ էին Աղբյուրների իշխանավորները, գիտնականները յոթ փակի տակ պահել հայկական հուշարձանները: Կամ՝ դրանց պատկանելությունը լղոզել: Նույնիսկ 1960-ական թթ. 1-ին կեսին Ադր. ԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի խիստ գաղտնի շրջաբերականով պարտավորեցրել են ԼՂԻՄ-ի շրջանների բոլոր գյուղական խորհուրդների նախագահներին, որ «իրենց բնակավայրերի տարածքներում գտնվող հայկական հուշարձանները փակ գոտիներ են եւ ուսումնասիրման, լուսանկարման ենթակա չեն: Հետեւապես, ամենայն պատասխանատվությամբ, նրանք (գյուղխորհրդի նախագահները - Շ. Մ.) չպետք է թողնեն, որ հայերը, ռուսները, եվրոպացիները, առանց Բաքվի հատուկ թույլտվության, այցելեն հայկական հուշարձաններ, լուսանկարեն, չափագրեն եւ ուսումնասիրեն դրանք»: Միաժամանակ Ադր. ԽՍՀ գյուղնախարարությունը ցուցում էր տվել կոլտնտեսությունների նախագահներին, որ հայկական հուշարձանները կարող են «վերափոխելով օգտագործել իբրեւ փարախներ-գոմեր, պահեստներ» (տես Ավետարանցի գյուղխորհրդի արխիվ, 1966, գ. 3, թ. 2-4):

Հերթական քայլը հայոց խաչքարերն էին, որը, սակայն, կեղծարարների կոկորդան մնաց: Սա է ճշմարտությունը եւ դրանից չի կարելի փախչել: Մրանք են փաստերը: Առաջնորդվել է հարկավոր միայն դրանցով, այլ ոչ թե քաղաքական պատկերներով, հարեւանների հոգեւոր ու նյութական արժեքները սեփականելու մուրացիկի հոգեբանությամբ կամ էլ դրանք ոչնչացնելու մոլուցքով:

Համոզիչ ի՞նչ փաստեր բերելով հնարավոր կլինի արդարացնել այն ոճրագործությունները, որ ազերի թուրքերը գործել են իրենց մայրաքաղաքում: Կաշկատուն ցեղը, ջարդելով տեղահան էր արել քաղաքի կես միլիոն հայերին՝ ոչնչացնելով քաղաքի հայկական եկեղեցիները, կոթողային արվեստի հազարավոր տապանաքարերը՝ տապանագրերով, բարձրաքանդակներով հարուստ հայկական մեծ գերեզմանատունը:

Բաքվում 1911 թ. կառուցված խոշոր չափերի ծավալատարածական, արտահայտչամիջոցների հարստությամբ Ս. Թադեւոս եւ Բարդուղիմեոս եկեղեցին քանդեցին եւ նրա սրբատաշ քարերով կառուցեցին կոնսերվատորիայի շենքը: Նույն ճակատագրին արժանացավ Բաքվի հայկական եկեղեցիներից վաղագույնը՝ Ս. Աստվածածինը, որը կառուցվել էր 1799 թ.-ին: Պղծվել եւ թալանվել է քաղաքի կենտրոն-

նուն 1863-69 թթ. կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարը: Չիմնահատակ քանդվել է հայկական գերեզմանոցում գտնվող Ս. Հարություն մատուռը, որը կառուցվել էր 1894 թ.-ին: Սա՝ մայրաքաղաքում: Ինչ վերաբերում է շրջաններին, Կուբաթլուի արաքսամերծ տարածքում գտնվող Աղվերցու հուշա Մովսեսի լավ պահպանված դամբարանի (16-րդ դ.) մուտքի երեսակալի եւ բարավորի հայերեն արձանագրությունը թուրքավարի քերելով «բարեփոխել» են դամբարանը, որի հետեւանցով հուշարձանների տարիքը արհեստականորեն հնացվել է 4 դարով, իսկ հուշա Մովսեսը դարձել է «Մոհամեդ ալ-խոջայի»: Մեկը լինի, հարցնի, որտեղի՞ց Մոհամեդ «առաքյալի» հայտնվելը այս կողմերում, այն էլ 12-րդ դարում, երբ հայտնի է, որ առաջին օտարական խաշնարածը այս կողմերն է թափանցել 18-րդ դարում միայն: Սա եզակի դեպք է: Կիրովաբադում, վերականգնման քողի ներքո, հայկական ճարտարապետության մի շարք հուշարձանների, անպարկեշտ բացորոշությամբ, «հագրել» էին մահմեդական «զգեստներ», իսկ մնացածը, որոնք չէին կարողացել հարմարեցնել եւ «ազգայնացնել», ոչնչացվել էր սոսկ այն պատճառով, որ չէր համապատասխանում կեղծարարության հեռահար նպատակներին: Ահա թե ինչպես են աղորեջանցիները «վերականգնել», ավելի ստույգ՝ յուրացրել հայկական հուշարձանները: Եվ ի՞նչ եղանակով են փորձել փոխել դրանց ազգային պատկանելությունը:

Դե, եթե առանց ապտակ ստանալու, կարելի էր սեփականել ուրիշի պատմական տարածքները, պատմամշակութային ժառանգությունը, ապա ինչո՞ւ չի կարելի նույնն անել այլ ազգությունների պետական, ռազմական եւ մշակութային գործիչների նկատմամբ: Այս բնագավառում թուրք-ազերիների երեսակայությունը չափ ու սահման չունի: Քանզի էլ ի՞նչ «հնագույն, քաղաքակիրթ աղորեջանական ժողովուրդ», որ չունենա պատմական շատ նշանավոր դեմքեր: Ահա թե ինչու, Աղորեջանի «գիտնական» այրերը, փնթի մասվաճառի պես, անընդհատ կացնահարում էին Հարավային Կովկասի պատմությունը, բացահայտ քամահրում պատմական իրեղեն փաստերը, առաջ քաշում կեղծ հայեցակարգեր եւ ապա հրճվանքով հենվում դրանց վրա ու «ստեղծում» սեփական ժողովրդի հնեցված, գունազարդված, շպարված պատմությունը: Այդ կեղծ գիտնականները հեշտությամբ խցկվում են իրենց հարեւանների մշակույթի պատմության մեջ եւ հին դասականներին քաշքշում ազգային մի գաղութից մյուսն ու դրանով

նրանց համարում աղորեջանական ազգի սրբություններ՝ մոռանալով, որ ո՛չ Բաբելի (8-րդ դ.), ո՛չ Նիզամու (12-րդ դ.), ո՛չ Նասիմի (13-րդ դ.), ո՛չ Ֆիզուլու (15-րդ դ.) եւ ո՛չ էլ Փանահ խանի (18-րդ դ.) ապրած դարաշրջաններում աղորեջանական ժողովուրդը դեռեւս ձեւավորված չէր: Պարզապես չկար: Դե, եթե չկար, ապա ինչպե՞ս նրան վերագրել ներկայիս Աղորեջանի տարածքում գտնվող վաղ միջնադարի հուշարձանները: Ինչպե՞ս մի հարվածով աղորեջանական դարձնել Արցախի հայ մշակույթի գործիչներին՝ Դավթակ Քերթոլին, Մովսես Կաղանկատվացուն, Մովսես Դասխուրանցուն (7-9-րդ դդ.) եւ այլոց:

Այստեղ խոսքը հիվանդագին հայատյացության, անազնվության կամ բացահայտ նեմգափոխության մասին չէ, այլ պատմական փաստերի՝ իշխանությունների կողմից հովանավորվող աղավաղումների, սեփական հայեցողությամբ դրանք «ղզել-փչելու» անսքող քաղաքականության: Հարկավ, այսպես էին վարվում Դոստոեւսկու դեւերը, որոնք իրենց խեղկատակ տեսությունները հաստատելու համար դիմում էին ամեն ինչի: Այս կաղապարով աղորեջանցի «գիտնականները» քոչվոր թուրքերին դարձրին «նստակյաց», կովկասյան աղվաններին՝ «աղորեջանցիներ», պարսիկ, քուրդ, հայ մշակույթի գործիչներին՝ «աղորեջանական արվեստի դասականներ», հայկական խաչքարերը՝ «խաչդաշ», վանքերը, եկեղեցիները՝ «աղվանական տաճարներ», արցախահայերին՝ «եկվորներ» եւ այլն:

Ընդհանրապես, մեր հարեւանները դատում են տեղից ու ժամանակից դուրս: Օգտագործում են իրենց իսկ առաջ քաշած կեղծ, սխալ փաստարկները եւ շարահյուսում սին պատմություններ: Ասենք՝ փաստերն ի՞նչ նշանակություն ունեն այս պարագայում... Ամեն ինչ արվում է թուրքավարի՝ կողոպտել, թալանել ուրիշի ունեցածը, քանի որ միշտ էլ անպատիժ են մնացել:

Հերթական առաջադրանք էր տրված «ապացուցել», որ Աղորեջանի տարածքը հնուց ի վեր պատկանել է աղորեջանցիներին: Պատվերը կատարվում է դարձյալ թուրքավարի. զարգացնել «թուրքերի՝ հնուց ի վեր նստակյաց ապրելու կերպի մասին հատուկ տեսություն, ըստ որի՝ արեւելյան Անդրկովկասի վաղնջական բնակիչները թուրքեր են եղել»: Ընդ որում, հնագիտական արժեքները դիտարկվում էին որպես հին թուրքական ազգային մշակույթի մասունքներ: Մինչդեռ աղորեջանցի քոչվորների մասին, ինչպես գրել է Յու. Բրոմելյը (*Октябрь и развитие межнациональных отношения в СССР, М., 1987, с.56*), գոյու-

թյուն ունի զգալի գրականություն, այդ թվում՝ տեղացի հեղինակների: Նրանք «մոռանում» են, որ նույնիսկ 1959 թ. մարդահամարում իրենց համար հատուկ նշված է, թե բնակչության ո՞ր տոկոսն է նատակյաց, ո՞րը՝ քոչվոր:

Ահա թե ինչու, ԼՂՀ եւ հարակից շրջաններում բնավորված քրդա-ադրբեջանական բնակավայրերում չի արձանագրվել թեկուզ մեկ հուշարձան, որը կպատկանի նորաբնակներին, այսինքն՝ ադրբեջանցիների: Եթե այդպիսիք լինեին, ապա կհիշատակվեին Բաքվում տպագրված գրքերում, կմտցվեին Ադրբեջանի կառավարության հաստատած հուշարձանների ցուցակներում: Չկան, որովհետեւ, ինչպես հայտնի է, Շուշիում 18-րդ դ. 2-րդ կեսին բնավորված օտարածին խաների վայրագությունների եւ ոճրագործությունների հետեւանքով հայ բնակչությունը հրով ու սրով դուրս էր մղվել իր պապենական բնակավայրերից, եւ ամայացած հայկական հիմնավորց տարածքներում հիմնավորված խաշնարած թուրքալեզու ցեղերը ապրում էին թաղիքապատ վրաններում, քանզի քարը քարի վրա դնել չգիտեին: Անգամ որոշակի գերեզմանատներ չունեին, որովհետեւ տարվա տարբեր եղանակներին տարբեր վայրերում էին լինում իրենց ոչխարների հետ: Հայկական բնակավայրերը օգտագործվում էին որպես ձմեռային արոտավայրեր, իսկ վանքերը, եկեղեցիները՝ փարախներ: Բացի այդ, քոչվորները չունեին ազգային որոշակի պատկանելություն: Դրա համար էլ նրանք գիտական գրականության մեջ հիշատակվում են մերթ որպես մահմեդականներ, որոնք խորհրդային, բոլշևիկյան տիրապետության առաջին 15 տարիներին կոչվում էին «կովկասյան թաթարներ», ապա՝ «ադրբեջանցիներ», իսկ 90-ական թթ. կեսերից՝ թուրքազերիներ:

Արցախա-ադրբեջանական պատերազմի ընթացքում ԼՂՀ հարակից տարածքների, որոնք խորհրդային ժամանակներում արհեստականորեն բաժանվել էին պայմանական վարչական շրջանների (Լաչինի, Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Կուբաթլուի եւ Ջանգելանի), ազատագրումով բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ուսումնասիրելու, հաշվառելու Արցախի այդ պատմական գավառների հուշարձանները: Տարածքներ, որոնք Արցախի մշակութային պատկերի օրգանական մասերն են եւ հայ ժողովրդի պատմությունում կարեւոր տեղ գրաված մշակութային կարեւոր օջախներից են:

Բոլորովին վերջերս հայերեն, անգլերեն, ռուսերեն հրատարակվել

է պատմաբան Սամվել Կարապետյանի «Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (Եր., 1999-2001 թթ.) աշխատությունը, որտեղ հանգամանալից ուսումնասիրված է նշված շրջանների շուրջ 1700 հայկական հուշարձան: Ազատագրված տարածքների հուշարձանների մասին հոդվածներ են հրատարակել նաեւ տողերիս հեղինակը, Հակոբ Սիմոնյանը, Ալեքսան Հակոբյանը: Հատկապես հիշատակության է արժանի վերջինիս գիտական ու արժեքավոր հրատարակումը (Ա. Հակոբյան, «Հակարիի վերնահովտի նորահայտ վիմագրերը», «Հանդես Ամսօրեայ», Կիեւնա, 1998 թ., N 1-12, էջ 270-324): Նշված հրատարակումներում ընդգրկված հազվագյուտ, չափազանց խոսու, գունավոր, սեւ ու սպիտակ լուսանկարները, որոնց գերակշիռ մասը տպագրվել է առաջին անգամ, ցնցող տպավորություն են թողնում: Ջարդված, փշրված հայերեն հարյուրավոր վիմագիր արձանագրությունների պատահիկներ, քանդակազարդ բեկորներ, պղծված ձեւավոր մահարձաններ, որոնք թուրք-ազերիները, իշխանությունների խրախուսմամբ, ջարդել ու տեղադրել են հասարակական եւ բնակելի շենքերի պատերի մեջ: Ժամանակին բարբարոսության օրինակը տվել է Մ. Ջ. Բաղիրովը: Նրա կարգադրությամբ Իստիսու առողջարանի շրջակայքի հայկական միջնադարյան եկեղեցիները քանդվել են, դրանց քարերով կառավարական ամռանոց, բաղնիք են կառուցել, որպեսզի Ադրբեջանի թիվ 1 գործիչն այդ բաղնիքում կաթի մեջ լողանալուց հետո միայն «կենսական գործերի» անցնի:

Տարօրինակ է, որ հայկական մշակույթի սպանողը, հայերի ցեղասպանությունը Շուշիում, Հազարի գետի հովտում, Քարվաճառում, արաքսամերձ տափաստաններում, Սոււմգայիթում, Բաքվում, Գանձակում, Գարդմանքում, Նախիջեւանում կազմակերպած նախճիրը, առանց անոթի, ետին թվով, ներկայացվում են որպես «ադրբեջանական ժողովրդի գործած փառապանծ սխրանք»: Իսկ հայերին էլ ներկայացնում՝ որպես ազերի-թուրքերի նկատմամբ ցեղասպանություն հրահրողներ:

Պետական մակարդակով ղեկավարվող հակահայկական քարոզարշավը հասել է այն աստիճանի սանձաթմալության, որ Ադրբեջանի նախագահ Գ. Ալիևը պատմաբաղաբական նենգափոխությամբ զբաղվող գրչակներին կարգադրում է, «...հետագայում էլ հորինել այնպիսի ստեղծագործություններ, որոնք մշտապես, հետեւողականորեն ապացուցեն, որ Ադրբեջանին են պատկանում այն հողերը, ուր

ներկայումս տեղադրված է Հայաստանը» թեւավոր դարձած հանձնարարությունը («*Բակինսկի ռաբոչի*», 18 փետրվարի 1999 թ.): Նույնիսկ մտնտում են Բաքվում հրաշքով պահպանված հայկական Մայր տաճարը դարձնել ցեղասպանության թանգարան, որտեղ, հավանաբար, կցուցադրվեն նենգափոխված «ստեղծագործություններ», հակահայկական «գուլխգործոցներ»: Այո՛, ինչպես գրել է Մոսկվայում հրատարակվող «*Hoeb Koboer*» թերթը (հոկտեմբեր, 2001 թ.), ազերի-թուրք կեղծարարների ցինիզմը սահմաններ չունի:

Մինչև 1960-ական թթ. կեսերը ինքնավար մարզի տարածքի հուշարձանները յոթ փակի տակ էին, «արգելված գոտիներ»: Դրա համար էլ նրանցով ոչ ոք չէր զբաղվել, անգամ չէին հաշվառվել: Բարձիթողի վիճակ էր: Սակայն 1966 թ. մարտի 1-ին եւ դեկտեմբերի 27-ին տեղական «Սովետական Ղարաբաղ» պաշտոնաթերթում տպագրված հոդվածները միանգամից արցախցիներին դուրս հանեցին լեթարգիական քնից, եւ նրանք սկսեցին մտահոգվել ավերվող, ոչնչացվող իրենց հուշարձանների ճակատագրով: Տազնապահարույց բողոք-նամակներ հայտնվեցին թերթերի էջերում, ժողովներում սուր ելույթներ հնչեցին: Մարդիկ դժգոհում էին, քանզի հուշարձանների վերականգնման ու պահպանման մասին միութենական մարմինների որոշումներն Արցախում չէին կիրառվում: Ահա թե ինչու, տեղական, մարզային կուսակցական եւ գործադիր մարմինները հարկադրված անդրադարձան երկրամասի հուշարձանների ծայրաստիճան ողբալի վիճակին: Մանավանդ որ, 1968 թ. Ադր. ԽՍՀ կառավարության հաստատած եւ պետության կողմից պահպանվող հուշարձանների պաշտոնական ցուցակներում չէին ընդգրկվել ԼՂԻՄ-ի գրեթե բոլոր հիմնական հուշարձանները (ԼՂԻՄ-ում հաշվառված ավելի քան 1500 հայկական հուշարձաններից նշված ցուցակում ընդգրկված է միայն 64-ը, այն էլ՝ աղավաղված անուններով):

Եթե նախորդ խարդավանքները՝ կապված թանգարանային արժեքների յուրացման, հուշարձանների գոյության ժխտման հետ, հայկական երկրամասում ընդունում էին լռությամբ՝ գերի մնալով «վերադասի որոշումները պարտադիր են ստորադասի համար» լենինյան տխրահռչակ սկզբունքին: Վերջապես այս պարագայում արցախցիներն ըմբոստացան եւ սովետական իրավակարգում առաջին անգամ ապացուցեցին, որ, այսպես կոչված, բոլշեվիկների որդեգրած «դեմոկրատակն ցենտրալիզմ»-ի սկզբունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ քողարկված

նենգություն, ազգային փոքրամասնություններին կործանելու միջոց: Այս ամենը զգալով՝ Լեռնային Ղարաբաղի կուսմարզկոմը եւ մարզգործկոմը քաղաքական համարձակության հանգեցին՝ համատեղ որոշում (29.06.70 թ.) կայացնելու ու հատուկ գրությամբ (23.07.70 թ.) դիմելու Ադր. ԽՍՀ կառավարությանը եւ խնդրելու, որ պետության կողմից պահպանվող հուշարձանների հանրապետական ցուցակների մեջ ընդգրկվեն ԼՂԻՄ-ի առավել կարելուր հուշարձանները: Պաշտոնական Բաքուն, իրեն հատուկ նենգությամբ, ընդդիմացավ, որ «ԼՂԻՄ հուշարձանները հուշարձաններ կոչվելու իրավունք չունեն, քանի որ անցյալում դրանք եղել են կրոնական վնասակար գաղափարներ քարոզող օջախներ», հետեւապես, «հարկ չկա դրանց վերականգնման վրա ծախսեր կատարել» եւ պահպանության հարց բարձրացնել (*տես Շ. Սկրտչյան, Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա, եր., 1996 թ., էջ 154*):

Որոշ ժամանակ անց մարզային իշխանությունները դարձյալ անդրադառնում են հուշարձանների խնդրին: Որոշվում է նախ, տեղական բյուջեի հաշվին, վերականգնել «հայ ճարտարապետության հանրագիտարան» Գանձասար վանքը: Սակայն, Ադր. ԽՍՀ մշակույթի նախարարության խուսազգությամբ, տապալվում է այդ որոշման կատարումը եւս (*տես ԼՂԳ արխիվ, ֆ. 3, ց. 35, գ. 33, 4, 289, թ. 271*): Ձախողման է արժանանում որոշման հաջորդ կետը նույնպես. հրատարակել «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» ուղեցույցը: Բաքուն իր տեղական կուսակցական դրածոյի՝ Ադր. ԿԿ ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեուրկովի միջոցով հայտնում է, որ ուղեցույցի տպագրությունը «կծներ միայն ազգային սնապարծություն եւ կխանգարեր աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությանը» (*տես 1975 թ. մարտի 21-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումի զեկուցումը, «Սովետական Ղարաբաղ», 23.03.75 թ. N 69*): Մի՞թե Բաքուն կարծում է, թե մարդիկ, ազգային փոքրամասնությունները ինտերնացիոնալ են դառնում միայն այն ժամանակ, երբ խապառ կտրված են լինում իրենց ազգային պատմությունից, անցյալի հիշատակներից, ազգային արժատից...

Բաքուն չէր բավարարվում քաղաքական պիտակներ կպցնելով: «Փնտրում», գտնում է նրանց, ովքեր նախանձախնդիր բարձրացրել են Ղարաբաղի հուշարձանների հարցը: Շատ շուտով աշխատանքից ազատվեցին մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանը, մշակույթի մարզային վարչու-

Կենտկոմի ցուցումը կար՝ հապշտապ հորինել դրանք եւ պաշտոնապես ձեւակերպել ու դեմ տալ Արցախի հուշարձաններով հետաքրքրվողների քիմքին: Իսկ այդ ժամանակ արդեն (Արցախյան հզոր շարժման պոթկումից՝ 1988 թ. փետրվարի 20-ից հետո) շատերը սկսեցին հետաքրքրվել նաեւ հայկական երկրամասի հուշարձաններով եւ թացք չորից զանազանել: Փաստ է, որ երեւանում հայերեն, ռուսերեն արդեն հրատարակվել էին Արցախի հուշարձանների մասին Շահեն Մկրտչյանի ծավալուն աշխատություններն ու տարածվել ամենուրեք: Փաստ է նաեւ, որ ճարտարապետների միջազգային միությունը, Եկեղեցիների միջազգային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն մտադիր էին փորձագետներ ուղարկել Արցախ տեղում պարզելու հուշարձանների վիճակը, ազգային պատկանելությունը:

Բաքվում ի վերջո հասկացան, որ ՊԱԿ-ի գաղտնի գրություններով այլեւս հնարավոր չէ լղոզել հայկական հազարավոր հուշարձանների գոյությունը եւ դիմեցին ավելի ստոր «Էքսպերիմենտի»: Իրենք իրենց հայեցողությամբ դգեցին-փչեցին հայկական երկրամասում իբրեւ թե պահպանվող «ալբանական զամոկներ, տաճարներ» անանուն հուշարձանների ցուցակներ: Դրանք կցեցին Ադր. ԽՍՀ կառավարությանն առընթեր կրոնական գործերի խորհրդի (8/IX-1987 թ. N 158) շրջաբերականին եւ ուղարկեցին ԼՂԻՄ-ի բոլոր շրջանների գործադիր կոմիտեների մախազահներին: Կառավարության անունից պահանջվում էր, որ հայկական շրջանների իշխանությունների հայ ղեկավարները պաշտոնական բլանկների վրա նույնությամբ արտագրեն վերելից՝ Բաքվից, իրենց ներկայացված կեղծ ցուցակները եւ ստորագրություններով, կնիքներով հաստատած, վավերացրած վերադարձնեն: Պարզունակ խաբեությամբ, այդպիսով, փորձել էին մի կողմից «օրինակացնել» հայկական միջնադարյան հուշարձանների յուրացումը, ալբանացումը, մյուս կողմից՝ մոլորեցնել հայ հասարակությանը: Նշված կրոնական խորհրդի մասնակցությունը տվյալ դեպքում թույլ էր տալիս չկասկածել հողաբաշխ շրջաբերականների լուսանցքային լինելուն եւ ստեղծում էր պատկառելիության անհրաժեշտ պատրանք: Թեպետ հայտնի է, որ հուշարձաններով ի պաշտոնե զբաղվում են մշակույթի նախարարությունը եւ հուշարձանների պահպանության հանրապետական կամավոր ընկերությունը: Արցախի հուշարձանների մասին փաստեր, հիմնավորումներ, պարզապես շինծու հիմքեր ստանալու արգահատելի մեթոդաբանությունը եւ ԼՂԻՄ-ի իշխանություններին

ծայտյալ շրջանցելը նպատակ է հետապնդել քողարկելու կառավարական մակարդակով իրականացվող խարդավանքը:

Ավելի մեծ անհեթեթություն չի կարող լինել. Ադր. ԽՍՀ կառավարությունը 1988 թ. ապրիլի 27-ի N 45 որոշմամբ հաստատում է բացարձակ սուտը, կեղծիքը, «ալբանական զամոկների» խմբաբանակը (դրանք հորինվել են հիվանդագին մարդկանց երեսակայությամբ եւ «օրինակացվել» իրեն չհարգող, հակահայկական մոլուցքով տառապող կառավարության կողմից): Բաքուն, այսպիսով, քաղաքական հանգամանքների թելադրանքով, կամայականորեն փոխում է Արցախի հայկական մշակույթի վերաբերյալ որոշագրած նախկին տակտիկան եւ արդեն անկախող էր ժխտել հուշարձանների գոյության փաստը: Սակայն դրանք (ըստ կրոնի գործերի խորհրդի կաղապարացուցակների) «հայկական չեն, այլ՝ ալբանական-ադրբեջանական են»: Յետեւապես, հարկ չկա հայկական երկրամասի հուշարձանների ուսումնասիրությանն ու վերականգնմանը մասնակից անել հայ մասնագետներին: Ահա թե որն է «ալբանական տաճարներ» բլեֆի իմաստը, հայկական հուշարձանները պահպանելու, վերականգնելու մասին վերադասի միութենական մակարդակով ընդունված որոշումների եւ առաջարկների կատարումը ձախողելու Ադրբեջանի ճարպիկ ղեկավարների հերթական սադրանքների բուն նպատակը:

Այս կեղծիքի դեմ ժամանակին հանդես է եկել Ադրբեջանի գրողների միության քարտուղար Չ. Աբդուլաեւը: Նա գրել է. «Մտնելով անհարկի վեճի մեջ, մենք՝ ադրբեջանցիներս, փրփրած բերաններով սկսել ենք ապացուցել, որ ԼՂԻՄ տարածքում կանգնած են բացառապես ալբանական հուշարձաններ, այլ ոչ թե հայկական» («Բակիմսկի ռաբոչի», 1988 թ., N 236): Այսուհանդերձ, Ադրբեջանի իշխանությունները, քաղաքական աներեւակայելի խարդավանքներով ու խուսազրություններով, խափանեցին ճարտարապետների միջազգային միության եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած փորձաքննական միացյալ հանձնաժողովի մուտքը Լեռնային Ղարաբաղ: Ինչո՞ւ: Որովհետեւ անաչառ փորձագետները կարող էին տեղում գնահատել հայկական հուշարձանների վիճակը եւ պարզել դրանց պատկանելությունը: Իսկ դա թուրք-ազերիների սրտով չէր, որովհետեւ կբացահայտվեր ճշմարտությունը եւ կպատռվեր նրանց կեղծ դիմակը:

ԼՂԻՄ-ի մասին ԽՍՀԿ Կենտկոմի եւ ԽՍՀՄ Միմիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշումից բխող ՀԽՍՀ պատմության եւ մշակույ-

վարկաբեկելու նպատակը: Ինչ վերաբերում է մշակութային արժեքների «յուրացմանը», հայը դրա կարիքը երբեք չի զգացել: Յուրացումը, գողությունը, բալանը թուրքերի կենցաղի, զբաղմունքի հիմնական բաղադրիչ մասերից են՝ նաեւ եվրոպական բազմաթիվ հեղինակների, այդ թվում՝ հանրահայտ Կ. Մարքսի վկայությամբ:

Մի քանի տարի առաջ ազերի-թուրքերը հարայ-հրոց էին բարձրացրել Շուշիում, այսպես կոչված, հայերի կողմից ադրբեջանական հուշարձաններն ավերելու մասին: Այդ առթիվ ժամանակին հայկական կողմը համապատասխան մերկացնող փաստաթղթերի հետ ՅՈՒՆԵՍԿՕ-ին է ուղարկվել 35 լուսանկար: Ի դեպ, Արցախի եւ Ադրբեջանի այլ վայրերում ավերված, կործանված հայկական քրիստոնեական հուշարձանների մասին տասնյակ փաստաթղթեր են տպագրված «Վանդալիզմ» անգլերեն փաստավավերագրական գրքում (եր., 2002):

Քայքայվող խորհրդային Միության մայրամուտին, Ադրբեջանի բռնապետության ճիրանների տակ գտնվող արցախցիները մշտապես մարդավայել ապրելու իրավունքից զրկված, փորձեցին վերականգնել իրենց պատմական իրավունքները: Ինչպես Ադրբեջանն այլևս չէր կարողանում ընդունել խորհրդային ժառանգությունը եւ հեռացավ ԽՍՀՄ-ից, այնպես էլ Արցախը չէր կամենում այլևս ապրել այն պայմաններում, որոնք պարտադրել էր Ստալինը տասնամյակներ առաջ:

Ադրբեջանն ամեն կերպ փորձում է վերահաստատել իր կարգերն ու իշխանությունը Արցախում, որն արդեն 15 տարի է, ինչ հրաժարվում է ենթարկվել Բաքվին: Դեռ թարմ են թուրք-ազերիների վայրագությունների հետքերը: Ցավոք, անդառնալիորեն ոչնչացվել են հազարավոր հուշարձաններ, ավերվել հարյուրավոր բնակավայրեր, ջարդվել, փշրվել տասնյակ հազարավոր մահարձաններ, խաչքարեր, որովհետեւ, ինչպես ասել է Վ. Գյուգոն, այս երբեմնի ծաղկուն հայկական երկրամասով «թուրքերն են անցել»:

Արցախը վաղուց որոշել է իր ճակատագիրը եւ անարդար է, եթե չասենք ոճրագործություն, ցանկացած ձեռով այն վերադարձնել խորթ, կեղեքիչ պետությանը: Արցախի հայ բնակչության անկախությունը, ԼՂՀ հռչակումը Արցախի ազատագրական հզոր պայքարի օրհնաչափ արդյունքն են: Այս տեսանկյունից՝ կարելի է ամենայն հանգովածությամբ ասել, որ ԼՂՀ հռչակումը 20-րդ դարավերջում ազգային հարցի լուծման խորհրդանիշն է:

Արդեն եկել է ժամանակը, որ վերականգնվի Լեւին-Աթաթուրք գոր-

ծարքի արդյունք, մասնատված պատմական Արցախի ամբողջականությունը այն շրջաններով, որոնք նրանից անջատել, պոկել, խլել են սովետական ազերի-թուրքերի համար 20-րդ դ. 20-ական թթ.-ին: Եվ ուրախալի է, որ դրանց մի զգալի մասն Արցախի ազատագրական բանակի կողմից արդեն ազատագրված է:

Ամփոփենք: Իրոք, Ղարաբաղից հայերը հարկադրված հեռանում էին, քանզի բարոյագրկության ճնշող մթնոլորտում, ազգային խտրական դաժան հալածանքի պայմաններում, կորցրել էին հավատն ապագայի նկատմամբ: Կորցրել էին իրենց կյանքում դրական փոփոխությունների հույսը, խորապես հիասթափվել էին այն բանից, հանուն որի ոչ վաղ անցյալում պատրաստ էին գնալու ցանկացած զոհողության:

Եվ եթե չլիներ Ղարաբաղյան հզոր շարժումը, մանավանդ ազգային ազատագրական պայքարը, լեզու չի պտտվում ասել, տխուր, շատ տխուր կլիներ Ղարաբաղի հայության վիճակը: Սակայն նրանք՝ քաջարի Ղարաբաղցիները, անվերջ չէին կարող համակերպվել տասնամյակներ շարունակ տեւող կամայականությանն ու ազգահալած քաղաքականությանը: Չափազանցություն չի լինի ասել, որ Ղարաբաղցիներն այս պարագայում էլ զերազանցեցին իրենք իրենց, համախմբվեցին եւ փշրեցին ադրբեջանական բռնատիրության կապանքներն ու պարտադրված պատերազմում հաղթեցին, անկախացան եւ պետություն ստեղծեցին: Սրանով էլ մեկընդմիջտ վերջակետ դրվեց հալածանքին, կեղեքումներին եւ հայրենի Արցախը կորցնելու մտատանջանքներին:

Փաստորեն, Արցախը, իր հերոսական հաղթանակով, կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերած նվաճումներով, ինչպես նաեւ դեմոկրատական ժողովրդավարական հիմունքներով ստեղծված պետականությամբ, արժանացավ միջազգային հանրության համակրանքին: Մնում է, որ այդ ժողովրդի նկատմամբ խոր ըմբռնումով մոտենան բոլոր նրանք, ովքեր համձն են առել վերջնականապես խաղաղ ճանապարհով եւ արդարացի կերպով կարգավորել Արցախի հիմնախնդիրը:

Սույն աշխատությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում, որպեսզի հարեան հանրապետությունում գոնե հետին թվով հասկանան, թե ինչն ինչոց է եղել: Եվ որ Լեւոնային Ղարաբաղում Ադր-

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Փաստաթուղթ N 1

*ԼՂ մարզային պատմա-երկրագիտական
թանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանի
1968թ. մայիսի 14-ին կուսակցության ԼՂ մարզկոմի
բյուրոյում ունեցած ելույթը*

բեջանի իրականացրած վայրագություններին դիմակայելու համար է համախմբվել, ոտքի կանգնել եւ պայքարի ելել արցախահայությունը: Այնպես որ, Ղարաբաղյան հզոր շարժման, մասնավորապես ազատագրական պայքարի կազմակերպման հիմքերը դրվել են Բաքվում, հայակուլ տմարդի քաղաքականությունը ծավալել եւ բորբոքել էր հայերի դիմադրություն:

Ադրբեջանի կեղծարարներին խորհուրդ կտայինք կարդալ Բաքվում տպագրվող «Զերկալո» թերթում (7/XI-2002 թ.) Իսրայելի Մերձավոր Արեւելքի հարցերով մասնագետ, գեներալ Անոս Գիլբոսի տված հարցազրույցը, որտեղ շոշափվել է նաեւ Ղարաբաղի հիմնախնդիրը. «Ոչ պակաս կարելու է նաեւ այն,- ասել է գեներալը,- որ ադրբեջանցիները, թեկուզ իրենց համար կարելու են, ամբողջական վերլուծեն, թե ինչպիսի պատճառներով են կորուսվել ոչ միայն Ղարաբաղի մերձակա տարածքները, այլև բուն Ղարաբաղը»:

Ադրբեջանում տիրող միրածը՝ խաբկանքը, էյֆորիան, թե Արեւմուտքի, մանավանդ Թուրքիայի գորեղ աջակցությամբ, իրենք կարող են եւ պետք է պատժեն հայերին, «անհնազանդ» Ղարաբաղին, ցնորամտություն է: Ժամանակն է, վաղուց ժամանակն է, որպեսզի թուրքազերի մտավորականները, պետական-քաղաքական գործիչները, յաւանջի, բայց նաեւ նենգամիտ գիտնականները սթափվեն, սեփական կեղեւից ելնեն ու բոլորաշուրջ նայեն, խորհեն, գուցե թե իրատեսությունը տանի դեպի խղճի, բանականության արթնացում:

Սույն աշխատությունը, կարծում եմ, շատ հարցերում նրանց համար օգտակար կլինի: Այլապես հարկ չկա շարունակել զբաղվել քաղաքական անհեռատեսությամբ ու գաղափարական տհասությամբ եւ նորանոր դառնություններ, փորձանքներ բերել նաեւ սեփական ժողովրդի գլխին:

Չենց ազգային խտրական հայակուլ տմարդի քաղաքականությունը առիթ դարձավ Ղարաբաղցիների ազգային-ազատագրական պայքարի ալիքի բարձրացման համար: Բաքվում այդպես էլ չգիտակցեցին, որ ամեն մի ծայրահեղություն ունի իր վախճանը, որ ամեն մի անպատիժ չարիքը չարիք է ծնում:

Պարտիայի մարզկոմի բյուրոյի հարգարժան անդամներ, իմ խոսքը վերելքի ուղին բռնած մարզային թանգարանի կամ նրա հիմնադիր տնօրենի պաշտպանության մասին չէ: Թեեւ, չեմ թաքցնում, դա էլ կա: Խոսքս բուն թանգարան-ֆենոմենի շուրջը արհեստականորեն ստեղծված գաղափարաքաղաքական աժիոտաժի մասին է: Նպատակը, ցավոք, բարի չէ, թանգարանին օգնելը կամ նկատված թերությունների շտկումը չէ, այլ, անշուշտ, այն կազմալուծելու, ավերելու մարմանքն է, որ հանգիստ չի տալիս չափից ավելի տաքացած գլուխներին: Քանզի թանգարանը ԼՂԻՄ-ի համար եւ ակադեմիա է, եւ գանձատուն, եւ հիշողության, հայրենասիրության, հպարտության տաճար: Այնտեղ հավաքված հազարավոր եզակի ցուցանմուշներն, ամենայն իրավամբ, համարվում են պատմության անհերքելի խոսուն վկաները, մեր ժողովրդի հանճարով արարված արվեստի ամանց արժեքներ եւ ունեն ոչ միայն գիտական, պատմական, գեղագիտական, այլև ճանաչողական մեծ նշանակություն: Այն էլ ասեն, ինչպես նշեց զեկուցողը, միայն անցյալ տարի թանգարան է հաճախել ավելի քան 50 հազար այցելու: Մեր պայմաններում սա մեծ թիվ է: Փաստորեն մարզի յուրաքանչյուր 3-րդ բնակիչ այցելել է թանգարան: Միաժամանակ սա նաեւ մեծ լսարան է, որը բանիմացորեն օգտագործվում է:

Քանի որ թանգարանը համարվում է ԼՂԻՄ-ի կարելու մասնիկը, ապա պետք է, որ նա էլ կրի մարզին պարտադրված դառը ճակատագրի իր բաժինը: Ինքնավարության, այդ թվում նաեւ թանգարանի շուրջը ձգված օղակն ավելի սեղմվեց 1967թ. հուլիսյան դեպքերից հետո, երբ մեզ վրա մատ թափահարող բարձրաստիճան ղեկավարների հաջորդեցին բազմաթիվ ու բազմազան ստուգող, խրատող, «բարոյա-

Անի իր անողոք վճիռը:

Մեծապես սրանով են պայծառնավորված մեր ընդդիմախոսների անմիտ ինքնավստահությունը, խանդավառ տգիտությունը եւ գավառական թշվառությունը: Ասես թանգարանը կործանելու, նրա երիտասարդ տնօրենին մերկացնելու, կտրահարելու համար մրցանակ է նախատեսված եւ նրանք ինչպիսի ստոր մեղադրանքներով փորձում էին մեկը մյուսին գերազանցելով շահել այդ մրցանակը:

Այնուամենայնիվ, ի՞նչ է պատահել: Որո՞նք են այս ամենի ակնառու նախադրյալները: Իրականում կատարվել է այն, ինչ վերապահված էր կատարելու մարզային թանգարանին: Ցուցադրաբար ներկայացվել են երկրամասի պատմության առավել կարեւոր հերոսական դրվագները: Իրոք, մեծ դեր է վերապահված թանգարանին: Նա զգալի չափով նպաստել է մարզի քաղաքական, մտավոր կյանքին նոր լիցք հաղորդելու, ազգային ոգին բարձրացնելու հույժ կարեւոր գործին: Գրքեր, բրոշյուրներ տպագրելու, գիտահանրամատչելի հաղորդումներ տալու հնարավորությունից իսպառ զրկված մարզի միակ գիտալուսավորչական օջախը՝ թանգարանը, ինչ-որ չափով վերականգնել է ժողովրդի խաթարված հիշողությունը, միացրել հանիրավի ընդհատված թելերը եւ գտել կորսված կապն անցյալի հետ:

Ահա սրանք են թանգարանի կատարած հիմնական խնդիրները, որոնք ոչ միայն դուր չեն եկել, այլեւ զարմացրել ու զայրացրել են բոլոր այն չար ուժերին, ովքեր տարիներ շարունակ զառանցում են «հայի քյոքը» Արցախ-Ղարաբաղում արմատահան անելու մասին: Այդ առնչությամբ ուզում են բյուրոյին տեղյակ պահել թանգարանը ստուգող խմբի ղեկավար, Ադր. ԿԿ կենտկոմի ազիտացիայի եւ պրոպագանդայի բաժնի վարիչի առաջին տեղակալ Ախունդովի արտահայտած մտքերի մասին: Բառացի կրկնում են նրա ասածները. «Յուրաջ Մզրրդիչյան, մենք ուզում ենք հայի քյոքը պոկել, հանել այս աղբեջանական հողից, իսկ դու թանգարանում ցուցադրել ես Տիգրան Մեծի արծաթե դրամը (մ.թ.ա. 1-ին դար), Դիզակի Գագիկ իշխանի աղջկա վիմագիր արձանագրություն (10-րդ դ.), Մելիք Եգանի հրովարտակը (17-րդ դ.), ռուս զենեակների դարաբաղցի հայերից քաջագործությունները փառաբանող կոչերը (19-րդ դ.): Դրանով դու քո հայրենակիցներին մատնացույց ես արել, որ Ղարաբաղը երեք, երկու, մեկ հազար, հինգ, երկու հարյուր տարի առաջ հայկական է եղել եւ աետք է

պայքարել այսուհետ էլ հայկական պահելու համար: Դրա համար էլ քեզ չենք ների»: Ավելի պարզ, թվում է, չես ասի: Միայն տարակուսում ես, թե ինչու ռոմացող շովինիզմը, պանթուրքիզմը նույնացվում է մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսության մեթոդաբանության հետ: Կա, արդյո՞ք, կապ դրանց միջեւ: Եթե կա, նշանակում է իմ մնալը լենինյան պարտիայի շարքերում անիմաստ է:

Քիչ առաջ մեր լսած ելույթները կարելի է գնահատել որպես թանգարանի եւ, ինչու միայն թանգարանի, նկատմամբ պաշտոնական Բաքվի որդեգրած ազգայնամոլական դիրքորոշման ընդհանուր պատրանքային երեւութի մասնավոր դրսեւորումները: Եվ, սակայն, ավելի զռեհիկ, ավելի լպիրշ, ավելի նողկալի, այն էլ համեմված քաղաքական անզուսպ չարախոսություններով: Քաղաքականացված, ապականված մթնոլորտում մեր կրիտիկոսները եթերային ճախրանքում, ոտներն ամպոտի կերպարանքի մեջ մտած, ինչ լուտանքներ ասես, որ հեղեղի պես չթափեցին գլխիս: Մի պահ մարմնովս սարսուռ անցավ ու քիչ մնաց ամերից դուրս գայի: Բայց դա լոկ մի պահ էր: Ես տեսել, գործ եմ ունեցել բազմաթիվ պրոֆեսիոնալ զրպարտիչների հետ, սակայն մեղքս ինչ թաքցնեմ, սրանք ուրիշ, սրանք մտազարությանը տառապող յաման կյառուզնիկներ են հա: Խեղճ Ղարաբաղ, ոնց էլ դիմանում ես...

Միայն անհասկանալի է, թե ինչու նրանք փորձ չարեցին իրենց «զորավոր» մեղադրանքները համակարգել, երկրային դարձնել: Այդքան ահավոր հերյուրանքները գոնե ինչ-որ չափով տեղայնացնեին, փաստաթկեին: Այլապես ինչի նման է «օվկիանոսի մյուս ափից նյութական աջակցություն ստանալու» վարկածը, երբ կարելի է խելքին մոտ բաներ հնարել: Ասենք, թանգարանը եւ բանկը իրար շատ մոտ են:

Թանգարանի տնօրենն իր փորած գաղտագողի անցքով ամեն գիշեր մտնում է բանկը եւ վերցնում մի կապ 25-անոց եւ այդ փողերով իրականացնում իր հայրենասիրական, կրիտիկոսների բնորոշմամբ՝ ազգայնամոլական միջոցառումները: Սա ավելի տրամաբանական, ավելի հավանական կլիներ: Թե չէ, աշխարհում դեռ չի ծնվել մի հիմար կապիտալիստ կամ նրան ձայնակցող որեւէ ճապաղ կազմակերպություն, որը ֆինանսավորի մի ինչ - որ գավառական թանգարանի, որպեսզի վերջինս կազմակերպի «խոր պարտիական», իմա՝ բուլշեիկների գաղափարներով հագեցված ցուցադրություն: Որպեսզի այն ներ-

կայացվի Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 50-ամյակի պատվին կազմակերպված թանգարանների համամիութենական ստուգատեսին եւ պարզեւատրվի խրախուսական դիպլոմով:

Ինչեւիցե: Իրականությունը, ճշմարտությունը, եթե ուզում եք իմանալ, հետեւյալն է. եթե մի օր մանրամասնվի, կերեւա, թե ինչ գոհողությունների գնով են աշխատել, եւ աշխատում թանգարանի փոքրիկ կոլեկտիվի երիտասարդ, խանդավառ անդամները: Հաճախ մեկը կատարել է մի քանի մարդու գործ, առանց վարձատրության: Շատ հաճախ մեր իսկ ստացած չնչին աշխատավարձից որոշ գումարներ ենք կատարել թանգարանի համար անհրաժեշտ իրեր, նյութեր ձեռք բերելու համար: Հաճախ թանգարանում օգտագործել ենք մեր բարեկամներից, ժանոթներից, ընկերներից, մասնագետներից դարձյալ առանց որեւէ կոպեկ ծախսեր կատարելու: Թանգարանի պարագայում կարելորդ ֆինանսական կողմը չէ, այլ ոգին, նվիրումը, բանիմացությունը, գիտական բարոյական կայուն սկզբունքները, կազմակերպչական ունակությունները, որոնք եւ վճռորոշ են թանգարանի գործունեության մեջ: Երեք տարի եւ աշխատում եմ առանց հանգստի եւ արձակուրդի: Իմ աշխատանքային օրը տեւում է 15-17 ժամ: Կատարում եմ 4-5 աշխատողի գործ:

Միթե այդպես չեն աշխատել եւ աշխատում մեր կոլտնտեսականները, բանվորները մասնագետները: Այլապես մենք չէինք կարող մեկ տարում 1967 թ. աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 130 տոկոսով, ատաղրել ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ: Չէ որ մարզը ստանում է անհամեմատ քիչ նյութատեխնիկական միջոցներ, ֆինանսական կապիտալ ներդրումներ, իսկ աշխատավարձը մարզում ամենացածրն է Խորհրդային Միությունում: Մի՞թե այսպիսի պայմաններում, հայրենամյվեր աշխատանքով չէ կերտվել Ստեփանակերտը, ստեղծվել մեր տնտեսական հսկայական ներուժը: Աս սխալաբան է, հայրենիքի ճակատագրով մտահոգված մարդկանց անձնուրացության վկայություն:

Հիմա ուզում եմ անդրադառնալ Հայկ Գասպարյանի առաջ քաշած բազմաթիվ բարբաջանքներից միայն մեկին: Ի վերջո, մինչեւ երբ պիտի թութակի նման կրկնենք մեր ազգերի «բարեկամներին» եւ վանքերը, եկեղեցիները համարեք «կրոնական վնասարար օջախներ, անարժեք հնություններ»: Բայց չէ որ նրանք շատ վաղուց են դադարել այդ-

պիսիք լինելուց: Երկրում Լեւոնի հուշարձանների մասին հայտնի դեկրետից հետո պահպանում- վերականգնում եւ պրոպագանդում են հուշարձանները եւ դրանք ներառում ժամանակակից կյանքում, մասնավորապես ծառայեցնելով աշխատավորության, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակության եւ հանգստի կազմակերպման նպատակով: Մի մոռացեք, որ մեր մարզի հուշարձանները կրոնական օջախներ լինելուց զատ, ինքնապաշտպանության եւ գոյատեւման համար մղված պայքարի մեջ իրենց անգնահատելի դերն են ունեցել: Բա չէ որ վանքերում, եկեղեցիներում անգամ, խավարի եւ մղձավանջի պայմաններում, անմար կրակի պես բոցկլտացել է ազգապահպանության անշեջ կրակը:

Դրանք մեր լեռնաստանի վանքերն ու եկեղեցիները երկրամասում լուսավորության, կրթության տարածման մշանակալից օջախներ էին եւ հովանի էին եղել գրչության եւ ձեռագրերի ծաղկմանը: Բա չէ՞ որ այդ հուշարձանները միաժամանակ քարե վկաներն են, քարակերտ գրքեր, որոնք գալիս են դարերից, պատմության ակունքներից եւ արտացոլում սերունդների նյութական ու հոգեւոր կյանքը, երկրամասի բազմադարյան պատմությունը: Բա չէ՞ որ այդ կոթողները պատմության, ճարտարապետության այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք դրեցին լեռնոտ երկրամասի դեմքին եւ զգալի չափով հարստացրին ազգային մշակույթը:

Ցավում եմ, որ մեր պատմաբան կրիտիկոսները. (որոնցից մեկը՝ Զր. Պետրոսյանը դպրոցի տնօրեն է, իսկ մյուսը՝ Հ. Գասպարյանը ռադիոհաղորդումների կոմիտեի նախագահ) չգիտեն, պատկերացում չունեն այդ ամենի մասին, այլապես նրանք վանքերի, եկեղեցիների մեջ ազգայնամոլություն կամ անցյալը իդեալականացնելու փորձ չէին անի եւ անմտորեն չէին կառչի որոշ վայ- գիտնականների կողմից տարածած կեղծիքներից եւ մեզ պարտադրվող «անցյալի վնասակար կրոնական օջախներ» նորելուկ սնանկ գաղափարից: Դրան գունարած «կրոնը հաշիշ է» Լեւոնի տվյալ խնդրում բոլորովին կապ չունեցող արտահայտությունը: Ահա նրանց գորավոր փաստարկները: Ահա նրանց դիրքորոշումը: Մեկը լինի հարցնի, ի՞նչ է, մեջիդները անցյալում մարքսիզմի գաղափարների տարածման քաղլուստնե՞ր էին, թե՞ հեղափոխության շտաբներ:

Բյուրոյի հարգարժան անդամներ, ինձ առավել անհանգստացնում

է մի բան. արդոյ՞ք Քր. Պետրոսյանը, Գ.Գասպարյանը զգում են իրենց կերպը, իրենց «գորավոր» փաստերի անհեթեթությունները, իրենց կասկածելի մտավարժությունների հետեւանքները: Ի՞նչ է ստացվում. երեկ նրանք նույն ամբոխավարությամբ «հայկական նացիոնալիզմի» մեջ մեղադրեցին Բ. Ուլուբաբյանին, Ս. Շաքարյանին, Բ. Ջանյանին, Ս. Ասլանյանին, Ի. Խաչատրյանին, Լ.Գասպարյանին, այսօր Շահեն Սկրտչյանին, վաղը հավանական է հերթը կհասնի ժան Անդրյանին, իսկ մյուս օրը...

Բավ է, այդ ո՞ւմ գրած սցենարով եք պատվերներ կատարում եւ ինչի՞ համար: Մի՞թե դուք չեք զգում, որ դարձել եք Ղարաբաղի դեմ արքած անբարո մեծ խաղի բողոխներ: Մի՞թե դուք այնքան տարվել եք ձեր դերով, որ չեք նկատում, տեսնում, թե ինչ է կատարվում ձեր շուրջը: Իսկ կատարվում են ահաբեկչական բռնություններ, անմեղ մարդկանց սպանություններ, պետական եւ սեփական ունեցվածքի համատարած գողություններ, հայկական տասնյակ գյուղերի բռնագաղթեցումներ, արտադրական կարողությունների ավերումներ, շահութաբեր այգիների զանգվածային կտրտումներ, ազգային մշակույթի եւ լեզվի դեմ հալածանքներ, պատմության կեղծումներ, հուշարձանների ոչնչացումներ: Եվ այդ ամենը ինտերնացիոնալիզի եւ ժողովուրդների լեցինյան բարեկամության քողի տակ: Սա է վիճակը: Սա է, որ պիտի լուրջ անհանգստացնի բոլորիս: Սրա դեմը պիտի առնվի, այլապես վաղը ուշ կլինի:

Եկեք մեկ անգամ եւս հիշենք եւ ուրիշներին էլ հասկացնենք, որ նույնիսկ այն ժամանակ, երբ Ղարաբաղն ինչ-ինչ քաղաքական հաշվարկներով ենթակեցրին Ադրբեջանին, սակայն լրիվ չենթարկեցրին, լրիվ չտվեցին Ղարաբաղը ադրբեջանցիներին, այլ ստեղծեցին ինքնավարություն: Նրա համար ստեղծեցին, որ դա եղել է հայկական հող եւ այնտեղ ապրել ու ապրում են հայեր, եւ բնավ ոչ նրա համար, որ Ղարաբաղը Լեռնային է կամ Ադրբեջանի անջակտելի մասը:

Ի վերջո, ելույթս ավարտելով, ուզում եմ բյուրոյի ուշադրությունը բեւեռել եւս մեկ կարեւոր խնդրի վրա: Խոսքը քաղաքական կեղծ, շինծու, ստահող մեղադրանքներով արհեստական գործիչներ, հայրենասերներ կաղապարելու գեշ սովորության մասին է: Դժբախտաբար, այդ գործընթացին ինչ-ինչ ամբիցիոզ նպատակներով նպաստում են որոշ պատասխանատու ղեկավար ընկերներ:

Ի սեր Աստծո, ձեր սուտ ու փուչ «լուրջ քաղաքական մեղադրանքներով» ինձ կուրք, առավել եւս ազգային եւ գաղափարական այլադավ գործիչ մի դարձրեք: Որոշ մարդիկ անբասիր երեւալու, պաշտոնական աստիճանով վեր բարձրանալու, նաեւ Ղարաբաղին վնասելու համար ուզում են, որ ես այդպիսին լինեմ, որ ասեմ՝ տեսեք, թե ինչպիսի խոշոր ու վտանգավոր արմատ ենք Ղարաբաղում գտել եւ այն արմատախիլ անում: Բայց ես կրկնում եմ այդպիսինը չեմ: Ես ընդամենը մի շարքային մահկանացու եմ, որը բազմակողմանի գիտի իր գործը, դերը եւ անթերի կատարում է իր պարտականությունները: Մինչդեռ Կենտկոնը, նրա այստեղի «հսկիչները» այնպիսի քաղաքական, գաղափարական մեծ մեղքեր են վերագրել ինձ, որ անտեղյակ մարդուն կթվա, թե այս Շահեն Սկրտչյանը խոշոր, անհաշտ անհատ է, իր զորեղ կապերով պայքարի է դուրս եկել մարքսիստական մեթոդաբանության դեմ: Ինչպիսի հիմնարկություն եւ ոչ միայն հիմնարկուն:

Կարելի է քննադատել, շարադրել սեփական (եթե այդպիսիք կան) սկզբունքները: Բայց կարելի է դա անել արժանապատվորեն եւ փաստարկված, այլ ոչ թե «տատիկի լսած» հեքիաթաբանությամբ, 30-ական թթ. չեկիստական կեղտոտ մեթոդներով աջ ու ձախ քաղաքական պիտակներ կպցնելով, հայ-ադրբեջանական ժողովուրդների փոխհարաբերությունների լարերի վրա խաղալով:

Գ.Գ.- Սույն ելույթը սղագրել եւ հրատարակության է պատրաստել կուսմարզկոմի այն ժամանակվա հատուկ բաժնի վարիչ Քնարա Մուսայեյանը:

ԼՂԻՄ-ի պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանի 1972 թ. ապրիլի 24-ին ԼՂ կուսմարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանին հղած պատմաճարտարապետական հուշարձանների ողբալի վիճակի մասին պաշտոնական գրությունը եւ տեղեկանքը

Կուսակցության Լեոնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Գ.Ա.Մելքունյանին

Հարգարժան Գուրգեն Ալավերդովիչ

Ուզում եմ մարզկոմին տեղյակ պահել, որ ես, որպես մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանի դիրեկտոր, ԼՂԻՄ-ում իր գործունեության սկզբնական շրջանից՝ 1965 թվականից սկսած պարբերաբար, գրավոր եւ բանավոր հայտնել եմ դեկավար մարինետներին, այն է՝ կուսմարզկոմին, մարզսովետին, ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրությանը, ԼՂԻՄ-ի պատմաճարապետական հուշարձանների կանխամտածված ավերումների մասին: Չնայած դրան, բանիցս «Խորհրային Ղարաբաղ» թերթի 1966 թ. մարտի 1-ի, դեկտեմբերի 27-ի եւ 1967 թ. փետրվարի 2-ի համարներում տազմապարահարույց հոդվածներով հանդես եմ եկել եւ հարց բարձրացրել մարզի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության եւ պրոպագանդան վերբերյալ հարցը քննարկելու եւ համապատասխան որոշում կայացնելու համար: Թեւ հարցը քննարկվել եւ որոշումներն էլ կայացվել են, սակայն, ըստ էության, հուշարձանների պահպանության խնդրում պետական մոտեցում չի նկատվում:

Լավ իմանալով հուշարձանների տխուր վիճակը, հայտնում եմ, որ այլեւս այսպես հանդուրժել չի կարելի: Սերունդները մեր հանցավոր անտարբարությունը, ջայլմային կեցվածքը չեն ների: Կրկին խնդրում եմ Ձեզ՝ իմք ընդունել կից ներկայացվող տեղեկանքը եւ հարցը վերստին քննարկման դնել մարզկոմի բյուրոյի եւ մարզխորհրդի գործկոմի համատեղ նիստում:

ԼՂԻՄ պետական պատմա-երկրագիտական թանգարանի դիրեկտոր Շ. Ա. Սկրտչյան

Կուսմարզկոմի արխիվ
Փ. 1, ժ. 105, ձև 1300, ժ. 15-26.

о состоянии охраны историко-архитектурных памятников Нагорно-Карабахской автономной области

На территории области сохранилось более 1000* памятников культуры. Здесь, на каждом квадратном километре можно встретить редкой выделки хачкары (крест-камни), полуразвалившиеся, да и уцелевшие от времени монастыри, церкви, крепости, остатки старинных поселений, древние курганы и кладбища, руины городов, которые могли бы рассказать о героическом прошлом коренного населения области (исторического Арцаха).

К сожалению, эти бесценные исторические памятники брошены на произвол судьбы, за исключением нескольких азербайджанских памятников в городе Шуше, относящихся к концу XIX века и более позднему периоду.

Армянские памятники не реставрируются и не пропагандируются. Только изредка в местных газетах появляются заметки с робкой жалобой о плачевном состоянии этих исторических ценностей.

Более того, за последние годы можно наблюдать даже, как умышленно разрушаются памятники. Это делается под предлогом геолого-изыскательских работ, бурят шнуры под стенами знаменитых монастырей и взрывают. Так произошло с уникальным строением древности - монастырем Хутаванк (V-XIII вв.). Взрывом были уничтожены изумительные орнаменты, хачкары, целые блоки классического сооружения.

В юго-восточной части этого памятника, под самой стеной умышленно прорыта канава: водный поток размывает фундамент строения, что ведет к разрушению его.

Пользуясь безразличием в отношении этих памятников, в Карабахе появились люди, которые в поисках золота и археологи-

* Когда составлялась настоящая справка, не было еще учета памятников Нагорного Карабаха. Потому-то выражение "более 1000" отображало приблизительное количество. В ходе исследований последующих лет выяснилось, что памятников несравнимо больше.

ческих ценностей разрушают не только монастыри и церкви, но грабят могильники народных героев, полководцев и выдающихся личностей.

Подобному варварскому ограблению подверглись монастыри Егише Аракек, Гандзасар, Хтраванк в Мардакертском и Гтич в Гадрутском районах.

Дело дошло до того, что "кладоискатели" используют даже мощную геолого-разведочную аппаратуру и машины. Некоторые же памятники буквально сносятся с ведома официальных лиц под видом планировки и проведения благоустроительных работ. Безобразные факты своеволия не пресекаются местными властями, потому что на них никто не обращает внимания.

В 1966 году в газете "Строитель" №9 (1189) от 2 февраля архитектор К.Саидов выступил со статьей, озаглавленной "Проблемы курортного города Шуши" с искусственно надуманной концепцией, будто кладбища затеснили город, и заявил: "Мертвые съели живых".

После его выступления в Шуше началась кампания сноса старых, имеющих историческую ценность кладбищ. В дело вступили бульдозеры. Они сравнивали старинные могилы с землей, а надгробные камни местное население растаскивало для нужд строительства. Обо всем этом с горечью и сожалением писали туристы и отдыхающие здесь курортники, приехавшие из разных городов страны: Москвы, Ленинграда, Минска и др.

В своих письмах они с болью пишут об уничтожении армянских памятников, задаются вопросом: почему такие выдающиеся памятники, как Казанчеоц екехеци, Канач жам, Агулеоц екехеци, находятся в довольно жалком состоянии, в то время как рядом с ними дома беков, ханов, мечети реставрированы, превращены в очаги культуры. Словом, в г.Шуше придерживаются двух крайностей, с одной стороны, восстанавливают и реставрируют одни азербайджанские памятники, с другой стороны, преднамеренно разрушают более древние армянские под предлогом благоустройства города. Такая тенденциозность заметна в отношении наиболее крупных, уникальных историко-архитектурных соору-

жений города.

Другой способ уничтожения памятников - это так называемые археологические раскопки, которые, без ведома и согласия местных властей, производятся некоторыми сотрудниками АН Азербайджанской ССР.

И подобные "раскопки" (даже страшно подумать) производят взрывом. Так, мощным взрывом был поднят в воздух могильник Св. Григора (IV век), первого просветителя Нагорного Карабаха, а взрывом были снесены и повреждены также монастырь Амарас IV в., Гтич X-XIII вв., Хтраванк - XIII в., Егише Аракека XIII в., Охты Егци - XII в., Мисиса ванк X в. Подобным варварским способом были снесены остатки старинного поселения, где родился видный армянский историк VII века Мовсес Каланкатуевец.

Десятки церквей и монастырей на местах превращены в складские помещения, отведены под скотные дворы. Некоторые хозяйственные руководители "реконструируют" исторические строения: ломают стены, меняют ходы, пробивают окна, сносят янтары могил и подсобные объекты.

Подобной "реконструкции" подверглось более 100 памятников.

Из тысячи армянских памятников области в список памятников Азербайджанской ССР, охраняемых государством (см. постановление Совета Министров Азерб.ССР за №140 от 2.04.1968 г.), включены только 64 памятника. В этот список не вошли такие крупные архитектурные памятники, как Казанчеоц екехеци, Амарас, церковь отшельника Егише, Ериц, Манканц, церковь святого Просветителя и многие другие. У большинства же армянских памятников, которые вошли в этот список, искажены названия, даты основания и их местонахождения. Из 20 памятников города Шуши в списке значится только одно армянское кладбище.

Бюро Нагорно-Карабахского обкома КП Азербайджана и Областной Совет депутатов трудящихся неоднократно (1968, 1970, 1971 гг.) обсуждали вопрос охраны памятников области и приняли соответствующее решение, однако положение до сего времени не изменилось к лучшему.

Бюро НК обкома КП Азербайджана и Областной Совет депутатов трудящихся в совместном решении за N198 от 21.07.1970 г. обратились в Совет Министров Азербайджанской ССР включить дополнительно в списки памятников культуры Азербайджанской ССР ряд крупных памятников области, имеющих большое историческое значение. Однако данный вопрос по сей день не решен. Как впоследствии выяснилось из выступления начальника Управления культуры области на партийном активе, Совет Министров Азербайджанской ССР уведомил в ответном письме, что материал об этих памятниках передан в Академию наук республики для рассмотрения их судьбы. Прошло после этого два года, а из АН Азербайджанской ССР ответа пока не поступило, спустя два года в апреле 1972 года комиссия Областного Совета депутатов трудящихся представила в постоянную комиссию Верховного Совета Азербайджанской ССР по народному образованию, науке и культуре подробную справку и просила ходатайствовать о включении в список памятников Азербайджанской ССР, охраняемых государством, хотя бы небольшую часть памятников области.

Дело в том, что памятники, которые отсутствуют в республиканском списке, не указываются также в путеводителях, на картах, туристических схемах, в научно-популярных статьях. Таково положение с памятниками Мардакертского, Мартунинского, Гадрутского, Степанакертского районов и армянскими памятниками города Шуши.

Практика искажения, преднамеренного утаивания и уничтожения армянских историко-материальных ценностей в Карабахе принимает такие формы, которые не укладываются в нормы самой элементарной логики. Общеизвестна древность происхождения многих памятников Карабаха. Почти 90% их датированы временем до XVIII века. Однако они умышленно не внесены ни в какие списки. Вследствие этого у человека, интересующегося историей края, может создаться впечатление, что до XVIII века здесь была пустынная страна, что до второй половины XVIII века на территории нынешнего Нагорного Карабаха никто не про-

живал. В таком случае, спрашивается, кто же оставил нам в наследство такую богатую культуру?

Достаточно взять в руки "Туристическую схему Азербайджанской ССР", изданную в 1970 г. в Москве, тиражом в 26 тысяч, и посмотреть на ее условные знаки и на карту Нагорного Карабаха, прочитать текст на 8, 9, 14 стр., чтобы не удивиться и не возмутиться. Чем, спрашивается, руководствовались составители данной "схемы", когда в Нагорно-Карабахский туристический район были включены только 14 памятников, из них только один армянский - крепость Джраберт - да и то с искаженным названием и датой сооружения.

Вне всякого сомнения, что составители не знали о существовании многих и многих уникальных армянских памятников.

Фальсификация и искажения доходят до того, что в список исторических памятников Нагорного Карабаха включены и такие, которые никакого отношения к нему не имеют. Например, каждому школьнику Азербайджана известно, что Агдамский и Физулинский районы соседствуют с Нагорным Карабахом, не входят в состав области. Это, конечно же, знали и составители "Схемы". Но они, несмотря на это, указали памятники этих районов среди памятников Нагорного Карабаха. Ясно, что такое сделано не без умысла: чтобы в Карабахе было больше азербайджанских памятников. Но, помилуйте, Карабах несколько не нуждается в них. У него достаточно и своих историко-архитектурных памятников, которыми мог бы гордиться любой цивилизованный народ.

Нельзя не восхищаться и пройти равнодушно мимо знаменитого Гандзасара (1216-1238 гг.), красоты и гордости Нагорного Карабаха (40x50x30 м), возведенного из отборного камня, имеющего более 180 настенных надписей.

Ведь составители "Схемы" обязаны были знать, да и не могли не знать, что именно здесь, в этом монастыре, в 1703 году, впервые в Закавказье передовые люди Карабаха составили послание Великому русскому царю Петру I с просьбой о присоединении Армении к России. На стенах этого шедевра сохранился так-

же высеченный ответ царя на прошение карабахцев.

Как могли составители не знать, что Амарас (IV век) в свое время являлся не только очагом распространения христианства, но и первой армянской школой в Арцахе (в V веке), что монастырь Гтича в IX веке был бастионом освободительных сил Карабаха в борьбе против арабов?

На стенах многих сооружений в письменах и орнаментах отражена история края, героическая борьба народа, талант и мудрость наших предков.

В "Туристической схеме" читаем:

"Шуша - Мавзолей и памятник знаменитому азербайджанскому поэту Молла-Панах Вагифу

Дворец Панах-хана XVIII века

Полуразвалины замка Ибрагим хана XVIII в."

В этой небольшой выдержке проявляются нездоровая тенденциозность и злой умысел автора.

При въезде в город Шуши стоит памятник дважды Герою Советского Союза - уроженцу города Шуши Н.Г. Степаняну, в центре города, по решению Правительства СССР, поставлен бюст Ивану Тевосяну - Наркому черной металлургии СССР, заместителю Председателя Совета Министров СССР. Со всех концов города Шуши, даже на расстоянии 20 км виден величественный силуэт Казанцевоц екехеци. Особую прелесть придает курортной зоне Канач жам. Около замка Ибрагим-хана находится полуразрушенный замок Мелика-Шахназара: 6 армянских кладбищ, где похоронены видные революционеры, бесстрашные воины Реута, которые стояли насмерть против персов в русско-персидской войне.

Но о них в "Схеме" ни слова.

Не может быть, чтобы авторы "Туристической схемы" не читали "Буйный Терек" Хаджи Мурата Мугуева, изданный в г. Орджоникидзе в 1967 году, "Первые добровольцы Карабаха" - Потто, изданную в 1902 году в Тифлисе, "Карабахский астролог" ("Основание Шуши") Платона Зубова (издан. в 1834 году), речи Орджоникидзе на приеме делегации Азербайджанской ССР в 1936 году. В

них дается точная оценка делам героических сынов Карабаха. На странице 9 этой же "Схемы" Шуша представляется как родина знаменитых азербайджанцев, молчаливо обходя тот факт, что Шуша является также родиной Мурацана - классика армянской литературы, великого армянского историка Лео (А.Бабахяна), народных артистов СССР А.Мелика-Пашаева и В.Вагаряна, соратников В.И.Ленина - революционеров С.Касьяна, С.Тер-Габриеляна, академиков А.Тахтаджяна, А.Иоаннисяна и многих других.

Намерения авторов слишком явны: не показывать ничего армянского, а, наоборот, поднимать на щит самое незначительное, азербайджанское. Спрашивается, с каких пор Азохская пещера, которая находится рядом с деревней Азох Гадрутского района, стала принадлежать Физулинскому району.

Историю исказить никому не позволено. Ведь эту "Схему" читают не только люди, которым все это незнакомо, но и те, которые видят фальшь и задаются вопросом: "Почему авторам этой фальшивки дано право вводить в заблуждение сотни, тысячи людей".

Но это не единственная публикация подобного рода. В 1971 году издательство "Мысль" издало весьма авторитетную книгу "Азербайджан", в которой в разделе "Нагорно-Карабахская автономная область" (стр. 251-256) история края представлена в кривом зеркале, в искаженном свете, что вызвало справедливое возмущение читателей. Мы не станем останавливаться на подробном изложении всех искажений, приведем только 2-3 из них, чтобы показать тенденциозность авторов этого раздела.

Если верить авторам, то получается, будто в XIV веке на территории Нагорного Карабаха было образовано Карабахское ханство во главе с Панах Алибеком. Но это же смехотворно! Как может в XIV веке Панах Алибек стать Карабахским ханом, когда он родился в начале XVIII века, т.е. 400 лет спустя после приписываемых ему событий. А действительность такова: Панах Алибек вступил в Карабах в середине XVIII века, тогда же и было образовано Карабахское ханство.

ՔՆՏՆՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

ՔՆՏՆՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ.....	3
ԳԼՈՒԽ I ԱՐՑԱԽ-ՂԱՐՎԱԳՐԻ ԳԻՄՆԱԽՆՆԱԿԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	7
ԳԼՈՒԽ II ՀՆՕՐՈՅԱ ԵՎ ՄԵՐՕՐՅԱ ՆԵՆԳԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կամ ինչպես են Աղրբեջանում կեղծել եւ շարունակում են կեղծել Արցախ-Ղարաբաղի հիմ ու նոր պատմությունը եւ ոչ միայն պատմությունը	32
ա) Թե ինչպես է վերափոխվել պատմությունը, եվ սեփականաշնորհվել ուրիշների սրբությունները.....	35
բ) Ամեն հայկականը պատմությունից ջնջելու եվ փոխարենը մոտավորապես սածիլելով դարերը հետ տանելու փորձերը	42
գ) Հայերին լրոզելու, աղրբեջանցիներին առաջին պլան մղելու փորձերը	52
դ) Ովքեր, երբ եվ ինչ նպատակներով ստեղծեցին «Աղրբեջանի Հանրապետությունը»	57
ե) Թե ինչպես են աղրբեջանցի հեղինակները սրբագրել խմբագրել պատմական սկզբնաղբյուրները	62
զ) Թե ինչպես են աղրբեջանական քարոզարշավի շոշափուկները թափանցել գերեզմանոցներ ու թանգարաններ	66
ԳԼՈՒԽ III ՉԱՐՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՂՎՅՈՒՆ ԽԵՂԿԱՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	73
1. Քյալլազդուություն	75
2. Իրոք, ինչ կասեր Ստալինը	84
3. Ոճրագործություններ	96
4. «Քաղցրաբլիթի» եւ մտրակի տակտիկան	105
5. Կաղրային քարոզարարություններ Գոյայի մոտիվներով	122
6. Ղարաբաղի վրա բերված բազմեցի թլախառած ազգամուսններով «տղաները».....	130
ԳԼՈՒԽ IV ԱՂՐԲԵՋԱՆԸ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ	142
ԳԼՈՒԽ V ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐ, ԿԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՈՒՄՆԵՐ	152
1. Սիալ, անթույլատրելի մեթոդով կաղապարված ցուցանիշների հրավառություններ եվ «Կուճաչովյ ճարյաղ Կարաբախա»	155
2. Մոզոնված գործարաններ եւ ծրագրված ավերման քաղաքականության հետեւանքները	164
3. Հայերի հավաքագրման պետական	170
4. Սոցիալ-տնտեսական խտրական քաղաքականության գումարելիները	173
ԳԼՈՒԽ VI «ՀՈՏԸ ԳԱԼԻՍ Է, ՔՈՉԸ՝ ԵՏԵՎԻՑ» Ոչխարաբուծության «գարգաջումը» նպատակ էր հետապնդել հայկական երկրամասը վերաբնակեցնել մեծ թվով թուրք-ազերիներով	179
ԳԼՈՒԽ VII ՎԱՆՂԱԼԻՉՄ Աղրբեջանում հայկական քրիստոնեական մշակութային ժառանգության յուրացման, ոչնչացման եւ հարակից այլ խարդախանքների մասին	202
ԳԼՈՒԽ VIII ՎԱՎԵՐԱԳՐԵՐ	229
Փաստաթուղթ N 1 ԼՂ մարզային պատճառ. երկրագիտական թանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանի 1968թ. մայիսի 14-ին կուսակցության ԼՂ մարզկոմի քյուրդյում ունեցած ելույթը	229
Փաստաթուղթ N 2 ԼՂԻՄ-ի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանի 1971 թ. ապրիլի 24-ին ԼՂ կուսմարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանին հղած պատմաճարտարապետական հուշարձանների ողբալի վիճակի մասին պաշտոնական գրությունը եւ տեղեկանքը	238

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐՎԱԳՐ
ԱՂՐԲԵՋԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆԱՏՈՄԻԱՆ**

**Шаген Мкртчян
НАГОРНЫЙ КАРАБАХ
АНАТОМИЯ СВЕРШЕННОГО АЗЕРБАЙДЖАНОМ
ГЕНОЦИДА**

(на армянском языке Степанакерт-2003)

SHAHEN MKRTCHIAN

**NAGORNO KARABAKH
THE ANATOMY OF THE GENOCIDE REALIZED FROM
AZERBAIJAN**

(ARMENIAN, STEPANAKERT - 2003)

Շառիկի ձեւավորումը՝ Մնացական ԱԶԻՉՅԱՆԻ

**Խմբագիր՝
Գեղ. խմբագիր՝
Սրբագրիչներ՝**

**Հայկազն ՂԱՐԻՅԱՆ
Անուշ ՄԱՐՈՒՄՅԱՆ
Վարդուհի ՀԱԿՈՔՅԱՆ
Հենրի ԱՌՈՒՇԱՆՅԱԼ**

Հանձնված է լարվածքի՝ 10.07.2003 թ.: Աստղագրված է տպագրության՝ 15.09.2003 թ.:
Ֆորմատ 42x60^{1/16}: Տառատեսակը՝ Arial armenian: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրական 15 մա-
նուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500: Պատվեր՝ 24: Գինը՝ ողայմանագրա-
յին: Տպագրվել է «Ազատ Արցախ» թերթի հրատարակչության տպարանում:
Ստեփանավեր, Կոմունյացի 2, հեռ. 4-35-43: